3190

ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

. ՍՏԱԼԻՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԵՆԻՆԻԶՄԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԼԵՆԻՆԻԶՄԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋԸ

3K33
L-35

ԿՈՒՍՀՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ
1934

24 JUN 2005

Պրոլետարներ բոլոր երկիրների, միացե՛ք

14 NOV 2008

Ի. ՍՏԱԼԻՆ

ԼԵՆԻՆԻԶՄԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ԼԵՆԻՆԻԶՄԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Библиотека Института Востоковедения Академии Наук СССР

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1934

05 AUG 2013

3190

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
ИМ. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

56463-66

ԼԵՆԻՆԻԶՄԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1924 Թ. ԱՊՐԻԼԻ ՍԿԶԲԻՆ ՍՎԵՐԴԼՈՎՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԿԱՐԴԱՑՎԱԾ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նվիրում եմ լենինյան կոչին.
Ի. ՍՏԱԼԻՆ

Լենինիզմի հիմունքները—այդ մեծ թեմա յէ: Այն սպառելու համար անհրաժեշտ է մի ամբողջ գիրք: Ավելին. անհրաժեշտ են մի ամբողջ շարք գրքեր: Ուստի բնական է, որ իմ դասախոսությունները չեն կարող լենինիզմի սպառիչ շարադրանքը լինել: Նրանք կարող են, լավագույն դեպքում, լինել լենինիզմի հիմունքների լոկ սեղմ կոնսպեկտը: Այնուամենայնիվ, յես օգտակար եմ համարում շարադրել այդ կոնսպեկտը, որպեսզի տամ մի քանի հիմնական մեկնակետեր, որոնք անհրաժեշտ են լենինիզմի հաջող ուսումնասիրության համար:

Շարադրել լենինիզմի հիմունքները—այդ դեռ չի նշանակում շարադրել Լենինի աշխարհայացքի հիմունքները: Լենինի աշխարհայացքը և լենինիզմի հիմունքները միևնույնը չեն ըստ ծավալի: Լենինը մարքսիստ է, և նրա աշխարհայացքի հիմունքը, իհարկե, մարքսիզմն է: Բայց դրանից բնավ չի հետևում, որ լենինիզմի շարադրանքը պետք է սկսել մարքսիզմի հիմունքների շարադրանքից: Շարադրել լենինիզմը—նշանակում է շարադրել այն առանձնահատուկը և նորը Լենինի աշխատություններում, որ մտցրել է Լենինը մարքսիզմի ընդհանուր գանձարանը և որը բնականորեն կապված է նրա անվան հետ: Միայն այս իմաստով յես կխոսեմ լենինիզմի հիմունքների մասին իմ դասախոսությունների մեջ:

Ուրեմն, ի՞նչ է լենինիզմը:

Ոմանք ասում են, թե լենինիզմը մարքսիզմի կիրառումն է ռուսաստանյան իրադրության յուրօրինակ պայմանների նկատ-

մամբ։ Այդ բնորոշման մեջ կա ճշմարտության մասնիկ, բայց այդ բնորոշումը հեռու յե ամբողջ ճշմարտությունն սպառելուց։ Լենինն իսկապես կիրառեց մարքսիզմը ռուսաստանյան իրականության նկատմամբ և այն կիրառեց վարպետորեն։ Բայց յեթե լենինիզմը լիներ մարքսիզմի միմիայն կիրառումը Ռուսաստանի յուրորինակ իրադրության նկատմամբ, ապա այն ժամանակ լենինիզմը կլիներ զուտ ազգային և միմիայն ազգային, զուտ ռուսական և միմիայն ռուսական յերևույթ։ Մինչդեռ մենք գիտենք, վոր լենինիզմն ինտերնացիոնալ յերևույթ ե, և վոչ թե միայն ռուսական, և արմատներ ունի ամբողջ միջազգային զարգացման մեջ։ Ահա թե ինչու յես կարծում եմ, վոր այս բնորոշումը տառապում ե միակողմանիությամբ։

Ուրիշներն ասում են, թե լենինիզմը XIX դարի քառասնական թվականների մարքսիզմի հեղափոխական տարրերի վերածնունդն ե՝ ի տարբերություն հետագա տարիների մարքսիզմից, յերբ նա դարձավ իբր թե չափավոր, վոչ-հեղափոխական։ Յեթե վերանանք Մարքսի ուսմունքը նման տխմար ու գռեհիկ ձևով յերկու մասի՝ հեղափոխականի և չափավորի բաժանելուց, հարկավոր ե ընդունել, վոր նույնիսկ այդ բոլորովին թերի և անբավարար բնորոշման մեջ ճշմարտության մասնիկ կա։ Դա, ճշմարտության այդ մասնիկը, այն ե, վոր Լենինն իրոք վերածնեց մարքսիզմի հեղափոխական բովանդակությունը, վորը վորմնաթաղել եյին II Ինտերնացիոնալի ոպորտունիստները։ Բայց դա ճշմարտության մասնիկն ե միայն։ Լենինիզմի մասին ամբողջ ճշմարտությունն այն ե, վոր լենինիզմը վո՛չ միայն վերածնեց մարքսիզմը, այլ նա մի քայլ էլ արավ դեպի առաջ, ավելի ևս զարգացնելով մարքսիզմը կապիտալիզմի և պրոլետարիատի դասակարգային կռվի նոր պայմաններում։

Հապա, վերջիվերջո, ի՞նչ ե լենինիզմը։

Լենինիզմն իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխության դարաշրջանի մարքսիզմն ե։ Ավելի ճշգրիտ՝ լենինիզմը պրոլետարական հեղափոխության թեորիան և տակտիկան ե ընդհանրապես, պրոլետարիատի դիկտատուրայի թեորիան և տակտիկան՝ առանձնապես։ Մարքսը և Ենգելսը գործում եյին նախահեղափոխական ժամանակաշրջանում (մենք նկատի ունենք

պրոլետարական հեղափոխությունը), յերբ դեռ գոյություն չուներ զարգացած իմպերիալիզմը, մի ժամանակաշրջանում, յերբ պրոլետարները հեղափոխության եյին պատրաստվում, այն ժամանակաշրջանում, յերբ պրոլետարական հեղափոխությունը դեռ ուղղակի պրակտիկ անխուսափելիություն չեր։ Իսկ Լենինը, Մարքսի ու Ենգելսի աշակերտը, գործում եր զարգացած իմպերիալիզմի ժամանակաշրջանում, ծավալվող պրոլետարական հեղափոխության ժամանակաշրջանում, յերբ պրոլետարական հեղափոխությունն արդեն հաղթանակել եր մի յերկրում, ջախջախել եր բուրժուական դեմոկրատիան և բացել պրոլետարական դեմոկրատիայի դարաշրջանը, խորհուրդների դարաշրջանը։

Ահա թե ինչու լենինիզմը մարքսիզմի հետագա զարգացումն ե։

Նշում են, սովորաբար, լենինիզմի բացառիկ մարտական և բացառիկ հեղափոխական բնույթը։ Դա միանգամայն ճիշտ ե։ Բայց լենինիզմի այդ առանձնահատկությունը բացատրվում ե յերկու պատճառով.—նախ՝ նրանով, վոր լենինիզմն առաջացավ պրոլետարական հեղափոխությունից, վորի կնիքը նա չի կարող չկրել իր վրա. յերկրորդ՝ նրանով, վոր նա աճեց ու ամրապնդվեց II Ինտերնացիոնալի ոպորտունիզմի դեմ ունեցած մարտերում, վորի դեմ մղվող պայքարը յեղել ե և ե՛ կապիտալիզմի դեմ հաջող պայքար մղելու անհրաժեշտ նախապայմանը։ Հարկավոր չե մոռանալ, վոր մի կողմից Մարքսի ու Ենգելսի և մյուս կողմից Լենինի միջև ընկած ե II Ինտերնացիոնալի ոպորտունիզմի անբաժան տիրապետության մի ամբողջ շրջան, ոպորտունիզմի, վորի դեմ անողոք պայքար մղելը չեր կարող չկազմել լենինիզմի կարևորագույն խնդիրներից մեկը։

I. ԼԵՆԻՆԻԶՄԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ

Լենինիզմն աճեց և ձևավորվեց իմպերիալիզմի պայմաններում, յերբ կապիտալիզմի հակասությունները ծայրահեղ եյին հասել, յերբ պրոլետարական հեղափոխությունն անմիջական պրակտիկայի հարց եր դարձել, յերբ հեղափոխության համար բանվոր դասակարգի նախապատրաստվելու հին ժամանակաշրջ-

ջանը դեմ էր առել և վերածել էր ուղղակի գրոհի նոր ժամանակաշրջանի ընդդեմ կապիտալիզմի:

Լենինն իմպերիալիզմն անվանում էր «մեռնող կապիտալիզմ»: Ինչո՞ւ: Վորովհետև իմպերիալիզմը կապիտալիզմի հակասությունները հասցնում է վերջին գծին, ծայրահեղ սահմաններին, վորոնցից դենն սկսվում է հեղափոխությունը: Այդ հակասություններից ամենակարևորները պետք է համարել յերեք հակասություն.

Առաջին հակասությունը — դա հակասությունն է աշխատանքի և կապիտալի միջև: Իմպերիալիզմը մոնոպոլիստական տրեստների և սինդիկատների, բանկերի և ֆինանսական օլիգարխիայի ամենակարողությունն է արդյունաբերական յերկրներում: Այդ ամենակարողության դեմ պայքարելու գործում բանվոր դասակարգի սովորական մեթոդները—արհեստակցական միությունները և կոոպերատիվները, պառլամենտական կուսակցությունները և պառլամենտական պայքարը—միանգամայն անբավարար դուրս յեկան: Կամ անձնատուր յեղիր կապիտալի վողորմածությանը, առաջվա նման քարշ տուր քո գոյությունը և ցածրացիր, կամ նոր զենք վերցրու — իմպերիալիզմն այսպես է դնում հարցը պրոլետարիատի միլիոնավոր մասսաների առաջ: Իմպերիալիզմը բանվոր դասակարգին մոտեցնում է հեղափոխությանը:

Յերկրորդ հակասությունը—դա հակասությունն է տարբեր ֆինանսական խմբերի և իմպերիալիստական պետությունների միջև այն պայքարում, վոր նրանք մղում են հումքի աղբյուրների համար, ոտար տերիտորիաների համար: Իմպերիալիզմը կապիտալի արտահանումն է դեպի հումքի աղբյուրները, կատաղի պայքար է այդ աղբյուրներին մոնոպոլ ձևով տիրանալու համար, պայքար արդեն բաժանված աշխարհը վերաբաժանելու համար, պայքար, վոր առանձին մոլեգնությամբ մղում են «արևի տակ տեղ» փնտրող նոր ֆինանսական խմբերն ու պետությունները հին խմբերի և պետությունների դեմ, վորոնք ամուր կառչել են իրենց զավթածին: Կապիտալիստների տարբեր խմբերի միջև մղվող այդ կատաղի պայքարն ուշագրավ է այն տեսակետից, վոր նա իր մեջ վորպես անխուսափելի տարր պարունակում է իմպերիալիստական պատերազմներ, պատերազմներ ոտար տերիտորիաներ զավթելու համար: Այս հանգամանքն իր հերթին ուշագրավ է այն տեսակետից, վոր նա տանում է դեպի իմպերիալիստների փոխադարձ թուլացում, դեպի ընդհանրապես կապիտալիզմի դիրքի թուլացում, դեպի պրոլետարական հեղափոխության մոմենտի մերձեցում, դեպի այդ հեղափոխության պրակտիկ անհրաժեշտություն:

Յերրորդ հակասությունը — դա հակասությունն է մի բուռն տիրապետող «քաղաքակիրթ» ազգերի և աշխարհի հարյուր-միլիոնավոր գաղութային և կախյալ ժողովուրդների միջև: Իմպերիալիզմն ամենալայնածավալ գաղութների և կախյալ յերկրների հարյուր-միլիոնավոր բնակչության ամենալկտի շահագործումը և ամենավայրագ ճնշումն է: Գերշահույթ քամել—այս է այդ շահագործման և այդ ճնշման նպատակը: Բայց շահագործելով այդ յերկրները, իմպերիալիզմն ստիպված է այդտեղ կառուցել յերկաթուղիներ, ֆաբրիկաներ և գործարաններ, արդյունաբերական և առևտրական կենտրոններ: Պրոլետարների դասակարգի յերևան գալը, տեղական ինտելիգենցիայի սաղմնավորվելը, ազգային ինքնագիտակցության արթնանալը, ազատագրական շարժման ուժեղանալը — սրանք են այդ «քաղաքականության» անխուսափելի արդյունքները: Այդ մասին ակներևորեն վկայում է հեղափոխական շարժման ուժեղացումն առանց բացառության բոլոր գաղութներում և կախյալ յերկրներում: Այս հանգամանքը կարևոր է պրոլետարիատի համար այն տեսակետից, վոր նա հիմնովին խարխլում է կապիտալիզմի դիրքերը՝ գաղութները և կախյալ յերկրներն իմպերիալիզմի ռեզերվներից վերածելով պրոլետարական հեղափոխության ռեզերվների:

Սրանք են, ընդհանուր առմամբ, իմպերիալիզմի գլխավոր հակասությունները, վորոնք հին «ծաղկյալ» կապիտալիզմը վեր են ածել մեռնող կապիտալիզմի:

Տաս տարի սրանից առաջ բռնկված իմպերիալիստական պատերազմի նշանակությունը, իմիջի այլոց, այն է, վոր նա այդ բոլոր հակասությունները հավաքեց մի հանգույցի մեջ և դրանք նետեց կշեռքի նժարը՝ արագացնելով ու հեշտացնելով պրոլետարիատի հեղափոխական ճակատամարտերը:

Այլ կերպ ասած՝ իմպերիալիզմը հասցրեց վո՛չ միայն այն բանին, վոր հեղափոխությունը դարձավ պրակտիկ անխուսափելիություն, այլև այն բանին, վոր ստեղծվեցին բարենպաստ պայմաններ կապիտալիզմի ամրությունների վրա ուղղակի գրոհելու համար։

Այսպես է լենինիզմ ծնող միջազգային իրադրությունը։

Այդ բոլորը լավ, կասեն մեզ, բայց ի՞նչ գործ ունի այստեղ Ռուսաստանը, վորը չե՞ վոր չի յեղել և չեր էլ կարող լինել իմպերիալիզմի կլասիկ յերկիր։ Ի՞նչ գործ ունի այստեղ Լենինը, վորն աշխատում եր նախ և առաջ Ռուսաստանում և Ռուսաստանի համար։ Ինչո՞ւ հենց Ռուսաստանը ծառայեց լենինիզմի օջախ, պրոլետարական հեղափոխության թեորիայի և տակտիկայի հայրենիք (родина)։

Վորովհետև Ռուսաստանն եր իմպերիալիզմի այս բոլոր հակասությունների հանգուցային կետը։

Վորովհետև Ռուսաստանը հեղափոխությամբ ավելի յեր հղի, քան վորևե այլ յերկիր, և այդ պատճառով միայն նա՛ յեր ի վիճակի հեղափոխական ճանապարհով լուծելու այդ հակասությունները։

Սկսենք այն բանից, վոր ցարական Ռուսաստանն ամեն տեսակ ճնշման օջախ եր — և՛ կապիտալիստական, և՛ գաղութային, և՛ զինվորական ճնշման—իր ամենավայրագ և բարբարոսական ձևով վեր առած։ Ո՞ւմ հայտնի չե, վոր Ռուսաստանում կապիտալի ամենակարողությունը միաձուլվում եր ցարիզմի դեսպոտիզմի հետ, ռուսական նացիոնալիզմի ագրեսիվությունը՝ դեպի վոչ-ռուս ժողովուրդները ցարիզմի ունեցած դահճային վերաբերմունքի հետ, ամբողջ շրջանների՝ Տաճկաստանի, Պարսկաստանի, Չինաստանի շահագործումը՝ այդ շրջանները ցարիզմի կողմից զավթելու և զավթման համար պատերազմներ մղելու հետ։ Լենինն իրավացի յեր՝ ասելով, վոր ցարիզմը «ռազմաֆեոդալական իմպերիալիզմ է»։ Ցարիզմն իմպերիալիզմի՝ քառակուսի աստիճանի բարձրացրած ամենաբացասական կողմերի կենտրոնակետն եր։

Այնուհետև։ Ցարական Ռուսաստանն արևմտյան իմպերիալիզմի մեծագույն ռեզերվն եր վո՛չ միայն այն իմաստով, վոր նա

ազատ մուտք եր տալիս արտասահմանյան կապիտալին, վորն իր ձեռքին եր պահում Ռուսաստանի ժողովրդական տնտեսության այնպիսի վճռողական ճյուղեր, ինչպիսիք են վառելիքը և մետալուրգիան, այլև այն իմաստով, վոր նա հօգուտ արևմտյան իմպերիալիստների կարող եր միլիոնավոր զինվորներ տրամադրել։ Վերհիշեցեք 12 միլիոնանոց ռուսական բանակը, վոր իմպերիալիստական ճակատներում արյուն եր թափում անգլո-ֆրանսիական կապիտալիստների ահռելի շահույթներն ապահովելու համար։

Այնուհետև։ Ցարիզմն իմպերիալիզմի վո՛չ միայն պահապան շունն եր Յեվրոպայի արևելքում, այլև արևմտյան իմպերիալիզմի գործակալությունը՝ ժողովրդից դուրս կորզելու հարյուրմիլիոնավոր տոկոսներն այն փոխառությունների, վոր նրան բաց եյին թողնում Փարիզում և Լոնդոնում, Բեռլինում և Բրյուսելում։

Վերջապես, ցարիզմն արևմտյան իմպերիալիզմի ամենահավատարիմ դաշնակիցն եր Տաճկաստանի, Պարսկաստանի, Չինաստանի և այլ յերկիրների բաժանման գործում։ Ո՞ւմ հայտնի չե, վոր ցարիզմն իմպերիալիստական պատերազմը մղում եր Անտանտայի իմպերիալիստների հետ դաշնակցած, վոր Ռուսաստանն այդ պատերազմի եյական տարրն եր։

Ահա թե ինչու ցարիզմի և արևմտյան իմպերիալիզմի շահերը միահյուսվում եյին և վերջիվերջո միաձուլվում, կազմում եյին իմպերիալիզմի շահերի միասնական կծիկ։ Արևմտյան իմպերիալիզմը կարո՞ղ եր արդյոք հաշտվել Արևելքում այդպիսի հզոր նեցուկ և ուժերի ու միջոցների այնպիսի մի հարուստ ռեզերվ կորցնելու հետ, ինչպիսին եր հին, ցարական, բուրժուական Ռուսաստանը, առանց փորձելու իր բոլոր ուժերը՝ Ռուսաստանի հեղափոխության դեմ մահացու պայքար մղելու համար, ցարիզմը պաշտպանելու և պահպանելու նպատակով։ Իհարկե, չեր կարող։

Բայց դրանից հետևում է, վոր ով ուզում եր հարվածել ցարիզմին, նա անխուսափելիորեն ձեռք եր բարձրացնում իմպերիալիզմի վրա, ով ապստամբում եր ցարիզմի դեմ, նա պետք է ապստամբեր նաև իմպերիալիզմի դեմ, վորովհետև ով տապա-

քում էր ցարիզմը, նա պետք է տապալեր նաև իմպերիալիզմը, յեթե նա իսկապես մտածում էր վո՛չ միայն ջախջախել ցարիզմը, այլև վերջնացնել այն առանց մնացորդի: Ցարիզմի դեմ ուղղված հեղափոխությունը մոտենում էր, այսպիսով, և պետք է վերաճեր իմպերիալիզմի դեմ ուղղված հեղափոխության, պրոլետարական հեղափոխության:

Մինչդեռ, Ռուսաստանում բարձրանում էր մեծագույն ժողովրդական հեղափոխությունը, վորին գլուխ էր կանգնած աշխարհի ամենահեղափոխական պրոլետարիատը, վորն իր տրամադրության տակ ուներ այնպիսի մի լուրջ դաշնակից, ինչպես Ռուսաստանի հեղափոխական գյուղացիությունն է: Հարկ կա՞ արդյոք ապացուցելու, վոր այդպիսի հեղափոխությունը չէր կարող կանգ առնել կիսաճամփին, վոր նա հաջողության դեպքում պետք է առաջ գնար՝ ապստամբության դրոշ բարձրացնելով իմպերիալիզմի դեմ:

Ահա թե ինչու Ռուսաստանը պետք է դառնար իմպերիալիզմի հակասությունների հանգուցային կետը վո՛չ միայն այն իմաստով, վոր այդ հակասություններն ամենից հեշտ բացահայտվում էին հենց Ռուսաստանում՝ նրանց առանձնապես այլանդակ և առանձնապես անհանդուրժելի բնույթի շնորհիվ, և վո՛չ միայն այն պատճառով, վոր Ռուսաստանն արևմտյան իմպերիալիզմի ամենակարևոր հենարանն էր, վորը միացնում էր Արևմուտքի ֆինանսական կապիտալը Արևելքի գաղութների հետ, այլև այն պատճառով, վոր միայն Ռուսաստանում գոյություն ուներ այն ռեալ ուժը, վորը կարող էր հեղափոխական ճանապարհով լուծել իմպերիալիզմի հակասությունները:

Բայց սրանից հետևում է, վոր հեղափոխությունը Ռուսաստանում չէր կարող պրոլետարական չդառնալ, վոր նա իր զարգացման առաջին իսկ օրերին չէր կարող չստանալ միջազգային բնույթ, վոր նա չէր կարող, այդպիսով, չցնցել համաշխարհային իմպերիալիզմի բուն հիմքերը:

Ռուսական կոմունիստներն իրերի այս վիճակում կարո՞ղ էին արդյոք իրենց աշխատանքում սահմանափակվել ռուսական հեղափոխության նեղ-ազգային շրջանակներով: Իհարկե, վո՛չ: Ընդհակառակը, ամբողջ իրադրությունը, ինչ-

պես ներքինը (խոր հեղափոխական ճգնաժամը), այնպես էլ արտաքինը (պատերազմը), դրդում էր նրանց, վոր իրենց աշխատանքում դուրս գան այդ շրջանակներից, պայքարը փոխադրեն միջազգային ասպարեզ, բացահայտեն իմպերիալիզմի խոցերը, ապացուցեն կապիտալիզմի փլուզման անխուսափելիությունը, ջախջախեն սոցիալ-շովինիզմը և սոցիալ-պացիֆիզմը, վերջապես, տապալեն իրենց յերկրում կապիտալիզմը և կռեն պրոլետարիատի համար պայքարի նոր զենք՝ պրոլետարական հեղափոխության թեորիան ու տակտիկան, վորպեսզի բոլոր յերկրների պրոլետարների համար հեշտացնեն կապիտալիզմի տապալման գործը: Ռուսական կոմունիստներն այլ կերպ չէին էլ կարող գործել, վորովհետև միայն այդ ճանապարհին կարելի յեր սպասել միջազգային իրադրության վորոշ փոփոխություններ, վորոնք կարողանային ապահովել Ռուսաստանը բուրժուական կարգերի ռեստավրացիայից:

Ահա թե ինչու Ռուսաստանը դարձավ լենինիզմի օջախը, իսկ ռուսական կոմունիստների առաջնորդ Լենինը — նրա ստեղծիչը:

Ռուսաստանին և Լենինին այստեղ «պատահեց» մոտավորապես նույնը, ինչ վոր պատահել էր անցյալ դարի քառասնական թվականներին Գերմանիային և Մարքս-Էնգելսին: Գերմանիան այն ժամանակ, ինչպես և Ռուսաստանը XX դարի սկզբներում, հղի յեր բուրժուական հեղափոխությամբ: Մարքսն այն ժամանակ գրում էր «Կոմունիստական Մանիֆեստում», վոր՝

> «Կոմունիստներն իրենց գլխավոր ուշադրությունը դարձնում են Գերմանիայի վրա այն պատճառով, վոր նա բուրժուական հեղափոխության նախօրյակին է գտնվում, այն պատճառով, վոր նա այդ հեղաշրջումը կկատարի յեվրոպական քաղաքակրթության ընդհանրապես ավելի առաջադեմ պայմաններում, ունենալով շատ ավելի զարգացած պրոլետարիատ, քան XVII դարի Անգլիայումն էր և XVIII դարի Ֆրանսիայում: Հետևաբար, գերմանական բուրժուական հեղափոխությունը կարող է պրոլետարական հեղափոխության լոկ անմիջական նախերգանքը լինել»:

Այլ կերպ ասած՝ հեղափոխական շարժման կենտրոնը տեղափոխվում էր Գերմանիա:

Հազիվ թե կարելի լինի տարակուսել, վոր հենց այդ հանգամանքը, վորը նշել է Մարքսը վերը բերած ցիտատում, դար-

ձավ այն բանի հավանական պատճառ, վոր հենց Գերմանիան հանդիսացավ գիտական սոցիալիզմի ծննդավայրը, իսկ գերմանական պրոլետարիատի առաջնորդները՝ Մարքսը և Ենգելսը՝ նրա ստեղծիչները:

Նույն այդ բանը հարկավոր է ասել, բայց ե՛լ ավելի մեծ չափով, XX դարի սկզբի Ռուսաստանի մասին: Ռուսաստանն այդ ժամանակաշրջանում գտնվում եր բուրժուական հեղափոխության նախորյակին, նա այդ հեղափոխությունը պետք է կատարեր Յեվրոպայի ավելի պրոգրեսիվ պայմաններում և ավելի զարգացած պրոլետարիատով, քան Գերմանիան (ել չենք խոսում Անգլիայի և Ֆրանսիայի մասին), ընդվորում բոլոր տվյալներն ասում եյին, վոր այդ հեղափոխությունը պրոլետարական հեղափոխության խմորիչը և նախերգանքը պետք է դառնա: Չի կարելի պատահականություն համարել այն փաստը, վոր Լենինը դեռ 1902 թվին, յերբ ռուսական հեղափոխությունը նոր եր սաղմնավորվում, իր «Ի՞նչ անել» բրոշյուրում կանխագուշակ խոսքեր եր գրում այն մասին, վոր

> «Պատմությունն այժմ մեր առաջ (այսինքն՝ ռուսական մարքսիստների առաջ: Ի. Ստ.) մերձավորագույն մի խնդիր է դրել, վոր վորևե այլ յերկրի պրոլետարիատի մերձավորագույն խնդիրներից ամենահեղափոխականն է: Այդ խնդրի իրականացումը՝ վո՛չ միայն յեվրոպական, այլև ասիական ռեակցիայի ամենահզոր պատվարի խորտակումը՝ ռուսական պրոլետարիատին կդարձներ միջազգային հեղափոխական պրոլետարիատի ավանգարդը» (տե՛ս հ. IV, եջ 382):

Այլ կերպ ասած՝ հեղափոխական շարժման կենտրոնը պետք է տեղափոխվեր Ռուսաստան:

Հայտնի յե, վոր Ռուսաստանի հեղափոխության ընթացքը հավելուրդով արդարացրեց Լենինի այս նախագուշակումը:

Դրանից հետո զարմանալի՞ յե արդյոք, վոր այն յերկիրը, վորն այդպիսի հեղափոխություն կատարեց և ուներ այդպիսի պրոլետարիատ, պրոլետարական հեղափոխության թեորիայի և տակտիկայի հայրենիք ծառայեց:

Զարմանալի՞ յե արդյոք, վոր այդ պրոլետարիատի առաջնորդը՝ Լենինը դրա հետ մեկտեղ դարձավ այդ թեորիայի և տակտիկայի ստեղծիչը և միջազգային պրոլետարիատի առաջնորդը:

II. ՄԵԹՈԴԸ

Վերը յես ասացի, վոր, մի կողմից, Մարքս-Ենգելսի և, մյուս կողմից, Լենինի միջև ընկած է II Ինտերնացիոնալի ոպորտունիզմի տիրապետության մի ամբողջ շրջան: Ճշգրիտ լինելու շահը նկատի ունենալով, յես պետք է ավելացնեմ, վոր այստեղ խոսքը վո՛չ թե ոպորտունիզմի ֆորմալ տիրապետության, այլ լոկ նրա փաստական տիրապետության մասին է: Ձևականորեն II Ինտերնացիոնալին գլուխ եյին կանգնած «ուղղափառ» մարքսիստներ, «որթոդոքսներ»—Կաուցկին և ուրիշները: Սակայն, իրականում II Ինտերնացիոնալի հիմնական աշխատանքը կատարվում եր ոպորտունիզմի գծով: Ոպորտունիստները հարմարվում եյին բուրժուազիային՝ շնորհիվ իրենց հարմարվողական, մանրբուրժուական բնության,—«որթոդոքսներն» ել իրենց հերթին հարմարվում եյին ոպորտունիստներին՝ ոպորտունիստների հետ «միասնությունն պահպանելու» և «կուսակցության մեջ խաղաղությունն» ապահովելու շահը նկատի ունենալով: Վորպես արդյունք ստացվում եր ոպորտունիզմի տիրապետություն, վորովհետև բուրժուազիայի քաղաքականության և «որթոդոքսների» քաղաքականության միջև շղթան ծայրափակված եր լինում (оказывалась замкнутой):

Դա կապիտալիզմի համեմատաբար խաղաղ զարգացման ժամանակաշրջանն եր, այսպես ասած, մինչպատերազմյան ժամանակաշրջանը, յերբ իմպերիալիզմի կատաստրոֆիկ հակասությունները դեռ չեյին կարողացել հայտաբերվել լիակատար ակներևությամբ, յերբ բանվորների տնտեսական գործադուլները և արհմիությունները զարգանում եյին քիչ թե շատ «նորմալ» կերպով, յերբ ընտրական պայքարը և պառլամենտական ֆրակցիաներն ունենում եյին «գլխապտույտ» հաջողություններ, յերբ պայքարի լեգալ ձևերը գովվում, մինչև յերկինք եյին բարձրացվում և լեգալությամբ մտածում եյին «սպանել» կապիտալիզմը—մի խոսքով՝ յերբ II Ինտերնացիոնալի կուսակցությունները ճարպակալվում եյին, և հեղափոխության մասին, պրոլետարիատի դիկտատուրայի մասին, մասսաների հեղափոխական դաստիարակության մասին լրջորեն մտածել չեյին ցանկանում:

Ամբողջական հեղափոխական թեորիայի փոխարեն—հակասական թեորիական դրույթներ և թեորիայի բեկորներ, վորոնք անջատված եյին մասսաների կենդանի հեղափոխական պայքարից և հնամաշ դոգմաների եյին վերածվել: Ձևի համար, իհարկե, հիշում եյին Մարքսի թեորիան, բայց այն նպատակով, վորպեսզի նրա միջից դուրս վանեն կենդանի հեղափոխական վոգին:

Հեղափոխական քաղաքականության փոխարեն—թուլամորթ ֆիլիստերություն և ժուժկալ պոլիտիկանություն, պառլամենտական դիվանագիտություն և պառլամենտական կոմբինացիաներ: Ձևի համար, իհարկե, ընդունվում եյին «հեղափոխական» վորոշումներ և լոզունգներ, սակայն մահուդի տակ դնելու համար:

Կուսակցությանն իր սեփական սխալների վրա դաստիարակելու և ճիշտ հեղափոխական տակտիկա սովորեցնելու փոխարեն—խնամքով զանցառում ցավոտ հարցերի, նրանց քողարկումն և սվաղումն: Ձևի համար, իհարկե, չեյին հրաժարվում ցավոտ հարցերի մասին խոսելուց, բայց նրա համար, վորպեսզի գործը վերջացնեն վորևե «կաուչուկային» բանաձևով:

Ահա թե ինչպես եր II Ինտերնացիոնալի կերպարանքը, նրա աշխատանքի մեթոդը, նրա զինանոցը:

Մինչդեռ, մոտենում եր իմպերիալիստական պատերազմների և պրոլետարիատի հեղափոխական մարտերի նոր շրջանը: Պայքարի հին մեթոդներն ակնհայտորեն անբավարար և անզոր եյին հանդիսանում ֆինանսական կապիտալի ամենակարողության հանդեպ:

Անհրաժեշտ եր վերանայել II Ինտերնացիոնալի ամբողջ աշխատանքը, աշխատանքի նրա ամբողջ մեթոդը, դուրս վռնդելով ֆիլիստերությունը, նեղճակատությունը, պոլիտիկանությունը, ռենեգատությունը, սոցիալ-շովինիզմը, սոցիալ-պացիֆիզմը: Անհրաժեշտ եր ստուգել II Ինտերնացիոնալի ամբողջ զինանոցը, դուրս շպրտել այն ամենը, ինչ ժանգոտել ու հնացել եր, դարբնել զենքի նոր տեսակներ: Առանց այսպիսի նախապատրաստական աշխատանքի կապիտալիզմի դեմ պատերազմի գնալն իսկ իզուր եր: Առանց դրան պրոլետարիատը նոր հեղափոխական մարտերի հանդեպ անբավարար զինված կամ նույնիսկ պարզապես անզեն գտնվելու ռիսկի յեր յենթարկվում:

II Ինտերնացիոնալի ավգյան ախոռների հիմնական ստուգման և հիմնական մաքրման այդ պատիվը բաժին ընկավ լենինիզմին:

Ահա թե ինչպիսի պայմաններում ծնվեց և կոփվեց լենինիզմի մեթոդը:

Ինչի՞ յեն հանգում այդ մեթոդի պահանջները:

Առաջինը—մասսաների հեղափոխական պայքարի կրակում, կենդանի պրակտիկայի կրակում II Ինտերնացիոնալի թեորիական դոգմաներն ստուգումն, այսինքն՝ թեորիայի և պրակտիկայի խախտված միասնականությունը վերականգնելուն, նրանց միջև յեղած խզումը վերացնելուն, վորովհետև միայն այդ կերպ կարելի յե ստեղծել իսկապես պրոլետարական մի կուսակցություն, վորը զինված և հեղափոխական թեորիայով:

Երկրորդ—II Ինտերնացիոնալի կուսակցությունների քաղաքականության ստուգումը վո՛չ թե նրանց լոզունգներով և բանաձևերով (վորոնց չի կարելի հավատալ), այլ նրանց գործերով, նրանց գործողություններով, վորովհետև միայն այդպես կարելի յե նվաճել պրոլետարական մասսաների վստահությունը և արժանի դառնալ նրան:

Երրորդ—ամբողջ կուսակցական աշխատանքի վերակառուցումը նոր հեղափոխական յեղանակով՝ մասսաներին հեղափոխական պայքարի համար դաստիարակելու և նախապատրաստելու վոգով, վորովհետև միայն այդպես կարելի յե նախապատրաստել մասսաներին պրոլետարական հեղափոխության համար:

Չորրորդ—պրոլետարական կուսակցությունների ինքնաքննադատությունը, նրանց ուսուցումը և դաստիարակումն իրենց սեփական սխալների վրա, վորովհետև միայն այդպես կարելի յե դաստիարակել կուսակցության իսկական կադրեր և իսկական լիդերներ:

Սրանք են լենինիզմի մեթոդի հիմունքը և եյությունը:

Ինչպե՞ս եր կիրառվում այդ մեթոդը պրակտիկայում:

II Ինտերնացիոնալի ոպորտունիստներն ունեն մի շարք թեորիական դոգմաներ, վորոնցից նրանք միշտ սկսում են, ինչպես պարողները վառարանի մոտից: Վերցնենք դրանցից միքանիսը:

Դոգմա առաջին—պրոլետարիատի կողմից իշխանությունը

վերցնելու պայմանների մասին: Ոպորտունիստները հավատացնում են, վոր պրոլետարիատը չի կարող և չպետք ե վերցնի իշխանությունը, յեթե նա ինքը մեծամասնություն չի հանդիսանում յերկրում: Վոչ մի ապացույց, վորովհետև հնարավորություն չկա արդարացնելու այդ անհեթեթ դրույթը վո՛չ թեորիապես, վո՛չ ել գործնականորեն: Դիցուք թե, պատասխանում ե Լենինը II Ինտերնացիոնալի պարոններին: Լավ, իսկ յեթե ստեղծվել ե այնպիսի պատմական իրադրություն (պատերազմ, ագրարային ճգնաժամ և այլն), յերբ բնակչության փոքրամասնությունը կազմող պրոլետարիատը հնարավորություն ունի աշխատավոր մասսաների հսկայական մեծամասնությունն իր շուրջը համախմբելու,—նա ինչո՞ւ իշխանությունը չվերցնի: Ինչո՞ւ պրոլետարիատը չոգտագործի միջազգային և ներքին բարենպաստ իրադրությունը՝ կապիտալի ֆրոնտը ճեղքելու և հանդույցի ընդհանուր լուծումն արագացնելու համար: Մի՞թե Մարքսը դեռ անցյալ դարի 50-ական թվականներին չեր ասում, վոր Գերմանիայում պրոլետարական հեղափոխության բանը կարող եր «հիանալի» լինել, յեթե կարելի լիներ պրոլետարական հեղափոխությանն ոգնություն ցույց տալ «այսպես ասած, գյուղացիական պատերազմի յերկրորդ հրատարակությամբ»: Մի՞թե հայտնի չե բոլորին և ամեն մեկին, վոր Գերմանիայում այն ժամանակ պրոլետարները համեմատաբար ավելի քիչ եյին, քան, որինակ, Ռուսաստանում 1917 թվին: Մի՞թե ռուսական պրոլետարական հեղափոխության պրակտիկան ցույց չտվեց, վոր II Ինտերնացիոնալի հերոսների այդ սիրած դոգման պրոլետարիատի համար զուրկ ե վորևե կենսական նշանակությունից: Մի՞թե պարզ չե, վոր մասսաների հեղափոխական պայքարի պրակտիկան հերքում և ջախջախում ե այդ հնամաշ դոգման:

Դոգմա յերկրորդ—պրոլետարիատը չի կարող իր ձեռքում պահել իշխանությունը, յեթե նա առկա չունի բավական քանակությամբ պատրաստի կուլտուրական և ադմինիստրատորական կադրեր, վորոնք ընդունակ լինեյին կարգի գնել յերկրի կառավարումը. Նախ պետք ե պատրաստել այդ կադրերը կապիտալիզմի պայմաններում, և ապա իշխանությունը վերցնել: Դիցուք թե,

ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

պատասխանում ե Լենինը, բայց ինչո՞ւ չի կարելի գործն այնպես շուռ տալ, վոր նախ իշխանությունը վերցնենք, պրոլետարիատի զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծենք, և ապա—7-մղոնյան քայլերով առաջ շարժվենք՝ աշխատավորական մասսաների կուլտուրական մակարդակը բարձրացնելու, բանվորներից ղեկավարների և ադմինիստրատորների մեծաքանակ կադրեր պատրաստելու համար: Մի՞թե ռուսաստանյան պրակտիկան ցույց չտվեց, վոր բանվորներից ղեկավարների կադրերը պրոլետարական իշխանության որոք հարյուր անգամ ավելի արագ և ավելի հիմնականորեն են աճում, քան կապիտալի իշխանության որոք: Մի՞թե պարզ չե, վոր մասսաների հեղափոխական պայքարի պրակտիկան անողոքաբար ջախջախում ե ոպորտունիստների նաև այս թեորիական դոգման:

56463-66

Դոգմա յերրորդ—ընդհանուր քաղաքական գործադուլի մեթոդը պրոլետարիատի համար անընդունելի յե, վորովհետև թեորիապես սնանկ ե այն (տես՝ Էնգելսի քննադատությունը), գործնականորեն վտանգավոր (կարող ե խանգարել յերկրի տնտեսական կյանքի սովորական ընթացքը, կարող ե դատարկել արհեստակցական միությունների գանձարկղները), չի կարող փոխարինել պայքարի պառլամենտական ձևերին, վորոնք պրոլետարիատի դասակարգային կռվի գլխավոր ձևն են: Լավ, պատասխանում են լենինիստները: Բայց, նախ՝ Էնգելսը քննադատում եր վո՛չ թե ամեն մի ընդհանուր գործադուլ, այլ ընդհանուր գործադուլի միայն վորոշ տեսակը՝ անարխիստների ընդհանրական տնտեսական գործադուլը, վոր անարխիստներն առաջ եյին քաշում պրոլետարիատի քաղաքական պայքարի փոխարեն,—էլ ի՞նչ գործ ունի այստեղ ընդհանուր քաղաքական գործադուլի մեթոդը: Յերկրորդ՝ ո՞վ և վո՞րտեղ ե ապացուցել, վոր պայքարի պառլամենտական ձևը պրոլետարիատի պայքարի գլխավոր ձևն ե: Մի՞թե հեղափոխական շարժման պատմությունը ցույց չի տալիս, վոր պառլամենտական պայքարը լոկ մի դպրոց և ոժանդակ միջոց ե պրոլետարիատի արտապառլամենտական պայքարը կազմակերպելու համար, վոր բանվորական շարժման հիմնական հարցերը կապիտալիզմի որոք լուծվում են ուժով, պրոլետարական մասսաների անմիջական

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека

պայքարով, նրանց ընդհանուր գործադուլով, նրանց ապստամբությամբ։ Երրորդ՝ վո՞րտեղից մեջտեղ ընկավ պառլամենտական պայքարն ընդհանուր քաղաքական գործադուլի մեթոդով փոխարինելու հարցը։ Համաքաղաքական գործադուլի կողմնակիցները ե՞րբ և վո՞րտեղ են փորձել պայքարի պառլամենտական ձևերը փոխարինել պայքարի արտապառլամենտական ձևերով։ Չորրորդ՝ մի՞թե Ռուսաստանի հեղափոխությունը ցույց չտվեց, վոր ընդհանուր քաղաքական գործադուլը պրոլետարական հեղափոխության մեծագույն դպրոցն է և անփոխարինելի միջոց է կապիտալիզմի ամրությունների վրա գրոհելու նախօրյակին պրոլետարիատի ամենալայն մասսաներին մոբիլիզացիայի յենթարկելու և կազմակերպելու համար,—էլ ինչի՞ համար են այստեղ ֆիլիստերական տրտունջները անտեսական կյանքի սովորական ընթացքի խանգարման և արհեստակցական միությունների գանձարկղների մասին։ Մի՞թե պարզ չէ, վոր հեղափոխական պայքարի պրակտիկան ջախջախում է ոպորտունիստների և՛ այս դոգման։

Յեվ այլն և այլն։

Ահա թե ինչու Լենինն ասում էր, վոր «հեղափոխական թեորիան դոգմա չէ», վոր «նա վերջնականապես կազմավորվում է իրոք մասսայական և իրոք հեղափոխական շարժման պրակտիկայի հետ սերտորեն կապակցված լինելով միայն» («Մանկական հիվանդությունը»), վորովհետև թեորիան պետք է ծառայի պրակտիկային, վորովհետև «թեորիան պետք է պատասխանի պրակտիկայի առաջ քաշած հարցերին» («Ժողովրդի բարեկամները»), վորովհետև նա պետք է ստուգվի պրակտիկայի տվյալներով։

Ինչ վերաբերում է II Ինտերնացիոնալի կուսակցությունների քաղաքական լոզունգներին ու քաղաքական վորոշումներին, ապա բավական է վերհիշել «պատերազմ պատերազմին» լոզունգի հետ կապված պատմությունը, վորպեսզի հասկանանք այս կուսակցությունների քաղաքական պրակտիկայի ամբողջ կեղծությունն ու փտածությունը, կուսակցությունների, վորոնք իրենց անտիհեղափոխական գործը քողարկում են փքուն հեղափոխական լոզունգներով ու բանաձևերով։ Բոլորն էլ հիշում են Բազելի կոնգրեսում II Ինտերնացիոնալի կազմակերպած այն

փքուն ցույցը, վորն ապստամբության բոլոր սպառնալիքների տարափով և «պատերազմ պատերազմին» ահարկու լոզունգով ուղղված էր իմպերիալիստների դեմ, յեթե վերջիններս համարձակվեյին պատերազմ սկսել։ Բայց ո՞վ չի հիշում, վոր, վորոշ ժամանակ անց, պատերազմի հենց նախօրեյին, Բազելի բանաձևը մահուդի տակ դրվեց, իսկ բանվորներին նոր լոզունգ տրվեց՝ բնաջնջել իրար ի փառս կապիտալիստական հայրենիքի։ Մի՞թե պարզ չէ, վոր հեղափոխական լոզունգները և բանաձևերը գրոշ չարժեն, յեթե նրանք չեն ամրապնդվում գործով։ Բավական է միայն զուգադրել իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածելու լենինյան քաղաքականությունը և II Ինտերնացիոնալի դավաճանական քաղաքականությունը պատերազմի ժամանակ, վորպեսզի հասկանանք ոպորտունիզմի պոլիտիկանների ամբողջ ստորությունը, լենինիզմի մեթոդի ամբողջ վեհությունը։ Չեմ կարող այստեղ մեջ չբերել Լենինի «Պրոլետարական հեղափոխությունը և ռենեգատ Կաուցկին» գրքի մի տեղը, վորտեղ նա դաժանորեն խարազանում է II Ինտերնացիոնալի լիդեր Կ. Կաուցկու ոպորտունիստական փորձը՝ կուսակցությունների մասին դատելու վո՛չ թե նրանց գործերով, այլ նրանց թղթե լոզունգներով ու դոկումենտներով։

> «Կաուցկին անց է կացնում տիպիկ քաղքենիական, ֆիլիստերական քաղաքականություն, յերևակայելով... թե իբր լոզունգի առաջադրումը փոխում է գործը։ Բուրժուական դեմոկրատիայի ամբողջ պատմությունը մերկացնում է այդ պատրանքը. ժողովրդին խաբելու համար բուրժուական դեմոկրատներն ինչպիսի «լոզունգներ» ուզեք միշտ էլ առաջադրել են և միշտ առաջադրում են։ Բանն այն է, վոր ստուգենք նրանց անկեղծությունը, վոր խոսքերի հետ զուգադրենք գործերը, վոր չբավականանանք իդեալիստական կամ շառլատանական ֆրազով, այլ վորոնենք և գտնենք դասակարգային ռեալականությունը» (տե՛ս հ. XXIII, եջ 377)։

Էլ չեմ խոսում այն մասին, վոր II Ինտերնացիոնալի կուսակցությունները վախենում են ինքնաքննադատությունից — իրենց սխալները թաքցնելու, ցավոտ հարցերը քողարկելու, իրենց թերությունները բարեհաջողության այն կեղծ պարադով վարագուրելու նրանց մանիերայի մասին, վորը բթացնում է կեն-

դանի միտքը և արգելակում կուսակցության հեղափոխական դաստիարակումը սեփական սխալների վրա, այն մանեկրայի մասին, որ Լենինը ծաղրել և անարգանքի սյունին է գամել: Ահա թե ինչ է գրել Լենինը պրոլետարական կուսակցությունների ինքնաքննադատության մասին իր «Մանկական հիվանդությունը» բրոշյուրում.

«Քաղաքական կուսակցության վերաբերմունքը դեպի իր սխալները՝ կուսակցության լրջության և իր դասակարգի ու աշխատավոր մասսաների առաջ իր պարտականություններն իրապես կատարելու ամենակարևոր և ամենաճիշտ չափանիշներից մեկն է։ Բացահայտորեն ընդունել սխալը, բաց անել նրա պատճառները, վերլուծել նրան ծնող իրադրությունը, ուշադրությամբ քննարկել սխալն ուղղելու միջոցները,— ահա լուրջ կուսակցության հատկանիշը, ահա իր պարտականությունների կատարումը նրա կողմից, ահա դասակարգի, ապա նաև մասսայի դաստիարակությունն և ուսուցումը» (տե՛ս հ. XXV, էջ 200)։

Ոմանք ասում են, թե իր սեփական սխալների բացահայտումը և ինքնաքննադատությունը վտանգավոր են կուսակցության համար, որովհետև դրանք կարող են օգտագործվել հակառակորդի կողմից պրոլետարիատի կուսակցության դեմ։ Նման առարկությունները Լենինը համարում էր ոչ-լուրջ և միանգամայն սխալ: Ահա թե նա ինչ է ասել դրա մասին դեռ 1904 թվին իր «Մի քայլ առաջ» բրոշյուրում, երբ մեր կուսակցությունը դեռ թույլ էր ու աննշան.

«Նրանք (այսինքն՝ մարքսիստների հակառակորդները։ Ի. Ստ.) չարախնդում և կատաղում են՝ մեր վեճերը դիտելով. նրանք կջանան, իհարկե, իրենց նպատակների համար դուրս քաշել առանձին տեղեր իմ բրոշյուրից, որ նվիրված է մեր կուսակցության պակասություններին և թերություններին։ Ռուսական մարքսիստներն արդեն բավականաչափ կռված են ճակատամարտերում, որպեսզի չշփոթվեն այդ կծծոցներից, որպեսզի հակառակ նրանց՝ շարունակեն ինքնաքննադատության և սեփական մինուսների անողոք մերկացման իրենց աշխատանքը, մինուսներ, որոնք անպայման և անխուսափելիորեն կհաղթահարվեն բանվորական շարժման աճմամբ» (տե՛ս հ. VI, էջ 161)։

Ընդհանուր առմամբ՝ սրանք են լենինիզմի մեթոդի բնորոշ գծերը:

Այն, ինչ որ տրված է Լենինի մեթոդի մեջ, հիմնականում,

արդեն կար Մարքսի ուսմունքի մեջ, որը, ըստ Մարքսի խոսքերի, «իր էությամբ քննադատական է և հեղափոխական»: Հենց այդ քննադատական և հեղափոխական ոգին է, որով սկզբից և մինչև վերջը տոգորված է Լենինի մեթոդը: Բայց ճիշտ չէր լինի կարծել, թե Լենինի մեթոդը սոսկական վերականգնումն է այն բանի, ինչ տվել է Մարքսը: Իրականում Լենինի մեթոդը Մարքսի քննադատական ու հեղափոխական մեթոդի, նրա մատերիալիստական դիալեկտիկայի ո՛չ միայն վերականգնումն է, այլև կոնկրետացումը և հետագա զարգացումը:

III. ԹԵՈՐԻԱՆ

Այս թեմայից ես վերցնում եմ յերեք հարց. ա) թեորիայի նշանակության մասին պրոլետարական շարժման համար, բ) սոցիալ-դեմոկրատիայի «թեորիայի» քննադատությունը և գ) պրոլետարական հեղափոխության թեորիան:

1) Թեորիայի նշանակության մասին: Ոմանք կարծում են, թե լենինիզմը պրակտիկայի առաջնությունն է (պրիմատ) թեորիայի հանդեպ այն իմաստով, որ նրանում գլխավորը մարքսիստական դրույթները գործի վերածելն է, այդ դրույթների «կատարումը», իսկ ինչ վերաբերում է թեորիային, ապա դրա նկատմամբ լենինիզմը, իբր թե, բավական անհոգ է։ Հայտնի յե, որ Պլեխանովը քանիցս ծիծաղել է Լենինի՝ թեորիայի և մանավանդ փիլիսոփայության վերաբերյալ «անհոգության» վրա: Հայտնի յե նույնպես, որ այժմյան շատ պրակտիկ-լենինիստներ այնքան էլ բարեհաճ չեն դեպի թեորիան, մանավանդ այն հսկայական գործնական աշխատանքի պատճառով, որ ըստ իրադրության նրանք ստիպված են կատարել: Ես պետք է հայտարարեմ, որ այդ ավելի քան տարօրինակ կարծիքը Լենինի և լենինիզմի մասին միանգամայն սխալ է ու ոչ մի չափով չի համապատասխանում իրականությանը, որ թեորիայից խուսափելու վերաբերյալ պրակտիկների ձգտումը հակասում է լենինիզմի ամբողջ ոգուն և հղի յե գործին սպառնացող մեծ վտանգներով:

Թեորիան բոլոր յերկրների բանվորական շարժման փորձն է՝ իր ընդհանուր ձևով վերցրած: Իհարկե, թեորիան առարկայա-

զուրկ է դառնում, յեթե նա չի կապվում հեղափոխական պրակտիկայի հետ, ճիշտ նույնպես, ինչպես պրակտիկան էլ կույր է դառնում, յեթե նա չի լուսավորում իր ճանապարհը հեղափոխական թեորիայով: Բայց թեորիան կարող է բանվորական շարժման մեծագույն ուժը դառնալ, յեթե նա կազմավորվում է հեղափոխական պրակտիկայի հետ անքակտելիորեն կապակցված, վորովհետև նա՛, և միայն նա՛ կարող է շարժմանը տալ վստահություն, կողմնորոշման ուժ և շրջապատող իրադարձությունների ներքին կապի ըմբռնում, վորովհետև նա՛, և միայն նա՛ կարող է օգնել պրակտիկային հասկանալու վո՛չ միայն այն, թե ի՛նչպես և դեպի ո՛ւր են շարժվում դասակարգերը ներկայումս, այլև այն, թե ի՛նչպես և դեպի ո՛ւր պետք է շարժվեն նրանք ամենամոտիկ ապագայում: Վոչ այլ վոք, բայց յեթե Լենինն էր, վոր ասում և կրկնում էր տասնյակ անգամներ հայտնի դրույթն այն մասին, վոր

«Առանց հեղափոխական թեորիայի չի կարող հեղափոխական շարժում էլ լինել»*) (տե՛ս հ. IV, էջ 380):

Լենինն ավելի, քան վորևե մեկ ուրիշը, հասկանում էր թեորիայի կարևոր նշանակությունը, մանավանդ մի այնպիսի կուսակցության համար, ինչպիսին է մերը՝ շնորհիվ միջազգային պրոլետարիատի առաջավոր մարտիկի այն դերի, վոր բաժին է ընկել նրան, և նկատի առած նրան շրջապատող ներքին ու արտաքին իրադրության բարդությունը: Նախագուշակելով մեր կուսակցության այդ առանձնահատուկ դերը դեռ 1902 թ., նա արդեն այն ժամանակ հարկավոր էր համարում հիշեցնել, վոր՝

«Առաջավոր մարտիկի դերը կարող է կատարել միայն այն կուսակցությունը, վորը ղեկավարվում է առաջավոր թեորիայով» (տե՛ս հ. IV, էջ 380):

Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր այժմ, յերբ Լենինի այդ կանխագուշակությունը մեր կուսակցության դերի մասին արդեն կենսագործվել է, Լենինի այդ դրույթն ստանում է առանձին ուժ և առանձին նշանակություն:

Գուցե ամենացայտուն արտահայտությունն այն բարձր նշանակության, վոր տալիս էր Լենինը թեորիային, հարկավոր է

*) Ընդգծումն իմն է: Ի. Ստ.:

համարել այն փաստը, վոր վոչ այլ վոք, բայց յեթե Լենինը ձեռնարկեց իրագործելու լրջագույն մի խնդիր, այն է՝ ընդհանրացնել այն ամենակարևորը մատերիալիստական փիլիսոփայության վերաբերյալ, ինչ տվել է գիտությունը Ենգելսից մինչև Լենինը ձգվող ժամանակաշրջանում, և ամենակողմանի քննադատության յենթարկել մարքսիստների շրջանում գոյություն ունեցող հակամատերիալիստական հոսանքները: Ենգելսն ասում էր, վոր «ամեն մի նոր մեծ հայտնագործության դեպքում հարկ է լինում, վոր մատերիալիզմը նոր տեսք ընդունի»: Հայտնի յե, վոր այդ խնդիրն իր ժամանակի համար իրագործեց վոչ այլ վոք, բայց յեթե Լենինն իր «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» յերևելի գրքում: Հայտնի յե, վոր Պլեխանովը, վորը սիրում էր ծիծաղել փիլիսոփայության նկատմամբ Լենինի ունեցած «անհոգության» վրա, վճռականություն չունեցավ նույնիսկ լրջորեն դիմելու այդպիսի մի խնդրի իրագործման:

2) Տարերայնության «թեորիայի» քննադատությունը, կամ ավանգարդի դերը շարժման մեջ: Տարերայնության «թեորիան» ոպորտունիզմի թեորիան է, բանվորական շարժման տարերայնության առջև խոնարհվելու թեորիան, բանվոր դասակարգի ավանգարդի, բանվոր դասակարգի կուսակցության ղեկավարող դերի փաստական ժխտման թեորիան:

Տարերայնության առջև խոնարհվելու թեորիան վճռականապես դեմ է բանվորական շարժման հեղափոխական բնույթին. նա դեմ է այն բանին, վոր շարժումն ուղղվի կապիտալիզմի հիմունքների դեմ պայքարելու գծով. նա կողմնակից է, վոր շարժումն ընթանա բացառապես «իրագործելի», կապիտալիզմի համար «ընդունելի» պահանջների գծով. նա ամբողջությամբ կողմնակից է «նվազագույն դիմադրության գծին»: Տարերայնության թեորիան տրեդ-յունիոնիզմի իդեոլոգիան է:

Տարերայնության առջև խոնարհվելու թեորիան վճռականապես դեմ է տարերային շարժմանը գիտակցական, պլանաչափ բնույթ տալուն. նա դեմ է, վոր կուսակցությունն ընթանա բանվոր դասակարգի առջևից, վոր կուսակցությունը մասսաներին բարձրացնի մինչև գիտակցականության մակարդակը, վոր կուսակցությունն իր հետևից տանի շարժումը. նա կողմնակից է, վոր շարժման գիտակից տարրերը չխանգարեն շարժմանն իր

ճանապարհով գնալու. նա կողմնակից է, վոր կուսակցությունը լոկ ականջ դնի տարերային շարժմանը և նրա պոչից քարշ գա։ Տարերայնության թեորիան շարժման մեջ գիտակցական տարրի դերը նվազեցնելու թեորիան է, «պոչականության» գաղափարախոսությունը, ամեն մի ոպորտունիզմի տրամաբանական հիմունքը։

Գործնականորեն այդ թեորիան, վոր հրապարակ յեկավ դեռևս մինչև Ռուսաստանի առաջին հեղափոխությունը, հասցնում եր այն բանին, վոր նրա հետևողները, այսպես կոչված «էկոնոմիստները», ժխտում եյին ինքնուրույն բանվորական կուսակցության անհրաժեշտությունը Ռուսաստանում, դեմ եյին դուրս գալիս բանվոր դասակարգի հեղափոխական կռվին, վոր նա մղում եր ցարիզմը տապալելու համար, քարոզում եյին տրեդ-յունիոնիստական քաղաքականություն շարժման մեջ և ընդհանրապես բանվորական շարժումը հանձնում եյին լիբերալ բուրժուազիայի հեգեմոնիային։

Հին «Իսկրա»-յի պայքարը և «պոչականության» թեորիայի փայլուն քննադատությունը, վոր տրված է Լենինի «Ի՞նչ անել» բրոշյուրում, վո՛չ միայն ջախջախեցին այսպես կոչված «էկոնոմիզմը», այլև ռուսական բանվոր դասակարգի իսկապես հեղափոխական շարժման թեորիական հիմունքներն ստեղծեցին։

Առանց այդ պայքարի մտածելն անգամ ավելորդ եր Ռուսաստանում ինքնուրույն բանվորական կուսակցություն ստեղծելու և հեղափոխության մեջ նրա՝ ղեկավար դեր ունենալու մասին։

Բայց տարերայնության առջև խոնարհվելու թեորիան միայն ռուսական յերևույթ չէ։ Ճիշտ է, մի քիչ այլ ձևով, նա ամենալայն կերպով տարածված է II Ինտերնացիոնալի առանց բացառության բոլոր կուսակցությունների մեջ։ Յես նկատի ունեմ II Ինտերնացիոնալի լիդերների դուեհկացրած այսպես կոչված «արտադրողական ուժերի» թեորիան, վորն ամեն ինչ արդարացնում է և բոլորին հաշտեցնում, վորը հավաստում է փաստերն ու բացատրում է դրանք այն բանից հետո, յերբ նրանք արդեն ամենքին ձանձրացրել են, ու հավաստելով՝ դրանով հանգստանում է։ Մարքսն ասում եր, վոր մատերիալիստական թեորիան չի կարող սահմանափակվել աշխարհը բացատրե-

լով, վոր նա պետք է նաև փոփոխի աշխարհը։ Բայց Կաուցկին և ընկ. գործ չունեն դրա հետ. նրանք գերադասում են կառչած մնալ Մարքսի ֆորմուլի առաջին մասին։ Ահա այդ «թեորիայի» կիրառման բազմաթիվ որինակներից մեկը։ Ասում են, վոր իմպերիալիստական պատերազմի նախորյակին II Ինտերնացիոնալի կուսակցություններն սպառնում եյին «պատերազմին պատերազմ» հայտարարել, յեթե իմպերիալիստները պատերազմ սկսեն։ Ասում են, վոր պատերազմի հենց սկսման նախորեյին այդ կուսակցությունները «պատերազմ պատերազմին» լոզունգը մահուդի տակ դրին և կենսագործեցին դրան հակադիր «պատերազմ իմպերիալիստական հայրենիքի համար» լոզունգը։ Ասում են, վոր լոզունգների այդ փոփոխման հետևանք յեղան բանվորների միլլիոնավոր զոհերը։ Բայց սխալ կլիներ կարծել, թե այստեղ մեղավորներ կան, թե ինչ-վոր մեկը դավաճանել է բանվոր դասակարգին, կամ մատնել նրան։ Բոլորովին էլ վոչ։ Ամեն ինչ տեղի ունեցավ այնպես, ինչպես պետք է տեղի ունենար։ Նախ՝ այն պատճառով, վոր Ինտերնացիոնալը «խաղաղության գործիք է», և վոչ պատերազմի։ Յերկրորդ՝ այն պատճառով, վոր այն ժամանակ գոյություն ունեցած «արտադրողական ուժերի մակարդակի» պայմաններում ուրիշ վոչինչ չեր կարելի ձեռնարկել։ «Մեղավոր են» «արտադրողական ուժերը»։ Այս բանը «մեզ» ճշգրիտ կերպով բացատրում է պարոն Կաուցկու «արտադրողական ուժերի թեորիան»։ Իսկ ով չի հավատում այդ «թեորիային», նա մարքսիստ չէ։ Կուսակցությունների դե՞րը։ Նրանց նշանակությո՞ւնը շարժման մեջ։ Բայց ի՞նչ կարող է անել կուսակցությունն այնպիսի վճռողական գործոնի հանդեպ, ինչպես «արտադրողական ուժերի մակարդակն է»…

Կարելի յեր բերել մարքսիզմի ֆալսիֆիկացիայի այսպիսի որինակների մի ամբողջ կույտ։

Հազիվ թե կարիք կա ապացուցելու, վոր ֆալսիֆիկացիայի յենթարկված այս «մարքսիզմը», վորը կոչված է ծածկելու ոպորտունիզմի մերկությունը, լոկ յեվրոպական ձևի կերպարանափոխված «պոչականության» հենց այն թեորիան է, վորի դեմ կռվում եր Լենինը դեռևս մինչև առաջին ռուսական հեղափոխությունը։

Հազիվ թե կարիք կա ապացուցելու, վոր այդ թեորիական ֆալսիֆիկացիայի խորտակումը Արևմուտքում իսկապես հեղափոխական կուսակցություններ ստեղծելու նախապայմանն է:

3) Պրոլետարական հեղափոխության թեորիան: Պրոլետարական հեղափոխության լենինյան թեորիան յելնում է յերեք հիմնական դրույթներից:

Առաջին դրույթ: Ֆինանսական կապիտալի տիրապետությունը կապիտալիզմի առաջավոր յերկրներում. արժեթղթերի եմիսիան վորպես ֆինանսական կապիտալի ամենակարևոր ոպերացիա. կապիտալի արտահանությունը դեպի հումքի աղբյուրները վորպես իմպերիալիզմի հիմունքներից մեկը. ֆինանսական օլիգարխիայի ամենակարողությունը վորպես ֆինանսական կապիտալի տիրապետության արդյունք,—այս ամենը բացահայտում է մոնոպոլիստական կապիտալի կոպիտ-պարազիտային բնույթը, հարյուրապատիկ ավելի զգալի յե դարձնում կապիտալիստական տրեստների և սինդիկատների ճնշումը, ուժեղացնում է բանվոր դասակարգի զայրույթի աճումը կապիտալիզմի հիմունքների դեմ, մասսաներին մոտեցնում է պրոլետարական հեղափոխությանը վորպես միակ փրկության (տե՛ս Լենինի «Իմպերիալիզմը»):

Այստեղից՝ առաջին հետևությունը՝ հեղափոխական ճգնաժամի ուժեղանալը կապիտալիստական յերկրների ներսում, պայթյունի տարրերի աճելը «մետրոպոլիաների» ներքին, պրոլետարական ֆրոնտում:

Յերկրորդ դրույթ: Կապիտալի ուժեղացրած արտահանությունը դեպի գաղութային և կախյալ յերկրները. «ազդեցության վոլորտների» և գաղութային տիրապետությունների ընդարձակումն ընդհուպ մինչև ամբողջ յերկրագնդի ընդգրկումը. կապիտալիզմի վերածվելը ֆինանսական ստրկացման և յերկրագնդի բնակչության հսկայական մեծամասնությունը մի բուռն «առաջավոր» յերկրների կողմից գաղութային ճնշման յենթարկելու համաշխարհային սիստեմի,—այս ամենը, մի կողմից, առանձին ազգային տնտեսությունները և ազգային տերիտորիաները վեր է ածել մի միասնական շղթայի օղակների, վորը կոչվում է համաշխարհային տնտեսություն,—մյուս կողմից, բաժանել է յերկրագնդի բնակչությունը յերկու բանակի՝ մի բուռն «առա-

ջավոր» կապիտալիստական յերկրների, վորոնք շահագործում և ճնշում են լայնատարած գաղութային և կախյալ յերկրներին, և գաղութային ու կախյալ յերկրների հսկայական մեծամասնության, վորոնք ստիպված են պայքար մղել իմպերիալիստական ճնշումից ազատագրվելու համար (տե՛ս «Իմպերիալիզմը»):

Այստեղից՝ յերկրորդ հետևությունը. հեղափոխական ճգնաժամի աճումը գաղութային յերկրներում, զայրույթի տարրերի աճելն իմպերիալիզմի դեմ արտաքին, գաղութային ֆրոնտում:

Յերրորդ դրույթ: «Ազդեցության վոլորտների» և գաղութների մոնոպոլ տիրապետությունը. կապիտալիստական տարբեր յերկրների անհավասարաչափ զարգացումը, վորը տանում է դեպի կատաղի պայքար աշխարհն այն յերկրների միջև վերաբաժանելու համար, վորոնք արդեն զավթել են տերիտորիաները, և այն յերկրների միջև, վորոնք ցանկանում են իրենց «բաժինն» ստանալ. իմպերիալիստական պատերազմները վորպես խախտված «հավասարակշռությունը» վերականգնելու միակ միջոց.—այս ամենը տանում է դեպի յերրորդ ֆրոնտի՝ միջկապիտալիստական ֆրոնտի ուժեղացում, ֆրոնտ, վորը թուլացնում է իմպերիալիզմը և հեշտացնում է իմպերիալիզմի դեմ ուղղված առաջին յերկու ֆրոնտների՝ պրոլետարական-հեղափոխական ֆրոնտի և գաղութային-ազատագրական ֆրոնտի միավորումը (տե՛ս «Իմպերիալիզմը»):

Այստեղից՝ յերրորդ հետևությունը. պատերազմների անխուսափելիությունն իմպերիալիզմի օրոք և անխուսափելիությունը Յեվրոպայի պրոլետարական հեղափոխության ու Արևելքի գաղութային հեղափոխության կոալիցիայի, վորպես հեղափոխության մի միասնական համաշխարհային ֆրոնտի, վոր ուղղված է իմպերիալիզմի համաշխարհային ֆրոնտի դեմ:

Այս բոլոր հետևությունները Լենինի մոտ միավորվում, դառնում են մի ընդհանուր հետևություն այն մասին, վոր «իմպերիալիզմը սոցիալիստական հեղափոխության նախօրյակն է»*) (տե՛ս հ. XIX, եջ 71):

Դրան համապատասխան ել փոխվում է բուն մոտեցումը

*) Ընդգծումն իմն է: Ի. Ստ.:

պրոլետարական հեղափոխության հարցին, հեղափոխության բնույթի, նրա ծավալի, նրա խորության հարցին,—փոխվում է հեղափոխության սխեման ընդհանրապես:

Առաջներում պրոլետարական հեղափոխության նախադրյալների վերլուծությանը մոտենում եյին սովորաբար այս կամ այն առանձին յերկրի տնտեսական կացության տեսակետից: Այժմ այդ մոտեցումն արդեն թերի յե: Այժմ պետք է գործին մոտենալ բոլոր յերկրների, կամ յերկրների մեծամասնության տնտեսական կացության տեսակետից, համաշխարհային տնտեսության կացության տեսակետից, վորովհետև առանձին յերկրները և առանձին ազգային տնտեսությունները դադարել են ինքնաբավ միավորներ լինելուց, դարձել են համաշխարհային տնտեսություն կոչվող միասնական շղթայի օղակներ, վորովհետև հին «կուլտուրական» կապիտալիզմը վերաճել է իմպերիալիզմի, իսկ իմպերիալիզմը յերկրագնդի բնակչության հսկայական մեծամասնությանը մի բուռն «առաջավոր» յերկրների կողմից ֆինանսական ստրկացման և գաղութային ճնշման յենթարկելու համաշխարհային սիստեմ է:

Առաջներում ընդունված եր խոսել առանձին յերկրներում, կամ ավելի ճշգրիտ՝ այս կամ այն զարգացած յերկրում պրոլետարական հեղափոխության օբյեկտիվ պայմանների առկա կամ բացակա լինելու մասին: Այժմ այս տեսակետն արդեն թերի յե: Այժմ պետք է խոսել հեղափոխության օբյեկտիվ պայմանների առկայության մասին համաշխարհային իմպերիալիստական տնտեսության ամբողջ սիստեմի՝ վորպես մի միասնական ամբողջության՝ մեջ, ընդվորում արդյունաբերական տեսակետից բավարար չափով չզարգացած միքանի յերկրների առկայությունն այդ սիստեմի կազմի մեջ չի կարող անհաղթահարելի արգելք հանդիսանալ հեղափոխության համար, յերբ սիստեմն ամբողջությամբ առած կամ, ավելի ճիշտ, քանի վոր սիստեմն ամբողջությամբ առած արդեն հասունացել է հեղափոխության համար:

Առաջներում ընդունված եր խոսել այս կամ այն զարգացած յերկրի պրոլետարական հեղափոխության՝ վորպես մի առանձին ինքնաբավ մեծության՝ մասին, վորը հակադրված եր կապիտալի առանձին, ազգային ֆրոնտին, վորպես իր հակոտնյային: Այժմ այդ տեսակետն արդեն թերի յե: Այժմ պետք է խոսել համաշխարհային պրոլետարական հեղափոխության մասին, վորովհետև կապիտալի առանձին ազգային ֆրոնտները դարձել են իմպերիալիզմի համաշխարհային ֆրոնտ կոչվող միասնական շղթայի օղակներ, վորին պետք է հակադրվի բոլոր յերկրների հեղափոխական շարժման ընդհանուր ֆրոնտը:

Առաջներում պրոլետարական հեղափոխությունը դիտում եյին բացառապես իբրև տվյալ յերկրի ներքին զարգացման արդյունք: Այժմ այդ տեսակետն արդեն թերի յե: Այժմ պրոլետարական հեղափոխությունը պետք է դիտել, նախ և առաջ, վորպես իմպերիալիզմի համաշխարհային սիստեմի հակասությունների զարգացման արդյունք, վորպես այս կամ այն յերկրում համաշխարհային իմպերիալիստական ֆրոնտի շղթայի կտրվելու արդյունք:

Վո՞րտեղ կսկսվի հեղափոխությունը, ամենից առաջ վո՞րտեղ կարող է ճեղքվել կապիտալի ֆրոնտը, վո՞ր յերկրում:

Այնտեղ, վորտեղ արդյունաբերությունն ավելի յե զարգացած, վորտեղ պրոլետարիատը մեծամասնություն է կազմում, վորտեղ ավելի շատ կուլտուրականություն կա, վորտեղ ավելի շատ դեմոկրատիա կա,—պատասխանում եյին սովորաբար առաջներում:

Վո՛չ,—առարկում է հեղափոխության լենինյան թեորիան,—վոչ անպայման այնտեղ, վորտեղ արդյունաբերությունն ավելի յե զարգացած և այլն: Կապիտալի ֆրոնտը կճեղքվի այնտեղ, վորտեղ իմպերիալիզմի շղթան ավելի թույլ է, վորովհետև պրոլետարական հեղափոխությունն արդյունք է համաշխարհային իմպերիալիստական ֆրոնտի շղթայի կտրվելուն նրա ամենաթույլ տեղում, ընդվորում կարող է պատահել, վոր հեղափոխություն սկսած յերկիրը, կապիտալի ֆրոնտը ճեղքած յերկիրը, կապիտալիստական տեսակետից պակաս զարգացած լինի, քան մյուս, ավելի զարգացած յերկրները, վորոնք, սակայն, մնացել են կապիտալիզմի շրջանակներում:

1917 թվին իմպերիալիստական համաշխարհային ֆրոնտի շղթան ավելի թույլ դուրս յեկավ Ռուսաստանում, քան այլ

յերկրներում։ Այնտեղ էլ նա պատռվեց՝ յելք տալով պրոլետարական հեղափոխությանը։ Ինչո՞ւ։ Այն պատճառով, վոր Ռուսաստանում ծավալվում եր մեծագույն ժողովրդական հեղափոխություն, վորի գլուխն անցած՝ ընթանում եր հեղափոխական պրոլետարիատը, վորն ուներ այնպիսի լուրջ դաշնակից, ինչպիսին եր կալվածատիրոջ կողմից ճնշվող և շահագործվող բազմամիլիոն գյուղացիությունը։ Այն պատճառով, վոր հեղափոխության դեմ այնտեղ կանգնած եր իմպերիալիզմի մի այնպիսի նողկալի ներկայացուցիչ, ինչպիսին եր ցարիզմը, վորը զուրկ եր ամեն մի բարոյական կշռից և արժանացել եր բնակչության ընդհանուր ատելությանը։ Ռուսաստանում շղթան ավելի թույլ դուրս յեկավ, թեև Ռուսաստանը կապիտալիստական տեսակետից ավելի պակաս եր զարգացած, քան, ասենք, Ֆրանսիան կամ Գերմանիան, Անգլիան կամ Ամերիկան։

Վո՞րտեղ կպատռվի շղթան ամենամոտ ապագայում։ Դարձյալ այնտեղ, վորտեղ նա ավելի թույլ է։ Բացառելի չէ, վոր շղթան կարող է պատռվել, ասենք, Հնդկաստանում։ Ինչո՞ւ։ Այն պատճառով, վոր այնտեղ կա յերիտասարդ մարտական հեղափոխական պրոլետարիատ, վորն ունի այնպիսի մի լուրջ դաշնակից, ինչպիսին է ազգային ազատագրական շարժումը,—անկասկած մեծ և անկասկած լուրջ մի դաշնակից։ Այն պատճառով, վոր այնտեղ հեղափոխության առաջ կանգնած է այնպիսի, ամենքին հայտնի, մի հակառակորդ, ինչպես օտարերկրյա իմպերիալիզմն է, վորը զուրկ է բարոյական վարկից և արժանացել է Հնդկաստանի ճնշված ու շահագործվող մասսաների ընդհանուր ատելությանը։

Միանգամայն հնարավոր է նույնպես, վոր շղթան կարող է պատռվել Գերմանիայում։ Ինչո՞ւ։ Այն պատճառով, վոր այն ֆակտորները, վորոնք գործում են, ասենք, Հնդկաստանում, սկսում են գործել նաև Գերմանիայում, ընդսմին հասկանալի յե, վոր զարգացման մակարդակի հսկայական տարբերությունը, վոր գոյություն ունի Հնդկաստանի և Գերմանիայի միջև, չի կարող իր կնիքը չդնել Գերմանիայի հեղափոխության ընթացքի ու յելքի վրա։

Ահա թե ինչու Լենինն ասում է, վոր

«Արևմտա-յեվրոպական կապիտալիստական յերկրներն ավարտում են իրենց զարգացումը դեպի սոցիալիզմ... վո՛չ թե սոցիալիզմի հավասարաչափ «հասունացմամբ» այդ յերկրներում, այլ մի շարք պետությունների կողմից մյուսներին շահագործելու ճանապարհով, իմպերիալիստական պատերազմի ժամանակ հաղթված պետություններից առաջինին շահագործելու ճանապարհով, շահագործում, վոր միացած է վողջ Արևելքի շահագործմանը։ Իսկ Արևելքը, մյուս կողմից, վերջնականապես հեղափոխական շարժման մեջ է մտել հենց այդ առաջին իմպերիալիստական պատերազմի շնորհիվ և վերջնականապես ներքաշվել է հեղափոխական շարժման ընդհանուր շրջապտույտի մեջ» (տե՛ս հ. XXVII, էջ 416)։

Ավելի կարճ՝ իմպերիալիստական ֆրոնտի շղթան, վորպես կանոն, պետք է պատռվի այնտեղ, վորտեղ շղթայի օղակներն ավելի թույլ են, և, համենայն դեպս, վոչ պարտավորապես այնտեղ, վորտեղ կապիտալիզմն ավելի յե զարգացած, վորտեղ պրոլետարներն այսքան տոկոս են, իսկ գյուղացիներն՝ այսքան և այլն։

Ահա թե ինչու առանձին յերկրի բնակչության պրոլետարական կազմի տոկոսային հաշվարկման վերաբերյալ վիճակագրական հաշիվները պրոլետարական հեղափոխության հարցի լուծման ժամանակ կորցնում են այն բացառիկ նշանակությունը, վոր դրանց սիրով տալիս եյին II Ինտերնացիոնալի տիրացուները, վորոնք չեյին հասկացել իմպերիալիզմը և վախենում եյին հեղափոխությունից, ինչպես ժանտախտից։

Այնուհետև։ II Ինտերնացիոնալի հերոսները պնդում եյին (և շարունակում են պնդել), վոր, մի կողմից, բուրժուա-դեմոկրատական հեղափոխության և, մյուս կողմից, պրոլետարական հեղափոխության միջև անդունդ, կամ, համենայն դեպս, չինական պարիսպ գոյություն ունի, վորը մեկին բաժանում է մյուսից ավելի կամ պակաս յերկարատև մի ինտերվալով, վորի ընթացքում իշխանության գլուխ անցած բուրժուազիան զարգացնում է կապիտալիզմը, իսկ պրոլետարիատն ուժեր է կուտակում և պատրաստվում է «վճռական կռվի» ընդդեմ կապիտալիզմի։ Այդ ինտերվալը սովորաբար հաշվվում է շատ տասնյակ տարիներով, յեթե վոչ ավելի։ Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր չինական պարսպի այս «թեորիան» զուրկ է վորևէ գիտական իմաստից իմպերիալիզմի պայմաններում, վոր նա հանդիսանում է, և չի կարող չհանդիսանալ, բուրժուազիայի հակահեղափո-

խական ուժերի լոկ քողարկումը, դունազարդումը։ Հազիվ թե
հարկ կա ապացուցելու,որ ընդհարումներով և պատերազմներով
հղի իմպերիալիզմի պայմաններում, «սոցիալիստական հեղա-
փոխության նախօրեյի» պայմաններում, երբ «ծաղկած» կա-
պիտալիզմը վերածվում է «մեռնող» կապիտալիզմի, իսկ հեղա-
փոխական շարժումն աճում է աշխարհի բոլոր երկրներում,
երբ իմպերիալիզմը միանում է առանց բացառության բոլոր
ռեակցիոն ուժերին՝ ընդհուպ մինչև ցարիզմն ու ճորտատե-
րությունը, դրանով իսկ անհրաժեշտ դարձնելով կոալիցիան
բոլոր հեղափոխական ուժերի՝ սկսած Արևմուտքի պրոլետարա-
կան շարժումից մինչև ազգային-ազատագրական շարժումն Ա-
րևելքում, երբ ավատական-ճորտատիրական կարգերի մնա-
ցուկների տապալումն անհնար է դառնում առանց իմպերիալիզ-
մի դեմ հեղափոխական պայքար մղելու,—հազիվ թե հարկ կա
ապացուցելու, որ բուրժուա-դեմոկրատական հեղափոխու-
թյունը, ավելի կամ պակաս զարգացած երկրում, այդպիսի
պայմաններում պետք է մոտենա պրոլետարական հեղափոխու-
թյանը, որ առաջինը պետք է վերաճի երկրորդին։ Ռուսաս-
տանի հեղափոխության պատմությունն ակներև կերպով ապա-
ցուցեց այս դրույթի ճշտությունն ու անառարկելիությունը։
Իզուր չէ, որ Լենինը դեռևս 1905 թվին, ռուսական առաջին
հեղափոխության նախօրյակին, իր «Երկու տակտիկա» բրո-
շյուրում բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը և սո-
ցիալիստական հեղաշրջումը պատկերում էր որպես մի շղթայի
երկու օղակները, որպես ռուսական հեղափոխության թափի
միասնական և ամբողջական նկար։

«Պրոլետարիատը պետք է մինչև վերջը տանի դեմոկրատական հե-
ղաշրջումը, իրեն միացնելով գյուղացիության մասսան, որպեսզի ու-
ժով ճզմի ինքնակալության դիմադրությունը և չլուծի բուրժուազիայի
անկայունությունը։ Պրոլետարիատը պետք է սոցիալիստական հեղաշրջ-
ջում կատարի, իրեն միացնելով բնակչության կիսապրոլետարական
տարրերի մասսան, որպեսզի ուժով կոտրի բուրժուազիայի դիմադրու-
թյունը և չլուծի գյուղացիության ու մանր բուրժուազիայի անկայու-
նությունը։ Սրանք են պրոլետարիատի խնդիրները, որոնք այնպես նեղ
կերպով են պատկերացնում նոր«իսկրայականները» հեղափոխության թա-
փի վերաբերյալ իրենց բոլոր դատողություններում և բանաձևերում»
(տե՛ս հ. VIII, էջ 96)։

Ու ես չեմ խոսում Լենինի ուրիշ, ավելի ուշ ժամանակի աշ-
Եվ ես չեմ խոսում Լենինի ուրիշ, ավելի ուշ ժամանակի աշ-
խատությունների մասին, որտեղ բուրժուական հեղափոխու-
թյան պրոլետարականի վերաճելու գաղափարը հանդես է գալի
ավելի ցցուն, քան «Երկու տակտիկայում», որպես հեղափո-
խության լենինյան թեորիայի անկյունաքարերից մեկը։

Բանից դուրս է գալիս, որ ընկերներից ոմանք յենթա-
դրում են, թե Լենինն այդ գաղափարին հանդել է միայն
1916 թվին, որ մինչև այդ ժամանակը նա, իբր թե, գտնում
էր, որ հեղափոխությունը Ռուսաստանում կանգ կառնի բուր-
ժուական շրջանակներում, որ իշխանությունը, հետևաբար,
պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրայի օրգանի
ձեռքից կանցնի ո՛չ թե պրոլետարիատի, այլ բուրժուազիայի
ձեռքը։ Ասում են, թե այս պնդումը թափանցել է նույնիսկ մեր
կոմունիստական մամուլի մեջ։ Ես պետք է ասեմ, որ այդ
պնդումը բոլորովին սխալ է, որ այն բոլորովին չի համապա-
տասխանում իրականությանը։

Ես կարող եմ վկայակոչել Լենինի հայտնի ճառը կուսակ-
ցության III համագումարում (1905 թ.), որտեղ նա պրոլե-
տարիատի և գյուղացիության դիկտատուրան, այսինքն՝ դեմո-
կրատիկ հեղափոխության հաղթանակը որակում էր ո՛չ թե
«կարգուկանոնի կազմակերպում», այլ որպես «պա-
տերազմի կազմակերպում» (տե՛ս հ. VII, էջ 264)։

Այնուհետև ես կարող եմ վկայակոչել Լենինի «Ժամանա-
կավոր կառավարության մասին» (1905 թ.) հայտնի հոդված-
ները, որտեղ նա, պատկերելով ռուսական հեղափոխության
ծավալման հեռանկարը, կուսակցության առաջ խնդիր է դնում՝
«հասնել այն բանին, որ ռուսական հեղափոխությունը լինի
ո՛չ թե միքանի ամսվա շարժում, այլ շատ տարիների շար-
ժում, որպեսզի նա հանդեցնի ո՛չ միայն բարձր իշխանություն-
ների կողմից արված լոկ մանր զիջումներին, այլ այդ իշխանու-
թյունների լիակատար տապալմանը», որտեղ նա, այդ հեռա-
նկարն ավելի ծավալելով և այն կապելով Եվրոպայի հեղափո-
խության հետ, շարունակում է.

«Իսկ յեթե այդ հաջողվի,—այն ժամանակ... այն ժամանակ հեղա-
փոխական հրդեհը կվառի Եվրոպան. բուրժուական ռեակցիայում տա-

գույն ռեզերվ հանդիսացող գյուղացիության դերը նրանց կողմից թերագնահատվելու պատճառով, պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարը նրանց չհասկանալու պատճառով:

«Պերմանենտ» հեղափոխության գաղափարը նոր գաղափար չէ: Առաջին անգամ այն առաջադրեց Մարքսը 40-ական թվականների վերջում՝ «Կոմունիստների միությանը» ուղղած իր հայտնի «Դիմումի» մեջ (1850 թ.): Հենց այդ դոկումենտից են վերցրել մեր «պերմանենտականները» անընդհատ հեղափոխության գաղափարը: Հարկավոր է նկատել, վոր մեր «պերմանենտականները», այդ գաղափարը Մարքսից վերցնելով, փոքր ինչ ձևափոխել են այն և, ձևափոխելով, «փչացրել» են այն, անպետք դարձնելով պրակտիկ գործածության համար: Հարկավոր էր Լենինի փորձված ձեռքը՝ այդ սխալը շտկելու, Մարքսի անընդհատ հեղափոխության գաղափարն իր մաքուր ձևով վերցնելու և այն՝ հեղափոխության իր թեորիայի անկյունաքարերից մեկը դարձնելու համար:

Ահա թե ինչ է ասում Մարքսն իր «Դիմումի» մեջ անընդհատ հեղափոխության մասին այն բանից հետո, երբ թվարկում է մի շարք հեղափոխական-դեմոկրատական պահանջներ, վորոնց նվաճելու համար կոչ է անում նա կոմունիստներին.

«Այն ժամանակ, երբ դեմոկրատական մանր բուրժուաները ցանկանում են վերոհիշյալ պահանջների կարելույն չափ մեծ մասն իրագործելով վորքան հնարավոր է արագ ավարտել հեղափոխությունը, մեր շահերը և մեր խնդիրները կայանում են նրանում, վոր հեղափոխությունն անընդհատ դարձնենք մինչև այն ժամանակը, երբ բոլոր ավելի կամ պակաս ունևոր դասակարգերը կհեռացվեն տիրապետությունից, երբ պրոլետարիատը պետական իշխանությունը կնվաճի, երբ պրոլետարների ասոցիացիաները վո՛չ միայն մի երկրում, այլև աշխարհի բոլոր տիրապետող երկրներում այնքան կզարգանան, վոր այդ երկրների պրոլետարների միջև մրցումը կդադարի և մինչև վոր, գոնե, վճռողական արտադրողական ուժերը կկենտրոնացված կլինեն պրոլետարների ձեռքում»:

Այլ կերպ ասած՝

ա) Մարքսը բնավ չէր առաջարկում 50-ական թվականների Գերմանիայում հեղափոխության գործն սկսել ուղղակի պրոլետարական իշխանությունից՝ հակառակ մեր ռուսական «պերմանենտականների» պլանների.

բ) Մարքսն առաջարկում էր միայն պսակել հեղափոխության գործը պրոլետարական պետական իշխանությամբ, իշխանության բարձունքից քայլ առ քայլ ցած գլորելով բուրժուազիայի մի ֆրակցիան մյուսի հետևից, այն հաշվով, վորպեսզի պրոլետարիատի իշխանություն նվաճելուց հետո՝ բոլոր երկրներում հեղափոխություն բորբոքի,—լիովին համապատասխան այն ամենին, ինչ ուսուցանում էր Լենինը և ինչ կենսագործում էր նա մեր հեղափոխության ընթացքում, հետևելով իմպերիալիզմի պայմաններում կատարվող պրոլետարական հեղափոխության իր թեորիային:

Բանից դուրս է գալիս, վոր մեր ռուսական «պերմանենտականները» վո՛չ միայն թերագնահատել են գյուղացիության դերը ռուսական հեղափոխության մեջ և պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարի նշանակությունը, այլև դեռ կերպարանափոխել են (դեպի վատը) «պերմանենտ» հեղափոխության մարքսյան գաղափարը, պրակտիկայի համար անպետք դարձնելով այն:

Ահա թե ինչու Լենինը ծաղրում էր մեր «պերմանենտականների» թեորիան, այն անվանելով «օրիգինալ» և «սքանչելի» ու մեղադրելով նրանց այն բանում, վոր նրանք չեն ցանկանում «մտածել այն մասին, թե ինչ պատճառներով կյանքն ամբողջ տաս տարի անցել է այդ սքանչելի թեորիայի կողքով» (Լենինի հոդվածը գրված է 1915 թվին, 10 տարի անց այն ժամանակից, երբ Ռուսաստանում երևան եկավ «պերմանենտականների» թեորիան,—տե՛ս հ. XVIII, եջ 317):

Ահա թե ինչու Լենինն այդ թեորիան կիսամենշևիկյան էր համարում՝ ասելով, վոր նա «բոլշևիկներից վերցնում է պրոլետարիատի վճռական հեղափոխական պայքարի և նրա կողմից քաղաքական իշխանություն նվաճելու կոչը, իսկ մենշևիկներից— գյուղացիության դերի «ժխտումը»» (տե՛ս Լենինի «Հեղափոխության երկու գծերի մասին» հոդվածը, նույն տեղում):

Սրանք են բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը պրոլետարականի վերածելու, «անհապաղ» պրոլետարական հեղափոխությանն անցնելու համար բուրժուական հեղափոխությունն օգտագործելու վերաբերյալ Լենինի գաղափարները:

Այնուհետև: Առաջներում հեղափոխության հաղթությունը

տալած յունկերական բանվորն իր հերթին կենի և ցույց կտա մեզ, թե «այդ ինչպես է արվում»։ Այն ժամանակ Եվրոպայի հեղափոխական վերելքը հակադարձ ազդեցություն կանի Ռուսաստանի վրա, և միքանի հեղափոխական տարիների դարաշրջանը կդարձնի միքանի հեղափոխական տասնամյակների դարաշրջան»... (տե՛ս նույն տեղը, էջ 191)։

Այնուհետև, յես կարող եյի վկայակոչել Լենինի հայտնի հոդվածը, որ հրապարակված է 1915 թվի նոյեմբերին, որտեղ նա գրում է.

«Պրոլետարիատը պայքարում է և անձնվիրաբար պայքարելու է հանուն իշխանության նվաճման, հանուն հանրապետության, հանուն հողերի կոնֆիսկացիայի... հանուն «ոչ-պրոլետարական ժողովրդական մասսաների» մասնակցության բուրժուական Ռուսաստանի ազատագրման ռազմա-ֆեոդալական «իմպերիալիզմից» (= ցարիզմից)։ Եվ պրոլետարիատը բուրժուական Ռուսաստանը ցարիզմից, կալվածատերերի հողային իշխանությունից ազատագրվելու այդ հանգամանքից անհապաղ*) կօգտվի ո՛չ թե նրա համար, որպեսզի օգնի ունևոր գյուղացիներին այն պայքարում, որ նրանք մղում են գյուղական բանվորի դեմ, այլ — նրա համար, որպեսզի Եվրոպայի պրոլետարների դաշնակցած՝ սոցիալիստական հեղափոխություն կատարի» (տե՛ս հ. XVIII, էջ 318)։

Վերջապես, յես կարող եյի վկայակոչել Լենինի «Պրոլետարական հեղափոխությունը և ռենեգատ Կաուցկին» բրոշյուրի հայտնի տեղը, որտեղ նա, վկայակոչելով «Երկու տակտիկայից» վերևում բերված ցիտատը ռուսական հեղափոխության թափի մասին, գալիս է հետևյալ յեզրակացության.

«Հենց այնպես յեղավ, ինչպես մենք եյինք ասում։ Հեղափոխության ընթացքը հաստատեց մեր դատողության ճշտությունը։ Սկզբում «ամբողջ» գյուղացիության հետ միասին միապետության դեմ, կալվածատերերի դեմ, միջնադարի դեմ (և այդչափով հեղափոխությունը մնում է բուրժուական, բուրժուա-դեմոկրատական)։ Ապա ամենաչքավոր գյուղացիության հետ միասին, կիսապրոլետարիատի հետ միասին, բոլոր շահագործվողների հետ միասին կապիտալիզմի դեմ, այդ թվում գյուղական հարուստների դեմ, կուլակների, սպեկուլյանտների դեմ, և այդչափով հեղափոխությունը դառնում է սոցիալիստական։ Փորձել արհեստական չինական պարիսպ կանգնեցնել մեկի և մյուսի միջև, բաժանել դրանց միմյանցից որևէ այլ բանով, քան պրոլետարիատի պատրաստականության աստիճանն է և գյուղական չքավորության հետ պրոլետարիատի միավորվելու աստիճանը, — դա մարքսիզմի մեծագույն աղավաղումն է, նրա գռեհկացումը, փոխարինումը լիբերալիզմով» (տե՛ս հ. XXIII, էջ 391)։

*) Ընդգծումն իմն է։ Ի. Ստ.։

Կարծեմ, բավական է։

Լա՛վ, կասեն մեզ, բայց Լենինն, այդ դեպքում, ինչո՞ւ յեր մարտնչում «պերմանենտ (անընդհատ) հեղափոխության» գաղափարի դեմ։

Այն պատճառով, որ Լենինն առաջարկում եր «սպառել» գյուղացիության հեղափոխական ընդունակությունները և մինչև հատակն օգտագործել նրա հեղափոխական յեռանդը ցարիզմի լիակատար լիկվիդացիայի համար, պրոլետարական հեղափոխությանն անցնելու համար, մինչդեռ «պերմանենտ հեղափոխության» կողմնակիցները չեյին հասկանում գյուղացիության դերը ռուսական հեղափոխության մեջ, թերագնահատում եյին գյուղացիության հեղափոխական յեռանդի ուժը, թերագնահատում եյին ռուսական պրոլետարիատի ուժն ու ընդունակությունը՝ իր հետևից տանելու գյուղացիությունը և, այդպիսով, դժվարացնում եյին բուրժուազիայի ազդեցությունից գյուղացիությունն ազատագրելու գործը, գյուղացիությունը պրոլետարիատի շուրջը համախմբելու գործը։

Այն պատճառով, որ Լենինն առաջարկում եր հեղափոխության գործը պսակել իշխանությունը պրոլետարիատի ձեռքն անցնելով, այնինչ «պերմանենտ» հեղափոխության կողմնակիցները մտածում եյին գործն սկսել ուղղակի պրոլետարիատի իշխանությունից, չհասկանալով, որ դրանով իսկ իրենք փակում են իրենց աչքերն այնպիսի «մանրունքի» հանդեպ, ինչպես ճորտատիրության մնացուկներն են, և հաշվի չեն առնում այնպիսի մի լուրջ ուժ, ինչպես ռուսական գյուղացիությունն է, չհասկանալով, որ այդպիսի քաղաքականությունը կարող է միայն արգելակել գյուղացիությունը պրոլետարիատի կողմը նվաճելու գործը։

Հետևաբար, Լենինը մարտնչում եր «պերմանենտ» հեղափոխության կողմնակիցների դեմ ո՛չ թե անընդհատության հարցի պատճառով, քանի որ Լենինն ինքը կանգնած եր անընդհատ հեղափոխության տեսակետի վրա, այլ պրոլետարիատի մեծա-

գույն ռեզերվ հանդիսացող գյուղացիության դերը նրանց կողմից թերագնահատվելու պատճառով, պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարը նրանց չհասկանալու պատճառով:

«Պերմանենտ» հեղափոխության գաղափարը նոր գաղափար չէ: Առաջին անգամ այն առաջադրեց Մարքսը 40-ական թվականների վերջում՝ «Կոմունիստների միությանը» (1850 թ.) ուղղած իր հայտնի «Դիմումի» մեջ: Հենց այդ դոկումենտից էլ վերցրել են մեր «պերմանենտականները» անընդհատ հեղափոխության գաղափարը: Հարկավոր է նկատել, որ մեր «պերմանենտականները», այդ գաղափարը Մարքսից վերցնելով, փոքր ինչ ձևափոխել են այն և, ձևափոխելով, «փչացրել» են այն, անպետք դարձնելով պրակտիկ գործածության համար: Հարկավորվեց Լենինի փորձված ձեռքը՝ այդ սխալը շտկելու, Մարքսի անընդհատ հեղափոխության գաղափարն իր մաքուր ձևով վերցնելու և այն՝ հեղափոխության իր թեորիայի անկյունաքարերից մեկը դարձնելու համար:

Ահա թե ինչ է ասում Մարքսն իր «Դիմումի» մեջ անընդհատ հեղափոխության մասին այն բանից հետո, երբ թվարկում է մի շարք հեղափոխական-դեմոկրատական պահանջներ, որոնց նվաճելու համար կոչ է անում նա կոմունիստներին.

«Այն ժամանակ, երբ դեմոկրատական մանր բուրժուաները ցանկանում են վերոհիշյալ պահանջների կարելույն չափ մեծ մասն իրագործելով որքան հնարավոր է արագ ավարտել հեղափոխությունը, մեր շահերը և մեր խնդիրները կայանում են նրանում, որ հեղափոխությունն անընդհատ դարձնենք մինչև այն ժամանակը, երբ բոլոր ավելի կամ պակաս ունևոր դասակարգերը կհեռացվեն տիրապետությունից, երբ պրոլետարիատը պետական իշխանություն կնվաճի, երբ պրոլետարների ասոցիացիաները ո՛չ միայն մի յերկրում, այլև աշխարհի բոլոր տիրապետող յերկիրներում այնքան կզարգանան, որ այդ յերկիրների պրոլետարների միջև մրցումը կդադարի և մինչև որ, գոնե, վճռական արտադրողական ուժերը կենտրոնացված կլինեն պրոլետարների ձեռքում»:

Այլ կերպ ասած՝

ա) Մարքսը բնավ չէր առաջարկում 50-ական թվականների Գերմանիայում հեղափոխության գործն սկսել ուղղակի պրոլետարական իշխանությունից՝ հակառակ մեր ռուսական «պերմանենտականների» պլանների.

բ) Մարքսն առաջարկում էր միայն պսակել հեղափոխության գործը պրոլետարական պետական իշխանությամբ, իշխանության բարձունքից քայլ առ քայլ ցած գլորելով բուրժուազիայի մի ֆրակցիան մյուսի հետևից, այն հաշվով, որպեսզի պրոլետարիատի իշխանություն նվաճելուց հետո՝ բոլոր յերկրներում հեղափոխություն բորբոքի.—լիովին համապատասխան այն ամենին, ինչ ուսուցանում էր Լենինը և ինչ կենսագործում էր նա մեր հեղափոխության ընթացքում, հետևելով իմպերիալիզմի պայմաններում կատարվող պրոլետարական հեղափոխության իր թեորիային:

Բանից դուրս է գալիս, որ մեր ռուսական «պերմանենտականները» ո՛չ միայն թերագնահատել են գյուղացիության դերը ռուսական հեղափոխության մեջ և պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարի նշանակությունը, այլև դեռ կերպարանափոխել են (դեպի վատը) «պերմանենտ» հեղափոխության մարքսյան գաղափարը, պրակտիկայի համար անպետք դարձնելով այն:

Ահա թե ինչու Լենինը ծաղրում էր մեր «պերմանենտականների» թեորիան, այն անվանելով «օրիգինալ» և «սքանչելի» ու մեղադրելով նրանց այն բանում, որ նրանք չեն ցանկանում «մտածել այն մասին, թե ինչ պատճառներով կյանքն ամբողջ տաս տարի անցել է այդ սքանչելի թեորիայի կողքով» (Լենինի հոդվածը գրված է 1915 թվին, 10 տարի անց այն ժամանակից, երբ Ռուսաստանում երևան եկավ «պերմանենտականների» թեորիան,—տե՛ս հ. XVIII, էջ 317):

Ահա թե ինչու Լենինն այդ թեորիան կիսամենշևիկական էր համարում՝ ասելով, որ նա «բոլշևիկներից վերցնում է պրոլետարիատի վճռական հեղափոխական պայքարի և նրա կողմից քաղաքական իշխանություն նվաճելու կոչը, իսկ մենշևիկներից— գյուղացիության դերի «ժխտումը»» (տե՛ս Լենինի «Հեղափոխության երկու գծերի մասին» հոդվածը, նույն տեղում):

Սրանք են բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը պրոլետարականի վերաճելու, «անհապաղ» պրոլետարական հեղափոխությանն անցնելու համար բուրժուական հեղափոխությունն օգտագործելու վերաբերյալ Լենինի գաղափարները:

Այնուհետև: Առաջներում հեղափոխության հաղթությունը

մի յերկրում անհնարին եյին համարում, յենթադրելով, թե բուրժուազիային հաղթելու համար անհրաժեշտ ե բոլոր առաջավոր յերկրների պրոլետարների կամ, գոնե, այդպիսի յերկրների մեծ մասի պրոլետարների միատեղ ելույթը։ Այժմ այդ տեսակետն այլևս իրականության չի համապատասխանում։ Այժմ հարկավոր ե ելնել այդպիսի հաղթության հնարավորությունից, վորովհետև իմպերիալիզմի պայմաններում տարբեր կապիտալիստական յերկրների անհավասարաչափ և թռիչքաձև զարգացման բնույթը, դեպի անխուսափելի պատերազմներ տանող կատաստրոֆիկ հակասությունների զարգանալը իմպերիալիզմի ներսում, հեղափոխական շարժման աճումն աշխարհի բոլոր յերկրներում—այս ամենը տանում ե վո՛չ միայն դեպի պրոլետարիատի հաղթության հնարավորությունն առանձին յերկրներում, այլև դեպի այդ հաղթության անհրաժեշտությունը։ Դրա ուղղակի ապացույցը Ռուսաստանի հեղափոխության պատմությունն ե։ Ընդսմին անհրաժեշտ ե միայն հիշել, վոր բուրժուազիայի տապալումը հաջողությամբ կարող ե իրականացվել միայն այն դեպքում, յեթե առկա յեն միքանի, միանգամայն անհրաժեշտ, պայմաններ, առանց վորոնց առկայության՝ պրոլետարիատի կողմից իշխանություն վերցնելու մասին մտածելն անգամ ավելորդ ե։

Ահա թե ինչ ե ասում Լենինն այդ պայմանների մասին իր «Մանկական հիվանդությունը» բրոշյուրում.

«Հեղափոխության հիմնական որենքը, վոր հաստատված ե բոլոր հեղափոխություններով և, մասնավորապես, բոլոր յերեք ռուսական հեղափոխություններով XX դարում, ահա թե ինչում ե կայանում. հեղափոխության համար բավական չե, վոր շահագործվող և ճնշված մասսաները գիտակցեն ըստ հնի ապրելու անկարելիությունը և պահանջեն փոփոխություններ. հեղափոխության համար անհրաժեշտ ե, վոր շահագործողները չկարողանան ապրել և կառավարել ըստ հնի։ Միայն այն ժամանակ, յերբ «ստորին խավերը» չեն ուզում հինը և յերբ «վերին խավերը» չեն կարող ըստ հնի, միայն այն ժամանակ հեղափոխությունը կարող ե հաղթել։ Այլ կերպ այս ճշմարտությունն արտահայտվում ե այս բառերով. հեղափոխությունն անհնարին ե առանց համազգային (թե՛ շահագործվողների, թե՛ շահագործողների շահերը շոշափող) ճգնաժամի*)։ Նշանակում ե, հեղափոխության համար հարկավոր ե, նախ՝

*) Ընդգծումն իմն ե։ Ի. Ստ.։

հասնել այն բանին, վոր բանվորների մեծամասնությունը (կամ, գոնե, գիտակից, մտածող, քաղաքականապես ակտիվ բանվորների մեծամասնությունը) լրիվին հասկանա հեղաշրջման անհրաժեշտությունը և պատրաստ լինի հանուն նրա իր կյանքը զոհելու. յերկրորդ՝ վոր կառավարող դասակարգերն ապրեն կառավարական ճգնաժամ, վորը քաղաքականության մեջ ե ներքաշում նույնիսկ ամենահետամնաց մասսաներին.... ուժասպառ ե անում կառավարությանը և հեղափոխականների համար հնարավոր ե դարձնում նրա արագ տապալումը» (տե՛ս հ. XXV, եջ 223)։

Բայց տապալել բուրժուազիայի իշխանությունը և պրոլետարիատի իշխանություն հաստատել մի յերկրում—դեռ չի նշանակում ապահովել սոցիալիզմի լիակատար հաղթությունը։ Ամրապնդելով իր իշխանությունը և իր հետևից տանելով գյուղացիությունը՝ հաղթած յերկրի պրոլետարիատը կարող ե և պետք ե սոցիալիստական հասարակություն կառուցի։ Բայց արդյո՞ք այդ նշանակում ե, վոր նա դրանով իսկ կհասնի սոցիալիզմի լիակատար, վերջնական հաղթանակի, այսինքն՝ արդյո՞ք այդ նշանակում ե, վոր նա կարող ե միայն մի յերկրի ուժերով վերջնականապես ամրապնդել սոցիալիզմը և լրիվին ապահովել յերկիրն ինտերվենցիայից, նշանակում ե նաև ռեստավրացիայից։ Վո՛չ, չի նշանակում։ Դրա համար հարկավոր ե հեղափոխության հաղթանակ գոնե միքանի յերկրներում։ Այդ պատճառով այլ յերկրների հեղափոխության զարգացումը և նրան աջակցելը հաղթած հեղափոխության եյական խնդիրն ե։ Այդ պատճառով հաղթած յերկրի հեղափոխությունը պետք ե դիտի իրեն վո՛չ թե վորպես ինքնաբավ մեծություն, այլ վորպես ոժանդակ, վորպես միջոց՝ արագացնելու պրոլետարիատի հաղթանակն այլ յերկրներում։

Լենինն այս միտքն արտահայտել ե յերկու խոսքով, ասելով, վոր հաղթած հեղափոխության խնդիրն ե՝ անցկացնել «մի յերկրում իրագործելիի առավելագույնը՝ բոլոր յերկրներում հեղափոխությունը զարգացնելու, նրան աջակցելու, այն արթնացնելու համար» (տե՛ս հ. XXIII, եջ 385)։

Սրանք են, ընդհանուր առմամբ, պրոլետարական հեղափոխության լենինյան թեորիայի բնորոշ գծերը։

IV. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ

Այս թեմայից յես վերցնում եմ յերեք հիմնական հարց․ ա) պրոլետարիատի դիկտատուրան վորպես պրոլետարական հեղափոխության գործիք, բ) պրոլետարիատի դիկտատուրան վորպես պրոլետարիատի տիրապետություն բուրժուազիայի նկատմամբ, գ) խորհրդային իշխանությունը վորպես պրոլետարիատի դիկտատուրայի պետական ձև։

1) Պրոլետարիատի դիկտատուրան վորպես պրոլետարական հեղափոխության գործիք։ Պրոլետարական դիկտատուրայի հարցն ամենից առաջ պրոլետարական հեղափոխության հիմնական բովանդակության հարցն է։ Պրոլետարական հեղափոխությունը, նրա շարժումը, նրա թափը, նրա նվաճումները միս ու արյուն են ստանում միայն պրոլետարիատի դիկտատուրայի միջոցով։ Պրոլետարիատի դիկտատուրան պրոլետարական հեղափոխության գործիքն է, նրա որգանը, նրա կարևորագույն հենակետը, վոր կյանքի յե կոչված նրա համար, վորպեսզի, նախ՝ ճնշի տապալված շահագործողների դիմադրությունը և ամրապնդի իր նվաճումները, յերկրորդ՝ մինչև վերջը հասցնի պրոլետարական հեղափոխությունը, հեղափոխությունը հասցնի սոցիալիզմի լիակատար հաղթանակին։ Հեղափոխությունը կկարողանա բուրժուազիային հաղթել, նրա իշխանությունը տապալել նաև առանց պրոլետարիատի դիկտատուրայի։ Բայց ճնշել բուրժուազիայի դիմադրությունը, պահպանել հաղթությունը և առաջ շարժվել դեպի սոցիալիզմի վերջնական հաղթանակը՝ հեղափոխությունն արդեն ի վիճակի չէ, յեթե իր զարգացման վորոշ աստիճանի վրա նա չստեղծի հատուկ որգան՝ պրոլետարիատի դիկտատուրա, վորպես իր հիմնական հենարան։

«Հեղափոխության հիմնական հարցն իշխանության հարցն է» (Լենին)։ Արդյո՞ք այս նշանակում է, վոր գործն այստեղ սահմանափակվում է իշխանությունը վերցնելով, նրա գրավումով։ Վո՛չ, չի նշանակում։ Իշխանություն վերցնելը—դա գործի միայն սկիզբն է։ Մի յերկրում տապալված բուրժուազիան դեռ յերկար ժամանակ, շատ պատճառներով ավելի ուժեղ է մնում, քան նրան տապալող պրոլետարիատը։ Այս պատճառով ամբողջ բանն այն է, վոր իշխանությունը պահպանվի, այն ամրացվի,

այն անհաղթելի դարձվի։ Ի՞նչ է հարկավոր այս նպատակին հասնելու համար։ Դրա համար անհրաժեշտ է իրագործել գոնե յերեք գլխավոր խնդիր, վորոնք ծառանում են պրոլետարիատի դիկտատուրայի առաջ հաղթության «հետևյալ օրը»․

ա) կոտրել հեղափոխության տապալած և էքսպրոպրիացիայի յենթարկած կալվածատերերի ու կապիտալիստների դիմադրությունը, լիկվիդացիայի յենթարկել կապիտալի իշխանությունը վերականգնելու նրանց բոլոր և ամեն տեսակի փորձերը․

բ) կազմակերպել շինարարությունը՝ բոլոր աշխատավորներին պրոլետարիատի շուրջը համախմբելու վողով և այդ աշխատանքը տանել դասակարգերի լիկվիդացիան, նրանց վոչնչացումը նախապատրաստող ուղղությամբ․

գ) զինել հեղափոխությունը, կազմակերպել հեղափոխության բանակը՝ արտաքին թշնամիների դեմ կռվելու համար, իմպերիալիզմի դեմ կռվելու համար։

Պրոլետարիատի դիկտատուրան նրա համար է հարկավոր, վոր կենսագործի, անցկացնի այս խնդիրները։

«Կապիտալիզմից դեպի կոմունիզմ անցնելը,—ասում է Լենինը,— մի ամբողջ պատմական դարաշրջան է։ Քանի այն չի ավարտվել, շահագործողների մեջ անխուսափելիորեն մնում է ռեստավրացիայի հույսը, իսկ այդ հույսը ռեստավրացիայի փորձերի յե վերածվում։ Յեվ առաջին լուրջ պարտությունից հետո՝ տապալված շահագործողները, վորոնք իրենց տապալումը չեյին սպասում, դրան չեյին հավատում, մտքով անգամ այդ չեյին անցկացնում, տասնապատկած յեռանդով, կատաղի կրքով, հարյուրապատիկ ուժեղացած ատելությամբ նետվում են կռվի ասպարեզ՝ հանուն խլված «դրախտի» վերադարձման, հանուն իրենց ընտանիքների, վորոնք այնպես քաղցր եյին ապրում, և վորոնց հիմա «ռամիկ խուժանը» դատապարտում է քայքայման ու թշվառության (կամ «հասարակ» աշխատանքի...)։ Իսկ շահագործող-կապիտալիստների հետևից ձգվում է լայն մասսան մանր բուրժուազիայի, վորի նկատմամբ բոլոր յերկրների պատմական փորձի տասնյակ տարիները վկայում են, վոր նա յերերվում է ու տատանվում, այսոր գնում է պրոլետարիատի հետևից, վաղը վախենում է հեղաշրջման դժվարություններից, խուճապի յե մատնվում բանվորների առաջին պարտությունից կամ կիսապարտությունից, ջղայնանում է, պատեպատ է դխոչում, նվնվում, մի բանակից մյուսն է փախչում» (տե՛ս հ. XXIII, եջ 355)։

Իսկ բուրժուազիան ռեստավրացիայի փորձեր անելու համար իր հիմքերն ունի, քանի վոր իր տապալումից հետո յերկար ժամանակ նա դեռ ավելի ուժեղ է մնում իրեն տապալող պրոլետարիատից։

«Եթե շահագործողները ջախջախված են միայն մի յերկրում,— ասում է Լենինը,—իսկ այդ, իհարկե, տիպիկ դեպք է, քանի վոր միաժամանակ հեղափոխությունը մի շարք յերկրներում՝ հազվագյուտ բացառություն է,—ապա նրանք մնում են այնուամենայնիվ ավելի ուժեղ, քան շահագործվողները» (տե՛ս՝ նույն տեղը, էջ 354)։

Ինչո՞ւմն է տապալված բուրժուազիայի ուժը։

Նախ՝ «միջազգային կապիտալի ուժի մեջ, բուրժուազիայի միջազգային կապերի ուժի և ամրության մեջ» (տե՛ս՝ Հ. XXV, էջ 173),

Երկրորդ՝ նրանում, վոր «շահագործողները հեղաշրջումից հետո յերկար ժամանակ անխուսափելիորեն իրենց ձեռքին են պահում մի շարք հսկայական փաստական առավելություններ. նրանց ձեռքին մնում է փողը (միանգամից փողը վոչնչացնել չի կարելի), վորոշ շարժական գույք՝ հաճախ խոշոր չափերի հասնող, մնում են կապերը, կազմակերպման և կառավարման հմտությունները, կառավարման բոլոր «գաղտնիքներին» (նրա սովորույթներին, պրիոմներին, միջոցներին, հնարավորություններին) գիտակ լինելը, մնում է ավելի բարձր կրթությունը, մոտիկությունը տեխնիկապես ավելի բարձր (բուրժուականորեն ապրող և մտածող) պերսոնալի հետ, մնում է անչափելիորեն ավելի մեծ սովորույթը ռազմական գործում (սա շատ կարևոր է) և այլն և այլն» (տե՛ս Հ. XXIII, էջ 354)։

Երրորդ՝ «սովորության ուժի մեջ, մանր արտադրության ուժի մեջ։ Վորովհետև մանր արտադրություն դեռևս աշխարհում, ցավոք սրտի, շատ և շատ է մնացել, իսկ մանր արտադրությունը կապիտալիզմ և բուրժուազիա յե ծնում մշտապես, ամեն որ, ամեն ժամ, տարերայնորեն և մասսայական մասշտաբով»... վորովհետև «վոչնչացնել դասակարգերը—նշանակում է վո՛չ միայն վռնդել կալվածատերերին և կապիտալիստներին,—այդ մենք համեմատաբար հեշտ արինք,—այդ նշանակում է նույնպես վոչնչացնել մանր ապրանքարտադրողներին, իսկ նրանց չի կարելի վռնդել, նրանց չի կարելի ճնշել, նրանց հետ հարկավոր է յոլա գնալ, նրանց կարելի յե (և հարկավոր է) վերափոխել, վերադաստիարակել միայն շատ յերկարատև, դանդաղ, զգույշ կազմակերպչական աշխատանքով» (տե՛ս Հ. XXV, էջ 173 և 190)։

Ահա թե ինչու Լենինն ասում է, վոր

«Պրոլետարիատի դիկտատուրան նոր դասակարգի ամենաանձնվեր և ամենաանողոք պատերազմն է ավելի հզոր թշնամու դեմ,

բուրժուազիայի դեմ, վորի դիմադրությունը տասնապատկվել է նրա տապալումով», վոր «...պրոլետարիատի դիկտատուրան համառ պայքար է՝ արյունոտ և անարյուն, բռնի և խաղաղ, ռազմական և տնտեսական, մանկավարժական և ադմինիստրատորական պայքար հին հասարակության ուժերի և տրադիցիաների դեմ» (տե՛ս նույն տեղը, էջ 173 և 190)։

Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր իրագործել այս խնդիրները կարճ ժամանակամիջոցում, այս բոլորն անցկացնել միքանի տարում—վոչ մի հնարավորություն չկա։ Այս պատճառով պրոլետարիատի դիկտատուրան, անցումը կապիտալիզմից դեպի կոմունիզմ հարկավոր է դիտել վո՛չ թե վորպես մի փութանցիկ ժամանակաշրջան՝ մի շարք «ամենահեղափոխական» ակտերի և դեկրետների ձևով, այլ վորպես մի ամբողջ պատմական դարաշրջան, վորը լի յե քաղաքացիական պատերազմներով ու արտաքին ընդհարումներով, կազմակերպական համառ աշխատանքով և տնտեսական շինարարությամբ, հարձակումներով ու նահանջներով, հաղթանակներով ու պարտություններով։ Այդ պատմական դարաշրջանն անհրաժեշտ է վո՛չ միայն նրա համար, վոր ստեղծվեն սոցիալիզմի լիակատար հաղթության տնտեսական և կուլտուրական նախադրյալները, այլև նրա համար, վոր պրոլետարիատին հնարավորություն տրվի, նախ՝ դաստիարակելու և կոփելու իրեն վորպես մի ուժ, վորն ընդունակ է յերկիրը կառավարելու, յերկրորդ՝ վերադաստիարակելու և վերափոխելու մանր-բուրժուական խավերը՝ սոցիալիստական արտադրության կազմակերպումն ապահովող ուղղությամբ։

«Դուք պետք է,—ասում եր Մարքսը բանվորներին,—անցնեք քաղաքացիական պատերազմի և միջազգային ճակատամարտերի 15, 20, 50 տարիներ վո՛չ միայն նրա համար, վոր փոխեք գոյություն ունեցող հարաբերությունները, այլ վորպեսզի ինքներդ էլ փոխվեք և քաղաքական տիրապետության ընդունակ դառնաք» (տե՛ս Կ. Մարքսի և Էնգելսի յերկերի VIII Հ., էջ 506)։

Շարունակելով և ավելի զարգացնելով Մարքսի միտքը՝ Լենինը գրում է.

«Պրոլետարիատի դիկտատուրայի որով հարկ կլինի վերադաստիարակելու միլիոնավոր գյուղացիներ և մանր տնտեսատերեր, հարյուրհազարավոր ծառայողներ, չինովնիկներ, բուրժուական ինտելիգենտներ,

նրանց բոլորին յենթարկել պրոլետարական պետությանը և պրոլետարական ղեկավարությանը, հաղթել նրանց մեջ բուրժուական սովորություններին ու տրադիցիաներին» նույնպես, ինչպես վոր անհրաժեշտ կլինի՝ «... վերադաստիարակել յերկարատև պայքարում, պրոլետարիատի դիկտատուրայի հողի վրա, նաև հենց իրենց՝ պրոլետարներին, վորոնք իրենց սեփական մանր-բուրժուական նախապաշարմունքներից ազատվում են վո՛չ թե մեկեն, վո՛չ թե հրաշքով, վո՛չ թե տիրամոր հրամանով, վո՛չ թե լոզունգի, բանաձևի, դեկրետի հրամանով, այլ միայն յերկար ու դժվարին մասսայական պայքարով՝ մասսայական մանր-բուրժուական ազդեցությունների դեմ» (տե՛ս հ. XXV, եջ 248 և 247):

2) Պրոլետարիատի դիկտատուրան վորպես պրոլետարիատի տիրապետություն բուրժուազիայի նկատմամբ: *Արդեն ասվածից յերևում է, վոր պրոլետարիատի դիկտատուրան կառավարության մեջ մանող անձերի սոսկական փոփոխություն, «կաբինետի» և այլնի փոփոխություն չէ, վորի ժամանակ անձեռնմխելի յեն թողնվում հին տնտեսական ու քաղաքական կարգերը: Բոլոր յերկրների մենշևիկներն ու օպորտունիստները, վորոնք դիկտատուրայից վախենում են ինչպես կրակից, և դիկտատուրայի հասկացողությունը յերկյուղից նենգափոխում են «իշխանության նվաճելու» հասկացողության, սովորաբար «իշխանություն նվաճելը» հանգեցնում են «կաբինետի» փոխման, իշխանության ղեկի մոտ Շայդեմանի ու Նոսկեյի, Մակդոնալդի ու Հենդերսոնի նման մարդկանցից բաղկացած նոր մինիստրության յերևան գալուն: Հազիվ թե հարկ կա ապացուցանելու, վոր կաբինետների այս և սրանց նման փոփոխումներն ընդհանուր վոչինչ չունեն պրոլետարիատի դիկտատուրայի հետ, իսկական իշխանության իսկական պրոլետարիատի ձեռքով նվաճելու հետ: Յերբ Մակդոնալդներն ու Շայդեմանները իշխանության գլուխ են անցած հին բուրժուական կարգերը թողնվելու պայմաններում, նրանց՝ այսպես ասած՝ կառավարությունները չեն կարող լինել վորևէ այլ բան, բայց յեթե սպասարկող ապարատ բուրժուազիայի ձեռքում, բայց յեթե իմպերիալիզմի խոցերի քողարկում, բայց յեթե մի գործիք բուրժուազիայի ձեռքին, վոր ուղղված է ճնշված և շահագործվող մասսաների հեղափոխական շարժման դեմ: Նրանք, այդ կառավարությունները, հարկավոր են կապիտալին իբրև շիրմա, յերբ նրա համար անհարմար է, անձեռնտու, դժվար՝ ճնշել և շահագործել մասսաներին առանց շիրմայի: Իհարկե, այդպիսի կառավարությունների յերևան գալը նշան է, վոր «նրանց մոտ՝ այնտեղ» (այսինքն կապիտալիստների մոտ), «Շիպկայի վրա», դրությունը հանգիստ չէ, բայց այդ տեսակի կառավարությունները, չնայած դրան, անխուսափելիորեն մնում են վորպես կապիտալի՝ գույն տված կառավարություններ: Մակդոնալդի կամ Շայդեմանի կառավարությունից մինչև պրոլետարիատի կողմից իշխանություն նվաճելը նույնքան հեռու յե, վորքան յերկրից մինչև յերկինքը: Պրոլետարիատի դիկտատուրան կառավարության փոփոխում չէ, այլ նոր պետություն, վորն ունի իշխանության նոր օրգաններ կենտրոնում և տեղերում, պրոլետարիատի պետություն, վոր ծագել է հին պետության, բուրժուազիայի պետության փլատակների վրա:*

Պրոլետարիատի դիկտատուրան ծագում է վո՛չ թե բուրժուական կարգերի հիման վրա, այլ նրանց հեղաբեկելու (ломка) ընթացքում, բուրժուազիայի տապալումից հետո, կալվածատերերին ու կապիտալիստներին էքսպրոպրիացիայի յենթարկելու ընթացքում, արտադրության հիմնական գործիքներն ու միջոցները սոցիալիզացիայի յենթարկելու ընթացքում, պրոլետարիատի բռնի հեղափոխության ընթացքում: Պրոլետարիատի դիկտատուրան հեղափոխական իշխանություն է, վոր հենվում է բուրժուազիայի նկատմամբ կիրառվող բռնության վրա:

Պետությունը մի մեքենա յե տիրապետող դասակարգի ձեռքին՝ իր դասակարգային հակառակորդների դիմադրությունը ճնշելու համար: Այս տեսակետից *պրոլետարիատի դիկտատուրան ըստ էության վոչնչով չի տարբերվում ամեն մի ուրիշ դասակարգի դիկտատուրայից, վորովհետև պրոլետարական պետությունը բուրժուազիային ճնշելու մեքենա յե: Բայց այստեղ* կա մի էական տարբերություն: *Դա այն է, վոր մինչև այժմ գոյություն ունեցած բոլոր դասակարգային պետությունները շահագործող փոքրամասնության դիկտատուրա էին շահագործվող մեծամասնության նկատմամբ, այնինչ պրոլետարիատի դիկտատուրան շահագործվող մեծամասնության դիկտատուրա յե շահագործող փոքրամասնության նկատմամբ:*

Ավելի կարճ՝ պրոլետարիատի դիկտատուրան օրենքով չսահմանափակված և բռնության վրա հենվող՝ պրոլետարիատի տի-

քապետություն ե բուրժուազիայի նկատմամբ,—տիրապետություն, վոր վայելում ե աշխատավոր և շահագործվող մասսաների համակրանքն ու աջակցությունը («Պետություն և հեղափոխություն»):

Սրանից բղխում ե յերկու հիմնական հետևություն.

Առաջին հետևություն: Պրոլետարիատի դիկտատուրան չի կարող լինել «լիակատար» դեմոկրատիա, դեմոկրատիա բոլորի համար՝ թե՛ հարուստների, թե՛ չքավորների համար,—պրոլետարիատի դիկտատուրան «պետք ե լինի մի պետություն, վոր նոր ձևով դեմոկրատական ե աշխատավոր պրոլետարների և չունևորների համար*) և նոր ձևով դիկտատորական՝ բուրժուազիայի դեմ*)...» (տե՛ս հ. XXI, եջ 393): Կաուցկու և Ընկ. պարապ զրույցներն ընդհանրական հավասարության, «զուտ» դեմոկրատիայի, «կատարյալ» դեմոկրատիայի մասին և այլն— բուրժուական քողարկումն ե այն անտարակուսելի փաստի, վոր շահագործողների և շահագործվողների հավասարությունն անհնարին ե: «Զուտ» դեմոկրատիայի թեորիան բանվոր դասակարգի վերնախավի թեորիան ե, այն վերնախավի, վորին իմպերիալիստական թալանչիները ձեռնասուն են դարձրել և փշրանքներով են կերակրում: Նա կյանքի յե կոչված, վորպեսզի քողարկի կապիտալիզմի խոցերը, գույն տա իմպերիալիզմին և բարոյական ուժ տա նրան՝ շահագործվող մասսաների դեմ մղվող պայքարում: Կապիտալիզմի որով չեն լինում և չեն կարող լինել իսկական «ազատություններ» շահագործվողների համար, թեկուզ հենց այն պատճառով, վոր «ազատությունների» օգտագործման համար անհրաժեշտ շենքերը, տպարանները, թղթի պահեստները և այլն շահագործողների արտոնություններն են: Կապիտալիզմի որով չի լինում և չի կարող լինել շահագործվող մասսաների իսկական մասնակցություն յերկրի կառավարման գործում, թեկուզ հենց այն պատճառով, վոր կապիտալիզմի պայմաններում ամենադեմոկրատիկ կարգերում կառավարությունները կարգվում են վո՛չ թե ժողովրդի, այլ Ռոտշիլդների ու Ստիննեսների, Ռոկֆելլերների ու Մորգանների կողմից: Դեմոկրատիան կապիտալիզմի որով կապիտալիստական դեմոկրատիա յե, շահագործող փոքրամասնության դեմոկրատիա յե, վոր հիմնվում ե շահագործվող մեծամասնության իրավունքների սահմանափակման վրա և ուղղված ե այդ մեծամասնության դեմ: Միայն պրոլետարական դիկտատուրայի որով հնարավոր են իսկական «ազատություններ» շահագործվողների համար և պրոլետարների ու գյուղացիների իսկական մասնակցություն յերկրի կառավարման գործում: Դեմոկրատիան պրոլետարիատի դիկտատուրայի որով պրոլետարական դեմոկրատիա յե, շահագործվող մեծամասնության դեմոկրատիա յե, վորը հիմնվում ե շահագործող փոքրամասնության իրավունքների սահմանափակման վրա և ուղղված ե այդ փոքրամասնության դեմ:

*) Ընդգծումն իմն ե: Ի. Ստ.:

Ցերկրորդ հետևություն: Պրոլետարիատի դիկտատուրան չի կարող առաջ գալ վորպես բուրժուական հասարակության և բուրժուական դեմոկրատիայի խաղաղ զարգացման արդյունք. նա կարող ե ծագել միայն բուրժուական պետական մեքենան, բուրժուական բանակը, բուրժուական չինովնիկական ապարատը, բուրժուական վոստիկանությունը ջարդելու հետևանքով:

«Բանվոր դասակարգը չի կարող սոսկ տիրանալ պատրաստի պետական մեքենային և այն գործի դցել իր սեփական նպատակների համար»,—ասում են Մարքսն ու Էնգելսը «Քաղաքացիական պատերազմի» առաջաբանում:—Պրոլետարական հեղափոխությունը պետք ե «... վո՛չ թե մեկ ձեռքից մի այլ ձեռք հանձնի բյուրոկրատիկ-ռազմական մեքենան, ինչպես յեղել ե մինչև այժմ, այլ պետք ե ջարդի այն...—այս ե նախապայմանն ամեն մի իսկապես ժողովրդական հեղափոխության՝ կոնտինենտում»,—ասում ե Մարքսը 1871 թվին Կուգելմանին ուղղած իր նամակում:

Մարքսի սահմանափակիչ Փրազը կոնտինենտի մասին առիթ ավեց բոլոր յերկրների ոպորտունիստներին և մենշևիկներին բղավելու, թե Մարքսը, հետևաբար, հնարավոր եր համարում բուրժուական դեմոկրատիայի խաղաղ զարգացումը դեպի պրոլետարական դեմոկրատիա, գոնե յեվրոպական կոնտինենտի կազմի մեջ չմտնող միքանի յերկրների (Անգլիա, Ամերիկա) համար: Մարքսն, իսկապես, հնարավոր եր համարում այդ և նա հիմք ուներ այդպիսի յենթադրումն (допущение) անելու անցած դարի 70-ական թվականների Անգլիայի և Ամերիկայի համար, յերբ դեռ չկար մոնոպոլիստական կապիտալիզմ, չկար իմպերիալիզմ և դեռևս այդ յերկրները, իրենց զարգացման հատուկ պայ-

մանների շնորհիվ, չունեյին զարգացած զինվորականություն ու բյուրոկրատիզմ։ Այսպես եր դրությունը մինչև զարգացած իմպերիալիզմի յերևան գալը։ Բայց հետո, 30—40 տարի անց, յերբ գործերի դրությունն այդ յերկիրներում արմատապես փոխվեց, յերբ իմպերիալիզմը զարգացավ ու ընդգրկեց առանց բացառության բոլոր կապիտալիստական յերկիրները, յերբ զինվորականությունը և բյուրոկրատիզմը յերևան յեկան նաև Անգլիայում ու Ամերիկայում, յերբ Անգլիայի և Ամերիկայի խաղաղ զարգացման հատուկ պայմաններն անհետացան,—այդ յերկիրների վերաբերյալ սահմանափակումն ինքն իրեն պետք է վերանար։

«Հիմա,—ասում է Լենինը,—1917 թվին, առաջին մեծ իմպերիալիստական պատերազմի դարաշրջանում, Մարքսի այդ սահմանափակումը վերանում է։ Թե՛ Անգլիան, թե՛ Ամերիկան, վորոնք զինվորականության ու բյուրոկրատիզմի բացակայության իմաստով ամբողջ աշխարհում խոշորագույն և վերջին ներկայացուցիչներն են անգլո-սաքսոնական «ազատության», լիովին գլորվել են ամեն ինչ իրենց յենթարկող, ամեն ինչ իրենցով ճզմող բյուրոկրատիկ-ռազմական հիմնարկների համայեվրոպական կեղտոտ, արյունալից ճահիճը։ Այժմ թե՛ Անգլիայում, թե՛ Ամերիկայում «ամեն մի իսկական ժողովրդական հեղափոխության նախապայման» հանդիսանում է «պատրաստի» «պետական մեքենան» կոտրելը, խորտակելը (վորպիսի մեքենան պատրաստվել է այնտեղ 1914—1917 թ. թ. և հասցվել «յեվրոպական», համաիմպերիալիստական կատարելության) (տե՛ս հ. XXI, եջ 395)։

Այլ կերպ ասած՝ պրոլետարիատի բռնի հեղափոխության օրենքը, բուրժուական պետական մեքենան ջարդելու օրենքը՝ վորպես այդպիսի հեղափոխության նախապայմանի օրենք՝ աշխարհի իմպերիալիստական յերկիրների հեղափոխական շարժման անխուսափելի օրենքն է։

Իհարկե, հեռավոր ապագայում, յեթե պրոլետարիատը հաղթանակի կապիտալիզմի կարևորագույն յերկիրներում և յեթե այժմյան կապիտալիստական շրջապատումը փոխարինվի սոցիալիստական շրջապատումով, միանգամայն հնարավոր է զարգացման «խաղաղ» ճանապարհը միքանի կապիտալիստական յերկիրների համար, վորոնց կապիտալիստները, «աննպաստ» միջազգային իրադրության շնորհիվ, նպատակահարմար կհամարեն «կամովին» լուրջ զիջումներ անել պրոլետարիատին։ Բայց այս յենթադրությունը վերաբերում է միայն հեռավոր և հնարավոր

ապագային։ Ամենամոտ ապագայի համար այս յենթադրությունը չունի վո՛չ մի, ուղղակի վո՛չ մի հիմք։

Այս պատճառով Լենինն իրավացի յե, յերբ ասում է.

«Պրոլետարական հեղափոխությունն անհնարին է առանց բուրժուական պետական մեքենայի բռնի խորտակման և այն նորով փոխարինելու» (տե՛ս հ. XXIII, եջ 342)։

3) Խորհրդային իշխանությունը վորպես պրոլետարիատի դիկտատուրայի պետական ձև։ Պրոլետարիատի դիկտատուրայի հաղթանակը նշանակում է բուրժուազիայի ճնշում, բուրժուական պետական մեքենայի ջարդում, բուրժուական դեմոկրատիայի փոխարինում պրոլետարական դեմոկրատիայով։ Այս պարզ է։ Բայց վորո՞նք են այն կազմակերպությունները, վորոնց ոգնությամբ այս հսկայական աշխատանքը կարող է կատարվել։ Հազիվ թե տարակույս լինի այն բանում, վոր պրոլետարիատի կազմակերպության հին ձևերը, վորոնք աճել են բուրժուական պառլամենտարիզմի հիման վրա, բավական չեն այդպիսի աշխատանքի համար։ Հապա վորո՞նք են պրոլետարիատի կազմակերպության այն նոր ձևերը, վորոնք ընդունակ են բուրժուական պետական մեքենայի գերեզմանափորի դեր խաղալու, վորոնք ընդունակ են վո՛չ միայն ջարդելու այդ մեքենան և վո՛չ միայն փոխարինելու բուրժուական դեմոկրատիան պրոլետարական դեմոկրատիայով, այլև պրոլետարական պետական իշխանության հիմունքը դառնալու։

Պրոլետարիատի կազմակերպության այս նոր ձևը խորհուրդներն են։

Վո՞րն է խորհուրդների ուժը՝ համեմատած կազմակերպության հին ձևերի հետ։

Այն, վոր խորհուրդները պրոլետարիատի ամենից ավելի համապարփակ մասսայական կազմակերպություններն են, վորովհետև նրանք և միմիայն նրանք են ընդգրկում առանց բացառության բոլոր բանվորներին։

Այն, վոր խորհուրդները միակ մասսայական կազմակերպություններն են, վորոնք ընդգրկում են բոլոր ճնշվածներին ու շահագործվողներին, բանվորներին ու գյուղացիներին, զինվորներին ու նավաստիներին, և վորտեղ մասսաների պայքարի քաղաքական ղեկավարությունը մասսաների ավանգարդի կողմից

պրոլետարիատի կողմից, կարող է՝ դրա շնորհիվ՝ իրականացնել ամենից հեշտ և ամենից լրիվ կերպով:

Այն, որ խորհուրդները մասսաների հեղափոխական պայքարի, մասսաների քաղաքական ելույթների, մասսաների ապստամբության ամենից ավելի հուժկու օրգաններն են, օրգաններ, որոնք ընդունակ են կոտրելու ֆինանսական կապիտալի և նրա քաղաքական կցորդների ամենազորությունը:

Այն, որ խորհուրդները բուն իսկ մասսաների անմիջական կազմակերպություններն են, այսինքն մասսաների ամենից ավելի դեմոկրատիկ և, ուրեմն, առավել հեղինակավոր կազմակերպությունները, որոնք առավելագույն չափով հեշտացնում են նրանց մասնակցությունը նոր պետություն կազմակերպելու և այն կառավարելու գործին ու առավելագույն չափով սանձալույծ են անում (развязывают) մասսաների հեղափոխական եռանդը, նախաձեռնությունն ու ստեղծագործական ընդունակությունները հին կացույթի (уклад) կործանման համար մղվող պայքարում, նոր, պրոլետարական կացույթի համար մղվող պայքարում:

Խորհրդային իշխանությունը տեղական խորհուրդների միավորումն ու ձևավորումն է մի ընդհանուր պետական կազմակերպության մեջ, ճնշված ու շահագործվող մասսաների ավանգարդ և տիրապետող դասակարգ հանդիսացող պրոլետարիատի պետական կազմակերպության մեջ, նրանց միավորումն իբրև խորհուրդների հանրապետություն:

Խորհրդային իշխանության էությունն այն է, որ առավել մասսայական և առավել հեղափոխական կազմակերպությունները՝ հենց այն դասակարգերի, որոնք ճնշվում էին կապիտալիստների ու կալվածատերերի կողմից, հիմա հանդիսանում են «ամբողջ պետական իշխանության, ամբողջ պետական ապարատի մշտական և միակ հիմունքը», որ «հենց այն մասսաները, որոնք նույնիսկ ամենադեմոկրատիկ բուրժուական հանրապետություններում», օրենքով իրավահավասար լինելով, «իրականում հազարավոր եղանակներով ու խորամանկ հնարքներով հեռացվում էին քաղաքական կյանքին մասնակցելուց և դեմոկրատական իրավունքներից ու ազատություններից օգտվելուց,

հիմա ներգրավվում են մշտական և անպայման, այն էլ վճռական մասնակցության՝ պետության դեմոկրատիկ կառավարման գործում»*) (տե՛ս հ. XXIV, էջ 13):

Ահա թե ինչու խորհրդային իշխանությունը պետական կազմակերպության մի նոր ձև է, որ սկզբունքորեն տարբեր է հին, բուրժուական-դեմոկրատական և պառլամենտական ձևից, պետության մի նոր տիպ է, որ հարմարեցված է ո՛չ թե աշխատավոր մասսաների շահագործման և ճնշման խնդիրներին, այլ ամեն տեսակ ճնշումից ու շահագործումից նրանց լրիվին ազատագրելու խնդիրներին, պրոլետարիատի դիկտատուրայի խնդիրներին:

Լենինն իրավացի էր, երբ ասում է, որ խորհրդային իշխանության երևան գալով «բուրժուական-դեմոկրատական պառլամենտարիզմի դարաշրջանը վերջացավ, սկսվեց համաշխարհային պատմության նոր գլուխը՝ պրոլետարական դիկտատուրայի դարաշրջանը»:

Որո՞նք են խորհրդային իշխանության բնորոշ գծերը:

Այն, որ խորհրդային իշխանությունը բոլոր հնարավոր պետական կազմակերպություններից ամենից ավելի մասսայական և ամենից ավելի դեմոկրատական պետական կազմակերպությունն է դասակարգերի գոյության պայմաններում, որովհետև նա, լինելով բանվորների և շահագործվող գյուղացիների շաղկապի ու համագործակցության ասպարեզ շահագործողների դեմ մղվող պայքարում և իր աշխատանքում հենվելով այդ շաղկապի ու այդ համագործակցության վրա, դրանով հենց հանդիսանում է բնակչության մեծամասնության իշխանությունը փոքրամասնության նկատմամբ, հանդիսանում է այդ մեծամասնության պետությունը, նրա դիկտատուրայի արտահայտությունը:

Այն, որ խորհրդային իշխանությունը դասակարգային հասարակության բոլոր պետական կազմակերպություններից ամենից ավելի ինտերնացիոնալիստականն է, որովհետև խորտակելով ամեն մի ազգային ճնշում և հենվելով տարբեր ազգությունների աշխատավոր մասսաների համագործակցության վրա,

*) Ընդգծումներն ամենուրեք իմն են: Ի. Ստ.:

դրանով եվ հեշտացնում է այդ մասսաների միավորումը մի միասնական պետական միության մեջ:

Այն, վոր խորհրդային իշխանությունը, հենց իր կառուցվածքով, հեշտացնում է ճնշված և շահագործվող մասսաների ղեկավարումն այդ մասսաների ավանգարդի կողմից, պրոլետարիատի՝ վորպես խորհուրդների ամենից ավելի համախմբված և ամենից ավելի գիտակից միջուկի՝ կողմից:

«Բոլոր հեղափոխությունների և ճնշված դասակարգերի բոլոր շարժումների փորձը, համաշխարհային սոցիալիստական շարժման փորձը սովորեցնում է մեզ,—ասում է Լենինը,—վոր միայն պրոլետարիատն է ի վիճակի միավորելու և իր հետևից տանելու աշխատավոր ու շահագործվող բնակչության ցիրուցան և հետամնաց խավերին» (տե՛ս հ. XXIV, եջ 14): Խորհրդային իշխանության կառուցվածքը հեշտացնում է այս փորձի ցուցումների կիրառումը կյանքում:

Այն, վոր խորհրդային իշխանությունը, պետության միասնական կազմակերպության մեջ միավորելով օրենսդիր և գործադիր իշխանությունները և տերիտորիալ ընտրական շրջանները փոխարինելով արտադրական միավորներով,—գործարաններով ու ֆաբրիկաներով,—բանվորական և առհասարակ աշխատավոր մասսաներին անմիջականորեն կապում է պետական կառավարչության ապարատների հետ, յերկիր կառավարել է սովորեցնում նրանց:

Այն, վոր միայն խորհրդային իշխանությունն է ընդունակ ազատելու բանակը բուրժուական հրամանատարությանը յենթարկվելուց և վերածելու այն ժողովրդին ճնշելու գործիքից, վորպիսին նա հանդիսանում է բուրժուական կարգերում, ժողովրդին իր բուրժուազիայի և օտար բուրժուազիայի լծից ազատելու գործիքի:

Այն, վոր «պետության միայն խորհրդային կազմակերպությունը կարող է մեկեն և վերջնականապես կործանել հին, այսինքն բուրժուա-չինովնիկական և դատական ապարատը» (տե՛ս նույն տեղը):

Այն, վոր պետության միայն խորհրդային ձևն է, վոր աշխատավորների ու շահագործվողների մասսայական կազմակերպություններին ներգրավելով մշտական և անպայմանական մաս-

նակցության պետական կառավարչության գործում, ընդունակ է նախապատրաստելու պետականության այն մահացումը, վորն ապագա անպետական, կոմունիստական հասարակության հիմնական տարրերից մեկն է:

Այսպիսով խորհուրդների հանրապետությունն է այն վորոնվող և, վերջապես, գտնված քաղաքական ձևը, վորի շրջանակներում պետք է իրագործվի պրոլետարիատի տնտեսական ազատագրությունը, սոցիալիզմի լիակատար հաղթանակը:

Փարիզի կոմունան այդ ձևի սաղմն եր: Խորհրդային իշխանությունը նրա զարգացումն ու ավարտումն է:

Ահա թե ինչու Լենինն ասում է, վոր

> «Բանվորական, զինվորական և գյուղացիական պատգամավորների խորհուրդների հանրապետությունը վո՛չ միայն ավելի բարձր տիպի դեմոկրատիկ հիմնարկների ձևն է... այլև այն միակ ձևը, վորն ընդունակ է ապահովելու ամենաանհիվանդագին անցումը դեպի սոցիալիզմ» (տե՛ս հ. XXII, եջ 131):

V. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Այս թեմայից յես վերցնում եմ չորս հարց. ա) հարցի դրումը, բ) գյուղացիությունը բուրժուա-դեմոկրատական հեղափոխության ժամանակ, գ) գյուղացիությունը պրոլետարական հեղափոխության ժամանակ, դ) գյուղացիությունը խորհրդային իշխանության ամրապնդվելուց հետո:

1) Հարցի դրումը: Վոմանք կարծում են, թե լենինիզմի մեջ հիմնականը գյուղացիական հարցն է, թե լենինիզմի յելակետը գյուղացիության, նրա դերի, նրա տեսակարար կշռի հարցն է: Այդ միանգամայն սխալ է: Լենինիզմի մեջ հիմնական հարցը, նրա մեկնակետը վո՛չ թե գյուղացիական հարցն է, այլ պրոլետարիատի դիկտատուրայի հարցը, նրա նվաճման պայմանների, նրա ամրապնդման պայմանների հարցը: Գյուղացիական հարցը, վորպես պրոլետարիատի դաշնակցի հարց իշխանության համար նրա մղած պայքարում, ածանցյալ հարց է:

Սակայն այս հանգամանքը նրան բնավ չի զրկում այն լուրջ, հրատապ նշանակությունից, վոր նա անկասկած ունի պրոլետարական հեղափոխության համար: Հայտնի յե, վոր գյուղացիական հարցի լուրջ մշակումը ռուսական մարքսիստների շար-

քերում սկսվեց առաջին հեղափոխության (1905 թ.) հենց նախօրյակին, յերբ ցարիզմի տապալման և պրոլետարիատի հեգեմոնիայի կիրառման հարցը կուսակցության առաջ ծառացավ իր ամբողջ հասակով, իսկ առաջիկա բուրժուական հեղափոխության մեջ պրոլետարիատի դաշնակցի հարցն ընդունեց հրատապ բնույթ։ Հայտնի յե նույնպես, վոր գյուղացիական հարցը Ռուսաստանում ե՛լ ավելի ակտուալ բնույթ ընդունեց պրոլետարական հեղափոխության ժամանակ, յերբ պրոլետարիատի դիկտատուրայի, այն նվաճելու և պահելու հարցը հանդեցրեց առաջիկա պրոլետարական հեղափոխության մեջ պրոլետարիատի դաշնակիցների հարցին։ Յեվ այդ հասկանալի յե. ով գնում ե դեպի իշխանություն և պատրաստվում ե դրան, նա չի կարող չհետաքրքրվել իր իսկական դաշնակիցների հարցով։

Այս իմաստով գյուղացիական հարցը պրոլետարիատի դիկտատուրայի ընդհանուր հարցի մի մասն ե և, վորպես այդպիսին, լենինիզմի ամենահրատապ հարցերից մեկն ե։

II Ինտերնացիոնալի կուսակցությունների անտարբեր կամ թե հենց ուղղակի ժխտողական վերաբերմունքը դեպի գյուղացիական հարցը միմիայն Արևմուտքում գոյություն ունեցող զարգացման հատուկ պայմաններով չի բացատրվում։ Դա բացատրվում ե ամենից առաջ նրանով, վոր այդ կուսակցությունները չեն հավատում պրոլետարական դիկտատուրային, վախենում են հեղափոխությունից և չեն մտածում պրոլետարիատին դեպի իշխանություն տանել. իսկ ով վախենում ե հեղափոխությունից, ով չի ցանկանում պրոլետարներին դեպի իշխանություն տանել, նա չի կարող հետաքրքրվել այն հարցով, թե ովքեր են լինելու պրոլետարիատի դաշնակիցները հեղափոխության մեջ,— նրա համար դաշնակիցների հարցը տարբերադուրկ, վոչ ակտուալ հարց ե։ II Ինտերնացիոնալի հերոսների հեգնական վերաբերմունքը դեպի գյուղացիական հարցը նրանց մոտ համարվում ե բարեկրթության նշան, «իսկական» մարքսիզմի նշան։ Իրականում այստեղ վոչ մի գրամ մարքսիզմ չկա, վորովհետև պրոլետարական հեղափոխության նախօրյակին անտարբերությունը դեպի այնպիսի մի կարևոր հարց, ինչպես գյուղացիական հարցն ե, հանդիսանում ե պրոլետարիատի

դիկտատուրայի ժխտման հակադարձ կողմը, մարքսիզմին ուղղակի դավաճանելու անտարակուսելի նշանը։

Հարցն այսպես ե դրված. արդյո՞ք արդեն սպառված են գյուղացիության ընդերքում թաքնված հեղափոխական հնարավորությունները՝ գյուղացիության գոյության վորոշ պայմանների շնորհիվ, թե վոչ. և յեթե սպառված չեն, արդյոք հույս, հիմք կա՞ այդ հնարավորությունները պրոլետարական հեղափոխության համար օգտագործելու, գյուղացիությունը, նրա շահագործվող մեծամասնությունը բուրժուազիայի ռեզերվից, վորպիսին եր նա Արևմուտքի բուրժուական հեղափոխությունների ժամանակ և վորպիսին նա մնում ե նաև այժմ,—պրոլետարիատի ռեզերվի, նրա դաշնակցի վերածելու։

Լենինիզմն այս հարցին դրական պատասխան ե տալիս, այսինքն գյուղացիության մեծամասնության շարքերում հեղափոխական ընդունակությունների ընդունման վողով և պրոլետարական դիկտատուրայի շահերի համար այդ ընդունակություններն օգտագործելու հնարավորության վողով։ Ռուսաստանի յերեք հեղափոխությունների պատմությունն ամբողջությամբ հաստատում ե այս առթիվ լենինիզմի արած հետևությունները։

Այստեղից հետևում ե պրակտիկ յեզրակացություն՝ գյուղացիության աշխատավոր մասսաներին այն պայքարում աջակցելու, պարտավորապես աջակցելու վերաբերյալ, վոր նրանք մղում են ստրկացման ու շահագործման դեմ, այն պայքարում, վոր նրանք մղում են ճնշումից և աղքատությունից ազատվելու համար։ Այս, իհարկե, չի նշանակում, թե պրոլետարիատը պետք ե սատարի ամեն մի գյուղացիական շարժման։ Այստեղ խոսքը գյուղացիության այնպիսի շարժմանը և այնպիսի պայքարին սատարելու մասին ե, վորոնք ուղղակի կամ անուղղակի կերպով հեշտացնում են պրոլետարիատի ազատագրական շարժումը, վորոնք այս կամ այն կերպ ջուր են լցնում պրոլետարական հեղափոխության ջրաղացին, վորոնք նպաստում են գյուղացիությունը բանվոր դասակարգի ռեզերվի և դաշնակցի վերածելուն։

2) Գյուղացիությունը բուրժուա-դեմոկրատական հեղափոխության ժամանակ։ Այս ժամանակաշրջանն ընդգրկում ե առաջին ռուսական հեղափոխությունից (1905 թ.) մինչև յերկրորդ (1917 թ. փետրվար) ներառյալ՝ ժամանակամիջոցը։ Այս ժամա-

նակաշրջանի բնորոշ գիծ հանդիսանում է գյուղացիության ազատագրումը լիբերալ բուրժուազիայի ազդեցությունից, գյուղացիության հեռանալը կադետներից, գյուղացիության շրջադարձը դեպի պրոլետարիատը, դեպի բոլշևիկների կուսակցությունը։ Այս ժամանակաշրջանի պատմությունը գյուղացիների համար կադետների (լիբերալ բուրժուազիայի) և բոլշևիկների (պրոլետարիատի) մղած պայքարի պատմությունն է։ Այդ պայքարի ելքը վորոշեց դումայական ժամանակաշրջանը, վորովհետև չորս Դումաների ժամանակաշրջանն առարկայական դաս հանդիսացավ գյուղացիների համար, իսկ այդ դասն ակներև կերպով ցույց տվեց գյուղացիներին, վոր նրանք կադետների ձեռքից չեն ստանա վո՛չ հող, վո՛չ ազատություն, վոր ցարն ամբողջովին կալվածատերերի կողմն է, իսկ կադետներն աջակցում են ցարին, վոր միակ ուժը, վորի վրա կարելի յե հույս դնել,— քաղաքային բանվորներն են, պրոլետարիատը։ Իմպերիալիստական պատերազմը լոկ հաստատեց դումայական ժամանակաշրջանի դասը, ավարտելով գյուղացիության հեռանալը բուրժուազիայից, ավարտելով լիբերալ բուրժուազիայի մեկուսացումը, վորովհետև պատերազմի տարիները ցույց տվին ցարից և նրա բուրժուական դաշնակիցներից հաշտություն ստանալու հույսերի ամբողջ ապարդյունությունը, ամբողջ խաբուսիկությունը։ Առանց դումայական ժամանակաշրջանի ակնբախ դասերի, պրոլետարիատի հեգեմոնիան անհնարին կլիներ։

Այսպես կազմավորվեց բանվորների և գյուղացիների դաշինքը բուրժուա-դեմոկրատական հեղափոխության մեջ։ Այսպես կազմավորվեց պրոլետարիատի հեգեմոնիան (ղեկավարությունը) ցարիզմի տապալման համար մղվող ընդհանուր պայքարում,—հեգեմոնիա, վորը հասցրեց 1917 թ. Փետրվարյան հեղափոխության։

Արևմուտքի (Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Ավստրիա) բուրժուական հեղափոխություններն, ինչպես հայտնի յե, այլ ուղիով ընթացան։ Այնտեղ հեղափոխության մեջ հեգեմոնիան պատկանում էր վո՛չ թե պրոլետարիատին, վորն իր թուլության պատճառով ինքնուրույն քաղաքական ուժ չէր ներկայացնում և չէր կարող ներկայացնել, այլ լիբերալ բուրժուազիային։ Այնտեղ ճորտատիրական կարգերից իր ազատությունը

գյուղացիությունն ստացավ վո՛չ թե պրոլետարիատի ձեռքից, վորը փոքրաթիվ էր և անկազմակերպ, այլ բուրժուազիայի ձեռքից։ Այնտեղ գյուղացիությունը լիբերալ բուրժուազիայի հետ էր գնում հին կարգերի դեմ։ Այնտեղ գյուղացիությունը բուրժուազիայի ռեզերվն էր ներկայացնում։ Այնտեղ հեղափոխությունը, դրա հետևանքով, հանգեցրեց բուրժուազիայի քաղաքական կշռի հսկայական մեծացմանը։

Ռուսաստանում, ընդհակառակը, բուրժուական հեղափոխությունն ուղղակի հակառակ արդյունքներ տվեց։ Հեղափոխությունը Ռուսաստանում հասցրեց բուրժուազիայի՝ վորպես քաղաքական ուժի՝ վո՛չ թե ուժեղացման, այլ թուլացման, վո՛չ թե նրա քաղաքական ռեզերվների բազմացման, այլ հիմնական ռեզերվի կորստյան, գյուղացիության կորստյան։ Բուրժուական հեղափոխությունը Ռուսաստանում դեպի առաջին պլան մղեց վո՛չ թե լիբերալ բուրժուազիային, այլ հեղափոխական պրոլետարիատին, նրա շուրջը համախմբելով բազմամիլիոն գյուղացիությանը։

Ի միջի այլոց հենց սրանով է բացատրվում այն փաստը, վոր բուրժուական հեղափոխությունը Ռուսաստանում համեմատաբար կարճ ժամանակամիջոցում վերածվեց պրոլետարական հեղափոխության։ Պրոլետարիատի հեգեմոնիան պրոլետարիատի դիկտատուրայի սաղմը և դեպի այդ դիկտատուրան անցնելու աստիճանն էր։

Ինչո՞վ բացատրել ռուսական հեղափոխության այս յուրօրինակ յերևույթը, վորն իր նախադեպերը չունի Արևմուտքի բուրժուական հեղափոխությունների պատմության մեջ։ Վո՞րտեղից առաջ յեկավ այս յուրօրինակությունը։

Այդ բացատրվում է նրանով, վոր բուրժուական հեղափոխությունը Ռուսաստանում ծավալվեց դասակարգային կռվի ավելի զարգացած պայմաններում, քան Արևմուտքում, վոր ռուսական պրոլետարիատն այդ ժամանակ արդեն կարողացել էր դառնալ ինքնուրույն քաղաքական ուժ, մինչդեռ լիբերալ բուրժուազիան, պրոլետարիատի հեղափոխականությունից վախեցած, կորցրեց ամեն մի հեղափոխականության նմանություն (մանավանդ 1905 թ. դասերից հետո) և դաշինքի մեջ մտավ ցա-

րի ու կալվածատերերի հետ՝ ընդդեմ հեղափոխության, ընդդեմ բանվորների ու գյուղացիների։

Հարկավոր է ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքների վրա, վորոնք վորոշեցին ռուսական բուրժուական հեղափոխության յուրօրինակությունը.

ա) Ռուսական արդյունաբերության չտեսնված համակենտրոնացումը հեղափոխության նախօրեյին։ Հայտնի յէ, օրինակ, վոր 500 հոգուց ավելի բանվոր ունեցող ձեռնարկություններում Ռուսաստանում աշխատում էր բոլոր բանվորների 54%-ը, մինչդեռ այնպիսի զարգացած յերկրում, ինչպես Հյուսիսային Ամերիկան է, համանման ձեռնարկություններում աշխատում էր բոլոր բանվորների ընդամենը 33%-ը։ Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր արդեն այս մի հանգամանքն այնպիսի մի հեղափոխական կուսակցության առկայության դեպքում, ինչպես բոլշևիկների կուսակցությունն է, Ռուսաստանի բանվոր դասակարգին դարձնում էր յերկրի քաղաքական կյանքի մեծագույն ուժը։

բ) Ձեռնարկություններում յեղած շահագործման այլանդակ ձևերը, պլյուս ցարական ոպրիչնիկների անտանելի վոստիկանական ռեժիմը,—մի հանգամանք է, վորը բանվորների ամեն մի լուրջ գործադուլ վերածում էր հսկայական քաղաքական ակտի և կոփում էր բանվոր դասակարգը վորպես մի ուժ, վոր հեղափոխական է մինչև վերջը։

գ) Ռուսական բուրժուազիայի քաղաքական թուլամորթությունը, վոր 1905 թվի հեղափոխությունից հետո դարձավ ստրկամտություն ցարիզմին և ուղղակի հակահեղափոխականություն, վորը բացատրվում է վո՛չ միայն ռուսական պրոլետարիատի հեղափոխականությամբ,—պրոլետարիատ, վորը ռուսական բուրժուազիային նետեց ցարիզմի գիրկը,—այլև բացատրվում է այդ բուրժուազիայի ուղղակի կախումով պետական պատվերներից։

դ) Ճորտատիրական կարգերի ամենաայլանդակ և ամենաանտանելի մնացուկների առկայությունը գյուղում, վորոնք լրացվում էին կալվածատիրոջ ամենակարողությամբ,—մի հանգամանք, վոր գյուղացիությանը նետեց հեղափոխության գիրկը։

ե) Ցարիզմը, վոր ճզմում էր ամեն կենդանի բան և իր կամայականությամբ կրկնապատկում էր կապիտալիստի ու կալվածատիրոջ ճնշումը — մի հանգամանք, վոր միացրեց բանվորների և գյուղացիների պայքարը և մի միասնական հեղափոխական հեղեղի վերածեց։

զ) Իմպերիալիստական պատերազմը, վոր Ռուսաստանի քաղաքական կյանքի այդ բոլոր հակասությունները միաձուլեց ու վերածեց խորը հեղափոխական ճգնաժամի և հեղափոխությանը տվեց գրոհի աներևակայելի ուժ։

Այսպիսի պայմաններում ո՞ւր պիտի թեքվեր գյուղացիությունը։ Ո՞ւմ մոտ աջակցություն փնտրեր կալվածատիրոջ ամենակարողության դեմ, ցարի կամայականության դեմ, իր տնտեսությունն ավերող կործանարար պատերազմի դեմ։ Լիբերալ բուրժուազիայի՞ մոտ։ Բայց նա թշնամի յէ,—այդ էր ասում բոլոր չորս Դումաների յերկարամյա փորձը։ Էս-էռների՞ մոտ։ Էս-էռները, իհարկե, կադետներից «լավ են», և նրանց ծրագիրն էլ «ձեռնտու յէ», համարյա գյուղացիական, բայց ի՞նչ կարող են տալ էս-էռները, յեթե նրանք մտադիր են հենվել միայն գյուղացիների վրա և յեթե նրանք թույլ են քաղաքում, վորտեղ ամենից առաջ իր ուժերը քաղում է հակառակորդը։ Վո՞րտեղ է այն նոր ուժը, վորը վոչ մի բանի առաջ կանգ չի առնի վո՛չ գյուղում, վո՛չ քաղաքում, վորը համարձակ կերպով առաջին շարքերը կմտնի՝ ցարի և կալվածատիրոջ դեմ կռվելու համար, վորը կօգնի գյուղացիությանը՝ դուրս պրծնելու ստրկությունից, հողազրկությունից, ճնշումից, պատերազմից։ Ընդհանրապես այդպիսի ուժ կա՞ր արդյոք Ռուսաստանում։ Այո՛, կար։ Այդ — ռուսական պրոլետարիատն էր, վորը ցույց էր տվել իր ուժը, մինչև վերջը կռվելու իր շնորհքը, իր համարձակությունը, իր հեղափոխականությունը դեռևս 1905 թվին։

Համենայն դեպս ուրիշ այդպիսի ուժ չկար և վոչ մի տեղից գտնել չէր կարելի։

Ահա թե ինչու գյուղացիությունը, կադետներից հեռանալով և դեպի էս-էռները գալով, դրա հետ մեկտեղ հանգեց հեղափոխության այնպիսի արի առաջնորդի ղեկավարությանը յենթարկվելու անհրաժեշտությանը, ինչպես ռուսական պրոլետարիատն է։

Սրանք են այն հանգամանքները, վորոնք վորոշեցին ռուսական բուրժուական հեղափոխության յուրօրինակությունը։

3) Գյուղացիությունը պրոլետարական հեղափոխության ժամանակ: *Այս ժամանակաշրջանն ընդգրկում ե Փետրվարյան հեղափոխությունից (1917 թ.) մինչև Հոկտեմբերյանը (1917 թ.) հասնող ժամանակամիջոցը: Այդ ժամանակաշրջանը համեմատաբար յերկար չե, ընդամենն ութ ամիս ե,—բայց այդ ութ ամիսը՝ մասսաների քաղաքական լուսավորության և հեղափոխական դաստիարակության տեսակետից՝ համարձակորեն կարելի յե հավասարեցնել սովորական սահմանադրական զարգացման ամբողջ տասնամյակների, վորովհետև դրանք* **հեղափոխության** *ութ ամիսներ են նշանակում: Այս ժամանակաշրջանի բնորոշ գիծը գյուղացիության հետագա հեղափոխականացումն ե, գյուղացիության հիասթափվելը էս-էրներից, նրա* **հեռանալը** *էս-էրներից, գյուղացիության նոր* **շրջադարձը** *դեպի* **ուղղակի համախմբումը** *պրոլետարիատի շուրջը, վորպես միակ մինչև վերջը հեղափոխական մի ուժի, վորն ընդունակ ե յերկիրը խաղաղության հասցնելու: Այս ժամանակաշրջանի պատմությունը գյուղացիության համար, գյուղացիության մեծամասնությունը նվաճելու համար էս-էրների (մանր բուրժուական դեմոկրատիա) և բոլշևիկների (պրոլետարական դեմոկրատիա) միջև մղված պայքարի պատմությունն ե: Այդ պայքարի բախտը վորոշեցին կոալիցիոն ժամանակաշրջանը, կերենշչինայի ժամանակաշրջանը, էս-էրների ու մենշևիկների հրաժարվելը կալվածատիրական հողի կոնֆիսկացիայից, էս-էրների ու մենշևիկների պայքարը պատերազմը շարունակելու համար, հունիսյան հարձակումը ճակատում, զինվորների համար մահապատժի սահմանելը, Կորնիլովի ապըստամբությունը:*

Յեթե առաջ, նախորդ ժամանակաշրջանում, հեղափոխության հիմնական հարց հանդիսանում եր ցարի և կալվածատիրական իշխանության տապալումը, ապա այժմ, հեղափոխության հետ-փետրվարյան ժամանակաշրջանում, յերբ ցարն այլևս չկար, իսկ վերջ չունեցող պատերազմը վոչնչացրել եր յերկրի տնտեսությունը՝ վերջնականապես քայքայելով գյուղացիությունը, հեղափոխության հիմնական հարցը դարձավ պատերազմի լիկվիդացիայի հարցը: Ծանրության կենտրոնը զուտ ներքին բնույթի հարցերից ակնհայտ կերպով փոխադրվեց հիմնական հարցի — պատերազմի հարցի կողմը:

«Վերջացնել պատերազմը», «դուրս պրծնել պատերազմից»— ահա տառապած յերկրի և, ամենից առաջ, գյուղացիության ընդհանուր ճիչն եր:

Բայց պատերազմից դուրս պրծնելու համար անհրաժեշտ եր տապալել ժամանակավոր կառավարությունը, անհրաժեշտ եր տապալել բուրժուազիայի իշխանությունը, անհրաժեշտ եր տապալել էս-էրների և մենշևիկների իշխանությունը, վորովհետև նրա՛նք և միա՛յն նրանք եյին ձգձգում պատերազմը մինչև «հաղթական վախճանը»: Պատերազմից դուրս գալու այլ ճանապարհ, բացի բուրժուազիայի տապալումից, գործնականում չգտնվեց:

Այս մի նոր հեղափոխություն եր, պրոլետարական հեղափոխություն, վորովհետև նա իշխանությունից գցում եր իմպերիալիստական բուրժուազիայի վերջին, ծայրահեղ ձախ ֆրակցիան՝ էս-էրների ու մենշևիկների կուսակցությունը, վորպեսզի ստեղծի նոր, պրոլետարական իշխանություն, խորհուրդների իշխանություն, վորպեսզի իշխանության գլուխ կանգնեցնի հեղափոխական պրոլետարիատի կուսակցությունը, բոլշևիկների կուսակցությունը, իմպերիալիստական պատերազմի դեմ հանուն դեմոկրատական հաշտության մղված հեղափոխական պայքարի կուսակցությունը: Գյուղացիության մեծամասնությունն աջակցեց հաշտության համար, խորհուրդների իշխանության համար բանվորների մղած պայքարին:

Գյուղացիության համար ուրիշ յելք չկար: Ուրիշ յելք չեր ել կարող լինել:

Կերենշչինայի ժամանակաշրջանն այսպիսով մեծագույն առարկայական դաս եր գյուղացիության աշխատավորական մասսաների համար, վորովհետև նա ակնբախ կերպով ցույց տվեց, վոր էս-էրների և մենշևիկների իշխանության օրով յերկիրը պատերազմից դուրս չի պրծնի, գյուղացիները չեն ստանա վո՛չ հող, վո՛չ ազատություն, վոր մենշևիկներն ու էս-էրները կադետներից տարբերվում են լոկ քաղցր ճառերով ու կեղծ խոստումներով, իսկ իրականում կիրառում են հենց նույն իմպերիալիստական, կադետական քաղաքականությունը, վոր միակ իշխանությունը, վորն ընդունակ լինի յերկիրը ճանապարհ դուրս բերելու, կարող ե լինել միայն խորհուրդների իշ-

խանության: Պատերազմի հետագա ձգձգումը միայն հաստա-
տում եր այս դասի ճշտությունը, առաջ եր քշում հեղափոխու-
թյունը և գյուղացիների ու զինվորների միլիոնավոր մասսա-
ներին քշում եր դեպի պրոլետարական հեղափոխության շուրջն
ուղղակի կերպով համախմբվելու ուղին: Եսեռների և մենշե-
վիկների մեկուսացումը դարձավ անառարկելի փաստ: Առանց
կոալիցիոն ժամանակաշրջանի ակնբախ դասերի պրոլետարիա-
տի դիկտատուրան անհնարին կլիներ:

Սրանք են այն հանգամանքները, վորոնք հեշտացրին բուր-
ժուական հեղափոխության պրոլետարական հեղափոխության
վերածվելու պրոցեսը:

Այսպես կազմավորվեց պրոլետարիատի դիկտատուրան
Ռուսաստանում:

4) Գյուղացիությունը խորհրդային իշխանության ամրա-
պնդումից հետո: Յեթե առաջ, հեղափոխության առաջին
շրջանում, գործը վերաբերում եր, գլխավորապես, ցարիզմի
տապալմանը, իսկ ապա, Փետրվարյան հեղափոխությունից հետո
հարցը վերաբերում եր, ամենից առաջ, բուրժուազիայի տա-
պալելու միջոցով իմպերիալիստական պատերազմից դուրս գա-
լուն, ապա այժմ, քաղաքացիական պատերազմի լիկվիդացիա-
յից և խորհրդային իշխանության ամրապնդումից հետո,—ա-
ռաջին պլան յելան տնտեսական շինարարության հարցերը: Ու-
ժեղացնել ու զարգացնել ազգայնացված ինդուստրիան, դրա
համար ինդուստրիան կապել գյուղացիական տնտեսության հետ՝
պետության կողմից կարգավորվող առևտրի միջոցով, պարեն-
մասնատրումը փոխարինել պարենհարկով այն հաշվով, վոր հե-
տո, պարենհարկի չափերն աստիճանաբար նվազեցնելով, գործը
հանգեցնենք ինդուստրիայի շինվածքները գյուղացիական
տնտեսության մթերքների հետ փոխանակելուն, աշխուժացնել
առևտուրը և զարգացնել կոոպերացիան, այս վերջինի մեջ ներ-
գրավելով միլիոնավոր գյուղացիությունը,—ահա թե ինչպես եր
պատկերում Լենինը տնտեսական շինարարության հերթական
խնդիրները՝ դեպի սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառու-
ցումը տանող ճանապարհին:

Ասում են, թե այդ խնդիրը կարող է այնպիսի գյուղացիա-
կան յերկրի ուժից վեր լինել, ինչպիսին Ռուսաստանն է: Մի-

քանի սկեպտիկներ խոսում են նույնիսկ այն մասին, վոր դա
պարզապես ուտոպիական է, անիրագործելի, վորովհետև գյու-
ղացիությունը գյուղացիություն է,—նա բաղկացած է մանր
արտադրողներից և այդ պատճառով չի կարող օգտագործվել
սոցիալիստական արտադրության հիմքի կազմակերպման հա-
մար:

Բայց սկեպտիկները սխալվում են, վորովհետև նրանք հաշ-
վի չեն առնում միքանի հանգամանք, վորոնք տվյալ դեպքում
վճռողական նշանակություն ունեն: Քննենք դրանցից գլխավոր-
ները:

Առաջին: Խորհրդային Միության գյուղացիությունը չի կա-
րելի շփոթել Արևմուտքի գյուղացիության հետ: Մի գյուղա-
ցիություն, վորն անցել է յերեք հեղափոխության դպրոց, կռվել
ցարի դեմ և բուրժուական իշխանության դեմ պրոլետարիատի
հետ մեկտեղ և պրոլետարիատի գլխավորությամբ, մի գյուղա-
ցիություն, վորը հող և հաշտություն է ստացել պրոլետարա-
կան հեղափոխության ձեռքից ու դրա շնորհիվ դարձել է պրո-
լետարիատի ռեզերվը,—այդ գյուղացիությունը չի կարող չտար-
բերվել այն գյուղացիությունից, վորը բուրժուական հեղափո-
խության ժամանակ կռվել է լիբերալ բուրժուազիայի գլխավո-
րությամբ, հողն ստացել է այդ բուրժուազիայի ձեռքից ու դրա
շնորհիվ դարձել է բուրժուազիայի ռեզերվը: Հազիվ թե հարկ
կա ապացուցելու, վոր խորհրդային գյուղացիությունը, վորը
սովորել է գնահատել քաղաքական բարեկամությունը և քաղա-
քական համագործակցությունը պրոլետարիատի հետ և իր ազա-
տությունը պարտական է այդ բարեկամությանն ու այդ համա-
գործակցությանը,—չի կարող չկազմել բացառիկ նպաստավոր
նյութ՝ պրոլետարիատի հետ տնտեսական համագործակցություն
ունենալու համար:

Էնգելսն ասում եր, վոր «սոցիալիստական կուսակցության
կողմից քաղաքական իշխանություն նվաճելը դարձել է մոտիկ
ապագայի գործ», վոր «այն նվաճելու համար կուսակցությունը
նախ պետք է քաղաքից գյուղ գնա և գյուղում ուժեղ դառնա»
(տե՛ս Էնգելսի «Գյուղացիական հարցը»): Նա դրա մասին գրել
է անցյալ դարի 90-ական թվականներին, նկատի ունենալով արև-
մտյան գյուղացիությունը: Հարկավո՞ր է արդյոք ապացուցել,

խանությունը։ Պատերազմի հետագա ծավալումը միայն հաստատում եր այս դասի ճշտությունը, առաջ եր քշում հեղափոխությունը և գյուղացիների ու զինվորների միլիոնավոր մասսաներին քշում եր դեպի պրոլետարական հեղափոխության շուրջը ուղղակի կերպով համախմբվելու ուղին։ Էս-երների և մենշևիկների մեկուսացումը դարձավ անառարկելի փաստ։ Առանց կոալիցիոն ժամանակաշրջանի ակնբախ դասերի պրոլետարիատի դիկտատուրան անհնարին կլիներ։

Սրանք են այն հանգամանքները, վորոնք հեշտացրին բուրժուական հեղափոխության պրոլետարական հեղափոխության վերածվելու պրոցեսը։

Այսպես կազմավորվեց պրոլետարիատի դիկտատուրան Ռուսաստանում։

4) Գյուղացիությունը խորհրդային իշխանության ամրապնդումից հետո: Յեթե առաջ, հեղափոխության առաջին շրջանում, գործը վերաբերում եր, գլխավորապես, ցարիզմի տապալմանը, իսկ ապա, Փետրվարյան հեղափոխությունից հետո հարցը վերաբերում եր, ամենից առաջ, բուրժուազիային տապալելու միջոցով իմպերիալիստական պատերազմից դուրս գալուն, ապա այժմ, քաղաքացիական պատերազմի լիկվիդացիայից և խորհրդային իշխանության ամրապնդումից հետո,—առաջին պլան յելան տնտեսական շինարարության հարցերը։ Ուժեղացնել ու զարգացնել ազգայնացված ինդուստրիան, դրա համար ինդուստրիան կապել գյուղացիական տնտեսության հետ՝ պետության կողմից կարգավորվող առևտրի միջոցով, պարենմասնատրումը փոխարինել պարենհարկով այն հաշվով, վոր հետո, պարենհարկի չափերն աստիճանաբար նվազեցնելով, գործը հանգեցնենք ինդուստրիայի շինվածքները գյուղացիական տնտեսության մթերքների հետ փոխանակելուն, աշխուժացնել առևտուրը և զարգացնել կոոպերացիան, այս վերջինի մեջ ներգրավելով միլիոնավոր գյուղացիությանը,—ահա թե ինչպես եր պատկերում Լենինը տնտեսական շինարարության հերթական խնդիրները՝ դեպի սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը տանող ճանապարհին։

Ասում են, թե այդ խնդիրը կարող է այնպիսի գյուղացիական յերկրի ուժից վեր լինել, ինչպիսին Ռուսաստանն է։ Մի-

քանի սկեպտիկներ խոսում են նույնիսկ այն մասին, վոր դա պարզապես ուտոպիական է, անիրագործելի, վորովհետև գյուղացիությունը գյուղացիություն է,—նա բաղկացած է մանր արտադրողներից և այդ պատճառով չի կարող օգտագործվել սոցիալիստական արտադրության հիմքի կազմակերպման համար։

Բայց սկեպտիկները սխալվում են, վորովհետև նրանք հաշվի չեն առնում միքանի հանգամանք, վորոնք տվյալ դեպքում վճռողական նշանակություն ունեն։ Քննենք դրանցից գլխավորները։

Առաջին։ Խորհրդային Միության գյուղացիությունը չի կարելի շփոթել Արևմուտքի գյուղացիության հետ։ Մի գյուղացիություն, վորն անցել է յերեք հեղափոխության դպրոց, կռվել ցարի դեմ և բուրժուական իշխանության դեմ պրոլետարիատի հետ մեկտեղ և պրոլետարիատի գլխավորությամբ, մի գյուղացիություն, վորը հող և հաշտություն է ստացել պրոլետարական հեղափոխության ձեռքից ու դրա շնորհիվ դարձել է պրոլետարիատի ռեզերվը,—այդ գյուղացիությունը չի կարող չտարբերվել այն գյուղացիությունից, վորը բուրժուական հեղափոխության ժամանակ կռվել է լիբերալ բուրժուազիայի գլխավորությամբ, հողն ստացել է այդ բուրժուազիայի ձեռքից ու դրա շնորհիվ դարձել է բուրժուազիայի ռեզերվը։ Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր խորհրդային գյուղացիությունը, վորը սովորել է գնահատել քաղաքական բարեկամությունը և քաղաքական համագործակցությունը պրոլետարիատի հետ և իր ազատությունը պարտական է այդ բարեկամությանն ու այդ համագործակցությանը,—չի կարող չկազմել բացառիկ նպաստավոր նյութ՝ պրոլետարիատի հետ տնտեսական համագործակցություն ունենալու համար։

Էնգելսն ասում եր, վոր «սոցիալիստական կուսակցության կողմից քաղաքական իշխանություն նվաճելը դարձել է մոտիկ ապագայի գործ», վոր «այն նվաճելու համար կուսակցությունը նախ պետք է քաղաքից գյուղ գնա և գյուղում ուժեղ դառնա» (տե՛ս Էնգելսի «Գյուղացիական հարցը»)։ Նա դրա մասին գրել է անցյալ դարի 90-ական թվականներին, նկատի ունենալով արևմտյան գյուղացիությունը։ Հարկավո՞ր է արդյոք ապացուցել,

վոր ռուսական կոմունիստները, վորոնք այդ տեսակետից հսկայական աշխատանք են կատարել յերեք հեղափոխությունների ընթացքում, արդեն կարողացել են իրենց համար գյուղում ստեղծել այնպիսի ազդեցություն և այնպիսի հենարան, վորոնց մասին մեր արևմտյան ընկերները յերազել անգամ չեն համարձակվում: Ի՞նչպես կարելի յե ժխտել, վոր այս հանգամանքը չի կարող արմատապես չհեշտացնել Ռուսաստանի բանվոր դասակարգի և գյուղացիության միջև տնտեսական համագործակցության հարթելու խնդիրը:

Սկեպտիկները պնդում են, թե մանր գյուղացիները մի գործոն են, վորն անհամատեղելի յե սոցիալիստական շինարարության հետ: Բայց լսեցե՛ք, թե ինչ ե ասում Էնգելսն Արևմուտքի մանր գյուղացիների մասին.

«Մենք վճռականապես կանգնած ենք մանր գյուղացու կողմը. մենք կանենք ամեն հնարավոր բան, վորպեսզի նրա համար ավելի տանելի լինի ապրելը, վորպեսզի հեշտացնենք նրա անցումը դեպի ընկերականություն այն դեպքում, յեթե նա վճռի այդ անել. իսկ այն դեպքում, յերբ նա դեռևս ի վիճակի չի լինի այդ վճիռն ընդունելու, մենք կաշխատենք նրան կարելույն չափ ավելի ժամանակ տրամադրել՝ իր հողի պատառի վրա դրա մասին մտածելու համար: Մենք այդպես կվարվենք վո՛չ միայն այն պատճառով, վոր հնարավոր ենք համարում ինքնուրույն աշխատող մանր գյուղացու անցումը մեր կողմը, այլ նաև յելնելով անմիջական կուսակցական շահերից. Վորքան շատ լինի այն գյուղացիների թիվը, վորոնց մենք թույլ չենք տա իջնելու պրոլետարների վիճակին և վորոնց դեռևս իրենց գյուղացի վիճակում կգրավենք մեր կողմը, այնքան ավելի արագ և հեշտ կկատարվի հասարակական փոխակերպությունը: Մեզ համար անօգուտ կլիներ այդ փոխակերպության գործում սպասել մինչև այն ժամանակը, յերբ կապիտալիստական արտադրությունն ամենուրեք կզարգանա մինչև իր ծայրահեղ հետևանքները, յերբ թե՛ վերջին մանր արհեստավորը, թե՛ վերջին մանր գյուղացին զոհ կդառնան խոշոր կապիտալիստական արտադրությանը. Այն նյութական զոհաբերությունները, վոր այս իմաստով հարկ կլինի անել հասարակական միջոցներից գյուղացիների օգտին, կապիտալիստական եկոնոմիկայի տեսակետից կարող են թվալ դեն գցված փողեր, մինչդեռ այդ՝ կապիտալի հիանալի գործադրումն ե, վորովհետև դրանք թերևս տասն անգամ ավելի մեծ գումարներ կտնտեսեն իր ամբողջությամբ առած հասարակական փոխակերպության վրա լինելիք ծախսերում: Այս իմաստով մենք կարող ենք, հետևաբար, շատ առատաձեռն լինել գյուղացիների նկատմամբ» (տե՛ս նույն տեղը).

Այսպես եր ասում Էնգելսը, նկատի ունենալով արևմտյան գյուղացիությունը: Բայց մի՞թե պարզ չե, վոր Էնգելսի ասածը վոչ մի տեղ չի կարող իրականացվել այնպիսի հեշտությամբ ու լիակատարությամբ, ինչպես պրոլետարիատի դիկտատուրայի յերկրում: Մի՞թե պարզ չե, վոր միայն Խորհրդային Ռուսաստանում կարող են այժմ ևեթ և ամբողջությամբ կենսագործվել թե՛ «ինքնուրույն աշխատող մանր գյուղացու անցումը մեր կողմը», թե՛ դրա համար անհրաժեշտ «նյութական զոհաբերությունները», թե՛ դրա համար հարկավոր «առատաձեռնությունը գյուղացիների նկատմամբ», վոր Ռուսաստանում արդեն կիրառվում են այդ և դրանց նման միջոցառումները գյուղացիների օգտին: Ի՞նչպես կարելի յե ժխտել, վոր այս հանգամանքն, իր հերթին, պետք ե հեշտացնի և առաջ շարժի Խորհրդային յերկրի տնտեսական շինարարության գործը:

Յերկրորդ: Ռուսաստանի գյուղատնտեսությունը չի կարելի շփոթել Արևմուտքի գյուղատնտեսության հետ: Այնտեղ գյուղատնտեսության զարգացումն ընթանում ե կապիտալիզմի սովորական գծով, գյուղացիության խոր շերտավորման պայմաններում, մի բևեռում ունենալով խոշոր կալվածքներ ու մասնավոր-կապիտալիստական լատիֆունդիաներ, մյուսում — պաուպերիզմ, աղքատություն և վարձու ստրկություն: Դրա շնորհիվ փլուզումն ու քայքայումն այնտեղ միանգամայն բնական են: Այդպես չե Ռուսաստանում: Մեզ մոտ գյուղատնտեսության զարգացումը չի կարող ընթանալ այդպիսի ուղիով թեկուզ հենց այն պատճառով, վոր Խորհրդային իշխանության առկայությունը և արտադրության հիմնական գործիքների ու միջոցների ազգայնացումը չեն թույլատրում այդպիսի զարգացում: Ռուսաստանում գյուղատնտեսության զարգացումը պետք ե ընթանա այլ ուղիով, միլիոնավոր մանր և միջակ գյուղացիության կոոպերացման ուղիով, պետության աջակցությունը արտոնյալ վարկավորման կարգով վայելող մասսայական կոոպերացիան գյուղում զարգացնելու ուղիով: Կոոպերացիայի վերաբերյալ հոդվածներում Լենինը ճիշտ ե մատնանշել, վոր գյուղատնտեսության զարգացումը մեզ մոտ պետք ե ընթանա նոր ուղիով, գյուղացիների մեծամասնությունը կոոպերացիայի միջոցով սո-

ցիալիստական շինարարության մեջ ներքաշվելու ուղիով, գյուղատնտեսության մեջ կոլեկտիվիզմի սկզբունքներն աստիճանաբար արմատացնելու ուղիով՝ սկզբում գյուղատնտեսության արտադրանքների վաճառահանման բնագավառում, ապա և նրանց արտադրության բնագավառում։

Այս տեսակետից ծայր աստիճան հետաքրքրական են գյուղատնտեսական կոոպերացիայի աշխատանքի հետ կապված մի քանի նոր երևույթները գյուղում։ Հայտնի է, որ Գյուղմիության ներսում ծնունդ են առել նոր խոշոր կազմակերպություններ ըստ գյուղատնտեսության ճյուղերի՝ վուշի, կարտոֆիլի, յուղի և այլն, որոնք մեծ ապագա ունեն։ Դրանցից, օրինակ, Վուշկենտրոնը միավորում է վուշագործ գյուղացիների արտադրական ընկերությունների մի ամբողջ ցանց։ Վուշկենտրոնն զբաղվում է նրանով, որ գյուղացիներին մատակարարում է սերմացու և արտադրության գործիքներ, հետո նույն այդ գյուղացիներից գնում է վուշի ամբողջ արտադրանքը, մասսայական մաշտաբով վաճառահանում է շուկայում, ապահովում է գյուղացիների մասնակցությունը շահույթներին և, այդպիսով, գյուղացիական տնտեսությունը Գյուղմիության միջոցով կապում է պետական արդյունաբերության հետ։ Ի՞նչպես անվանել արտադրության կազմակերպման այսպիսի ձևը։ Այդ, ըստ իս, խոշոր պետական-սոցիալիստական արտադրության տնային սիստեմ է գյուղատնտեսության բնագավառում։ Ես այստեղ խոսում եմ պետական-սոցիալիստական արտադրության տնային սիստեմի մասին՝ անալոգիա կատարելով կապիտալիզմի տնային սիստեմի հետ, ասենք, տեքստիլ արտադրության բնագավառում, որտեղ տնայնագործները, ստանալով կապիտալիստից հումք և գործիքներ և հանձնելով նրան իրենց ամբողջ արտադրանքը, փաստորեն հանդիսանում էին տանն աշխատող կիսավարձու բանվորներ։ Սա մեկն է այն բազմաթիվ ցուցանիշներից, թե մեզ մոտ ինչ ճանապարհով պետք է ընթանա գյուղատնտեսության զարգացումը։ Ես այստեղ էլ չեմ խոսում գյուղատնտեսության այլ ճյուղերին վերաբերող հենց նույն տեսակի ուրիշ ցուցանիշների մասին։

Հազիվ թե հարկ կա ապացուցելու, որ գյուղացիության

հսկայական մեծամասնությունը սիրով վոտք կդնի զարգացման այս նոր ուղին, դեն նետելով մասնավոր-կապիտալիստական լատիֆունդիաների և վարձու ստրկության ուղին, թշվառության և քայքայման ուղին։

Ահա թե ինչ է ասում Լենինը մեր գյուղատնտեսության զարգացման ուղիների մասին.

«Պետության իշխանությունն արտադրության բոլոր խոշոր միջոցների վրա, պետության իշխանությունը պրոլետարիատի ձեռքին, այդ պրոլետարիատի դաշինքը շատ միլիոններ կազմող մանր և մանրագույն գյուղացիների հետ, այդ պրոլետարիատի համար գյուղացիությանը ղեկավարելու գործն ապահովելը և այլն—մի՞թե սա այն ամենը չէ, ինչ հարկավոր է, որպեսզի կոոպերացիայից, միմիայն կոոպերացիայից, վոր մենք առաջ քամահրում էինք (третировали) որպես չարչիական կոոպերացիա, և որը որոշ տեսակետից իրավունք ունենք քամահրելու այժմ՝ նեպի պայմաններում նույնպես,—մի՞թե սա բոլոր անհրաժեշտը չէ ՝լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար։ Սա դեռևս սոցիալիստական հասարակության կառուցումը չէ, բայց սա այն ամենն է, ինչ անհրաժեշտ է և բավական՝ այդ կառուցման համար» (տե՛ս հ. XXVII, էջ 392)։

Այնուհետև խոսելով այն մասին, որ անհրաժեշտ է ֆինանսական և այլ աջակցություն ցույց տալ կոոպերացիային, որպես պրոլետարիատի դիկտատուրայի որով «բնակչության կազմակերպման նոր սկզբունքի» և «նոր հասարակակարգի»՝ Լենինը շարունակում է.

«Յուրաքանչյուր հասարակակարգ ծագում է միայն որոշ դասակարգի ֆինանսական աջակցությամբ։ Կարիք չկա հիշեցնելու այն հարյուրավոր ու հարյուրավոր միլիոն ռուբլիների մասին, որ արժեցավ «ազատ» կապիտալիզմի ծնունդը։ Հիմա մենք պետք է գիտակցենք ու գործի վերածենք այն, որ ներկայումս այն հասարակարգը, վորին մենք պետք է աջակցենք սովորականից ավելի, կոոպերատիվ կարգերն են։ Սակայն նրան հարկավոր է աջակցել այս բառի իսկական իմաստով, այսինքն այդ աջակցությունը բավական չէ հասկանալ որպես աջակցություն ամեն մի կոոպերատիվ շրջանառության,—այդ աջակցության տակ հարկավոր է հասկանալ աջակցությունն այնպիսի կոոպերատիվ շրջանառությանը, վորին իսկապես մասնակցում են բնակչության իսկական մասսաները» (տե՛ս նույն տեղը, էջ 393)։

Ի՞նչ են ասում այս բոլոր հանգամանքները։

Այն, որ սկեպտիկներն իրավացի չեն։

Այն, վոր իրավացի յե լենինիզմը, վորը գյուղացիության աշխատավոր մասսաներին դիտում է վորպես պրոլետարիատի ռեզերվ:

Այն, վոր իշխանության գլուխ կանգնած պրոլետարիատը կարող է և պետք է օգտագործի այդ ռեզերվը, վորպեսզի ինդուստրիան շաղկապի գյուղատնտեսության հետ, բարձրացնի սոցիալիստական շինարարությունը և պրոլետարիատի դիկտատուրային տա այն անհրաժեշտ հիմքը, առանց վորի անհնարին է սոցիալիստական էկոնոմիկային անցնելը:

VI. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ

Այս թեմայից յես վերցնում եմ յերկու գլխավոր հարց. ա) հարցի դրումը, բ) ճնշված ժողովուրդների ազատագրական շարժումը և պրոլետարական հեղափոխությունը:

1) Հարցի դրումը: Վերջին յերկու տասնամյակում ազգային հարցը կրել է մի շարք ամենալուրջ փոփոխություններ: Ազգային հարցը II Ինտերնացիոնալի ժամանակաշրջանում և ազգային հարցը լենինիզմի ժամանակաշրջանում բնավ միևնույնը չեն: Նրանք խորապես տարբերվում են իրարից վո՛չ միայն ծավալով, այլև իրենց ներքին բնույթով:

Առաջներում ազգային հարցը պարփակվում էր սովորաբար այն հարցերի նեղ շրջանակում, վորոնք վերաբերում են գլխավորապես «կուլտուրական» ազգություններին: Իռլանդացիք, հունգարացիք, լեհերը, ֆինները, սերբերը և Եվրոպայի միքանի ուրիշ ազգություններ—ահա այն վոչ լիիրավ ժողովուրդների շրջանը, վորոնց բախտով հետաքրքրվում էին II Ինտերնացիոնալի հերոսները: Ամենակոպիտ և դաժան ձևի ազգային ճնշման յենթակա ասիական և աֆրիկական ժողովուրդների տասնյակ ու հարյուրավոր միլիոնները սովորաբար տեսադաշտից դուրս էին մնում: Սպիտակներին ու սևերին, «կուլտուրականներին» և «անկուլտուրականներին» չէին համարձակվում միևնույն կարգը դասել: Երկու-յերեք դատարկ ու թթվաքաղցր բանաձևեր, վորոնք ջանասիրաբար խուսափում էին գաղութների ազատագրման հարցից,—սա այն ամենն է, ինչով կարող էին պարծենալ II Ինտերնացիոնալի գործիչները: Այժմ ազգա-

յին հարցում յեղած այդ յերկվությունն ու կիսատությունը հարկավոր է վերացված համարել: Լենինիզմը բաց արեց այդ աղաղակող անհամապատասխանությունը, կործանեց սպիտակների ու սևերի միջև, յեվրոպացիների ու ասիացիների միջև, իմպերիալիզմի «կուլտուրական» ու «անկուլտուրական» ստրուկների միջև յեղած պատը և, այդպիսով, ազգային հարցը կապեց գաղութների հարցի հետ: Հենց դրանով էլ ազգային հարցը մասնավոր և ներպետական հարցից վերածվեց ընդհանուր ու միջազգային հարցի, կախյալ յերկրների ու գաղութների ճնշված ժողովուրդներին իմպերիալիզմի լծից ազատելու համաշխարհային հարցի:

Առաջներում ազգերի ինքնորոշման սկզբունքը սովորաբար սխալ էր մեկնաբանվում, հաճախ նեղացվում էր այն մինչև ազգերի ավտոնոմիայի իրավունքը: II Ինտերնացիոնալի միքանի լիդերներ նույնիսկ այն տեղը հասան, վոր ինքնորոշման իրավունքը վերածեցին կուլտուրական ավտոնոմիայի իրավունքի, այսինքն՝ ճնշված ազգերի իրենց կուլտուրական հիմնարկությունները ունենալու իրավունքի, ամբողջ քաղաքական իշխանությունը թողնելով տիրապետող ազգի ձեռքին: Այս հանգամանքը տանում էր դեպի այն, վոր ինքնորոշման գաղափարը անեքսիաների դեմ կռվելու գործիքից անեքսիաներն արդարացնելու գործիքի վերածվելու ռիսկի յեր յենթարկվում: Հիմա այդ խառնաշփոթությունը հաղթահարված պետք է համարել: Լենինիզմն ընդլայնեց ինքնորոշման հասկացողությունը, մեկնաբանելով այն վորպես կախյալ յերկրների ու գաղութների ճնշված ժողովուրդների լիակատար անջատման իրավունք, վորպես ազգերի ինքնուրույն պետական գոյության իրավունք: Դրանով էլ հենց բացառվեց ինքնորոշման իրավունքը վորպես ավտոնոմիայի իրավունք մեկնաբանելու միջոցով անեքսիաների արդարացման հնարավորությունը: Իսկ ինքը՝ ինքնորոշման սկզբունքը, այդպիսով, մասսաներին խաբելու գործիքից, վորպիսին նա անկասկած հանդիսանում էր իմպերիալիստական պատերազմի ժամանակ սոցիալ-շովինիստների ձեռքին, վերածվեց բոլոր և ամեն տեսակ իմպերիալիստական իղձերի ու շովինիստական մեքենայությունների մերկացման գործիքի, մասսաներին ին-

ինտերնացիոնալիզմի վոգով քաղաքականապես լուսավորելու գործիքի։

Ճնշված ազգերի հարցն առաջներում սովորաբար դիտվում էր վորպես զուտ իրավական հարց։ «Ազգային իրավահավասարության» հանդիսավոր հռչակում, անթիվ դեկլարացիաներ «ազգերի հավասարության» մասին — ահա թե ինչի վրա էյին ժամանակ վատնում II Ինտերնացիոնալի կուսակցությունները, վորոնք սքողում էին այն փաստը, վոր «ազգերի հավասարությունն» իմպերիալիզմի պայմաններում, յերբ ազգերի մի խումբը (փոքրամասնությունը) ապրում է ի հաշիվ ազգերի մյուս խմբի շահագործման, ծաղր է ճնշված ժողովուրդների նկատմամբ։ Հիմա այդ բուրժուական-իրավական տեսակետն ազգային հարցում հարկավոր է համարել մերկացված։ Լենինիզմն ազգային հարցը լայնահաղորդ դեկլարացիաների բարձունքներից դետին իջեցրեց, հայտարարելով, վոր «ազգերի հավասարության» վերաբերյալ դեկլարացիաները, յեթե նրանք չեն ամրապնդվում ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարին պրոլետարական կուսակցությունների կողմից ցույց տրվող ուղղակի աջակցությամբ, դատարկ ու կեղծ դեկլարացիաներ են։ Հենց դրանով էլ ճնշված ազգերի հարցը դարձավ ընդդեմ իմպերիալիզմի, հանուն ազգերի իսկական հավասարության, հանուն նրանց ինքնուրույն պետական գոյության մղվող պայքարում այդ ազգերին աջակցության, օգնության, իսկական և մշտական օգնության ցույց տալու հարց։

Առաջներում ազգային հարցը դիտվում եր ռեֆորմիստորեն, վորպես առանձին ինքնուրույն հարց, առանց կապակցվելու կապիտալի իշխանության, իմպերիալիզմի տապալման, պրոլետարական հեղափոխության ընդհանուր հարցի հետ։ Լռելյայն յենթադրվում եր, թե պրոլետարիատի հաղթությունը Յեվրոպայում հնարավոր է առանց ուղղակի դաշինքի գաղութների ազատագրական շարժման հետ, վոր ազգային-գաղութային հարցը լուծում կարող է ստանալ սուսուփուս, «ինքնահոսով», պրոլետարական հեղափոխության մեծ ճանապարհից դուրս, առանց հեղափոխական կռվի ընդդեմ իմպերիալիզմի։ Հիմա այս

հակահեղափոխական տեսակետը պետք է համարել մերկացված։ Լենինիզմն ապացուցեց, իսկ իմպերիալիստական պատերազմը և հեղափոխությունը Ռուսաստանում հաստատեցին, վոր ազգային հարցը կարող է լուծվել միմիայն պրոլետարական հեղափոխության կապակցությամբ և նրա հողի վրա, վոր Արևմուտքի հեղափոխության հաղթանակի ճանապարհն անցնում է այն հեղափոխական դաշինքով, վոր կնքվում է գաղութների ու կախյալ յերկիրների ազատագրական շարժման հետ՝ իմպերիալիզմի դեմ։ Ազգային հարցը պրոլետարական հեղափոխության ընդհանուր հարցի մի մասն է, պրոլետարիատի դիկտատուրայի հարցի մի մասը։

Հարցն այսպես է դրված. արդյո՞ք արդեն սպառված են ճնշված յերկիրների հեղափոխական-ազատագրական շարժման ընդերքում յեղած հեղափոխական հնարավորությունները, թե վոչ, և յեթե սպառված չեն, արդյոք հույս, հիմք կա՞ օգտագործելու այդ հնարավորությունները պրոլետարական հեղափոխության համար, կախյալ և գաղութային յերկիրներն իմպերիալիստական բուրժուազիայի ռեզերվից՝ հեղափոխական պրոլետարիատի ռեզերվի, պրոլետարիատի դաշնակցի վերածելու համար։

Լենինիզմն այս հարցին պատասխանում է դրականապես, այսինքն՝ ճնշված յերկիրների ազգային-ազատագրական շարժման ընդերքում հեղափոխական ընդունակությունների գոյությունը ճանաչելու վոգով և այդ ընդունակություններն ընդհանուր թշնամուն տապալելու շահերի, իմպերիալիզմը տապալելու շահերի տեսակետից օգտագործելու հնարավորության վոգով։ Իմպերիալիզմի զարգացման մեխանիկան, իմպերիալիստական պատերազմը և հեղափոխությունը Ռուսաստանում ամբողջովին հաստատում են այս վերաբերյալ՝ լենինիզմի յեզրակացությունները։

Այստեղից հետևում է ճնշված և կախյալ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժմանը պրոլետարիատի կողմից աջակցություն, վճռական և ակտիվ աջակցություն ցույց տալու անհրաժեշտությունը։

Այդ, իհարկե, չի նշանակում, թե պրոլետարիատը պետք է աջակցի ամեն մի ազգային շարժման, ամենուրեք և միշտ, բոլոր առանձին կոնկրետ դեպքերում։ Խոսքը վերաբերում է այնպիսի

ազգային շարժումներին աջակցելու, վորոնք նպատակ ունեն թուլացնել, տապալել իմպերիալիզմը, և վոչ թե ամրապնդել ու պահպանել այն։ Լինում են դեպքեր, յերբ առանձին ճնշված յերկիրների ազգային շարժումներն ընդհարվում են պրոլետարական շարժման զարգացման շահերի հետ։ Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր այդպիսի դեպքերում խոսք անգամ չի կարող լինել աջակցելու մասին։ Ազգերի իրավունքների հարցը մեկուսացած և ինքնաբավ հարց չէ, այլ պրոլետարական հեղափոխության ընդհանուր հարցի մի մասն է, վոր յենթարկված է ամբողջին և պահանջում է դիտել իրեն ամբողջի տեսանկյունով։ Անցյալ դարի 40-ական թվականներին Մարքսը կողմնակից եր լեհերի և հունգարացիների ազգային շարժման ընդդեմ չեխերի և հարավային սլավոնների ազգային շարժման։ Ինչո՞ւ։ Վորովհետև չեխերն ու հարավային սլավոններն այն ժամանակ «հետադեմ ժողովուրդներ» եյին, «ռուսական ֆորպոստներ» Յեվրոպայում, աբսոլուտիզմի ֆորպոստներ, մինչդեռ լեհերն ու հունգարացիները «հեղափոխական ժողովուրդներ» եյին, վորոնք կռվում եյին աբսոլուտիզմի դեմ։ Վորովհետև չեխերի և հարավային սլավոնների ազգային շարժմանն աջակցելն այն ժամանակ նշանակում եր անուղղակի աջակցություն ցարիզմին, Յեվրոպայի հեղափոխական շարժման ամենավտանգավոր թշնամուն։

> «Դեմոկրատիայի առանձին պահանջները,—ասում է Լենինը,—այդ թվում նաև ինքնորոշումը, աբսոլյուտ չեն, այլ համադեմոկրատական (ներկայումս՝ համասոցիալիստական) համաշխարհային շարժման մասնիկն են։ Հնարավոր է, վոր առանձին կոնկրետ դեպքերում մասնիկը հակասի ընդհանուրին, այն ժամանակ մասնիկը պետք է մերժել» (տե՛ս հ. XIX, եջ 257—258)։

Այսպես է դրված առանձին ազգային շարժումների հարցը, այդ շարժումների հնարավոր հետադիմական բնույթի հարցը, յեթե, իհարկե, այդ շարժումները գնահատենք վո՛չ թե ձևական տեսակետից, վո՛չ թե վերացական իրավունքների տեսակետից, այլ կոնկրետ կերպով, հեղափոխական շարժման շահերի տեսակետից։

Նույնը պետք է ասել առհասարակ ազգային շարժումների հեղափոխական բնույթի մասին։ Ազգային շարժումների հսկայական մեծամասնության անկասկած հեղափոխականությունը

նույնքան հարաբերական է և յուրորինակ, վորքան հարաբերական և յուրորինակ է միքանի առանձին ազգային շարժումների հնարավոր հետադիմականությունը։ Ազգային շարժման հեղափոխական բնույթն իմպերիալիստական ճնշման պայմաններում բնավ չի յենթադրում պրոլետարական տարրերի պարտադիր առկայությունը շարժման մեջ, շարժման հեղափոխական կամ հանրապետական ծրագրի առկայությունը, շարժման դեմոկրատական հիմունքի առկայությունը։ Աֆղանական եմիրի պայքարը հանուն Աֆղանստանի անկախության օբյեկտիվորեն հեղափոխական պայքար է, չնայած եմիրի և նրա գործակիցների միապետական հայացքներին, վորովհետև այդ պայքարը թուլացնում է, քայքայում, խարխլում իմպերիալիզմը, մինչդեռ պայքարն այնպիսի «կատաղի» դեմոկրատների ու «սոցիալիստների», «հեղափոխականների» ու հանրապետականների, ինչպես են, դիցուք, Կերենսկին ու Ծերեթելին, Ռենոդելն ու Շայդեմանը, Չերնովն ու Դանը, Հենդերսոնն ու Կլայնսը, իմպերիալիստական պատերազմի ժամանակ, ռեակցիոն պայքար եր, վորովհետև նրա արդյունքը յեղավ իմպերիալիզմի գունավորումը, ամրապնդումը, հաղթանակը։ Յեգիպտոսի վաճառականների և բուրժուական ինտելիգենտների պայքարը հանուն Յեգիպտոսի անկախության, նույն այդ պատճառներով, օբյեկտիվորեն հեղափոխական պայքար է, չնայած յեգիպտական ազգային շարժման լիդերների բուրժուական ծագմանը և բուրժուական կոչումին, չնայած այն բանին, վոր նրանք դեմ են սոցիալիզմին, այնինչ անգլիական բանվորական կառավարության պայքարը հանուն Յեգիպտոսի կախյալ դրության պահպանման, նույն այդ պատճառներով, ռեակցիոն պայքար է, չնայած այդ կառավարության անդամների պրոլետարական ծագմանը և պրոլետարական կոչումին, չնայած այն բանին, վոր նրանք «կողմնակից են» սոցիալիզմին։ Ել չեմ խոսում ուրիշ, ավելի խոշոր, գաղութային և կախյալ յերկիրների ազգային շարժումների մասին, ինչպես են Հնդկաստանն ու Չինաստանը, վորոնց ամեն մի քայլն ազատագրության ճանապարհին, յեթե նա նույնիսկ խախտում է ձևական դեմոկրատիայի պահանջները, շոգեմուրճի հարված է հանդիսանում իմպերիալիզմին, այսինքն այնպիսի քայլ է, վորն, անկասկած, հեղափոխական է։

Լենինն իրավացի յե, յերբ ասում ե, վոր ճնշված յերկրների ազգային շարժումը պետք ե գնահատել վո՛չ թե ձևական դեմոկրատիայի տեսակետով, այլ իմպերիալիզմի դեմ մղվող պայքարի ընդհանուր հաշվեկշռի փաստական արդյունքների տեսակետով, այսինքն «վո՛չ թե մեկուսացված, այլ համաշխարհային մասշտաբով» (տե՛ս Հ. XIX, եջ 257)։

2) Ճնշված ժողովուրդների ազատագրական շարժումը և պրոլետարական հեղափոխությունը։ *Ազգային հարցը լուծելիս լենինիզմը յելնում ե հետևյալ դրույթներից․*

ա) աշխարհը բաժանված ե յերկու բանակի․ մի բուռն քաղաքակիրթ ազգերի բանակ, վորոնք ֆինանսական կապիտալի տեր են ու շահագործում են յերկրագնդի բնակչության հսկայական մեծամասնությանը, և գաղութների ու կախյալ յերկրների ճնշված ու շահագործվող ժողովուրդների բանակ, վորոնք կազմում են այդ մեծամասնությունը․

բ) ֆինանսական կապիտալի կողմից ճնշվող ու շահագործվող գաղութներն ու կախյալ յերկրները կազմում են իմպերիալիզմի ուժերի մեծագույն ռեզերվն ու ամենալուրջ աղբյուրը․

գ) կախյալ և գաղութային յերկրների ճնշված ժողովուրդների հեղափոխական պայքարն իմպերիալիզմի դեմ՝ ճնշումից ու շահագործումից ազատագրվելու միակ ուղին ե այդ ժողովուրդների համար․

դ) կարևորագույն գաղութային և կախյալ յերկրներն արդեն վոտք են դրել ազգային-ազատագրական շարժման ուղին,— շարժում, վորը չի կարող չտանել դեպի համաշխարհային կապիտալիզմի ճգնաժամը․

ե) պրոլետարական շարժման շահերը զարգացած յերկրներում և ազգային-ազատագրական շարժման շահերը գաղութներում պահանջում են միացնել հեղափոխական շարժման այդ յերկու տեսակները և դարձնել մի ընդհանուր ֆրոնտ՝ ընդդեմ ընդհանուր թշնամու, ընդդեմ իմպերիալիզմի․

զ) բանվոր դասակարգի հաղթանակը զարգացած յերկրներում և ճնշված ժողովուրդների ազատագրումն իմպերիալիզմի լծից անհնար են առանց ընդհանուր հեղափոխական ֆրոնտ կազմելու և ամրապնդելու․

է) ընդհանուր հեղափոխական ֆրոնտ կազմելն անհնարին ե առանց ճնշող ազգերի պրոլետարիատի կողմից ուղղակի և վճռական աջակցություն ցույց տալու ճնշված ժողովուրդների ազատագրական շարժմանը՝ ընդդեմ «հայրենական» իմպերիալիզմի, վորովհետև «ազատ չի կարող լինել այն ժողովուրդը, վոր ուրիշ ժողովուրդներ ե ճնշում» (Մարքս)․

ը) այդ աջակցությունը նշանակում ե թե ու թիկունք լինել, պաշտպանել, կենսագործել ազգերի անջատվելու իրավունքը, ինքնուրույն պետական գոյության իրավունքի լոզունգը․

թ) առանց այդ լոզունգի կենսագործման անհնարին ե հաջողեցնել ազգերի միավորումն ու համագործակցությունը մի միասնական համաշխարհային տնտեսության մեջ, վորը սոցիալիզմի հաղթանակի նյութական բազան ե․

ժ) այդ միավորումը կարող ե լինել միայն կամավոր, վոր ծագել ե ժողովուրդների փոխադարձ վստահության և յեղբայրական փոխհարաբերությունների հիմքի վրա։

Այստեղից հետևում են յերկու կողմ, յերկու տենդենց ազգային հարցում․ իմպերիալիստական կապանքներից քաղաքականապես ազատվելու և ինքնուրույն ազգային պետություն կազմելու տենդենց, վոր ծնունդ ե առել իմպերիալիստական ճնշման ու գաղութային շահագործման հիման վրա, և ազգերի տնտեսական մերձեցման տենդենց, վոր ծնունդ ե առել համաշխարհային շուկայի և համաշխարհային տնտեսության գոյացման կապակցությամբ։

«Զարգացող կապիտալիզմին,— ասում ե Լենինը,— ծանոթ ե յերկու պատմական տենդենց ազգային հարցում։ Առաջին տենդենցը ազգային կյանքի և ազգային շարժումների զարթոնքն ե, պայքարը ամեն տեսակի ազգային ճնշման դեմ, ազգային պետությունների ստեղծումը։ Յերկրորդ տենդենցը՝ ամեն տեսակ հարաբերությունների զարգացումն ու հաճախացումն ե ազգերի միջև, ազգային միջնապատերի քանդումը, կապիտալի, առհասարակ տնտեսական կյանքի, քաղաքականության, գիտության և այլնի ինտերնացիոնալ միասնության ստեղծումը։ Յերկու տենդենցն ել կապիտալիզմի համաշխարհային որենքն են։ Առաջինը գերակշռում ե նրա զարգացման սկզբում, յերկրորդը բնորոշում ե հասուն կապիտալիզմը, վորը գնում ե դեպի իր փոխարկումը սոցիալիստական հասարակակարգի» (տե՛ս Հ. XVII, եջ 139—140)։

Իմպերիալիզմի համար այդ յերկու տենդենցներն անհաշտելի հակասություններ են, վորովհետև իմպերիալիզմը չի կարող ապրել առանց շահագործման և գաղութները «միասնական ամբողջի» շրջանակներում բռնի կերպով պահելու, վորովհետև իմպերիալիզմը կարող է ազգերին մերձեցնել միայն աննեքսիայի և գաղութային գրավումների միջոցով,—գրավումներ, առանց վորոնց իմպերիալիզմն, ընդհանրապես ասած, աներևակայելի յե։

Կոմունիզմի համար, ընդհակառակը, այդ տենդենցները միևնույն գործի, իմպերիալիզմի լծից ճնշված ժողովուրդների ազատագրման գործի յերկու կողմերն են միայն, վորովհետև կոմունիզմը գիտե, վոր ժողովուրդների միավորումը միասնական համաշխարհային տնտեսության մեջ հնարավոր է միայն փոխադարձ վստահության և կամավոր համաձայնության հիմունքներով, վոր ժողովուրդների կամավոր միավորում կազմվելու ուղին անցնում է «միասնական» իմպերիալիստական «ամբողջից» գաղութների անջատվելու, նրանց ինքնուրույն պետությունների վերածվելու միջով։

Այստեղից հետևում է տիրապետող ազգերի (Անգլիա, Ֆրանսիա, Ամերիկա, Իտալիա, Ճապոնիա և այլն) «սոցիալիստների» մեծապետական շովինիզմի դեմ համառ, անընդհատ, վճռական պայքար մղելու անհրաժեշտությունը,—«սոցիալիստներ», վորոնք չեն ցանկանում կռվել իրենց իմպերիալիստական կառավարությունների դեմ, չեն ցանկանում աջակցել «իրենց» գաղութների ճնշված ժողովուրդների այն պայքարին, վոր վերջիններս մղում են ճնշումից ազատվելու համար, պետական անջատման համար։

Առանց այդպիսի պայքարի աներևակայելի յե տիրապետող ազգերի բանվոր դասակարգի դաստիարակումն իսկական ինտերնացիոնալիզմի վոգով, կախյալ յերկրների և գաղութների աշխատավոր մասսաների հետ մերձեցնելու վոգով, պրոլետարական հեղափոխության իսկական նախապատրաստման վոգով։ Հեղափոխությունը Ռուսաստանում չեր հաղթի, և Կոլչակն ու Դենիկինը չեյին ջախջախվի, յեթե ռուսական պրոլետարիատը չվայելեր նախկին Ռուսաստանի կայսրության ճնշված ժողովուրդների համակրանքն ու աջակցությունը։ Բայց այդ ժողովուրդների համակրանքն ու աջակցությունը նվաճելու համար պրոլետարիատը նախ և առաջ պետք է փշրեր ռուսական իմպերիալիզմի շղթաները և այդ ժողովուրդներին ազատեր ազգային ճնշումից։ Առանց այդ բանի անհնար կլիներ ամրապնդել խորհրդային իշխանությունը, արմատացնել իսկական ինտերնացիոնալիզմը և ստեղծել ժողովուրդների համագործակցության այն յերևելի կազմակերպությունը, վոր կոչվում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն, և վորը կենդանի նախատիպն է ժողովուրդների ապագա միավորման՝ մի միասնական համաշխարհային տնտեսության մեջ։

Այստեղից բղխում է ճնշված յերկրների սոցիալիստների ազգային փակվածության, սահմանափակության, կղզիացման դեմ պայքարելու անհրաժեշտությունը,—սոցիալիստներ, վորոնք չեն ցանկանում իրենց ազգային զանգակատնից վեր բարձրանալ և չեն հասկանում իրենց յերկրի ազատագրական շարժման կապը տիրապետող յերկրների պրոլետարական շարժման հետ։

Առանց այդպիսի պայքարի անհնարին է պաշտպանել ճնշված ազգերի պրոլետարիատի ինքնուրույն քաղաքականությունը և նրա դասակարգային համերաշխությունը տիրապետող յերկրների պրոլետարիատի հետ՝ ընդհանուր թշնամուն տապալելու համար մղվող կռվում, իմպերիալիզմը տապալելու համար մղվող կռվում. առանց այդպիսի կռվի ինտերնացիոնալիզմն անհնարին կլիներ։

Այս է տիրապետող ու ճնշված ազգերի աշխատավոր մասսաներին հեղափոխական ինտերնացիոնալիզմի վոգով դաստիարակելու ուղին։

Ահա թե ինչ է ասում Լենինը՝ բանվորներին ինտերնացիոնալիզմի վոգով դաստիարակելու համար կոմունիզմի կատարելիք այս յերկկողմ աշխատանքի մասին.

«Այդ դաստիարակությունը կարո՞ղ է արդյոք... լինել կոնկրետորեն միանման մեծ ու ճնշող ազգերի և փոքր, ճնշվող ազգերի մեջ, աննեքսիայի յենթարկող ազգերի և աննեքսիայի յենթարկվող ազգերի մեջ։

Ակներև է, վոր վոչ։ Դեպի միևնույն նպատակը՝ բոլոր ազգերի լիակատար իրավահավասարությունը, ամենասերտ մերձեցումը և հետագա ձուլումը տանող ուղին այս դեպքում ակներևաբար անցնում է

տարբեր կոնկրետ ճանապարհներով—այնպես, ինչպես, դիցուք, դեպի տվյալ եջի կենտրոնում գտնվող կետը տանող ուղին անցնում է ձախ՝ եջի մեկ կողքի յեզրից և աջ՝ հակադիր յեզրից։ Յեթե մեծ, ճնշող, աննեքսիա անող ազգի սոցիալիստը, դավանելով առհասարակ ազգերի ընդհանուր միաձուլումը, թեկուզ մի րոպե մոռանա, վոր «իր» Նիկոլայ II-ը, «իր» Վիլհելմը, Գեորգը, Պուանկարեն և այլն նույնպես կողմնակից են մանր ազգերի հետ «միաձուլվելուն» (աննեքսիաների միջոցով)—Նիկոլայ II՝ Գալիցիայի հետ «միաձուլվելուն», Վիլհելմ II՝ Բելգիայի հետ «միաձուլվելուն» և այլն,—ապա նման սոցիալիստը դուրս կգա ծիծաղելի դոկտրինյոր՝ թեորիայում, իմպերիալիզմի աջակից՝ պրակտիկայում։

Ճնշող յերկիրներում բանվորների ինտերնացիոնալիստական դաստիարակության ծանրության կենտրոն անխուսափելիորեն պետք է հանդիսանան ճնշված յերկիրների անջատվելու ազատության քարոզելը և պաշտպանելը՝ նրանց կողմից։ Առանց դրան չկա ինտերնացիոնալիզմ։ Մենք իրավունք ունենք և պարտավոր ենք քամահրել ճնշող ազգի ամեն մի սոցիալիստի, վորպես իմպերիալիստի և վորպես սրիկայի, յեթե նա այդպիսի պրոպագանդ չի մղում։ Այս անպայման պահանջ է, թեկուզ անջատման դեպքը հնարավոր և «իրագործելի» լինի մինչև սոցիալիզմը 1000-ից ընդամենը 1 դեպքում...

Ընդհակառակը, փոքր ազգի սոցիալիստը պետք է իր ագիտացիայի ծանրության կենտրոնը փոխադրի ազգերի «կամավոր միացում» մեր ընդհանուր ֆորմուլայի յերկրորդ բառի վրա։ Նա կարող է, չխախտելով իր՝ վորպես ինտերնացիոնալիստի՝ պարտականությունները, կողմնակից լինել թե՛ իր ազգի քաղաքական անկախության, թե՛ իր ազգը հարևան X, Y, Z, և այլն պետության մեջ մտցնելուն։ Բայց բոլոր դեպքերում նա պետք է կռվի մանր-ազգային սահմանափակության, փակվածության, կղզիացման դեմ, հանուն ամբողջի և ընդհանրականի հաշվառման, հանուն մասնավորի շահերն ընդհանուրի շահերին յենթարկելու։

Հարցի խորքը չթափանցած մարդիկ «հակասական» են գտնում, վոր ճնշող ազգերի սոցիալիստները պնդեն «անջատվելու ազատության» վրա, իսկ ճնշված ազգերի սոցիալիստները՝ «միանալու ազատության» վրա։ Բայց մի փոքր խորհրդածելը ցույց է տալիս, վոր ա՛յլ ուղի դեպի ինտերնացիոնալիզմը և ազգերի միաձուլումը, տվյալ դրությունից դեպի այդ նպատակն ա՛յլ ուղի չկա և չի կարող լինել» (տե՛ս հ. XIX, եջ 261—262)։

VII. ՍՏՐԱՏԵԳԻԱՆ ՅԵՎ ՏԱԿՏԻԿԱՆ

Այս թեմայից յես վերցնում եմ վեց հարց. ա) ստրատեգիան և տակտիկան վորպես պրոլետարիատի դասակարգային կռիվը ղեկավարելու գիտություն, բ) հեղափոխության ետապ-

ները և ստրատեգիան, գ) շարժման մակընթացություններն ու տեղատվությունները և տակտիկան, դ) ստրատեգիական ղեկավարությունը, ե) տակտիկական ղեկավարությունը, զ) ռեֆորմիզմը և ռեվոլյուցիոնիզմը։

1) Ստրատեգիան և տակտիկան վորպես պրոլետարիատի դասակարգային կռիվը ղեկավարելու գիտություն։ II Ինտերնացիոնալի տիրապետության ժամանակաշրջանն առավելապես պրոլետարական բանակների ձևավորման և ուսուցման ժամանակաշրջանն եր՝ քիչ թե շատ խաղաղ զարգացման պայմաններում։ Դա պառլամենտարիզմի՝ վորպես դասակարգային կռվի առավելական ձևի՝ ժամանակաշրջանն եր։ Դասակարգերի մեծ ընդհարումների, պրոլետարիատը հեղափոխական ճակատամարտերի պատրաստելու, պրոլետարիատի դիկտատուրա նվաճելու ուղիների հարցերն այն ժամանակ, ինչպես թվում եր, հերթի չեյին դրված։ Խնդիրը հանգում եր լեգալ զարգացման բոլոր ուղիների ոգտագործմանը՝ պրոլետարական բանակների կազմակերպման և ուսուցման համար, պառլամենտարիզմի ոգտագործմանը՝ համապատասխան այն պայմաններին, վորոնց գոյության ժամանակ պրոլետարիատը մնում եր և, ինչպես թվում եր, պետք է մնար ոպոզիցիայի վիճակում։ Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր այդպիսի ժամանակաշրջանում և պրոլետարիատի խնդիրների այսպիսի ըմբռնման դեպքում չեր կարող լինել վո՛չ ամբողջական ստրատեգիա, վո՛չ ել մշակված տակտիկա։ Կային բեկորներ, առանձին մտքեր տակտիկայի և ստրատեգիայի մասին, բայց տակտիկա և ստրատեգիա չկար։

II Ինտերնացիոնալի մահացու մեղքը վո՛չ թե այն է, վոր նա իր ժամանակ կիրառում եր պայքարի պառլամենտական ձևերի ոգտագործման տակտիկա, այլ այն, վոր նա գերագնահատում եր այդ ձևերի նշանակությունը, այդ ձևերը համարյա միակը համարելով, իսկ յերբ հասավ բացահայտ հեղափոխական ճակատամարտերի ժամանակաշրջանը և պայքարի արտապառլամենտական ձևերի հարցն առաջնահերթ դարձավ, II Ինտերնացիոնալի կուսակցությունները յերես դարձրին նոր խնդիրներից, չընդունեցին այդ խնդիրները։

Միայն հետևյալ ժամանակաշրջանում, պրոլետարիատի

բացահայտ յելույթների ժամանակաշրջանում, պրոլետարական հեղափոխության ժամանակաշրջանում, յերբ բուրժուազիայի տապալման հարցը դարձավ ուղղակի պրակտիկայի հարց, յերբ պրոլետարիատի ռեզերվների հարցը (ստրատեգիա) դարձավ ամենահրատապ հարցերից մեկը, յերբ պայքարի ու կազմակերպության բոլոր ձևերը—թե՛ պառլամենտականները, թե՛ արտապառլամենտականները (տակտիկա)—դրսևորվեցին իրենց լիակատար վորոշակիությամբ,—միայն այդ ժամանակաշրջանում կարող եյին մշակվել պրոլետարիատի պայքարի ամբողջական ստրատեգիա ու մշակված տակտիկա։ Տակտիկայի ու ստրատեգիայի վերաբերյալ Մարքսի և Էնգելսի հանճարեղ մտքերը, վոր վորմնաթաղել (замуравленные) եյին II Ինտերնացիոնալի ոպորտունիստները, Լենինը դուրս քաշեց լույս աշխարհ հենց այդ ժամանակաշրջանում։ Բայց Լենինը չսահմանափակվեց Մարքսի և Էնգելսի առանձին տակտիկական դրույթների վերականգնումով։ Նա այդ դրույթներն ավելի զարգացրեց և լրացրեց նոր մտքերով ու դրույթներով, այդ բոլորը միավորելով և պրոլետարիատի դասակարգային կռվի ղեկավարման կանոնների ու ղեկավար սկզբունքների սիստեմի վերածելով։ Լենինի այնպիսի բրոշյուրները, ինչպիսիք են՝ «Ի՞նչ անել», «Յերկու տակտիկա», «Իմպերիալիզմը», «Պետություն և հեղափոխություն», «Պրոլետարական հեղափոխությունը և ռենեգատ Կաուցկին», «Մանկական հիվանդությունը», վորպես ամենաթանգագին ավանդ, անկասկած կմտնեն մարքսիզմի ընդհանուր գանձարանը, նրա հեղափոխական զինանոցը։ Լենինիզմի ստրատեգիան և տակտիկան պրոլետարիատի հեղափոխական պայքարը ղեկավարելու գիտությունն է։

2) Հեղափոխության էտապները և ստրատեգիան։ Ստրատեգիան պրոլետարիատի գլխավոր հարվածի ուղղության վորոշումն է՝ հեղափոխության տվյալ էտապի հիման վրա, հեղափոխական ուժերի (գլխավոր և յերկրորդական ռեզերվների) դասավորման համապատասխան պլանի մշակումը, այդ պլանի կիրառման համար հեղափոխության տվյալ էտապի ամբողջ ընթացքում մղելիք պայքարը։

Մեր հեղափոխությունն արդեն ապրել է յերկու էտապ և

Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո թևակոխել է յերրորդ էտապը։ Դրան համապատասխան փոխվել է ստրատեգիան։

Առաջին էտապ։ 1903 թ.—1917 թ. փետրվար։ Նպատակն է՝ տապալել ցարիզմը, լիովին լիկվիդացիայի յենթարկել միջնադարի մնացուկները։ Հեղափոխության հիմնական ուժը պրոլետարիատն է։ Ամենամերձավոր ռեզերվը՝ գյուղացիությունը։ Հիմնական հարվածի ուղղությունը՝ մեկուսացումը լիբերալ-միապետական բուրժուազիայի, վորը ջանում է տիրանալ գյուղացիությանը և լիկվիդացիայի յենթարկել հեղափոխությունը՝ ցարիզմի հետ համաձայնության գալու ճանապարհով։ Ուժերի դասավորման պլանն է՝ բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիության հետ։ «Պրոլետարիատը պետք է մինչև վերջը տանի դեմոկրատական հեղաշրջումը՝ իրեն միացնելով գյուղացիության մասսային, վորպեսզի ուժով ճզմի ինքնակալության դիմադրությունը և ջլատի բուրժուազիայի անկայունությունը» (տե՛ս հ. VIII, եջ 96)։

Յերկրորդ էտապ։ 1917 թ. մարտ—1917 թ. հոկտեմբեր։ Նպատակն է՝ տապալել իմպերիալիզմը Ռուսաստանում և դուրս գալ իմպերիալիստական պատերազմից։ Հեղափոխության հիմնական ուժը պրոլետարիատն է։ Ամենամերձավոր ռեզերվը՝ ամենաչքավոր գյուղացիությունը։ Հարևան յերկրների պրոլետարիատը վորպես հավանական ռեզերվ։ Յերկարած պատերազմը և իմպերիալիզմի ճգնաժամը վորպես նպաստավոր մոմենտ։ Հիմնական հարվածի ուղղությունն է՝ մեկուսացնել մանր-բուրժուական դեմոկրատիային (մենշևիկներ, էս-էրներ), վորն աշխատում է տիրանալ գյուղացիության աշխատավոր մասսաներին և վերջացնել հեղափոխությունը՝ իմպերիալիզմի հետ համաձայնության գալու ճանապարհով։ Ուժերի դասավորման պլանն է՝ պրոլետարիատի դաշինքն ամենաչքավոր գյուղացիության հետ։ «Պրոլետարիատը պետք է սոցիալիստական հեղաշրջում կատարի՝ իրեն միացնելով բնակչության կիսապրոլետարական տարրերի մասսան, վորպեսզի՝ ուժով կոտրի բուրժուազիայի դիմադրությունը և ջլատի գյուղացիության ու մանր բուրժուազիայի անկայունությունը» (տե՛ս նույն տեղը)։

Յերրորդ էտապ։ Սա սկսվեց Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո։ Նպատակն է՝ ամրապնդել պրոլետարիատի դիկտատու-

րան մի երկրում՝ օգտագործելով այն որպես հենակետ՝ իմպերիալիզմը բոլոր երկրներում տապալելու համար: Հեղափոխությունը դուրս է գալիս մի երկրի շրջանակներից, սկսվել է համաշխարհային հեղափոխության դարաշրջանը: Հեղափոխության հիմնական ուժերն են՝ պրոլետարիատի դիկտատուրան մի երկրում, պրոլետարիատի հեղափոխական շարժումը բոլոր երկրներում: Գլխավոր ռեզերվներն են՝ կիսապրոլետարական և մանր-գյուղացիական մասսաները զարգացած երկրներում, ազատագրական շարժումը գաղութներում ու կախյալ երկրներում: Հիմնական հարվածի ուղղությունն է՝ մեկուսացնել մանրբուրժուական դեմոկրատիային, մեկուսացնել II Ինտերնացիոնալի կուսակցություններին, որոնք իմպերիալիզմի հետ համաձայնության գալու քաղաքականության հիմնական հենարանն են: Ուժերի դասավորման պլանն է՝ պրոլետարական հեղափոխության դաշինքը գաղութների և կախյալ երկրների ազատագրական շարժման հետ:

Ստրատեգիան գործ ունի հեղափոխության հիմնական ուժերի և նրանց ռեզերվների հետ: Նա փոփոխվում է՝ համաձայն հեղափոխության անցմանը մեկ էտապից մյուսին, հիմնականում անփոփոխ մնալով տվյալ էտապի ամբողջ ժամանակաշրջանում:

3) **Շարժման մակընթացություններն ու տեղատվությունները և տակտիկան:** Տակտիկան պրոլետարիատի վարքագծի որոշումն է շարժման մակընթացության կամ տեղատվության, հեղափոխության վերելքի կամ վայրէջքի համեմատաբար կարճ ժամանակաշրջանի համար, պայքար՝ հանուն այդ գծի կիրառման, պայքարի ու կազմակերպության հին ձևերը նորերով, հին լոզունգները նորերով փոխելու միջոցով, այդ ձևերի զուգորդման միջոցով և այլն: Եթե ստրատեգիան նպատակ ունի շահել, դիցուք, ցարիզմի կամ բուրժուազիայի դեմ մղվող պատերազմը, իր վախճանին հասցնել ցարիզմի կամ բուրժուազիայի դեմ մղվող կռիվը, ապա տակտիկան առաջադրում է իրեն ավելի պակաս էական նպատակներ, որովհետև նա ջանում է շահել ո՛չ թե պատերազմն ամբողջությամբ առած, այլ այս կամ այն ճակատամարտերը, այս կամ այն կռիվները, հաջողությամբ կիրառել այս կամ այն կամպանիաները, այս կամ այն ելույթնե-

րը, որոնք համապատասխանում են կոնկրետ իրադրությանը՝ հեղափոխությունների վերելքի կամ վայրէջքի տվյալ ժամանակաշրջանում: Տակտիկան ստրատեգիայի մի մասն է, որը ենթակա յե նրան, սպասարկում է նրան:

Տակտիկայի փոփոխությունը կախված է մակընթացություններից ու տեղատվություններից: Մինչդեռ հեղափոխության առաջին էտապի ժամանակաշրջանում (1903—1917, փետրվար) ստրատեգիական պլանն անփոփոխ էր մնում, այդ ժամանակվա ընթացքում տակտիկան փոխվում էր մի քանի անգամ: 1903—1905 թ. թ. ժամանակաշրջանում կուսակցության տակտիկան հարձակողական էր, որովհետև հեղափոխության մակընթացություն էր, շարժումը վերելք էր ապրում, և տակտիկան պետք է մեկներ այդ փաստից: Դրան համապատասխան՝ պայքարի ձևերն էլ հեղափոխական ձևեր էին, որոնք համապատասխանում էին հեղափոխության մակընթացության պահանջներին: Տեղական քաղաքական գործադուլներ, քաղաքական ցույցեր, ընդհանուր քաղաքական գործադուլ, Դումայի բոյկոտ, ապստամբություն, հեղափոխական-մարտական լոզունգներ—սրանք են պայքարի միմյանց հաջորդող ձևերն այդ ժամանակաշրջանում: Պայքարի ձևերի կապակցությամբ այն ժամանակ փոխվեցին նաև կազմակերպության ձևերը: Ֆաբրիկա-գործարանային կոմիտեներ, գյուղացիական հեղափոխական կոմիտեներ, գործադուլային կոմիտեներ, բանվորական պատգամավորների խորհուրդներ, ավելի կամ պակաս բացահայտ բանվորական կուսակցություն — սրանք են կազմակերպության ձևերն այդ ժամանակաշրջանում:

1907—1912 թ. թ. ժամանակաշրջանում կուսակցությունն ստիպված էր անցնելու նահանջի տակտիկայի, որովհետև այն ժամանակ հեղափոխական շարժման վայրէջք էր, հեղափոխության տեղատվություն, և տակտիկան չէր կարող հաշվի չառնել այդ փաստը: Դրան համապատասխան՝ փոխվեցին նաև պայքարի ձևերը, ինչպես նաև կազմակերպության ձևերը: Դումայի բոյկոտի փոխարեն՝ մասնակցություն Դումային, բացահայտ արտադումայական հեղափոխական ելույթների փոխարեն՝ դումայական ելույթներ ու դումայական աշխատանք, ընդհանուր քաղաքական գործադուլների փոխարեն՝ մասնակի տնտեսական

գործադուլներ կամ պարզապես անգործություն։ Հասկանալի յե, վոր այդ ժամանակաշրջանում կուսակցությունը պետք ե ընդհատակյա դրության անցներ, իսկ մասսայական հեղափոխական կազմակերպությունները փոխարինվեցին կուլտուր-լուսավորական, կոոպերատիվ, ապահովադրական և այլ յենթաորինական կազմակերպություններով։

Նույնը պետք ե ասել հեղափոխության յերկրորդ և յերրորդ ետապների մասին, վորոնց ընթացքում տակտիկան փոխվել ե տասնյակ անգամներ, այնինչ ստրատեգիական պլաններն անփոփոխ եյին մնում։

Տակտիկան գործ ունի պրոլետարիատի պայքարի ձևերի և կազմակերպության ձևերի հետ, նրանց փոփոխման, նրանց զուգակցման հետ։ Հեղափոխության տվյալ ետապի հիման վրա տակտիկան կարող ե փոխվել միքանի անգամ՝ կախված լինելով հեղափոխության մակընթացություններից և տեղատվություններից, վերելքից կամ վայրեջքից։

4) Ստրատեգիական ղեկավարությունը։ Հեղափոխության ռեզերվները լինում են՝

ուղղակի՝ ա) իր յերկրի գյուղացիությունը և ընդհանրապես անցողիկ խավերը, բ) հարևան յերկիրների պրոլետարիատը, գ) հեղափոխական շարժումը գաղութներում և կախյալ յերկիրներում, դ) պրոլետարիատի դիկտատուրայի նվաճումներն ու ձեռքբերումները, վորոնց մի մասից պրոլետարիատը կարող ե ժամանակավորապես հրաժարվել՝ իր կողմը պահելով ուժերի գերակշռությունը, այն հաշվով, վոր կաշառի ուժեղ հակառակորդին և չունչ առնելու հնարավորություն ստանա, և

անուղղակի՝ ա) իր յերկրի վոչ-պրոլետարական դասակարգերի միջև յեղած հակասություններն ու կոնֆլիկտները, վորոնք պրոլետարիատը կարող ե ոգտագործել՝ հակառակորդին թուլացնելու համար, իր ռեզերվներն ուժեղացնելու համար, բ) պրոլետարական պետությանը թշնամի բուրժուական պետությունների միջև յեղած հակասությունները, կոնֆլիկտները և պատերազմները (որինակ՝ իմպերիալիստական պատերազմը), վոր պրոլետարիատը կարող ե ոգտագործել իր հարձակման կամ մանևրելու ժամանակ՝ ստիպողական նահանջի դեպքում։

Առաջին տեսակի ռեզերվների մասին չարժե ընդարձակ կերպով խոսել, վորովհետև նրանց նշանակությունը հասկանալի յե բոլորին և ամեն մեկին։ Ինչ վերաբերում ե յերկրորդ տեսակի ռեզերվներին, վորոնց նշանակությունը պարզ ե վոչ միշտ, ապա հարկավոր ե ասել, վոր նրանք յերբեմն առաջնակարգ նշանակություն են ունենում հեղափոխության ընթացքի համար։ Հազիվ թե կարելի յե ժխտել մանր-բուրժուական դեմոկրատիայի (ես-երներ) և լիբերալ-միապետական բուրժուազիայի (կադետներ) միջև առաջին հեղափոխության ժամանակ և նրանից հետո յեղած, որինակ, այն կոնֆլիկտի հսկայական նշանակությունը, վորը, անկասկած, իր դերը խաղաց գյուղացիությունը բուրժուազիայի ազդեցությունից ազատելու գործում։ Ե՛լ ավելի պակաս հիմքեր կան ժխտելու Հոկտեմբերյան հեղաշրջման ժամանակաշրջանում իմպերիալիստների հիմնական խմբերի միջև յեղած մահացու պատերազմի փաստի հսկայական նշանակությունը, յերբ իրենց միջև յեղած պատերազմով զբաղված իմպերիալիստները հնարավորություն չունեյին կենտրոնացնելու իրենց ուժերը յերիտասարդ խորհրդային իշխանության դեմ, իսկ պրոլետարիատը հենց այդ պատճառով հնարավորություն ստացավ ընդհուպ ձեռնարկելու իր ուժերի կազմակերպմանը, իր իշխանության ամրապնդմանը և նախապատրաստելու Կոլչակի ու Դենիկինի ջախջախումը։ Պետք ե յենթադրել, վոր հիմա, յերբ հակասություններն իմպերիալիստական խմբակների միջև ավելի ու ավելի յեն խորանում և յերբ նոր պատերազմը նրանց միջև անխուսափելի յե դառնում, այդ տեսակի ռեզերվները պրոլետարիատի համար կունենան ավելի ու ավելի լուրջ նշանակություն։

Ստրատեգիական ղեկավարության խնդիրն այն ե, վոր ճիշտ ոգտագործվեն բոլոր այդ ռեզերվները՝ հեղափոխության հիմնական նպատակին հասնելու համար՝ նրա զարգացման տվյալ ետապում։

Վո՞րն ե ռեզերվների ճիշտ ոգտագործումը։

Այն միքանի անհրաժեշտ պայմանների կատարումը, վորոնցից գլխավոր պայմաններ հարկավոր ե համարել հետևյալները։

Առաջին։ Վճռական մոմենտին հեղափոխության գլխավոր ուժերի կենտրոնացումը հակառակորդի համար ամենից ավելի

խոցելի կետում, յերբ հեղափոխությունն արդեն հասունացել է, յերբ հարձակումը ծավալվում է ամբողջ թափով, յերբ ապստամբությունը դուռն է թակում, և յերբ ռեզերվներն ավանգարդին մոտեցնելը հաջողության վճռական պայմանն է։ Ռեզերվների այդ տեսակի օգտագործում ցուցադրող օրինակ կարելի յե համարել կուսակցության ստրատեգիան 1917 թ. ապրիլ—հոկտեմբերի ժամանակաշրջանում։ Անտարակույս է, վոր հակառակորդի ամենախոցելի կետն այդ ժամանակաշրջանում պատերազմն եր։ Անտարակույս է, վոր կուսակցությունը հատկապես այդ հարցում՝ վորպես հիմնական հարցում՝ պրոլետարական ավանգարդի շուրջը հավաքեց բնակչության ամենալայն մասսաներին։ Կուսակցության ստրատեգիան այդ ժամանակաշրջանում հանգում եր այն բանին, վորպեսզի, մանիֆեստացիաների և ցույցերի միջոցով ավանգարդին փողոցային ելույթների սովորեցնելով, դրա հետ մեկտեղ ռեզերվները մոտ բերի ավանգարդին՝ խորհուրդների միջոցով—թիկունքում և զինվորների կոմիտեների միջոցով—ֆրոնտում։ Հեղափոխության ելքը ցույց տվեց, վոր ռեզերվները ճիշտ են օգտագործվել։

Ահա թե ինչ է ասում Լենինը հեղափոխության ուժերի ստրատեգիական օգտագործման այդ պայմանի մասին, ֆրազափոխելով Մարքսի ու Ենգելսի հայտնի դրույթներն ապստամբության մասին.

«Յերբեք չխաղալ ապստամբության հետ, այլ այն սկսելիս հաստատապես իմանալ, վոր հարկավոր է գնալ մինչև վերջը։ Անհրաժեշտ է հավաքել ուժերի մեծ գերակշռություն վճռողական տեղում, վճռողական մոմենտին, վորովհետև այլապես ավելի լավ պատրաստություն և կազմակերպություն ունեցող թշնամին կվոչնչացնի ապստամբներին։ Յերբ ապստամբությունն սկսված է, հարկավոր է գործել մեծագույն վճռականությամբ և անպատճառ, անպայման հարձակման անցնել։ «Պաշտպանությունը զինված ապստամբության մահն է»։ Հարկավոր է աշխատել թշնամուն անակնկալի բերել, վորսալ մոմենտը, քանի դեռ նրա զորքերը ցրված են։ Հարկավոր է ջանալ ձեռք բերելու ամեն օր թեկուզ փոքրիկ հաջողություններ (կարելի յե ասել ամեն ժամ, յեթե խոսքը վերաբերում է մի քաղաքի), ամեն գնով պահպանելով «բարոյական գերակշռությունը»» (տե՛ս հ. XXI, եջ 319—320)։

Յերկրորդ։ Վճռողական հարվածի մոմենտի, ապստամբություն սկսելու մոմենտի ընտրությունը, վորը պետք է կատար-

վի այն հաշվով, վոր ճգնաժամը հասել է բարձրագույն կետին, վոր ավանգարդի մինչև վերջը մարտնչելու պատրաստակամությունը, ռեզերվի կողմից ավանգարդին աջակցելու պատրաստակամությունը և առավելագույն շփոթվածությունը հակառակորդի շարքերում—արդեն առկա յեն։

«Վճռական ճակատամարտը,—ասում է Լենինը,—կարելի յե լրիվին հասունացած համարել», յերբ «մեզ թշնամի բոլոր դասակարգային ուժերը բավականաչափ խճճվել են, բավականաչափ ծեծկռտվել են իրար հետ, բավականաչափ ուժասպառ են արել իրենց մի պայքարով, վորն իրենց ուժերից վեր է», յերբ «բոլոր տատանվող, յերերուն, անկայուն, միջանկյալ տարրերը, այսինքն մանր բուրժուազիան, մանր-բուրժուական դեմոկրատիան, ի տարբերություն բուրժուազիայից, իրենց բավականաչափ մերկացրել են ժողովրդի առաջ, բավականաչափ խայտառակվել են իրենց պրակտիկ սնանկությամբ», յերբ «պրոլետարիատի մեջ ծայր է առել և սկսել է հզոր թափով բարձրանալ մասսայական տրամադրությունը հօգուտ ամենավճռական, անվեհերաբար-համարձակ հեղափոխական գործողությունների աջակցության՝ ընդդեմ բուրժուազիայի։ Ահա այդ ժամանակ հեղափոխությունը հասունացել է, ահա այդ ժամանակ մեր հաղթանակը, յեթե մենք ճիշտ ենք հաշվի առել բոլոր վերը ուրվագծած... պայմանները և ճիշտ ենք ընտրել մոմենտը,—մեր հաղթանակն ապահովված է» (տե՛ս հ. XXV, եջ 230—231)։

Այդպիսի ստրատեգիայի տիպար կարելի յե համարել Հոկտեմբերյան ապստամբության իրագործումը։

Այս պայմանի խախտումը տանում է դեպի մի վտանգավոր սխալ, վոր կոչվում է «տեմպի կորուստ», յերբ կուսակցությունը հետ է մնում շարժման ընթացքից կամ շատ առաջ է վազում՝ տապալման վտանգ ստեղծելով։ «Տեմպի» այդպիսի «կորստյան» օրինակ, այն բանի օրինակ, թե ինչպես չպետք է ընտրել ապստամբության մոմենտը՝ պետք է համարել ընկերների մի մասի փորձը՝ ապստամբությունն սկսել Դեմոկրատական խորհրդակցության ձերբակալությամբ 1917 թ. օգոստոսին, յերբ խորհուրդներում դեռ տատանում եր զգացվում, ֆրոնտը դեռ գտնըվում եր ճամպարաժանի վրա, ռեզերվները դեռ մոտ չեյին բերված ավանգարդին։

Յերրորդ։ Արդեն ընդունված կուրսի անշեղ կիրառումը դեպի նպատակը տանող ճանապարհի բոլոր և ամեն տեսակ դժվարությունների ու բարդությունների վրայով, վորն անհրաժեշտ է, վորպեսզի ավանգարդն աչքաթող չանի պայքարի հիմնական

նպատակը, իսկ մասսաները չշեղվեն իրենց ճանապարհից՝ ընթանալով դեպի այդ նպատակը և աշխատելով համախմբվել ավանգարդի շուրջը։ Այս պայմանի խախտումը տանում է դեպի մի հսկայական սխալ, վորը շատ լավ հայտնի յե ծովայիններին «կուրսի կորուստ» անունով։ «Կուրսի» այդպիսի «կորստյան» որինակ պետք է համարել մեր կուսակցության սխալ վարքագիծը Դեմոկրատական խորհրդակցությունից անմիջապես հետո, յերբ կուսակցությունը նախապառլամենտին մասնակցելու վորոշում ընդունեց։ Այդ մոմենտին կուսակցությունը կարծես թե մոռացել էր, վոր նախապառլամենտը բուրժուազիայի ձեռնարկած փորձն է՝ յերկիրը խորհուրդների ճանապարհից փոխադրելու բուրժուական պառլամենտարիզմի ճանապարհը, վոր կուսակցության մասնակցությունը մի այդպիսի հաստատության մեջ կարող է խառնել բոլոր խաղաթղթերը և ճանապարհից շեղել «Ամբողջ իշխանությունը խորհուրդներին» լոզունգով հեղափոխական պայքար մղող բանվորներին ու գյուղացիներին։ Այդ սխալն ուղղվեց նրանով, վոր բոլշևիկները հեռացան նախապառլամենտից։

Չորրորդ։ Ճիշտ նահանջի նպատակով ռեզերվներով մանևրելը, յերբ թշնամին ուժեղ է, յերբ նահանջն անխուսափելի յե, յերբ հակառակորդի կողմից վզին փաթաթվող մարտ ընդունելն ակնհայտորեն անձեռնտու յե, յերբ ուժերի տվյալ հարաբերակցության պայմաններում նահանջը դառնում է ավանգարդը հարվածի տակից հանելու և ռեզերվները նրա կողմը պահելու միակ միջոց։

> «Հեղափոխական կուսակցությունները,—ասում է Լենինը,—պետք է սովորելը մինչև վերջը հասցնեն։ Նրանք սովորել են հարձակվել։ Հիմա հարկ կա հասկանալու, վոր այդ գիտությունն անհրաժեշտ է լրացնել այն գիտությամբ, թե ինչպես ավելի կանոնավոր նահանջենք։ Հարկ կա հասկանալու,—և հեղափոխական դասակարգն իր սեփական դառն փորձով սովորում է հասկանալ,—վոր չի կարելի հաղթել՝ առանց կանոնավոր հարձակվել և կանոնավոր նահանջել սովորելու» (տե՛ս հ. XXV, էջ 177)։

Այսպիսի ստրատեգիայի նպատակն է՝ ժամանակ շահել, քայքայել թշնամուն և ուժեր կուտակել՝ հետո հարձակման անցնելու համար։

Այսպիսի ստրատեգիայի որինակ կարելի յե համարել Բրեստի հաշտության կնքումը, հաշտություն, վորը կուսակցությանը հնարավորություն տվեց ժամանակ շահելու, ոգտագործելու ընդհարումներն իմպերիալիզմի բանակում, քայքայելու հակառակորդի ուժերը, իր կողմում պահելու գյուղացիությունը և ուժեր կուտակելու՝ Կոլչակի ու Դենիկինի դեմ հարձակում նախապատրաստելու համար։

> «Սեպարատ հաշտություն կնքելով,—ասում էր այն ժամանակ Լենինը,—մենք տվյալ մոմենտի համար հնարավոր, մեծագույն չափով ազատվում ենք յերկու միմյանց թշնամի իմպերիալիստական խմբերից, ոգտագործում ենք նրանց թշնամությունն ու պատերազմը,—որը դժվարացնում է նրանց գործարքը մեր դեմ,—ոգտագործում ենք այն, ստանալով արձակված ձեռքեր ունենալու վորոշ ժամանակաշրջան՝ սոցիալիստական հեղափոխությունը շարունակելու և ամրապնդելու համար» (տե՛ս հ. XXII, էջ 198)։
>
> «Այժմ նույնիսկ վերջին հիմարը» տեսնում է,—ասում էր Լենինը Բրեստի հաշտությունից յերեք տարի անց,—վոր «Բրեստի հաշտությունը» մի զիջում էր, վորն ուժեղացրեց մեզ և մասնատեց միջազգային իմպերիալիզմի ուժերը» (տե՛ս հ. XXVII, էջ 7)։

Սրանք են այն գլխավոր պայմանները, վորոնք ապահովում են ստրատեգիական ղեկավարության ճշտությունը։

5) Տակտիկական ղեկավարությունը։ Տակտիկական ղեկավարությունը ստրատեգիական ղեկավարության մի մասն է, վոր յենթարկված է վերջինի խնդիրներին ու պահանջներին։ Տակտիկական ղեկավարության խնդիրն այն է, վոր տիրապետենք պրոլետարիատի պայքարի ու կազմակերպության բոլոր ձևերին և ապահովենք նրանց ճիշտ ոգտագործումը, վորպեսզի ուժերի տվյալ հարաբերակցության պայմաններում հասնենք արդյունքների առավելագույնին, վորն անհրաժեշտ է ստրատեգիական հաջողությունը նախապատրաստելու համար։

Վո՞րն է պրոլետարիատի պայքարի և կազմակերպության ձևերի ճիշտ ոգտագործումը։

Այն մի քանի անհրաժեշտ պայմանների կատարումը, վորոնցից գլխավոր պայմաններ հարկավոր է համարել հետևյալները.

Առաջին։ Առաջին պլանի վրա քաշել պայքարի և կազմակերպության հենց այն ձևերը, վորոնք, ամենից ավելի համապա-

տասխանելով շարժման տվյալ մակընթացության կամ տեղատվության պայմաններին՝ ընդունակ են հեշտացնելու և արագացնելու մասսաներին հեղափոխական դիրքերին մոտեցնելը, միլիոնավոր մասսաներին հեղափոխության ֆրոնտին մոտեցնելը, նրանց տեղադրումը հեղափոխության ֆրոնտում:

Խնդիրն այն մասին չէ, վոր ավանգարդը գիտակցի հին կարգերը պահելու անհնարինությունը և նրանց տապալելու անխուսափելիությունը: Խնդիրն այն մասին է, վոր մասսաները, միլիոնավոր մասսաները հասկանան այդ անխուսափելիությունը և ավանգարդին աջակցելու պատրաստակամություն հայտաբերեն: Բայց մասսաները կարող են այդ հասկանալ միայն սեփական փորձի միջոցով: Միլիոնավոր մասսաներին հնարավորություն տալ սեփական փորձով հասկանալու հին իշխանության տապալման անխուսափելիությունը, առաջադրել պայքարի այնպիսի լոզունգներ և կազմակերպության այնպիսի ձևեր, վորոնք մասսաների համար հեշտացնեյին հեղափոխական լոզունգների ճշտությունը փորձով հասկանալը,—այս է խնդիրը:

Ավանգարդը կկտրվեր բանվոր դասակարգից, իսկ բանվոր դասակարգն էլ կկորցներ կապը մասսաների հետ, յեթե կուսակցությունն իր ժամանակին չվճռեր մասնակցել Դումային, յեթե նա չվճռեր կենտրոնացնել ուժերը դումայական աշխատանքի վրա և ծավալել պայքարն այդ աշխատանքի հիման վրա՝ այն հաշվով, վոր հեշտացնի մասսաների համար սեփական փորձով հասկանալու Դումայի անպետքությունը, կադետական խոստումների ստությունը, ցարիզմի հետ համաձայնության գալու անհնարինությունը, գյուղացիության դաշինքի անխուսափելիությունը բանվոր դասակարգի հետ: Առանց մասսաների փորձի Դումայի ժամանակաշրջանում՝ կադետների մերկացումը և պրոլետարիատի հեգեմոնիան անհնարին կլինեյին:

Օտզովիզմի տակտիկայի վտանգն այն էր, վոր նա սպառնում էր ավանգարդը կտրել նրա միլիոնավոր ռեզերվներից:

Կուսակցությունը կկտրվեր բանվոր դասակարգից, իսկ բանվոր դասակարգը կզրկվեր ազդեցությունից գյուղացիների և զինվորների լայն մասսաներում, յեթե պրոլետարիատը գնար ձախ կոմունիստների հետքերով, վորոնք ապստամբության էյին կոչում 1917 թ. ապրիլին, յերբ մենշևիկներն ու էս-էրները դեռ

չէյին մերկացրել իրենց վորպես պատերազմի և իմպերիալիզմի կողմնակիցների, յերբ մասսաները դեռ սեփական փորձով չէյին կարողացել հասկանալ հաշտության, հողի, ազատության վերաբերյալ մենշևիկյան–էս–էրական ճառերի ստությունը: Առանց մասսաների փորձի կերենշչինայի ժամանակաշրջանում՝ մենշևիկներն ու էս–էրները չէյին մեկուսացվի, և պրոլետարիատի դիկտատուրան անհնարին կլիներ: Այդ պատճառով մանր-բուրժուական կուսակցությունների սխալների «համբերատար պարզաբանման» և խորհուրդների ներսում բացահայտ պայքարի տակտիկան՝ միակ ճիշտ տակտիկան էր:

Ձախ կոմունիստների տակտիկայի սխալի վտանգավորությունն այն էր, վոր այն սպառնում էր կուսակցությունը պրոլետարական հեղափոխության առաջնորդից վերածել դատարկ և վոտքի տակ հող չունեցող դավադիրների մի խմբակի:

«Միայն ավանգարդով,—ասում է Լենինը,—հաղթել չի կարելի: Վճռական մարտի նետել միմիայն ավանգարդը, յերբ դեռ ամբողջ դասակարգը, դեռ լայն մասսաները չեն գրավել ավանգարդին ուղղակի աջակցելու, կամ, գոնե, նրա նկատմամբ բարյացակամ չեզոքություն պահպանելու դիրք... վո՛չ միայն հիմարություն կլիներ, այլև հանցագործություն: Իսկ վորպեսզի իրոք ամբողջ դասակարգը, վորպեսզի իրոք աշխատավորների և կապիտալի կողմից ճնշվածների լայն մասսաները հասնեն այդպիսի դիրքի, դրա համար միայն պրոպագանդը, միայն ագիտացիան քիչ է: Դրա համար հարկավոր է այդ մասսաների սեփական քաղաքական փորձը: Այս է բոլոր մեծ հեղափոխությունների հիմնական օրենքը, վորն այժմ զարմանալի ուժգնությամբ ու ցցունությամբ հաստատել է վո՛չ միայն Ռուսաստանը, այլև Գերմանիան: Վո՛չ միայն Ռուսաստանի անկուլտուրական, հաճախ անգրագետ մասսաների համար, այլև Գերմանիայի բարձր կուլտուրական, գլխովին գրագետ մասսաների համար կարիք յեղավ սեփական կաշվի վրա փորձելու II Ինտերնացիոնալի ասպետների կառավարության ամբողջ անզորությունը, ամբողջ անհաստատակամությունը, ամբողջ անօգնականությունը, ամբողջ լակեյությունը բուրժուազիայի հանդեպ, ամբողջ ստորությունը, ծայրահեղ հետադիմականների (Կորնիլով՝ Ռուսաստանում, Կապպ և ընկ.՝ Գերմանիայում) դիկտատուրայի ամբողջ անխուսափելիությունը, վորպես միակ յերկընտրանք պրոլետարիատի դիկտատուրայի նկատմամբ, վորպեսզի վճռաբար շրջադարձ կատարեն դեպի կոմունիզմը» (տե՛ս հ. XXV, էջ 229—230):

Յերկրորդ: Գտնել յուրաքանչյուր տվյալ մոմենտում պրոցեսների շղթայի այն հատուկ օղակը, վորից բռնելով կարելի

կլինի պահել ամբողջ շղթան և նախապատրաստել պայմաններ՝ ստրատեգիական հաջողության հասնելու համար:

Խնդիրն այն մասին է, վոր կուսակցության առաջ կանգնած խնդիրների շարքից զատենք հենց այն հերթական խնդիրը, վորի լուծումը կենտրոնական կետ է, և վորի կենսագործումն ապահովում է մնացած հերթական խնդիրների հաջող լուծումը:

Այս դրույթի նշանակությունը կարելի կլիներ ցուցադրել յերկու որինակով, վորոնցից մեկը կարելի կլիներ վերցնել հեռավոր անցյալից (կուսակցության գոյանալու ժամանակաշրջանը), իսկ մյուսը՝ մեզ ամենից ավելի մոտ ներկայից (նեպի ժամանակաշրջանը):

Կուսակցության գոյացման ժամանակաշրջանում, յերբ խմբակների ու կազմակերպությունների անթիվ բազմությունը դեռևս իրար հետ կապված չեր, յերբ տնայնագործությունը և խմբակցականությունը (кружковщина) մաշում եյին կուսակցությունը վերից վար, յերբ գաղափարային տարընթացությունը (разброд) կազմում եր կուսակցության ներքին կյանքի վորոշ գիծը,—այդ ժամանակաշրջանում հիմնական ողակ ու հիմնական խնդիր ողակների շղթայում ու այն խնդիրների շղթայում, վորոնք այն ժամանակ կանգնած եյին կուսակցության առաջ, հանդիսացավ համառուսական անլեգալ լրագրի ստեղծումը: Ինչո՞ւ: Այն պատճառով, վոր այն ժամանակվա պայմաններում միայն համառուսական անլեգալ լրագրի միջոցով կարելի յեր ստեղծել կուսակցության ներդաշնակ միջուկ, վորն ընդունակ լիներ ի մի շաղկապելու անհամար խմբակներն ու կազմակերպությունները, նախապատրաստելու գաղափարային և տակտիկական միասնականության պայմաններ և,այդպիսով,իսկական կուսակցության գոյացման հիմքը դնելու:

Պատերազմից տնտեսական շինարարության անցնելու ժամանակաշրջանում, յերբ արդյունաբերությունը քաշ եր տալիս իր գոյությունը քայքայման ճիրաններում, իսկ գյուղատնտեսությունը տառապում եր քաղաքային արտադրանքների պակասությունից, յերբ պետական ինդուստրիայի զոդումը գյուղացիական տնտեսության հետ դարձավ հաջող սոցիալիստական շինարարության հիմնական պայման,—այդ ժամանակաշրջանում

հիմնական ողակ պրոցեսների շղթայի մեջ, հիմնական խնդիր՝ մյուս խնդիրների շարքում հանդիսացավ առևտրի զարգացումը: Ինչո՞ւ: Այն պատճառով, վոր նեպի պայմաններում ինդուստրիայի շաղկապը գյուղացիական տնտեսության հետ հնարավոր չե այլ կերպ, բայց յեթե առևտրի միջոցով, այն պատճառով, վոր նեպի պայմաններում արտադրությունն առանց վաճառահանման մահ է ինդուստրիայի համար, այն պատճառով, վոր ինդուստրիան կարելի յե ընդլայնել առևտրի զարգացման միջոցով վաճառահանումն ընդարձակելով միայն, այն պատճառով, վոր առևտրի բնագավառում ամրանալով միայն, առևտրին տիրանալով միայն, այդ ողակին տիրանալով միայն կարելի յե հուսալ, վոր ինդուստրիան կշաղկապվի գյուղացիական շուկայի հետ և հաջողությամբ կլուծվեն մյուս հերթական խնդիրները՝ սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման պայմաններն ստեղծելու համար:

«Բավական չե լինել ընդհանրապես հեղափոխական և սոցիալիզմի կողմնակից կամ կոմունիստ...—ասում է Լենինը—Հարկավոր է կարողանալ յուրաքանչյուր առանձին մոմենտում գտնել շղթայի այն հատուկ ողակը, վորից պետք է ամբողջ ուժով բռնել՝ ամբողջ շղթան ձեռքին պահելու և հաստատուն կերպով նախապատրաստելու համար անցումը դեպի հետևյալ ողակը»... «Տվյալ մոմենտին... այդպիսի ողակ հանդիսանում է ներքին առևտրի աշխուժացումը՝ նրան պետականորեն ճիշտ ղեկավարելու (ուղղություն տալու) պայմանով: Առևտուր—ահա այն «ողակը» անցքերի պատմական շղթայի մեջ, 1921—1922 թ. թ. մեր սոցիալիստական շինարարության անցման ձևերի մեջ, վորից հարկավոր է բռնել բոլոր ուժով»... (տե՛ս հ. XXVII, եջ 82):

Սրանք են այն գլխավոր պայմանները, վորոնք ապահովում են տակտիկական ղեկավարության ճշտությունը:

6) Ռեֆորմիզմը և ռևոլյուցիոնիզմը: Հեղափոխական տակտիկան ինչո՞վ է տարբերվում ռեֆորմիստական տակտիկայից:

Վոմանք կարծում են, թե լենինիզմն ընդհանրապես ռեֆորմների դեմ է, կոմպրոմիսների և համաձայնությունների դեմ է: Այդ միանգամայն սխալ է: Բոլշևիկները գիտեն վոչ պակաս, քան ամեն մեկ ուրիշը, վոր վորոշ իմաստով «ամենայն տուրք բարիք է», վոր վորոշ պայմաններում ռեֆորմներն ընդհանրապես, կոմպրոմիսներն ու համաձայնությունները մասնավորապես—անհրաժեշտ են և ոգտակար:

«Պատերազմ մղել,—ասում ե Լենինը,—միջազգային բուրժուազիային տապալելու համար,—մի պատերազմ, վորը հարյուր անգամ ավելի դժվար ե, յերկարատև, բարդ, քան սովորական պատերազմներից ամենահամառը պետությունների միջև,—և ընդմին առաջուց հրաժարվել խուսանավելուց (лавирование), թշնամիների միջև յեղած շահերի (թեկուզ և ժամանակավոր) հակասության ոգտագործումից, համաձայնողականությունից ու կոմպրոմիսներից հնարավոր (թեկուզ և ժամանակավոր, անհաստատ, յերերուն, պայմանական) դաշնակիցների հետ,—մի՞թե սա անսահմանորեն ծիծաղելի բան չե։ Մի՞թե սա նման չե այն բանին, ինչպես, որինակ՝ դեռևս չհետազոտված և մինչև այժմ անմատչելի սարը դժվարությամբ բարձրանալու դեպքում մենք վաղորոք հրաժարվեյինք յերբեմն զիգզագ գնալուց, յերբեմն հետ դառնալուց, հրաժարվեյինք մեկ անգամ ընտրած ուղղությունից և զանազան ուղղություններ փորձելուց» (տե՛ս հ. XXV, եջ 211)։

Ակներև ե, վոր բանը ռեֆորմները կամ կոմպրոմիսներն ու համաձայնությունները չեն, այլ այն, թե մարդիկ ինչպես են կիրառում ռեֆորմներն ու համաձայնությունները։

Ռեֆորմիստի համար ռեֆորմն ամեն ինչ ե, իսկ հեղափոխական աշխատանքը՝ հենց այնպես, խոսակցության համար ե, աչքակապության համար։ Այդ պատճառով բուրժուական իշխանության գոյության պայմաններում ռեֆորմիստական տակտիկա կիրառելու դեպքում ռեֆորմն անխուսափելիորեն դառնում ե այդ իշխանության ամրացման գործիք, հեղափոխությունը քայքայելու գործիք։

Իսկ հեղափոխականի համար, ընդհակառակը, գլխավորը հեղափոխական աշխատանքն ե, այլ վոչ թե ռեֆորմը. նրա համար ռեֆորմը հեղափոխության կողմնակի արդյունքն ե։ Այդ պատճառով բուրժուական իշխանության գոյության պայմաններում հեղափոխական տակտիկա կիրառելու դեպքում ռեֆորմը բնականաբար դառնում ե այդ իշխանության քայքայման գործիք, հեղափոխության ամրապնդման գործիք, հեղափոխական շարժման հետագա զարգացման հենակետ։

Հեղափոխականն ընդունում ե ռեֆորմը նրա համար, վորպեսզի ոգտագործի այն վորպես կեռիք (зацепка) լեգալ աշխատանքն անլեգալ աշխատանքին զուգակցելու համար, նրա համար, վորպեսզի ոգտագործի այն իբրև ծածկոց բուրժուազիայի տապալմանը մասսաներին հեղափոխականորեն նախապատրաստելու նպատակով անլեգալ աշխատանքն ուժեղացնելու համար։

Այս ե ռեֆորմների և համաձայնությունների հեղափոխական ոգտագործման էությունը իմպերիալիզմի պայմաններում։

Իսկ ռեֆորմիստը, ընդհակառակը, ընդունում ե ռեֆորմները նրա համար, վորպեսզի հրաժարվի ամեն մի անլեգալ աշխատանքից, ձախողի մասսաներին հեղափոխության համար պատրաստելու գործը և հանգստություն վայելի «շնորհված» ռեֆորմի հովանու ներքո։

Այս ե ռեֆորմիստական տակտիկայի էությունը։

Այսպես ե ռեֆորմների և համաձայնությունների բանն իմպերիալիզմի պայմաններում։

Սակայն բանը փոքր ինչ փոխվում ե իմպերիալիզմի տապալումից հետո, պրոլետարիատի դիկտատուրայի օրով։ Վորոշ պայմաններում, վորոշ իրադրության առկայության դեպքում պրոլետարական իշխանությունը կարող ե ստիպված լինել ժամանակավորապես շեղվելու գոյություն ունեցող կարգերի հեղափոխական վերակառուցման ճանապարհից՝ դեպի այդ կարգերի աստիճանական փոխակերպության ճանապարհը, դեպի «ռեֆորմիստական ճանապարհը», ինչպես ասում ե Լենինը «Վոսկու նշանակության մասին» հայտնի հոդվածում, դեպի շրջանցիկ շարժումների ճանապարհը, ռեֆորմների և վոչ-պրոլետարական դասակարգերին զիջումներ անելու ճանապարհը, նպատակ ունենալով քայքայել այդ դասակարգերը, հեղափոխությանը դադար տալ, ուժեր հավաքել և պայմաններ նախապատրաստել նոր հարձակման համար։ Չի կարելի ժխտել, վոր այս ճանապարհը վորոշ իմաստով ռեֆորմիստական ճանապարհ ե։ Հարկավոր ե միայն հիշել, վոր այստեղ կա մի արմատական առանձնահատկություն, վորի էությունն այն ե, վոր ռեֆորմը տվյալ դեպքում բղխում ե պրոլետարական իշխանությունից, վոր այն ամրացնում ե պրոլետարական իշխանությունը, վոր նա այդ իշխանությանն անհրաժեշտ դադար ե տալիս, վոր նա կոչված ե քայքայելու վո՛չ թե հեղափոխությունը, այլ վոչ-պրոլետարական դասակարգերին։

Այսպիսով ռեֆորմն այսպիսի պայմաններում փոխարկվում ե իր հակադրության։

Այսպիսի քաղաքականության կենսագործումը պրոլետարական իշխանության կողմից հնարավոր է դառնում այն պատճառով, և միմիայն այն պատճառով, վոր հեղափոխության թափը նախորդ ժամանակաշրջանում բավականաչափ մեծ էր, և այդպիսով նա բացել է բավականաչափ լայն հրապարակ, վորպեսզի նահանջելու վորևե տեղ լինի, հարձակման տակտիկան փոխարինելով ժամանակավոր նահանջի տակտիկայով, շրջանցիկ շարժումների տակտիկայով։

Այսպիսով՝ յեթե առաջներում, բուրժուական իշխանության օրով, ռեֆորմները հեղափոխության կողմնակի արդյունք եյին, ապա այժմ, պրոլետարիատի դիկտատուրայի օրով, ռեֆորմների աղբյուր հանդիսանում են պրոլետարիատի հեղափոխական նվաճումները, պրոլետարիատի ձեռքերում կուտակված ռեզերվը, վոր բաղկացած է այդ նվաճումներից։

«Ռեֆորմների ու հեղափոխության առնչությունն,— ասում է Լենինը,— ճշգրիտ և ուղիղ վորոշել է միայն մարքսիզմը, ընդվորում Մարքսը կարող էր տեսնել այդ առնչությունը միայն մեկ կողմից, այն է՝ պրոլետարիատի առաջին, փոքրիշատե հաստատուն, փոքրիշատե յերկարատև հաղթանակին թեկուզ մեկ յերկրում նախորդող պայմաններում։ Այդպիսի պայմաններում ճիշտ հարաբերության հիմքն այն էր, վոր ռեֆորմները պրոլետարիատի հեղափոխական դասակարգային կռվի կողմնակի արդյունքն են... Թեկուզ մի յերկրում պրոլետարիատի տարած հաղթությունից հետո ռեֆորմների և հեղափոխության հարաբերության մեջ յերևան է գալիս մի նոր բան։ Սկզբունքորեն բանը նույնն է մնում, բայց ըստ ձևի, յերևան է գալիս փոփոխություն, վորը Մարքսն անձամբ նախատեսել չէր կարող, բայց վորը գիտակցել կարելի յե միայն մարքսիզմի փիլիսոփայության և քաղաքականության հողի վրա... Հաղթությունից հետո այն յերկրի համար, վորտեղ հաղթությունը տարված է, նրանք (այսինքն ռեֆորմները։ Ի. Ստ.) (միջազգային մասշտաբով լինելով նույն «կողմնակի արդյունքը»), բացի դրանից, անհրաժեշտ և օրինական դադար են այն դեպքերում, յերբ ուժերը, նրանց ամենաառավելագույն լարումից հետո, բացահայտորեն չեն բավականացնում այս-ինչ կամ այն-ինչ անցումը հեղափոխականորեն իրագործելու համար։ Հաղթությունը տալիս է «ուժերի» այնպիսի «պաշար», վոր դիմանալու հնար կա նույնիսկ հարկադրված նահանջի դեպքում,— դիմանալու թե՛ նյութական, թե՛ բարոյական իմաստով» (տե՛ս հ. XXVII, եջ 84—85)։

VIII. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Նախահեղափոխական ժամանակաշրջանում, քիչ թե շատ խաղաղ զարգացման ժամանակաշրջանում, յերբ II Ինտերնացիոնալի կուսակցությունները բանվորական շարժման մեջ տիրապետող ուժ եյին, իսկ պայքարի պառլամենտական ձևերը համարվում եյին հիմնական ձևեր,— այդ պայմաններում կուսակցությունը չուներ և չէր կարող ունենալ այն լուրջ և վճռողական նշանակությունը, վոր նա ձեռք բերեց հետո՝ բացահայտ հեղափոխական ճակատամարտերի պայմաններում։ Կաուցկին՝ պաշտպանելով II Ինտերնացիոնալը հարձակումներից, ասում է, վոր II Ինտերնացիոնալի կուսակցությունները խաղաղության գործիք են և վոչ թե պատերազմի, վոր հենց այդ պատճառով նրանք անզոր գտնվեցին վորևէ լուրջ բան ձեռնարկելու պատերազմի ժամանակ, պրոլետարիատի հեղափոխական յելույթների ժամանակաշրջանում։ Այդ միանգամայն ճիշտ է։ Բայց այդ ինչ է նշանակում։ Այդ նշանակում է, վոր II Ինտերնացիոնալի կուսակցությունները պիտանի չեն պրոլետարիատի հեղափոխական պայքարի համար, վոր նրանք վո՛չ թե պրոլետարիատի մարտական կուսակցություններ են, վորոնք բանվորներին տանում են դեպի իշխանություն, այլ ընտրական մի ապարատ, վոր հարմարեցված է պառլամենտական ընտրություններին ու պառլամենտական պայքարին։ Դրանով էլ հենց բացատրվում է այն փաստը, վոր II Ինտերնացիոնալի օպորտունիստների տիրապետության ժամանակաշրջանում պրոլետարիատի հիմնական քաղաքական կազմակերպությունը հանդիսանում էր վո՛չ թե կուսակցությունը, այլ պառլամենտական ֆրակցիան։ Հայտնի յե, վոր կուսակցությունն այդ ժամանակաշրջանում իրականում պառլամենտական ֆրակցիայի կցորդն ու սպասարկող տարրն էր։ Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր այսպիսի պայմաններում և այսպիսի կուսակցության ղեկավարությամբ խոսք անգամ չէր կարող լինել պրոլետարիատի՝ հեղափոխության համար նախապատրաստվելու մասին։

Սակայն բանն արմատապես փոխվեց, յերբ վրա հասավ նոր ժամանակաշրջանը։ Նոր ժամանակաշրջանը դասակարգերի բացահայտ ընդհարումների ժամանակաշրջան է, պրոլետարիատի

հեղափոխական յելույթների ժամանակաշրջան, պրոլետարական հեղափոխության ժամանակաշրջան, իմպերիալիզմի տապալման համար, իշխանությունը պրոլետարիատի կողմից զավթելու համար ուժերն ուղղակի պատրաստելու ժամանակաշրջան: Այս ժամանակաշրջանը պրոլետարիատի առաջ նոր խնդիրներ է դնում՝ ամբողջ կուսակցական աշխատանքը նոր, հեղափոխական ձևով վերակառուցելու մասին, բանվորներին իշխանության համար հեղափոխական պայքար մղելու ոգով դաստիարակելու մասին, ռեզերվներ պատրաստելու և մոտ բերելու մասին, հարևան յերկիրների պրոլետարների հետ դաշնակցելու մասին, գաղութների և կախյալ յերկիրների ազատագրական շարժման հետ ամուր կապեր հաստատելու մասին և այլն և այլն: Կարծել, թե այս նոր խնդիրները կարող են լուծվել հին սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ուժերով,—կուսակցություններ, վորոնք դաստիարակվել են պառլամենտարիզմի խաղաղ պայմաններում,—նշանակում է իրեն դատապարտել անհուսալի վհատության, անխուսափելի պարտության: Այսպիսի խնդիրներ իր ուսերին ծանրացած ունենալով՝ մնալ հին կուսակցությունների գլխավորությամբ—նշանակում է գտնվել լիակատար զինաթափության վիճակում: Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր պրոլետարիատը չեր կարող հաշտվել այդպիսի դրության հետ:

Այստեղից՝ նոր կուսակցության անհրաժեշտությունը, մարտական կուսակցության, հեղափոխական կուսակցության, վորը պետք է բավականաչափ համարձակ լինի, վորպեսզի պրոլետարներին առաջնորդի դեպի կռիվ հանուն իշխանության, բավականաչափ փորձված լինի, վորպեսզի հեղափոխական իրադրության բարդ պայմաններից դուրս հանի և բավականաչափ ճկուն լինի, վորպեսզի խուսափի իր նպատակի ճանապարհին յեղած բոլոր և ամեն տեսակ ստորջրյա քարերից:

Առանց այսպիսի կուսակցության նույնիսկ ավելորդ է մտածել իմպերիալիզմի տապալման մասին, պրոլետարիատի դիկտատուրա նվաճելու մասին:

Այդ նոր կուսակցությունը—լենինիզմի կուսակցությունն է:

Վորո՞նք են այդ նոր կուսակցության առանձնահատկությունները:

1) Կուսակցությունը վորպես բանվոր դասակարգի առաջավոր ջոկատ: Կուսակցությունն ամենից առաջ պետք է լինի բանվոր դասակարգի առաջավոր ջոկատը: Կուսակցությունը պետք է իր մեջ առնի բանվոր դասակարգի բոլոր լավագույն տարրերին, նրանց փորձը, նրանց հեղափոխականությունը, նրանց անձնազոհ նվիրվածությունը պրոլետարիատի գործին: Բայց իսկապես առաջավոր ջոկատ լինելու համար՝ կուսակցությունը պետք է զինված լինի հեղափոխական թեորիայով, շարժման որենքների գիտելությամբ (знание), հեղափոխության որենքների գիտելությամբ: Առանց դրան նա անկարող է ղեկավարելու պրոլետարիատի պայքարը, իր հետևից տանելու պրոլետարիատին: Կուսակցությունը չի կարող լինել իսկական կուսակցություն, յեթե նա սահմանափակվում է այն բանի արձանագրությամբ, ինչ ապրում ու մտածում է բանվոր դասակարգի մասսան, յեթե նա քաշ է գալիս տարերային շարժման պոչից, յեթե նա չի կարողանում հաղթահարել տարերային շարժման դանդաղությունը և քաղաքական անտարբերությունը, յեթե նա չի կարողանում պրոլետարիատի րոպեական շահերից վեր բարձրանալ, յեթե նա չի կարողանում մասսաներին բարձրացնել մինչև պրոլետարիատի դասակարգային շահերի մակարդակը: Կուսակցությունը պետք է կանգնած լինի բանվոր դասակարգի առջևում, նա պետք է ավելի հեռուն տեսնի, քան բանվոր դասակարգը, նա պետք է իր հետևից տանի պրոլետարիատին և վոչ թե քաշ գա տարերայնության պոչից: II Ինտերնացիոնալի կուսակցությունները, վորոնք «պոչականություն» են քարոզում, իրականացնողներն են բուրժուական քաղաքականության, վորը պրոլետարիատին դատապարտում է բուրժուազիայի ձեռքին գործիքի դեր կատարելու վիճակի: Միայն այն կուսակցությունը, վորը կանգնել է պրոլետարիատի առաջավոր ջոկատի տեսակետի վրա և ընդունակ է մասսաներին բարձրացնելու մինչև պրոլետարիատի դասակարգային շահերի մակարդակը,—միայն այդպիսի կուսակցությունն է ընդունակ բանվոր դասակարգը հանելու տրեդ-յունիոնիզմի ճանապարհից և նրան ինքնուրույն քաղաքական ուժ դարձնելու: Կուսակցությունը բանվոր դասակարգի քաղաքական առաջնորդն է:

Վերը յես խոսեցի բանվոր դասակարգի պայքարի դժվարու-

թյունների մասին, պայքարի պայմանների բարդության մասին, ստրատեգիայի և տակտիկայի մասին, ռեզերվների և մանևրելու մասին, հարձակվելու և նահանջելու մասին: Այդ պայմանները պակաս բարդ չեն, յեթե վոչ ավելի բարդ, քան պատերազմի պայմանները: Ո՞վ կարող է գլուխ հանել այդ պայմաններից, ո՞վ կարող է ճիշտ կողմնորոշում տալ պրոլետարների միլիոնավոր մասսաներին: Վո՛չ մի բանակ պատերազմում չի կարող յոլա գնալ առանց փորձված շտաբի, յեթե նա չի ցանկանում պարտության դատապարտել իրեն: Մի՞թե պարզ չէ, վոր պրոլետարիատն առավել ևս չի կարող յոլա գնալ առանց այդպիսի շտաբի, յեթե նա չի ցանկանում իր յերդվյալ թշնամիներին կերակուր դառնալ: Բայց ո՞ւր է այդ շտաբը: Այդպիսի շտաբ կարող է լինել պրոլետարիատի հեղափոխական կուսակցությունը միայն: Բանվոր դասակարգն առանց հեղափոխական կուսակցության—դա մի բանակ է առանց շտաբի: Կուսակցությունը պրոլետարիատի մարտական շտաբն է:

Բայց կուսակցությունը չի կարող լինել միայն առաջավոր ջոկատ: Դրա հետ մեկտեղ նա պետք է լինի դասակարգի ջոկատը, դասակարգի մի մասը, վորը սերտորեն կապված է նրա հետ իր գոյության բոլոր արմատներով: Տարբերությունն առաջավոր ջոկատի և բանվոր դասակարգի մնացած մասսայի միջև, կուսակցականների և անկուսակցականների միջև չի կարող անհետանալ, քանի դեռ չեն անհետացել դասակարգերը, քանի դեռ պրոլետարիատը կհամալրվի այլ դասակարգերից յեկածներով, քանի դեռ բանվոր դասակարգն ամբողջությամբ առած զրկված կլինի առաջավոր ջոկատի մակարդակին բարձրանալու հնարավորությունից: Բայց կուսակցությունը կդադարեր կուսակցություն լինելուց, յեթե այդ տարբերությունը վերածվեր խզման, յեթե նա ներփակվեր ինքն իր մեջ և կտրվեր անկուսակցական մասսաներից: Կուսակցությունը չի կարող ղեկավարել դասակարգին, յեթե նա կապված չէ անկուսակցական մասսաների հետ, յեթե կուսակցության և անկուսակցական մասսաների միջև զոդում չկա, յեթե այդ մասսաները չեն ընդունում նրա ղեկավարությունը, յեթե կուսակցությունը մասսաների մեջ բարոյական և քաղաքական վարկ չունի: Նորերս մեր կուսակցության մեջ ընդունվեցին յերկու հարյուր հազար նոր անդամներ

բանվորներից: Այստեղ ուշագրավ է այն հանգամանքը, վոր այդ մարդիկ վոչ այնքան իրենք մտան կուսակցության մեջ, վորքան ուղարկվեցին այնտեղ՝ մնացած ամբողջ անկուսակցական մասսայի կողմից, վորն ակտիվ մասնակցում էր նոր անդամների ընդունելությանը, և առանց վորի հավանության առհասարակ նոր անդամներ չեյին ընդունվում: Այս փաստը խոսում է այն մասին, վոր անկուսակցական բանվորների լայն մասսաները մեր կուսակցությունն իրենց կուսակցությունն են համարում, մոտիկ և հարազատ կուսակցություն, վորի ընդարձակումով և ամրապնդումով նրանք կենսականորեն շահագրգռված են և վորի ղեկավարությանը նրանք հոժարակամ հանձնում են իրենց բախտը: Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր առանց այս աննշմարելի բարոյական թելերի, վորոնք կուսակցությունը կապում են անկուսակցական մասսաների հետ, կուսակցությունը չեր կարող դառնալ իր դասակարգի վճռողական ուժը: Կուսակցությունը բանվոր դասակարգի անխզելի մասն է:

«Մենք,—ասում է Լենինը,—դասակարգի կուսակցությունն ենք, և այդ պատճառով համարյա ամբողջ դասակարգը (իսկ պատերազմի ժամանակներում, քաղաքացիական պատերազմի դարաշրջանում, հենց միանգամայն ամբողջ դասակարգը) պետք է գործի մեր կուսակցության ղեկավարությամբ, պետք է հարի մեր կուսակցությանը վորքան կարելի յե ավելի սերտորեն, բայց մանիլովշչինա և «պոչականություն» կլիներ կարծել, թե յերբևէ համարյա ամբողջ դասակարգը կամ ամբողջ դասակարգն ի վիճակի կլինի, կապիտալիզմի որով, բարձրանալու մինչև իր առաջավոր ջոկատի, իր սոցիալիստական կուսակցության գիտակցականությունն ու ակտիվությունը: Դեռևս վոչ մի խելացի սոցիալիստ չի կասկածել, վոր կապիտալիզմի որով նույնիսկ արհեստակցական կազմակերպությունը (վորն ավելի պրիմիտիվ է, ավելի մատչելի անզարգացած խավերի գիտակցականությանը) ի վիճակի չէ ընդգրկելու համարյա ամբողջ կամ ամբողջ բանվոր դասակարգը: Մոռանալ առաջավոր ջոկատի և նրան ձգտող բոլոր մասսաների միջև յեղած տարբերությունը, մոռանալ առաջավոր ջոկատի մշտական պարտականությունը՝ ավելի ու ավելի լայն խավեր բարձրացնելու մինչև այդ առաջավոր մակարդակը՝ կնշանակեր միայն ինքնիրեն խաբել, աչք փակել մեր խնդիրների վիթխարիության հանդեպ, նեղացնել այդ խնդիրները» (տե՛ս հ. VI, եջ 205—206):

2) Կուսակցությունը վորպես բանվոր դասակարգի կազմակերպված ջոկատ: Կուսակցությունը բանվոր դասակարգի առա-

ջավոր ջոկատը չէ միայն։ Եթե նա կամենում է իսկապես ղեկավարել դասակարգի պայքարը, նա դրա հետ մեկտեղ պետք է լինի իր դասակարգի կազմակերպված ջոկատը։ Կուսակցության խնդիրները կապիտալիզմի պայմաններում չափազանց մեծ են ու բազմազան։ Կուսակցությունը պետք է ղեկավարի պրոլետարիատի պայքարը ներքին և արտաքին զարգացման չափազանց դժվարին պայմաններում, նա պետք է առաջնորդի պրոլետարիատին դեպի հարձակում, երբ իրադրությունը հարձակում է պահանջում, նա պետք է դուրս հանի պրոլետարիատին ուժեղ հակառակորդի հարվածի տակից, երբ իրադրությունը նահանջ է պահանջում, անկազմակերպ անկուսակցական բանվորների միլիոնավոր մասսաների մեջ պայքարի միջոցին նա պետք է կարգապահության և պլանաչափության ոգի մտցնի, կազմակերպվածության և տոկունության ոգի։ Բայց կուսակցությունն այս խնդիրները կարող է իրագործել միայն այն դեպքում, եթե նա ինքը կարգապահության և կազմակերպվածության մարմնացում է, եթե նա ինքը պրոլետարիատի կազմակերպված ջոկատն է։ Առանց այս պայմանների խոսք անգամ չի կարող լինել՝ կուսակցության կողմից պրոլետարիատի միլիոնավոր մասսաներին իրական ղեկավարություն ցույց տալու մասին։ Կուսակցությունը բանվոր դասակարգի կազմակերպված ջոկատն է։

Այն միտքը, թե կուսակցությունը կազմակերպված ամբողջություն է, ամրապնդված է մեր կուսակցության կանոնադրության առաջին կետի Լենինի հայտնի ձևակերպման մեջ, որտեղ կուսակցությունը դիտվում է որպես կազմակերպությունների գումար, իսկ կուսակցության անդամները՝ որպես կուսակցության կազմակերպություններից մեկնումեկի անդամներ։ Մենշևիկները, որոնք առարկում էին այս ձևակերպման դեմ դեռևս 1903 թվին, դրա փոխարեն առաջարկում էին կուսակցության մեջ ինքնահաշվեգրվելու (самозачисление) «սիստեմ», կուսակցության անդամի «կոչումը» այս կամ այն կերպ կուսակցությանն օժանդակող, բայց կուսակցական կազմակերպություններից և ոչ մեկի մեջ չմտած և մտնել չցանկացող ամեն մի «պրոֆեսորի» և «գիմնազիստի», ամեն մի «համակրողի» և «գործադուլավորի» վրա տարածելու «սիստեմ»։ Հազիվ թե հարկ կա ապացուցելու, որ այս օրիգինալ «սիստեմը», եթե

այն ամրանար մեր կուսակցության մեջ, անխուսափելիորեն կունենար այն հետևանքը, որ կուսակցությունը կլցվեր պրոֆեսորներով ու գիմնազիստներով և կայլասերվեր ու կդառնար հեղհեղուկ, չձևավորված, կազմալուծված մի «գոյացում», որը կորչում է «համակրողների» ծովում, ջնջում է սահմանը կուսակցության և դասակարգի միջև ու տապալում է կուսակցության խնդիրը՝ անկազմակերպ մասսաներին մինչև առաջավոր ջոկատի մակարդակը բարձրացնելու վերաբերությամբ։ Ինչ խոսք կուզի, որ այդպիսի օպորտունիստական «սիստեմի» պարագայում մեր կուսակցությունն անկարող կլիներ բանվոր դասակարգի կազմակերպող միջուկի դերը կատարելու մեր հեղափոխության ընթացքի մեջ։

> «Մարտովի տեսակետով,—ասում է Լենինը,—կուսակցության սահմանը մնում է բոլորովին անորոշ, որովհետև «ամեն մի գործադուլավոր» կարող է «կուսակցության անդամ հայտարարել իրեն»։ Ի՞նչ օգուտ այդ հեղհեղուկությունից։ «Անվանումի» լայն տարածում։ Նրա վնասը — դասակարգը և կուսակցությունը շփոթելու մասին կազմալուծող գաղափարը մտցնելն է» (տե՛ս հ. VI, էջ 211)։

Բայց կուսակցությունը կուսակցական կազմակերպությունների գումար չէ միայն։ Կուսակցությունը, դրա հետ մեկտեղ, այդ կազմակերպությունների միասնական սիստեմն է, դրանց ձևական միավորումը մի միասնական ամբողջի մեջ, որն ունի ղեկավարության ավելի բարձր և ավելի ստորին օրգաններ, որի փոքրամասնությունը ենթարկվում է մեծամասնությանը, որի պրակտիկ վճիռները պարտադիր են կուսակցության բոլոր անդամների համար։ Առանց այս պայմանների կուսակցությունն ի վիճակի չէ լինելու միասնական կազմակերպված մի ամբողջություն, որն ընդունակ է կենսագործելու բանվոր դասակարգի պայքարի պլանաչափ և կազմակերպված ղեկավարությունը։

> «Առաջ,—ասում է Լենինը,—մեր կուսակցությունը ձևականորեն կազմակերպված ամբողջություն չէր, այլ միայն մասնավոր խմբերի գումար էր, և այդ պատճառով այդ խմբերի միջև այլ հարաբերություններ, բացի գաղափարային ներգործությունից, չէին էլ կարող լինել։ Հիմա մենք դարձել ենք կազմակերպված կուսակցություն, իսկ այս էլ հենց նշանակում է իշխանության ստեղծում, գաղափարների հեղինակության վերածում իշխանության հեղինակության, կու-

ակցության ավելի ստորին ինստանցիաների ենթարկվելը ավելի բարձր ինստանցիաներին» (տե՛ս նույն տեղը, էջ 291)։

Փոքրամասնությունը մեծամասնությանը ենթարկելու սկզբունքը, կուսակցական աշխատանքը կենտրոնից ղեկավարելու սկզբունքը հաճախ առաջ է բերում անկայուն տարրերի հարձակումներ, մեղադրանքներ «բյուրոկրատիզմի», «ֆորմալիզմի» մեջ և այլն։ Հազիվ թե հարկ կա ապացուցելու, որ կուսակցության՝ որպես ամբողջի՝ պլանաչափ աշխատանքը և բանվոր դասակարգի պայքարի ղեկավարությունն անհնարին կլինեին առանց այդ սկզբունքների կիրառման։ Լենինիզմը կազմակերպական հարցում այդ սկզբունքների անշեղ կիրառումն է։ Այդ սկզբունքների դեմ պայքարելը Լենինն անվանում է «ռուսական նիհիլիզմ» և «աղայական անարխիզմ»,—մի բան, որը ծաղրվելու և դեն շպրտվելու յե արժանի։

Ահա թե ինչ է ասում Լենինն այդ անկայուն տարրերի մասին իր «Մի քայլ առաջ» գրքում.

«Այս աղայական անարխիզմն առանձնապես ռուսական նիհիլիստին է հատուկ։ Կուսակցական կազմակերպությունը նրան թվում է հրեշավոր «ֆաբրիկա». մասի ենթարկումը ամբողջին և փոքրամասնության ենթարկումը մեծամասնությանը նրան պատկերանում է որպես «ճորտացում»... աշխատանքի բաժանումը կենտրոնի ղեկավարությամբ՝ առաջ է բերում նրա տրագիկոմիկ վայնասունն ընդդեմ այն բանի, թե մարդկանց «անիվների և պտուտակների» յեն վերածում..., կուսակցության կազմակերպական կանոնադրության մասին հիշատակությունն անգամ առաջ է բերում արհամարհական ծամածռություններ և արհամարհական... նկատողություն, թե՝ կարելի կլիներ ընավ առանց կանոնադրության էլ»... «Թվում է, թե պարզ է, որ տխրահռչակ բյուրոկրատիզմի վերաբերյալ ճիչերը պարզ քողարկումն են կենտրոնների անձնակազմի նկատմամբ յեղած դժգոհության, թզենու տերև են... Դու բյուրոկրատ ես, որովհետև դու նշանակված ես համագումարի կողմից ո՛չ թե իմ կամքի համաձայն, այլ նրան հակառակ. դու ֆորմալիստ ես, որովհետև դու հենվում ես համագումարի ֆորմալ վճիռների վրա, և ոչ թե իմ համաձայնության վրա. դու գործում ես կոպիտ-մեխանիկորեն, որովհետև հենվում ես կուսակցական համագումարի «մեխանիկական» մեծամասնության վրա և հաշվի չես առնում կոոպտացված լինելու իմ ցանկությունը. դու ինքնակալ ես, որովհետև չես ցանկանում իշխանությունը հանձնել հին տաքուկ կոմպանիայի ձեռքը»*) (տե՛ս հ. VI, էջ 310 և 287)։

*) Խոսքը վերաբերում է II համագումարի վճիռներին չենթարկվող և Լենինին «բյուրոկրատիզմի» մեջ մեղադրող՝ Աքսելրոդի, Մարտովի, Պոտրեսովի և այլոց «կոմպանիային»։ Ի. Ստ.։

3) Կուսակցությունը որպես պրոլետարիատի դասակարգային կազմակերպության բարձրագույն ձև։ Կուսակցությունը բանվոր դասակարգի կազմակերպված ջոկատն է։ Բայց կուսակցությունը բանվոր դասակարգի միակ կազմակերպությունը չէ։ Պրոլետարիատն ունի էլի մի ամբողջ շարք ուրիշ կազմակերպություններ, առանց որոնց նա չի կարող ճիշտ պայքարել կապիտալի դեմ. դրանք են՝ արհեստակցական միությունները, կոոպերատիվները, ֆաբրիկա-գործարանային կազմակերպությունները, պառլամենտական ֆրակցիաները, կանանց անկուսակցական միավորումները, մամուլը, կուլտուր-լուսավորական կազմակերպությունները, յերիտասարդության միությունները, հեղափոխական – մարտական կազմակերպությունները (բացահայտ հեղափոխական յելույթների ժամանակ), պատգամավորների խորհուրդները՝ որպես կազմակերպության պետական ձև (յեթե պրոլետարիատն իշխանության գլուխ է անցած) և այլն։ Այս կազմակերպությունների հսկայական մեծամասնությունն անկուսակցական կազմակերպություններ են և նրանց միայն մի որոշ մասն է ուղղակի հարում կուսակցությանը և կազմում նրա ճյուղավորումը։ Այս բոլոր կազմակերպությունները որոշ պայմաններում բացարձակապես անհրաժեշտ են բանվոր դասակարգին, որովհետև առանց դրանց անհնար է ամրապնդել պրոլետարիատի դասակարգային դիրքերը պայքարի բազմազան վոլորտներում, որովհետև առանց դրանց անհնար է կոփել պրոլետարիատը որպես մի ուժ, որը կոչված է բուրժուական կարգերը փոխարինելու սոցիալիստական կարգերով։ Բայց ի՞նչպես իրականացնել միասնական ղեկավարությունը կազմակերպությունների այսպիսի առատության դեպքում։ Ո՞րն է այն յերաշխիքը, որ բազմաթիվ կազմակերպությունների առկայությունն առաջ չի բերի ղեկավարության տարաղարկ։ Կարող են ասել, որ այդ կազմակերպություններից ամեն մեկն աշխատում է իր առանձնացած վոլորտում, և որ նրանք այդ պատճառով չեն կարող միմյանց խանգարել։ Այդ, իհարկե, ճիշտ է։ Բայց ճիշտ է և այն, որ

այդ բոլոր կազմակերպություններն աշխատանքը պետք է կատարեն մեկ ուղղությամբ, քանի վոր նրանք սպասարկում են մի դասակարգի, պրոլետարների դասակարգին: Հարց է ծագում՝ ո՞վ է վորոշում այն գիծը, այն ընդհանուր ուղղությունը, վորով այդ բոլոր կազմակերպությունները պետք է կատարեն իրենց աշխատանքը: Վո՞րն է այն կենտրոնական կազմակերպությունը, վորը շնորհիվ անհրաժեշտ փորձի առկայության վո՛չ միայն ընդունակ է մշակելու այդ ընդհանուր գիծը, այլև հնարավորություն ունի՝ դրա համար բավական հեղինակություն ունենալու շնորհիվ՝ դրդելու այդ բոլոր կազմակերպություններին, վորպեսզի կենսագործեն այդ գիծը՝ ղեկավարության մեջ միասնության հասնելու և ընդհատումների հնարավորությունը վերացնելու համար:

Այդպիսի կազմակերպություն հանդիսանում է պրոլետարիատի կուսակցությունը:

Կուսակցությունը դրա համար ունի բոլոր տվյալները, նախ՝ այն պատճառով, վոր կուսակցությունը հավաքակայանն է դասակարգի լավագույն տարրերի, վորոնք ուղղակի կապեր ունեն պրոլետարիատի անկուսակցական կազմակերպությունների հետ և շատ հաճախ ղեկավարում են նրանց. յերկրորդ՝ այն պատճառով, վոր կուսակցությունը, վորպես բանվոր դասակարգի լավագույն մարդկանց հավաքակայան, լավագույն դպրոցն է՝ բանվոր դասակարգի այնպիսի լիդերներ պատրաստելու համար, վորոնք ընդունակ են ղեկավարելու իրենց դասակարգի կազմակերպության բոլոր ձևերը. յերրորդ՝ այն պատճառով, վոր կուսակցությունը, վորպես բանվոր դասակարգի լիդերների լավագույն դպրոց, իր փորձով ու հեղինակությամբ միակ կազմակերպությունն է, վորն ընդունակ է կենտրոնացնելու պրոլետարիատի պայքարի ղեկավարությունը և, այդպիսով, բանվոր դասակարգի բոլոր ու ամեն տեսակի անկուսակցական կազմակերպությունները վերածելու կուսակցությունը դասակարգի հետ միացնող սպասարկու որգանների և շարժահաղորդ փոկերի: Կուսակցությունը պրոլետարիատի դասակարգային կազմակերպության բարձրագույն ձևն է:

Այդ, իհարկե, չի նշանակում, թե անկուսակցական կազմակերպությունները,— արհմիությունները, կոոպերատիվները և

այլն,—պետք է ձևականորեն յենթարկված լինեն կուսակցական ղեկավարությանը: Խոսքն այն մասին է միայն, վոր կուսակցության անդամները, վորոնք մտնում են այդ կազմակերպությունների կազմի մեջ, վորպես անկասկած ազդեցիկ մարդիկ, ձեռք առնեն համոզելու բոլոր միջոցները, վորպեսզի անկուսակցական կազմակերպություններն իրենց աշխատանքում մերձենան պրոլետարիատի կուսակցությանը և հոժարակամ ընդունեն նրա քաղաքական ղեկավարությունը:

Ահա թե ինչու Լենինն ասում է, վոր «կուսակցությունը պրոլետարների դասակարգային միավորման բարձրագույն ձևն է», վորի քաղաքական ղեկավարությունը պետք է տարածվի պրոլետարիատի կազմակերպության մյուս բոլոր ձևերի վրա (տե՛ս հ. XXV, եջ 195):

Ահա թե ինչու անկուսակցական կազմակերպությունների «անկախության» և «չեզոքության» ոպորտունիստական թեորիան, վորը անկախ պառլամենտականներ և կուսակցությունից կտրված մամուլի գործիչներ, նեղճակատ պրոֆեսիոնալիստներ և քաղքենիացած կոոպերատորներ է ծնում—բոլորովին անհամատեղելի յե լենինիզմի թեորիայի և պրակտիկայի հետ:

4) Կուսակցությունը վորպես պրոլետարիատի դիկտատուրայի գործիք: Կուսակցությունը պրոլետարիատի կազմակերպության բարձրագույն ձևն է: Կուսակցությունը հիմնական ղեկավար սկզբունքն է պրոլետարների դասակարգի ներսում և այդ դասակարգի կազմակերպությունների մեջ: Բայց դրանից բնավ չի հետևում, թե կուսակցությունը կարելի յե դիտել վորպես ինքնանպատակ, վորպես ինքնաբավ ուժ: Կուսակցությունը պրոլետարների դասակարգային միավորման միայն բարձրագույն ձևը չե, դրա հետ մեկտեղ նա մի գործիք է պրոլետարիատի ձեռքին՝ դիկտատուրա նվաճելու համար՝ յերբ այն դեռ նվաճված չե, դիկտատուրան ամրապնդելու և ընդարձակելու համար՝ յերբ այն արդեն նվաճված է: Կուսակցությունը չեր կարողանա այնքան բարձրանալ իր նշանակությամբ, և չեր կարողանա ծածկել (ПОКРЫТЬ) պրոլետարիատի կազմակերպության բոլոր մնացած ձևերը, յեթե պրոլետարիատը կանգնած չլիներ իշխանության հարցի առաջ, յեթե իմպերիալիզմի պայմանները, պատերազմների անխուսափելիությունը, ճգնաժամի առկայու-

թյունը չպահանջեյին համակենտրոնացնել պրոլետարիատի բոլոր ուժերը մի կետում, կենտրոնացնել հեղափոխական շարժման բոլոր թելերը մի տեղում՝ բուրժուազիային տապալելու և պրոլետարիատի դիկտատուրա նվաճելու համար։ Կուսակցությունը պրոլետարիատին հարկավոր ե ամենից առաջ վորպես նրա մարտական շտաբը, վորն անհրաժեշտ ե իշխանությունը հաջող կերպով գրավելու համար։ Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր առանց պրոլետարիատի մասսայական կազմակերպությունների իր շուրջը հավաքելու և պայքարի ընթացքում ամբողջ շարժման ղեկավարությունը կենտրոնացնելու ընդունակ կուսակցության՝ պրոլետարիատը Ռուսաստանում չեր կարողանա իրականացնել իր հեղափոխական դիկտատուրան։

Բայց կուսակցությունը հարկավոր ե պրոլետարիատին վոչ միայն դիկտատուրա նվաճելու համար,—կուսակցությունը նրան ե՛լ ավելի հարկավոր ե նրա համար, վոր դիկտատուրան իր ձեռքում պահի, ամրացնի ու այն ընդարձակի սոցիալիզմի լիակատար հաղթության շահի համար։

«Անշուշտ,—ասում ե Լենինը,—հիմա արդեն համարյա ամեն վոք տեսնում ե, վոր բոլշեվիկներն իշխանության գլուխ մնալ չեյին կարողանա վո՛չ թե յերկու և կես տարի, այլև յերկու և կես ամիս, առանց խստագույն, իսկապես յերկաթյա կարգապահության մեր կուսակցության մեջ, յեթե չլիներ ամենալիակատար և անձնվեր աջակցությունը, վոր ցույց տվեց նրան բանվոր դասակարգի ամբողջ մասսայի, այսինքն այն ամենի կողմից, ինչ նրա մեջ խորհող ե, ազնիվ, անձնվեր, ազդեցիկ, ընդունակ իր հետևից տանելու կամ հրապուրելու հետամնաց խավերին» (տե՛ս հ. XXV, եջ 173)։

Բայց ի՞նչ ե նշանակում «իր ձեռքում պահել» և «ընդարձակել» դիկտատուրան։ Այդ նշանակում ե՝ պրոլետարների միլիոնավոր մասսաների մեջ կարգապահության և կազմակերպվածության վոգի մտցնել. այդ նշանակում ե՝ պրոլետարական մասսաներում ստեղծել ամուր կապ և պատվար մանր-բուրժուական տարերքի և մանր-բուրժուական սովորությունների խարխլող ազդեցությունների դեմ. այդ նշանակում ե՝ ամրապնդել պրոլետարների կազմակերպչական աշխատանքը մանր-բուրժուական խավերի վերադաստիարակման և վերափոխման գործում. այդ նշանակում ե՝ ոգնել պրոլետարական մաս-

սաներին, վորպեսզի դաստիարակեն իրենց վորպես մի ուժ, վորն ընդունակ ե վոչնչացնելու դասակարգերն ու նախապատրաստելու պայմաններ՝ սոցիալիստական արտադրություն կազմակերպելու համար։ Բայց այդ ամենն անհնար ե անել առանց իր համախմբվածությամբ ու կարգապահությամբ ուժեղ կուսակցության։

«Պրոլետարիատի դիկտատուրան,—ասում ե Լենինը,—համառ պայքար ե՝ արյունոտ և անարյուն, բռնի և խաղաղ, ռազմական և տնտեսական, մանկավարժական և ադմինիստրատորական պայքար հին հասարակության ուժերի և տրադիցիաների դեմ։ Միլիոնավորների և տասնյակ միլիոնավորների սովորության ուժը ամենասարսափելի ուժն ե։ Առանց պայքարում կոփված, յերկաթյա կուսակցության, առանց այնպիսի մի կուսակցության, վոր վայելում ե այն ամենի վստահությունը, ինչ վոր ազնիվ ե տվյալ դասակարգում, առանց այնպիսի կուսակցության, վոր կարողանում ե հետևել մասսայի տրամադրությանը և ազդել նրա վրա,—անհնարին ե հաջողությամբ մղել այդպիսի պայքարը» (տե՛ս հ. XXV, եջ 191)։

Կուսակցությունը պրոլետարիատին հարկավոր ե դիկտատուրա նվաճելու և իր ձեռքում պահելու համար։ Կուսակցությունը պրոլետարիատի դիկտատուրայի գործիքն ե։

Բայց սրանից հետևում ե, վոր դասակարգերի անհետանալով, պրոլետարիատի դիկտատուրայի մահանալով պետք ե մահանա նաև կուսակցությունը։

5) Կուսակցությունը վորպես կամքի միասնություն, վորն անհամատեղելի յե ֆրակցիաների գոյության հետ։ Պրոլետարիատի դիկտատուրա նվաճելը և պահելն անհնար ե առանց իր համախմբվածությամբ և յերկաթյա կարգապահությամբ ուժեղ կուսակցության։ Բայց յերկաթյա կարգապահությունը կուսակցության մեջ աներևակայելի յե առանց կուսակցության բոլոր անդամների կամքի միասնության, առանց նրանց գործողության լիակատար և անպայմանական միասնության։ Այս, իհարկե, չի նշանակում, թե հենց սրանով ել բացառվում ե կարծիքների պայքարի հնարավորությունը կուսակցության ներսում։ Ընդհակառակը, յերկաթյա կարգապահությունը վո՛չ թե բացառում, այլ յենթադրում ե քննադատություն ու կարծիքների պայքար կուսակցության ներսում։ Դա առավել ևս չի նշանակում, թե կարգապահությունը պետք ե «կույր» լինի։

ընդհակառակը, յերկաթյա կարգապահությունը չի բացառում, այլ յենթադրում է յենթարկման գիտակցականությունն ու կամավորությունը, քանի վոր միայն գիտակցական կարգապահությունը կարող է լինել իսկապես յերկաթյա կարգապահություն։ Բայց այն բանից հետո, յերբ կարծիքների պայքարն ավարտված է, քննադատությունն սպառված ու վճիռն ընդունված, կուսակցության բոլոր անդամների կամքի միասնականությունը և գործողության միասնականությունը այն անհրաժեշտ պայմանն է, առանց վորի աններևակայելի յեն թե՛ միասնական կուսակցությունը, թե՛ յերկաթյա կարգապահությունը կուսակցության մեջ։

«Սրված քաղաքացիական պատերազմի այժմյան դարաշրջանում,— ասում է Լենինը,—կոմունիստական կուսակցությունն իր պարտքը կկարողանա կատարել միայն այն դեպքում, յեթե նա կազմակերպված լինի ամենակենտրոնացված ձևով, յեթե նրանում իշխի զինվորական կարգապահությանը սահմանակցող յերկաթյա կարգապահություն, և յեթե նրա կուսակցական կենտրոնը լինի՝ կուսակցության բոլոր անդամների ընդհանուր վստահությունը վայելող, լայն լիազորություններով օժտված տիրական հեղինակավոր օրգան» (տե՛ս «Կոմինտերնի մեջ ընդունվելու պայմանները»)։

Այսպես է դրված կուսակցության կարգապահության հարցը՝ դիկտատուրան նվաճելուց առաջ մղվող պայքարի պայմաններում։

Նույնը, բայց է՛լ ավելի մեծ չափով, պետք է ասել կուսակցական կարգապահության մասին դիկտատուրան նվաճելուց հետո։

«Ով թեկուզ վորևէ չափով թուլացնում է,—ասում է Լենինը,— պրոլետարիատի կուսակցության յերկաթյա կարգապահությունը (մանավանդ նրա դիկտատուրայի ժամանակ), նա փաստորեն օգնում է բուրժուազիային պրոլետարիատի դեմ» (տե՛ս հ. XXV, եջ 191)։

Բայց սրանից հետևում է, վոր ֆրակցիաների գոյությունն անհամատեղելի յե թե՛ կուսակցության միասնականության, թե՛ նրա յերկաթյա կարգապահության հետ։ Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր ֆրակցիաների առկայությունը տանում է դեպի միքանի կենտրոնի գոյություն, իսկ միքանի կենտրոնի գոյությունը նշանակում է ընդհանուր կենտրոնի բացակայություն կուսակցության մեջ, միասնական կամքի տրոհում, կարգապահության թուլացում ու քայքայում, դիկտատուրայի թուլացում ու քայքայում։ Իհարկե, II Ինտերնացիոնալի կուսակցությունները, վորոնք կռվում են պրոլետարիատի դիկտատուրայի դեմ և չեն ցանկանում պրոլետարներին առաջնորդել դեպի իշխանություն, կարող են թույլ տալ իրենց այնպիսի լիբերալիզմ, ինչպիսին ֆրակցիաների ազատությունն է, քանի վոր նրանք յերկաթյա կարգապահության կարիք բնավ չունեն։ Բայց Կոմունիստական Ինտերնացիոնալի կուսակցությունները, վորոնք իրենց աշխատանքը կառուցում են պրոլետարիատի դիկտատուրայի նվաճման և ամրապնդման խնդիրների հիմքի վրա, չեն կարող թույլ տալ վո՛չ «լիբերալիզմ», վո՛չ էլ ֆրակցիաների ազատություն։ Կուսակցությունը կամքի միասնականություն է, վորը բացառում է ամեն մի ֆրակցիոնություն և իշխանության տրոհում կուսակցության մեջ։

Այստեղից՝ Լենինի պարզաբանումն այն մասին, վոր՝ «ֆրակցիոնությունը վտանգավոր է կուսակցության միասնականության և պրոլետարիատի ավանգարդի կամքի միասնականության կենսագործման տեսակետից, վորպես պրոլետարիատի դիկտատուրայի հաջողության հիմնական պայմանի»,—պարզաբանում, վորն ամրապնդված է մեր կուսակցության X համագումարի «Կուսակցության միասնականության մասին» հատուկ բանաձևում։

Այստեղից՝ Լենինի պահանջը «ամեն մի ֆրակցիոնություն լիովին վոչնչացնելու» մասին և «այս կամ այն պլատֆորմի վրա կազմված առանց բացառության բոլոր խմբերն անհապաղ ցրելու» մասին՝ «կուսակցությունից անպայման և անհապաղ վտարելու» սպառնալիքով (տե՛ս «Կուսակցության միասնականության մասին» բանաձևը)։

6) Կուսակցությունն ամրանում է նրանով, վոր իրեն մաքրում է օպորտունիստական տարրերից։ Կուսակցության մեջ ֆրակցիոնության աղբյուր են հանդիսանում նրա օպորտունիստական տարրերը։ Պրոլետարիատը փակ (ЗАМКНУТЫЙ) դասակարգ չէ։ Դեպի պրոլետարիատն անդադար հոսում են գյուղացիներից, քաղքենիներից, ինտելիգենցիայից յեկած մարդիկ, վորոնց պրոլետարացրել է կապիտալիզմի զարգացումը։ Միա-

ժամանակ տեղի յե ունենում պրոլետարիատի վերնախավերի քայքայման պրոցեսը,—վերնախավեր, վորոնք գլխավորապես բաղկացած են բուրժուազիայի կողմից գաղութային գերշահույթի հաշվին կերակրվող պրոֆեսիոնալիստներից ու պառլամենտականներից: Իրենց կենցաղավարությամբ, վաստակների չափերով, իրենց ամբողջ աշխարհայացքով միանգամայն քաղքենիական «բուրժուականացած բանվորների»,—ասում եր Լենինը,—կամ «բանվորական արիստոկրատիայի այդ խավը» II Ինտերնացիոնալի գլխավոր հենարանն ե, իսկ մեր որերում՝ բուրժուազիայի գլխավոր սոցիալական (վոչ ռազմական) հենարանը: Վորովհետև դրանք բուրժուազիայի իսկական գործակալներն են բանվորական շարժման մեջ, կապիտալիստների դասակարգի բանվոր գործակատարները, ռեֆորմիզմի և շովինիզմի իսկական կենսագործողները» (տե՛ս հ. XIX, եջ 77):

Այս բոլոր մանր-բուրժուական խմբերն այս կամ այն կերպ թափանցում են կուսակցության մեջ, այնտեղ մտցնելով տատանման ու ոպորտունիզմի վոգի, քայքայման ու անհամոզվածության վոգի: Հենց նրանք են, գլխավորապես, ֆրակցիոնության և քայքայման աղբյուրը, կազմալուծման և կուսակցությունը ներսից պայթեցնելու աղբյուրը: Պատերազմել իմպերիալիզմի դեմ՝ թիկունքում այդպիսի «դաշնակիցներ» ունենալով,—նշանակում ե ընկնել այնպիսի մարդկանց դրության մեջ, վորոնք գնդակոծվում են յերկու կողմից՝ թե՛ ճակատից, թե՛ թիկունքից: Այդ պատճառով անողոք պայքարն այդպիսի տարրերի դեմ, նրանց արտաքսումը կուսակցությունից՝ իմպերիալիզմի դեմ հաջողությամբ կռվելու նախապայմանն ե:

Կուսակցության ներսում գաղափարական պայքար մղելու միջոցով ոպորտունիստական տարրերին «հաղթահարելու» թեորիան, այդ տարրերին մի կուսակցության շրջանակներում «վերացնելու» թեորիան մի փտած և վտանգավոր թեորիա յե, վոր սպառնում ե դատապարտել կուսակցությունը կաթվածի և խրոնիկական տկարության, սպառնում ե կուսակցությունը դարձնել ոպորտունիզմին կերակուր, սպառնում ե պրոլետարիատն առանց հեղափոխական կուսակցության թողնել, սպառնում ե զրկել գլխավոր զենքից պրոլետարիատին՝ իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում: Մեր կուսակցությունը չեր կարողանա ճա-

նապարհ դուրս գալ, նա չեր կարողանա իշխանություն վերցնել և պրոլետարիատի դիկտատուրա կազմակերպել, նա չեր կարողանա քաղաքացիական պատերազմից հաղթող դուրս գալ, յեթե իր շարքերում ունենար Մարտովներ ու Դաներ, Պոտրեսովներ ու Աքսելրոդներ: Յեթե մեր կուսակցությանը հաջողվեց ստեղծել իր մեջ ներքին միասնականություն և իր շարքերի չտեսնըված համախմբվածություն, ապա այդ, ամենից առաջ, այն պատճառով ե, վոր նա կարողացավ ժամանակին մաքրվել ոպորտունիզմի աղտեղությունից, նա կարողացավ կուսակցությունից դուրս վռնդել լիկվիդատորներին ու մենշևիկներին: Պրոլետարական կուսակցությունների զարգացման և ամրապնդման ճանապարհն անցնում ե այդ կուսակցություններն ոպորտունիստներից ու ռեֆորմիստներից, սոցիալ-իմպերիալիստներից ու սոցիալ-շովինիստներից, սոցիալ-հայրենասերներից ու սոցիալ-պացիֆիստներից մաքրվելու բովով: Կուսակցությունն ամրանում ե նրանով, վոր մաքրվում ե ոպորտունիստական տարրերից:

«Իր շարքերում ռեֆորմիստներ, մենշևիկներ ունենալով,—ասում ե Լենինը,—պրոլետարական հեղափոխության մեջ հաղթել չի կարելի, այդ հեղափոխությունը պաշտպանել ու պահպանել չի կարելի: Դա սկզբունքային ե ակներևորեն: Դա ակնրախ կերպով հաստատված ե թե՛ Ռուսաստանի, թե՛ Հունգարիայի փորձով... Ռուսաստանում շատ անգամ են յեղել դժվար դրություններ, յերբ խորհրդային ռեժիմը հաստատապես կտապալվեր, յեթե մենշևիկները, ռեֆորմիստները, մանր-բուրժուական դեմոկրատները մնացած լինեյին մեր կուսակցության ներսում... Իտալիայում, վորտեղ, ինչպես բոլորն ել ընդունում են, գործն ընթանում ե դեպի պրոլետարիատի վճռական մարտերը բուրժուազիայի դեմ՝ պետական իշխանությանը տիրանալու համար: Այդպիսի մոմենտին վո՛չ միայն անպայման անհրաժեշտ ե հեռացնել կուսակցությունից մենշևիկներին, ռեֆորմիստներին, տուրատիականներին, այլև կարող ե նույնիսկ ոգտակար լինել՝ տատանվելու ընդունակ և ռեֆորմիստների հետ «միասնականություն» ստեղծելու կողմը տատանումներ հանդես բերող հիանալի կոմունիստներին հեռացնելը, նրանց հեռացնելն ամեն տեսակ պատասխանատու պոստերից... Հեղափոխության նախորեյին և նրա հաղթանակի համար մղվող ամենակատաղի պայքարի մոմենտներին ամենափոքրիկ տատանումները կուսակցության ներսում ընդունակ են կործանել ամեն ինչ, վիժեցնելու հեղափոխությունը, խլելու իշխանությունը պրոլետարիատի ձեռքից, վորովհետև այդ իշխանությունը դեռ ամուր չե, վորովհետև գրոհը նրա վրա դեռ չափազանց ուժեղ ե: Յեթե տատանվող առաջնորդները հեռանում

են գործից այդպիսի ժամանակ, դա վո՛չ թե թուլացնում, այլ ուժեղացնում է թե՛ կուսակցությունը, թե՛ բանվորական շարժումը, թե՛ հեղափոխությունը» (տե՛ս. հ. XXV, էջ 462—464)։

IX. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՈՃԸ

Խոսքը գրական վոճի մասին չէ։ Ես նկատի ունեմ աշխատանքի վոճը, այն հատուկն ու յուրօրինակը լենինիզմի պրակտիկայում, վորը լենինիստ-աշխատողի հատուկ տիպն է ստեղծում։ Լենինիզմը թեորիական և պրակտիկ դպրոց է, վորը կուսակցական և պետական աշխատավորի հատուկ տիպ է մշակում, աշխատանքի հատուկ, լենինյան վոճ է ստեղծում։ Վորո՞նք են այդ վոճի բնորոշ գծերը։ Վորո՞նք են նրա առանձնահատկությունները։

Այդ առանձնահատկությունները յերկուսն են. ա) ռուսական հեղափոխական թափը և բ) ամերիկյան գործիմացությունը։ Լենինիզմի վոճն այս յերկու առանձնահատկությունների միացումն է կուսակցական և պետական աշխատանքում։

Ռուսական հեղափոխական թափը հակաթույն է ընդդեմ անշարժության, ռուտինայի, պահպանողականության, մտքի լճացման, ստրկական վերաբերմունքի դեպի պապենական տրադիցիաները։ Ռուսական հեղափոխական թափը այն կենարար ուժն է, վոր արթնացնում, առաջ է շարժում միտքը, ջարդում է անցյալը, հեռանկար է տալիս։ Առանց նրան հնարավոր չէ վոչ մի շարժում դեպի առաջ։ Բայց նա ունի բոլոր շանսերը գործնականում այլասերվելու և վերածվելու դատարկ «հեղափոխական» մանիլովշչինայի, յեթե այն չմիացնենք աշխատանքի ամերիկյան գործիմացության հետ։ Այդպիսի այլասերման օրինակներ—ինչքան կուզեք։ Ո՞ւմ հայտնի չէ «հեղափոխական» հորինարանության (сочинительство) և «հեղափոխական» պլանստեղծության հիվանդությունը, վորի աղբյուրը հավատն է դեպի դեկրետի ուժը,—դեկրետ, վորը կարող է ամեն ինչ սարքել և ամեն ինչ վերափոխել։ Ռուսական գրողներից մեկը՝ Ի. Երենբուրգը՝ «Ուկոմչել» (Усовершенствованный коммунистический человек — «Կատարելագործված կոմունիստական մարդ») պատմվածքում պատկերել է այդ հիվանդությամբ բռնված «բոլշևիկի» տիպը, մի բոլշևիկի, վորը նպատակ է դրել ուրվագրելու իդեալականորեն կատարելագործված մարդու սխեման և... «խեղդվել է» այդ «աշխատանքում»։ Պատմվածքում մեծ չափազանցություն կա, բայց վոր այն ճիշտ է հասկանում հիվանդությունը—դա տարակույսի յենթակա չէ։ Բայց վոչ վոք, կարծեմ, այդպիսի հիվանդներին չի ծաղրել այնպես չարախնդորեն ու անողոքաբար, ինչպես Լենինը։ «Կոմունիստական սնապարծություն»—այսպիսի քամահրանքով եր վերաբերվում նա հորինարանության և դեկրետաստեղծության այդ հիվանդագին հավատին։

«Կոմունիստական սնապարծությունը—այն է նշանակում,—ասում է Լենինը,—վոր կոմունիստական կուսակցության մեջ գտնվող և դեռևս այնտեղից չզտված մարդը յերևակայում է, թե իր բոլոր խնդիրները կարող է լուծել կոմունիստական դեկրետումով» (տե՛ս հ. XXVII, էջ 50—51)։

«Հեղափոխական» պոռոտախոսությանը Լենինը սովորաբար հակադրում է հասարակ և առօրյա գործեր, դրանով ընդգծելով, վոր «հեղափոխական» հորինարանությունը հակառակ է իսկական լենինիզմի թե՛ վոգուն, թե՛ տառին։

«Ավելի քիչ ճոխ ֆրազներ,—ասում է Լենինը,—ավելի շատ հասարակ, առօրյա գործ... Ավելի քիչ քաղաքական աղմկարարություն, ավելի շատ ուշադրություն կոմունիստական շինարարության ամենահասարակ, բայց կենդանի... փաստերին...» (տե՛ս հ. XXIV, էջ 334 և 335)։

Ամերիկյան գործիմացությունը, ընդհակառակը, հակաթույն է «հեղափոխական» մանիլովշչինայի և ֆանտաստիկ հորինարանության դեմ։ Ամերիկյան գործիմացությունը՝ դա այն անսանձահարելի ուժն է, վորը չունի և չի ճանաչում արգելքներ, վորն իր գործիմաց հաստատակամությամբ վողողում-տանում է բոլոր և ամեն տեսակի խոչընդոտները, վորը չի կարող վախճանի չհասցնել մեկ անգամ սկսած գործը, յեթե այն մինչև իսկ փոքր գործ է, և առանց վորի աներևակայելի յե լուրջ շինարարական աշխատանքը։ Բայց ամերիկյան գործիմացությունն ունի այլասերվելու և նեղմիտ ու անսկզբունք գործամոլության վերածվելու բոլոր շանսերը, յեթե չմիացվի ռուսական հեղափոխական թափի հետ։ Ո՞ւմ հայտնի չէ նեղ պրակտիցիզ-

մի ու անսկզբունք գործամոլության հիվանդությունը, վորը «բոլշևիկներից» վոմանց հաճախ հասցնում ե այլասերման և հեղափոխության գործից հեռանալուն։ Այդ յուրորինակ հիվանդությունն եր արտացոլումն ե գտել Բ. Պիլնյակի «Голый год» («Մերկ տարի») պատմվածքում, վորտեղ պատկերված են ռուսական «բոլշևիկների» տիպեր,— բոլշևիկներ, վորոնք լի յեն կամքով ու պրակտիկ վճռականությամբ, «фукцирующих» весьма «энегрично»*), բայց զուրկ են հեռանկարից, չգիտեն «ինչն ինչի ե վերաբերում» և, այդ պատճառով, շեղվում են հեղափոխական աշխատանքի ճանապարհից։ Վոչ վոք այնպես կծու չեր ծաղրում այդ գործամոլական հիվանդությունը, ինչպես Լենինը։ «Նեղճակատ պրակտիցիզմ», «անգլուխ գործամոլություն» — այսպես եր քամահրում Լենինն այդ հիվանդությունը։ Նա սովորաբար դրան հակադրում եր կենդանի հեղափոխական գործը և հեղափոխական հեռանկարների անհրաժեշտությունը մեր ամենորյա աշխատանքի բոլոր գործերում, հենց դրանով ընդգծելով, վոր անսկզբունք գործամոլությունը նույնքան հակառակ ե իսկական լենինիզմին, վորքան հակառակ ե «հեղափոխական» հորինածությունը։

Ռուսական հեղափոխական թափի միացումն ամերիկյան գործիմացության հետ—այս ե լենինիզմի եյությունը կուսակցական և պետական աշխատանքի մեջ։

Միայն այսպիսի միացումն ե մեզ տալիս լենինիստ-աշխատողի ամբողջացած տիպը, լենինիզմի վոճն աշխատանքի մեջ։

---

*) Պիլնյակի պատմվածքի հերոսն աղավաղում ե բառերը՝ фукцирующих բառի փոխարեն պետք ե լիներ функционирующих, энегрично բառի փոխարեն պետք ե լիներ энергично,—արտահայտությունը նշանակում ե խիստ յեռանդուն կերպով գործող։ Հայ. հրատ. խմբ.։

ԼԵՆԻՆԻԶՄԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Նվիրում եմ Համ Կ (բ) Կ
Լենինգրադի կազմակերպությանը։
Ի. ՍՏԱԼԻՆ

I. ԼԵՆԻՆԻԶՄԻ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ

«Լենինիզմի հիմունքների մասին» բրոշյուրում տրված ե լենինիզմի հայտնի բնորոշումը, վորն, ըստ յերևույթին, քաղաքացիության իրավունք ե ստացել։ Նա ասում ե.

> «Լենինիզմն իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխության դարաշրջանի մարքսիզմն ե։ Ավելի ճշգրիտ՝ լենինիզմը պրոլետարական հեղափոխության թեորիան և տակտիկան ե ընդհանրապես, պրոլետարիատի դիկտատուրայի թեորիան և տակտիկան առանձնապես»։

Ճի՞շտ ե արդյոք այս բնորոշումը։

Յես կարծում եմ, վոր ճիշտ ե։ Նա ճիշտ ե, նախ՝ այն պատճառով, վոր ուղիղ ե մատնանշում լենինիզմի պատմական արմատները՝ բնութագրելով այն վորպես իմպերիալիզմի դարաշրջանի մարքսիզմ, ի հակակշիռ Լենինի քննադատներից վոմանց, վորոնք սխալ կերպով կարծում են, թե լենինիզմը ծագել ե իմպերիալիստական պատերազմից հետո։ Յերկրորդ՝ նա ճիշտ ե այն պատճառով, վոր ուղիղ ե նշում լենինիզմի միջազգային բնույթը, ի հակակշիռ սոցիալ-դեմոկրատիայի, վորը լենինիզմը կիրառելի յե համարում միայն ազգային-ռուսական պայմաններում։ Յերրորդ՝ նա ճիշտ ե այն պատճառով, վոր ուղիղ ե նշում լենինիզմի որգանական կապը Մարքսի ուսմունքի հետ՝ բնութագրելով այն վորպես իմպերիալիզմի դարաշրջանի մարքսիզմ, ի հակակշիռ լենինիզմի քննադատներից վոմանց, վորոնք այն համարում են վո՛չ թե մարքսիզմի հետագա զարգացում, այլ միայն մարքսիզմի վերականգնումն ու նրա կիրառումը ռուսական իրականության նկատմամբ։

Այս ամենը, կարծես թե, կարոտ չէ հատուկ մեկնաբանությունների։

Բայց և այնպես, բանից դուրս է գալիս, մեր կուսակցության մեջ կան ընկերներ, վորոնք անհրաժեշտ են համարում լենինիզմը բնորոշել փոքր ինչ այլ կերպ։ Ա՛յ, օրինակ, ընկ. Զինովևը կարծում է, վոր

«Լենինիզմն իմպերիալիստական պատերազմների և համաշխարհային հեղափոխության դարաշրջանի մարքսիզմն է,—այն հեղափոխության, վոր անմիջականորեն սկսվել է մի յերկրում, վորտեղ գյուղացիությունը գերակշռում է»*) (տե՛ս Զինովևի «Большевизм или троцкизм» հոդվածը, «Правда» № 273, 30/XI 1924 թ.)։

Ի՞նչ կարող են նշանակել ընկ. Զինովևի ընդգծած բառերը։ Ի՞նչ է նշանակում լենինիզմի բնորոշման մեջ մտցնել Ռուսաստանի հետամնացությունը, նրա գյուղացիական բնույթը։

Այդ նշանակում է լենինիզմը միջազգային պրոլետարական ուսմունքից վերածել ռուսաստանյան ինքնատիպության արդյունքի։

Այդ նշանակում է ջուր լցնել Բաուերի և Կաուցկու ջրաղացին, վորոնք ժխտում են լենինիզմի պիտանիությունը մյուս, կապիտալիստորեն ավելի զարգացած, յերկիրների համար։

Խոսք չկա, վոր գյուղացիական հարցը Ռուսաստանի համար կարևորագույն նշանակություն ունի, վոր մեր յերկիրը գյուղացիական է։ Բայց այս փաստն ի՞նչ նշանակություն կարող է ունենալ լենինիզմի հիմունքների բնութագրման համար։ Մի՞թե լենինիզմը մշակվել է միայն Ռուսաստանի հողի վրա և Ռուսաստանի համար, և վոչ թե իմպերիալիզմի հողի վրա ու ընդհանրապես իմպերիալիստական յերկիրների համար։ Մի՞թե Լենինի այնպիսի աշխատությունները, ինչպես են՝ «Իմպերիալիզմը», «Պետությունն և հեղափոխությունը», «Պրոլետարական հեղափոխությունը և ռենեգատ Կաուցկին», ««Ձախության» մանկական հիվանդությունը» և այլն՝ նշանակություն ունեն միայն Ռուսաստանի համար և վոչ թե ընդհանրապես բոլոր իմպերիալիստական յերկիրների համար։ Մի՞թե լենինիզմը բոլոր յերկիրների հեղափոխական շարժման փորձի ընդհանրացումը չէ։ Մի՞թե լենինիզմի թեորիայի և տակտիկայի հիմունքները պիտանի չեն, պարտադիր չեն բոլոր յերկիրների պրոլետարական կուսակցությունների համար։ Մի՞թե Լենինն իրավացի չէր, յերբ ասում էր, վոր «բոլշևիզմը պիտանի յե վորպես տակտիկայի տիպար բոլորի համար»*) (տե՛ս հ. XXIII, եջ 386)։ Մի՞թե Լենինն իրավացի չէր, յերբ խոսում էր «Խորհրդային իշխանության և բոլշևիկյան թեորիայի ու տակտիկայի հիմունքների միջազգային նշանակության*) մասին» (տե՛ս հ. XXV, եջ 171—172)։ Մի՞թե, օրինակ, ճիշտ չեն Լենինի հետևյալ խոսքերը.

«Ռուսաստանում պրոլետարիատի դիկտատուրան անխուսափելիորեն պետք է տարբերվի մի քանի առանձնահատկություններով՝ համեմատած առաջավոր յերկիրների հետ, մեր յերկրի շատ մեծ հետամնացության և մանր-բուրժուականության հետևանքով։ Բայց հիմնական ուժերը—և հասարակական տնտեսության հիմնական ձևերը—Ռուսաստանում նույնն են, ինչ և ամեն մի կապիտալիստական յերկրում, այնպես վոր այդ առանձնահատկությունները կարող են վերաբերել նամենայն դեպս վոչ ամենագլխավորին»*) (տե՛ս հատ. XXIV, եջ 508)։

Բայց յեթե այս ամենն ուղիղ է, դրանից չի՞ հետևում արդյոք, վոր լենինիզմի՝ ընկ. Զինովևի տված բնորոշումը չի կարող ճիշտ ճանաչվել։

Ի՞նչպես համատեղել լենինիզմի այդ ազգային-սահմանափակ բնորոշումն ինտերնացիոնալիզմի հետ։

II. ԳԼԽԱՎՈՐԸ ԼԵՆԻՆԻԶՄԻ ՄԵՋ

«Լենինիզմի հիմունքների մասին» բրոշյուրում ասված է.

«Վոմանք կարծում են, թե լենինիզմի մեջ հիմնականը գյուղացիական հարցն է, թե լենինիզմի յելակետը գյուղացիության, նրա դերի, նրա տեսակարար կշռի հարցն է։ Այդ միանգամայն սխալ է։ Լենինիզմի մեջ հիմնական հարցը, նրա մեկնակետը վո՛չ թե գյուղացիական հարցն է, այլ պրոլետարիատի դիկտատուրայի հարցը, նրա նվաճման պայմանների, նրա ամրապնդման պայմանների հարցը։ Գյուղացիական հարցը, վորպես պրոլետարիատի դաշնակցի հարց իշխանության համար նրա մղած պայքարում, ածանցիկ հարց է»։

*) Ընդգծումն ընկ. Զինովևինն է։ Ի. Ստ.։

*) Ընդգծումն իմն է։ Ի. Ստ.։

Ճի՞շտ է արդյոք այս դրույթը։

Ես կարծում եմ, որ ճիշտ է։ Այս դրույթն ամբողջությամբ բխում է լենինիզմի բնորոշումից։ Եվ իրոք, յեթե լենինիզմը պրոլետարական հեղափոխության թեորիան և տակտիկան է, իսկ պրոլետարական հեղափոխության հիմնական բովանդակությունը հանդիսանում է պրոլետարիատի դիկտատուրան, ապա պարզ է, որ լենինիզմի մեջ գլխավորը պրոլետարիատի դիկտատուրայի հարցն է, այդ հարցի մշակումը, այդ հարցի հիմնավորումն ու կոնկրետացումը։

Այնուամենայնիվ ընկ. Զինովյեվը, ըստ յերևույթին, համաձայն չէ այս դրույթի հետ։ Իր «Լենինի հիշատակին» հոդվածում նա ասում է.

> «Գյուղացիության դերի հարցը, ինչպես յես արդեն ասացի, բոլշևիզմի, լենինիզմի հիմնական հարցն է»*) (տե՛ս «Правда», № 35, 1924 թ. փետրվարի 13)։

Ընկ. Զինովյեվի այս դրույթը, ինչպես տեսնում եք, ամբողջապես բխում է լենինիզմի անճիշտ բնորոշումից, որ տվել է ընկ. Զինովյեվը։ Այդ պատճառով դա նույնպես սխալ է, ինչպես որ սխալ է նրա կողմից տրված՝ լենինիզմի բնորոշումը։

Արդյո՞ք ճիշտ է Լենինի թեզիսն այն մասին, որ պրոլետարիատի դիկտատուրան «հեղափոխության արմատական բովանդակությունն է» (տե՛ս հ. XXIII, էջ 337)։ Անպայման ճիշտ է։ Արդյո՞ք ճիշտ է այն թեզիսը, թե լենինիզմը պրոլետարական հեղափոխության թեորիան ու տակտիկան է։ Ես կարծում եմ, որ ճիշտ է։ Բայց սրանից ի՞նչ է հետևում։ Իսկ սրանից հետևում է այն, որ լենինիզմի հիմնական հարցը, նրա մեկնակետը, նրա հիմքը պրոլետարիատի դիկտատուրայի հարցն է։

Մի՞թե ճիշտ չէ, որ իմպերիալիզմի հարցը, իմպերիալիզմի զարգացման թռիչքաձև բնույթի հարցը, մի յերկրում սոցիալիզմի հաղթելու հարցը, պրոլետարիատի պետության հար-

*) Ընդգծումն իմն է։ Ի. Ստ.։

ցը, այդ պետության խորհրդային ձևի հարցը, կուսակցության դերի հարցը պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում, սոցիալիզմի շինարարության ուղիների հարցը,— որ այս բոլոր հարցերը մշակել է հենց Լենինը։ Մի՞թե ճիշտ չէ, որ հենց այդ հարցերն են կազմում պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարի հիմունքը, պատվանդանը։ Մի՞թե ճիշտ չէ, որ առանց այդ հիմնական հարցերի մշակման՝ գյուղացիական հարցի մշակումը պրոլետարիատի դիկտատուրայի տեսակետից աներևակայելի կլիներ։

Խոսք չկա, որ Լենինը գյուղացիական հարցի գիտակն էր։ Խոսք չկա, որ գյուղացիական հարցը, որպես պրոլետարիատի դաշնակցի հարց, կարևորագույն նշանակություն ունի պրոլետարիատի համար և պրոլետարիատի դիկտատուրայի հիմնական հարցի բաղկացուցիչ մասն է։ Բայց մի՞թե պարզ չէ, որ յեթե լենինիզմի առաջ կանգնած չլիներ պրոլետարիատի դիկտատուրայի հիմնական հարցը, ապա չէր լինի նաև ածանցիկ հարցը պրոլետարիատի դաշնակցի մասին, գյուղացիության հարցը։ Մի՞թե պարզ չէ, որ յեթե լենինիզմի առաջ կանգնած չլիներ պրոլետարիատի կողմից իշխանությունը նվաճելու պրակտիկ հարցը, ապա չէր լինի նաև գյուղացիության հետ դաշնակցելու հարցը։

Լենինը չէր լինի պրոլետարական մեծագույն իդեոլոգ, որպիսին նա, անտարակույս, հանդիսանում է, նա կլիներ հասարակ «գյուղացիական փիլիսոփա», որպիսին նրան հաճախ պատկերում են արտասահմանի գրական քաղքենիները, յեթե նա գյուղացիական հարցի մշակումը կատարեր ո՛չ թե պրոլետարիատի դիկտատուրայի թեորիայի ու տակտիկայի բազայի վրա, այլ այդ բազայից անկախ, այդ բազայից դուրս։

Երկուսից մեկը.

կամ գյուղացիական հարցը գլխավորն է լենինիզմի մեջ, և այն ժամանակ լենինիզմը պիտանի չէ, պարտադիր չէ կապիտալիստորեն զարգացած յերկրների համար, այն յերկրների համար, որոնք գյուղացիական յերկիր չեն.

կամ գլխավորը լենինիզմի մեջ պրոլետարիատի դիկտատուրան է, և այն ժամանակ լենինիզմը բոլոր յերկրների պրոլետարների միջազգային ուսմունքն է, որ պիտանի և պարտա-

դիր է առանց բացառության բոլոր երկրների, այդ թվում նաև կապիտալիստորեն զարգացածների համար։

Այստեղ հարկավոր է ընտրություն անել։

III. «ՊԵՐՄԱՆԵՆՏ» ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

«Լենինիզմի հիմունքների մասին» բրոշյուրում «պերմանենտ հեղափոխության թեորիան» գնահատվում է վորպես գյուղացիության դերի թերագնահատման «թեորիա»։

Այնտեղ ասված է.

«Լենինը մարտնչում էր «պերմանենտ» հեղափոխության կողմնակիցների դեմ վո՛չ թե անընդհատության հարցի պատճառով, քանի վոր Լենինն ինքը կանգնած էր անընդհատ հեղափոխության տեսակետի վրա, այլ պրոլետարիատի մեծագույն ռեզերվ հանդիսացող գյուղացիության դերը նրանց կողմից թերագնահատվելու պատճառով»։

Ռուսական «պերմանենտականների» այս բնութագիրը մինչև վերջին ժամանակը բոլորի կողմից ընդունված էր համարվում։ Այնուամենայնիվ նա, ընդհանրապես լինելով ճիշտ, չի կարող, սակայն, սպառիչ ճանաչվել։ 1924 թվի դիսկուսիան՝ մի կողմից, և Լենինի աշխատությունների խնամքով կատարված վերլուծությունը՝ մյուս կողմից՝ ցույց տվին, վոր ռուսական «պերմանենտականների» սխալը վո՛չ միայն այն էր, վոր նրանք թերագնահատում էին գյուղացիության դերը, այլև այն, վոր թերագնահատում էին պրոլետարիատի ուժերը և ընդունակությունները՝ իր հետևից տանելու գյուղացիությանը,—վոր չէին հավատում պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարին։

Այդ պատճառով «Հոկտեմբերյան հեղափոխությունը և ռուսական կոմունիստների տակտիկան» իմ բրոշյուրում (1924 թ. դեկտեմբեր) ես ընդարձակեցի այդ բնութագիրը և այն փոխարինեցի ուրիշ, ավելի լրիվ բնութագրով։ Ահա թե ինչ է ասված այդ մասին այդ բրոշյուրում.

«Մինչև հիմա նշում էին «պերմանենտ հեղափոխության» թեորիայի սովորաբար մեկ կողմը՝ գյուղացիական շարժման հեղափոխական հնարավորությունների չհավատալը։ Հիմա, արդարացի լինելու համար, այդ կողմն անհրաժեշտ է լրացնել այլ կողմով՝ նրանով, վոր նրանք չեն հավատում Ռուսաստանի պրոլետարիատի ուժերին և ընդունակություններին»։

Այս, իհարկե, չի նշանակում, թե լենինիզմը դեմ էր կամ դեմ է առանց չակերտների պերմանենտ հեղափոխության գաղափարին, վոր հռչակել էր Մարքսն անցած դարի քառասնական թվականներին։ Ընդհակառակը։ Լենինը միակ մարքսիստն էր, վոր ճիշտ հասկացավ ու զարգացրեց պերմանենտ հեղափոխության գաղափարը։ Լենինի տարբերությունը «պերմանենտականներից» այս հարցում այն է, վոր «պերմանենտականներն» աղավաղում էին Մարքսի պերմանենտ հեղափոխության գաղափարը, այն վերածելով անկենդան, գրքային իմաստության, մինչդեռ Լենինն այն վերցրեց մաքուր ձևով և դարձրեց նրան հեղափոխության իր թեորիայի հիմունքներից մեկը։ Հարկավոր է հիշել, վոր բուրժուա-դեմոկրատական հեղափոխության սոցիալիստական հեղափոխության վերաճելու գաղափարը, վոր տվել է Լենինը դեռևս 1905 թվին, պերմանենտ հեղափոխության մարքսյան թեորիայի մարմնացման ձևերից մեկն է։ Ահա թե ինչ էր գրում Լենինն այդ առթիվ դեռևս 1905 թվին.

«Դեմոկրատական հեղափոխությունից մենք իսկույն կսկսենք անցնել—և հենց մեր ուժի, գիտակից և կազմակերպված պրոլետարիատի ուժի չափով—կսկսենք անցնել սոցիալիստական հեղափոխությանը։ Մենք կողմնակից ենք անընդհատ հեղափոխության*)։ Մենք կիսաճամփին կանգ չենք առնի...

Ավանտյուրիզմի մեջ չընկնելով, մեր գիտական խղճին չդավաճանելով, էժանագին ժողովրդականության հետևից չվազելով՝ մենք կարող ենք ասել և ասում ենք միայն մի բան. մենք բոլոր ուժերով կօգնենք ամբողջ գյուղացիությանը դեմոկրատական հեղափոխություն կատարելու, վորպեսզի ն՛լ ավելի հեշտ լինի մեզ համար, պրոլետարիատի կուսակցության համար, վորքան կարելի յե շուտով անցնել նոր և ավելի բարձր խնդրի՝ սոցիալիստական հեղափոխության» (տե՛ս հ. VIII, եջ 186—187)։

Իսկ ահա թե ինչ է գրում Լենինն այդ թեմայի մասին տասնվեց տարի անց, պրոլետարիատի կողմից իշխանությունը նվաճելուց հետո.

«Կաուցկիները, Հիլֆերդինգները, Մարտովները, Չերնովները, Հիլկվիտները, Լոնգեները, Մակդոնալդները, Տուրատիները և «II$^{1}/_{2}$-անոց» մարքսիզմի այլ հերոսները չկարողացան հասկանալ... բուրժուա-դեմոկրատական և պրոլետարական-սոցիալիստական հեղափոխությունների հարաբերակցությունը։ Առաջինը վերածվում է երկ-

*) Ընդգծումն իմն է։ Ի. Ստ.

րորդին*)։ Յերկրորդն անցողակիորեն լուծում է առաջինի հարցերը։ Յերկրորդն ամրապնդում է առաջինի գործը։ Կռիվը և միմիայն կռիվն է վճռում, թե յերկրորդին վորքան է հաջողվում առաջինից գերաճել» (տե՛ս հ. XXVII, էջ 26)։

Յես հատուկ ուշադրություն եմ հրավիրում առաջին ցիտատի վրա, վոր առնված է Լենինի 1905 թվի սեպտեմբերի 1-ին հրապարակված «Սոցիալ-դեմոկրատիայի վերաբերմունքը դեպի գյուղացիական շարժումը» հոդվածից։ Յես այս ընդգծում եմ ի գիտություն այն ընկերների, վորոնք դեռևս շարունակում են պնդել, թե Լենինը բուրժուա-դեմոկրատական հեղափոխության սոցիալիստական հեղափոխության վերաճելու գաղափարին, պերմանենտ հեղափոխության գաղափարին հանգեց իբր թե իմպերիալիստական պատերազմից հետո, մոտավորապես 1916 թվին։ Այս ցիտատը կասկած չի թողնում, վոր այդ ընկերները խորը մոլորության մեջ են։

IV. ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ

Վորո՞նք են պրոլետարական հեղափոխության բնորոշ գծերը՝ ի տարբերություն բուրժուական հեղափոխությունից։

Պրոլետարական հեղափոխության և բուրժուական հեղափոխության տարբերությունը կարելի կլիներ հանգեցնել հինգ հիմնական կետի.

1) Բուրժուական հեղափոխությունը սովորաբար սկսվում է դեռևս բացահայտ հեղափոխությունից առաջ ֆեոդալական հասարակության ընդերքում աճած և հասունացած կապիտալիստական կացույթի (уклад) ավելի կամ պակաս պատրաստի ձևերի առկայության պայմաններում, մինչդեռ պրոլետարական հեղափոխությունն սկսվում է սոցիալիստական կացույթի պատրաստի ձևերի բացակայության կամ համարյա բացակայության պայմաններում։

2) Բուրժուական հեղափոխության հիմնական խնդիրը հանգում է հետևյալին. գրավել իշխանությունը և այն համապատասխան դարձնել առկա բուրժուական եկոնոմիկային, մինչդեռ պրոլետարական հեղափոխության հիմնական խնդիրն է՝ իշխանությունը գրավելով նոր սոցիալիստական եկոնոմիկա կառուցել։

3) Բուրժուական հեղափոխությունն ավարտվում է սովորաբար իշխանության գրավումով, մինչդեռ պրոլետարական հեղափոխության համար իշխանության գրավումը լոկ նրա սկիզբն է, ընդվորում իշխանությունն ոգտագործվում է վորպես լծակ՝ հին եկոնոմիկայի վերակառուցման և նորի կազմակերպման համար։

4) Բուրժուական հեղափոխությունը սահմանափակվում է իշխանության գլուխ կանգնած մի շահագործող խումբ մեկ ուրիշ շահագործող խմբով փոխարինելով և այդ պատճառով նա կարիք չունի ջարդելու հին պետական մեքենան, մինչդեռ պրոլետարական հեղափոխությունն իշխանությունից զցում է բոլոր և ամեն տեսակ շահագործող խմբերին և իշխանության գլուխ է կանգնեցնում բոլոր աշխատավորների ու շահագործվողների առաջնորդին՝ պրոլետարների դասակարգին, և այդ պատճառով նա չի կարող յոլա գնալ առանց հին պետական մեքենան ջարդելու և այն նորով փոխարինելու։

5) Բուրժուական հեղափոխությունը չի կարող վորքանև յերկարատև ժամանակաշրջանով բուրժուազիայի շուրջը համախմբել աշխատավոր և շահագործվող մասսաների միլիոնները հենց այն պատճառով, վոր նրանք աշխատավորներ և շահագործվողներ են, մինչդեռ պրոլետարական հեղափոխությունը կարող է և պետք է յերկարատև զաշինքով նրանց կապի պրոլետարիատի հետ հենց իբրև աշխատավորների ու շահագործվողների, յեթե նա ուզում է իրագործել պրոլետարիատի իշխանության ամրապնդման և նոր սոցիալիստական եկոնոմիկայի կառուցման իր հիմնական խնդիրը։

Ահա Լենինի մի քանի հիմնական դրույթներն այդ մասին.

«Բուրժուական և սոցիալիստական հեղափոխության միջև յեղած հիմնական տարբերություններից մեկը,—ասում է Լենինը,—այն է, վոր ֆեոդալիզմից աճող բուրժուական հեղափոխության համար հին կարգերի ընդերքում աստիճանաբար ստեղծվում են նոր տնտեսական կազմակերպություններ, վորոնք աստիճանաբար փոփոխում են ֆեոդալա-

*) Ընդգծումն իմն է։ Ի. Ստ.։

կան հասարակության բոլոր կողմերը։ Բուրժուական հեղափոխության առաջ կար միայն մի խնդիր՝ սրբել, դեն գցել, կործանել նախկին հասարակության բոլոր կապանքները։ Այս խնդիրն իրագործելով՝ ամեն մի բուրժուական հեղափոխություն իրագործում է այն ամենը, ինչ նրանից պահանջվում է—նա ուժեղացնում է կապիտալիզմի աճումը։ Բոլորովին այլ դրության մեջ է սոցիալիստական հեղափոխությունը։ Վորքան ավելի հետամնաց է այն յերկիրը, վորին պատմության զիգզագների շնորհիվ վիճակվել է սկսել սոցիալիստական հեղափոխությունը, այնքան ավելի դժվար է նրա համար հին կապիտալիստական հարաբերություններից սոցիալիստական հարաբերություններին անցնելը։ Այստեղ կործանման խնդիրներին ավելանում են նոր, չլսված դժվարություն ներկայացնող խնդիրներ՝ կազմակերպական խնդիրներ» (տե՛ս հ. XXII, եջ 315)։

«Յեթե ռուսական հեղափոխության ժողովրդական ստեղծագործությունը,—շարունակում է Լենինը,—վոր անցել է 1905 թվի մեծ փորձի բովով, խորհուրդներ չստեղծեր դեռևս 1917 թվի փետրվարին, ապա նրանք վոչ մի դեպքում չեյին կարողանա իշխանություն վերցնել հոկտեմբերին, վորովհետև հաջողությունը կախված եր միլիոններին ընդգրկած շարժման արդեն պատրաստի կազմակերպական ձևերի առկայությունից միայն։ Այդ պատրաստի ձևը հանդիսացան խորհուրդները, և այդ պատճառով քաղաքական ասպարեզում մեզ սպասում եյին այն փայլուն հաջողությունները, այն համատարած հաղթական յերթը, վոր մենք ապրեցինք, վորովհետև քաղաքական իշխանության նոր ձևը պատրաստ եր, և մեզ մնում եր միայն մի քանի դեկրետով խորհուրդների իշխանությունն այն սաղմային վիճակից, վորի մեջ նա գտնվում եր հեղափոխության առաջին ամիսներին, վերածել Ռուսաստանյան պետության մեջ օրինական կերպով ճանաչված, հաստատված ձևի՝ Ռուսաստանի խորհրդային հանրապետության» (տե՛ս նույն տեղը, եջ 315)։

«Մնում եր դեռևս,—ասում է Լենինը,—հսկայական դժվարություն ներկայացնող յերկու խնդիր, վորոնց լուծումը վոչ մի կերպ չեր կարող լինել այն հաղթական յերթը, վորով ընթանում եր մեր հեղափոխությունը» (տե՛ս նույն տեղը, եջ 315)։

«Նախ և առաջ՝ դրանք ներքին կազմակերպության խնդիրներ եյին, վորոնք կանգնած են լինում ամեն մի սոցիալիստական հեղափոխության առաջ։ Սոցիալիստական հեղափոխության տարբերությունը բուրժուականից հենց այն է, վոր յերկրորդ դեպքում կան կապիտալիստական հարաբերությունների պատրաստի ձևեր իսկ խորհրդային իշխանությունը—պրոլետարականը—այդ պատրաստի հարաբերությունները չի ստանում, յեթե չվերցնենք կապիտալիզմի ամենազարգացած այն ձևերը, վորոնք, ըստ եյության, ընդգրկել են արդյունաբերության վոչ մեծ վերնամասերը և դեռ բոլորովին քիչ են շոշափել հողագործությունը։

Հաշվառքի կազմակերպում, վերահսկողություն խոշորագույն ձեռնարկությունների նկատմամբ, ամբողջ պետական տնտեսական մեխանիզմի վերածում մի միասնական խոշոր մեքենայի, տնտեսական մի այնպիսի օրգանիզմի, վորն աշխատեր, վորպեսզի հարյուր միլիոնավոր մարդիկ ղեկավարվեն մի պլանով,—ահա այն հսկայական կազմակերպական խնդիրը, վոր ծանրացավ մեր ուսերին։ Ըստ աշխատանքի այժմյան պայմանների, նա վոչ մի կերպ չեր կարող լուծվել «հուռռա» կանչելով, ինչպես մեզ հաջողվում եր լուծել քաղաքացիական պատերազմի խնդիրները» (տե՛ս նույն տեղը, եջ 316)։

«Հսկայական դժվարություններից յերկրորդը...միջազգային հարցն է։ Յեթե մենք այնպես հեշտ վերջացրինք Կերենսկու բանդաների հաշիվը, յեթե այնպես հեշտորեն իշխանություն ստեղծեցինք մեզ մոտ, յեթե մենք առանց ամենափոքր ջանքի ստացանք հողի սոցիալիզացիայի, բանվորական վերահսկողության վերաբերյալ դեկրետը, յեթե մենք այնպես հեշտ ստացանք այս բոլորը, ապա միայն այն պատճառով, վոր յերջանիկ կերպով դասավորված պայմանները կարճ մոմենտով մեզ պաշտպանեցին միջազգային իմպերիալիզմից։ Միջազգային իմպերիալիզմն իր կապիտալի ամբողջ զորությամբ, բարձր կազմակերպված նրա ռազմական տեխնիկայով, վոր հանդիսանում է միջազգային կապիտալի իսկական ուժը, իսկական ամրությունը, վոչ մի դեպքում, վոչ մի պարագայում չեր կարող հաշտ ապրել Խորհրդային Հանրապետության կողքին՝ թե՛ իր օբյեկտիվ դրությամբ, թե՛ կապիտալիստական այն դասակարգի տնտեսական շահերով, վոր մարմնացած եր նրա մեջ,—չեր կարող հաշտ ապրել առևտրական կապերի, միջազգային և ֆինանսական հարաբերությունների շնորհիվ։ Այստեղ կոնֆլիկտն անխուսափելի յե։ Այստեղ է ռուսական հեղափոխության մեծագույն դժվարությունը, նրա մեծագույն պատմական պրոբլեմը՝ միջազգային խնդիրներ լուծելու անհրաժեշտությունը, միջազգային հեղափոխություն առաջ բերելու անհրաժեշտությունը» (տե՛ս նույն տեղը, եջ 317)։

Սրանք են պրոլետարական հեղափոխության ներքին բնույթը և հիմնական իմաստը։

Հին, բուրժուական կարգերի այսպիսի արմատական վերակառուցումը կարելի՞ յե արդյոք կատարել առանց բռնի հեղափոխության, առանց պրոլետարիատի դիկտատուրայի։

Պարզ է, վոր չի կարելի։ Կարծել, թե այդպիսի հեղափոխությունը կարելի յե կատարել խաղաղ կերպով, բուրժուազիայի տիրապետությանը հարմարեցված բուրժուական դեմոկրատիայի շրջանակներում, նշանակում է՝ կա՛մ խելքը թռցնել և կորցնել նորմալ մարդկային հասկացողությունները, կա՛մ

կոպտաբար ու բացահայտորեն հրաժարվել պրոլետարական հեղափոխությունից:

Այս դրույթը պետք է ընդգծվի ևս ավելի ուժգնորեն ու կտրական կերպով, քանի որ մենք գործ ունենք պրոլետարական հեղափոխության հետ, որը հաղթել է առայժմ մի յերկրում, որը շրջապատված է թշնամի կապիտալիստական յերկրներով, և որի բուրժուազիային միջազգային կապիտալը չի կարող չպաշտպանել:

Ահա թե ինչու Լենինն ասում է, որ «ճնշված դասակարգի ազատագրումն անհնար է ո՛չ միայն առանց բռնի հեղափոխության, այլև առանց վոչնչացնելու պետական իշխանության այն ապարատը, որ տիրապետող դասակարգն է ստեղծել» (տե՛ս հ. XXI, էջ 373):

«Թող առաջ, մասնավոր սեփականության պահպանման պայմաններում, այսինքն կապիտալի իշխանությունն ու ճնշումը պահպանելու պայմաններում՝ բնակչության մեծամասնությունն արտահայտի հոգուտ պրոլետարիատի կուսակցության,—միայն այդ ժամանակ նա կարող է և պետք է վերցնի իշխանությունը»,—այսպես են ասում մանր-բուրժուական դեմոկրատները, բուրժուազիայի այդ փաստական ծառաները, որոնք իրենց «սոցիալիստ»*) են անվանում (տե՛ս հ. XXIV, էջ 647):

«Թող առաջ հեղափոխական պրոլետարիատը տապալի բուրժուազիային, կոտրի կապիտալի ճնշումը, ջարդի բուրժուական պետական ապարատը,—այն ժամանակ հաղթանակ տարած պրոլետարիատը կկարողանա արագորեն իր կողմը գրավել աշխատավոր վոչ-պրոլետարական մասսաների մեծամասնության համակրանքն ու աջակցությունը, բավարարելով նրանց ի հաշիվ շահագործողների»,—ասում ենք մենք»*) (տե՛ս նույն տեղը):

«Բնակչության մեծամասնությունն իր կողմը նվաճելու համար,—շարունակում է Լենինը,—պրոլետարիատը պետք է, նախ՝ տապալի բուրժուազիային և գրավի, իր ձեռքն առնի պետական իշխանությունը: Յերկրորդ՝ նա պետք է մտցնի խորհրդային իշխանություն, ջարդուփշուր անելով հին պետական ապարատը, որով նա մեկ անգամից խարխլում է բուրժուազիայի և մանր-բուրժուական համաձայնողականների տիրապետությունը, հեղինակությունը, ազդեցությունը վոչ-պրոլետարական աշխատավոր մասսաների շրջանում: Յերրորդ՝ նա պետք է վերջնականապես վոչնչացնի բուրժուազիայի և մանր-բուրժուական համաձայնողականների ազդեցությունը վոչ-պրոլետարական աշխատավոր-

*) Ընդգծումն իմն է: Ի. Ստ.:

կան մասսաների մեծամասնության մեջ՝ նրանց տնտեսական կարիքների հեղափոխական իրականացմամբ—ի հաշիվ շահագործողների» (տե՛ս նույն տեղը, էջ 641):

Սրանք են պրոլետարական հեղափոխության բնորոշ հատկանիշները:

Վո՞րոնք են, այս կապակցությամբ առած՝ պրոլետարիատի դիկտատուրայի հիմնական գծերը, յեթե ընդունված է, որ պրոլետարիատի դիկտատուրան պրոլետարական հեղափոխության հիմնական բովանդակությունն է:

Ահա պրոլետարիատի դիկտատուրայի ամենից ավելի ընդհանուր բնորոշումը, որ տվել է Լենինը.

«Պրոլետարիատի դիկտատուրան դասակարգային կռվի վերջացումը չէ, այլ նրա շարունակությունը նոր ձևերով: Պրոլետարիատի դիկտատուրան հաղթած և քաղաքական իշխանությունն իր ձեռքը վերցրած պրոլետարիատի դասակարգային կռիվն է բուրժուազիայի դեմ, որը հաղթվել է, բայց չի վոչնչացվել, չի անհետացել, չի դադարել դիմադրություն ցույց տալուց, իր դիմադրությունն ուժեղացրած բուրժուազիայի դեմ (տե՛ս հ. XXIV, էջ 311):

Առարկելով պրոլետարիատի դիկտատուրան «համաժողովրդական», «համընտրովի» իշխանության, «վոչ-դասակարգային» իշխանության հետ շփոթելու դեմ, Լենինն ասում է.

«Այն դասակարգը, որն իր ձեռքն է վերցրել քաղաքական տիրապետությունը, վերցրել է այն, գիտակցելով, որ մենակ է վերցնում: Սա մտնում է պրոլետարիատի դիկտատուրայի հասկացողության մեջ: Այդ հասկացողությունը միայն այն ժամանակ իմաստ ունի, յերբ մի դասակարգ գիտե, որ ինքը մենակ է իր ձեռքը վերցնում քաղաքական իշխանությունը և ո՛չ իրեն, ո՛չ էլ ուրիշներին չի խաբում «համաժողովրդական, համընտրովի, ամբողջ ժողովրդի կողմից սրբագործված» իշխանության վերաբերյալ խոսակցություններով» (տե՛ս հ. XXVI, էջ 286):

Սակայն, այս չի նշանակում, թե մի դասակարգի, պրոլետարների դասակարգի իշխանությունը,—այն դասակարգի, որը չի բաժանում և չի կարող բաժանել իշխանությունն ուրիշ դասակարգերի հետ,—իր նպատակներն իրականացնելու համար մյուս դասակարգերի աշխատավոր և շահագործվող մասսաների ոգնության, դաշինքի կարիքը չունի: Այդ իշխանությունը, մի դասակարգի իշխա-

նուԹյունը, կարող է հաստատվել և մինչև վերջն իրագործվել միայն մի հատուկ ձևի դաշինքով, որ պետք է կնքվի պրոլետարների դասակարգի և մանր-բուրժուական դասակարգերի աշխատավոր մասսաների, ամենից առաջ գյուղացիության աշխատավոր մասսաների, միջև։

Դաշինքի այդ ի՞նչ հատուկ ձև է, ո՞րն է դրա էությունը։ Այդ դաշինքն ուրիշ, ոչ-պրոլետարական դասակարգերի աշխատավոր մասսաների հետ՝ չի՞ հակասում արդյոք մի դասակարգի դիկտատուրայի գաղափարին առհասարակ։

Դա, դաշինքի այդ հատուկ ձևը, այն է, որ այդ դաշինքի ղեկավար ուժը պրոլետարիատն է։ Դա, դաշինքի այդ հատուկ ձևը, այն է, որ պետության ղեկավարը, պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում ղեկավարը մի կուսակցություն է, պրոլետարիատի կուսակցությունը, կոմունիստների կուսակցությունը, որը ղեկավարությունը չի բաժանում և չի կարող բաժանել ուրիշ կուսակցությունների հետ։

Ինչպես տեսնում եք, հակասությունն այստեղ միայն յերևութական է, Թվացող։

«Պրոլետարիատի դիկտատուրան,— ասում է Լենինը,— դասակարգային դաշինքի հատուկ ձև է*),— դաշինք աշխատավորների առաջավոր պրոլետարիատի և աշխատավորների բազմաԹիվ ոչ-պրոլետարական խավերի (մանր բուրժուազիա, մանր տնտեսատերուկներ, գյուղացիություն, ինտելիգենցիա և այլն) կամ նրանց մեծամասնության միջև, դաշինք կապիտալի դեմ, դաշինք, որի նպատակն է՝ կապիտալի լիակատար տապալումը, բուրժուազիայի դիմադրության և նրա կողմից ձեռնարկվող ռեստավրացիայի փորձերի լիակատար ճնշումը, դաշինք, որի նպատակն է սոցիալիզմի վերջնական ստեղծումն ու ամրապնդումը։ Դա— առանձին տեսակի դաշինք է, որ կազմավորվում է հատուկ պարագայում, այն է՝ կատաղի քաղաքացիական պատերազմի պարագայում, դա սոցիալիզմի անդրդվելի կողմնակիցների դաշինքն է նրա տատանվող դաշնակիցների հետ, յերբեմն «չեզոքների» հետ (այն ժամանակ պայքարի համաձայնությունից այդ դաշինքը դառնում է չեզոքության համաձայնություն), դաշինք տնտեսապես, քաղաքականապես, սոցիալապես, հոգեպես ոչ-միանման դասակարգերի միջև»*) (տե՛ս հ. XXIV, եջ 311)։

Իր հրահանգչական զեկուցումներից մեկում՝ բանավիճելով

*) Ընդգծումն իմն է։ Ի. Ստ.։

պրոլետարիատի դիկտատուրայի այս տեսակի հասկացողության դեմ, ընկ. Կամենևն ասում է.

«Դիկտատուրան մի դասակարգի դաշինք չէ*) մեկ ուրիշ դասակարգի հետ» (տե՛ս «Правда» № 11, 1925 Թ. հունվարի 14)։

Յես կարծում եմ, որ ընկ. Կամենևն այստեղ նկատի ունի, ամենից առաջ, իմ՝ «Հոկտեմբերյան հեղափոխությունը և ռուսական կոմունիստների տակտիկան» բրոշյուրի մի տեղը, որտեղ ասված է.

«Պրոլետարիատի դիկտատուրան սոսկական կառավարական վերնախավ չէ, որ «վարպետորեն» «ջոկված» է «փորձված ստրատեգի» հոտառ ձեռքով ու «խելացիորեն հենվում է» բնակչության այս կամ այն խավերի վրա։ Պրոլետարիատի դիկտատուրան պրոլետարիատի և գյուղացիության աշխատավոր մասսաների դասակարգային դաշինքն է կապիտալի տապալման համար, սոցիալիզմի վերջնական հաղԹության համար, պայմանով, որ այդ դաշինքի ղեկավար ուժ հանդիսանում է պրոլետարիատը»։

Յես ամբողջովին պաշտպանում եմ պրոլետարիատի դիկտատուրայի այս ձևակերպումը, որովհետև կարծում եմ, որ այն ամբողջապես ու լիովին համընկնում է Լենինի հենց նոր մեջ բերված ձևակերպմանը։

Յես պնդում եմ, որ ընկ. Կամենևի հայտարարությունն այն մասին, Թե՝ «դիկտատուրան մի դասակարգի դաշինք չէ մի ուրիշ դասակարգի հետ», որ տրված է այդպիսի անվերապահ ձևով, ընդհանուր ոչինչ չունի պրոլետարիատի դիկտատուրայի լենինյան Թեորիայի հետ։

Յես պնդում եմ, որ այդպես կարող են ասել միմիայն այն մարդիկ, որոնք չեն հասկացել պրոլետարիատի և գյուղացիության զոդման գաղափարի, նրանց դաշինքի գաղափարի իմաստը, այդ դաշինքում պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարի իմաստը։

Այդպես կարող են ասել միայն այն մարդիկ, որոնք չեն հասկացել լենինյան Թեզիսն այն մասին, որ

«Միայն համաձայնությունը գյուղացիության հետ*) կարող է փրկել սոցիալիստական հեղափոխությունը Ռուսաստանում, քանի որ դեռ չի հասել հեղափոխությունն ուրիշ յերկիրներում» (տե՛ս հ. XXVI, եջ 238)։

*) Ընդգծումն իմն է։ Ի. Ստ.։

Այդպես կարող են ասել միայն այն մարդիկ, վորոնք չեն հասկացել Լենինի դրույթն այն մասին, վոր

«**Դիկտատուրայի բարձրագույն սկզբունքն է***)—պահպանել պրոլետարիատի դաշինքը գյուղացիության հետ, վորպեսզի պրոլետարիատը կարողանա իր ձեռքում պահել ղեկավար դերն ու պետական իշխանությունը» (տե՛ս հ. XXVI, եջ 460)։

Նշելով դիկտատուրայի կարևորագույն նպատակներից մեկը, շահագործողներին ճնշելու նպատակը, Լենինն ասում է.

«Դիկտատուրայի գիտական հասկացողությունը այլ բան չի նշանակում, բայց յեթե վոչնչով չսահմանափակված, վո՛չ մի որենքով, բացարձակապես վո՛չ մի կանոնով չնեղված, անմիջականորեն բռնության վրա հենվող իշխանություն»... «Դիկտատուրան նշանակում է—սա մի անգամ ընդմիշտ ընդունեցեք ի գիտություն, պարոնայք կադետներ—անսահմանափակ, ուժի վրա, և վոչ թե որենքի վրա հենվող իշխանություն։ Քաղաքացիական պատերազմի ժամանակ ամեն մի հաղթած իշխանություն միայն դիկտատուրա կարող է լինել» (տե՛ս հ. XXV, եջ 441 և 436)։

Բայց բռնությամբ, իհարկե, չի սպառվում պրոլետարիատի դիկտատուրան, թեպետ առանց բռնության դիկտատուրա չի լինում։

«Դիկտատուրան,—ասում է Լենինը,—նշանակում է վոչ միայն բռնություն, թեպետ այն անհնար է առանց բռնության, այն նշանակում է նաև աշխատանքի ավելի բարձր ձևի կազմակերպություն, քան նախորդ կազմակերպությունն եր» (տե՛ս հ. XXIV, եջ 305)։

«Պրոլետարիատի դիկտատուրան... միայն բռնություն չէ շահագործողների նկատմամբ և նույնիսկ վոչ գլխավորապես բռնություն։ Այդ հեղափոխական բռնության տնտեսական հիմունքը, նրա կենսականության և հաջողության գրավականն այն է, վոր պրոլետարիատը ներկայացնում է և կենսագործում է աշխատանքի հասարակական կազմակերպության ավելի բարձր տիպ՝ կապիտալիզմի հետ համեմատած։ Այս է եյականը։ Սրա մեջ է կոմունիզմի ուժի աղբյուրը և անխուսափելի լիակատար հաղթության գրավականը» (տե՛ս հ. XXIV, եջ 335—336)։... «Նրա (այսինքն դիկտատուրայի։ Ի. Ստ.) գլխավոր եյությունն աշխատավորների առաջավոր ջոկատի, նրա ավանգարդի, նրա միակ ղեկավար՝ պրոլետարիատի կազմակերպվածությունը և կարգապահ լինելն է։ Պրոլետարիատի նպատակն է սոցիալիզմ ստեղծել, վոչնչացնել հասարակության բաժանումը դասակարգերի, հասարակության բոլոր անդամներին դարձնել աշխատավորներ, խլել մարդը մարդուն վորևէ կերպ շահագործելու հողը։ Այս նպատակը մեկ անգամից իրականացնել չի կարելի, դա պահանջում է կապիտալիզմից դեպի սոցիալիզմ անցնելու բավական յերկարատև ժամանակաշրջան,—թե՛ այն պատճառով, վոր արտադրության վերակազմակերպությունը դժվար բան է, թե՛ այն պատճառով, վոր կյանքի բոլոր բնագավառներում արմատական փոփոխություններ կատարելու համար ժամանակ է հարկավոր, թե՛ այն պատճառով, վոր մանր-բուրժուական և բուրժուական տնտեսվարության (хозяйничанье) սովորության հսկայական ուժը կարող է հաղթահարվել միայն յերկարատև, համառ պայքարում։ Այդ պատճառով է, վոր Մարքսը խոսում է պրոլետարիատի դիկտատուրայի մի ամբողջ ժամանակաշրջանի՝ վորպես կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանի՝ մասին» (տե՛ս նույն տեղը, եջ 314)։

*) Ընդգծումն իմն է։ Ի. Ստ.։

Սրանք են պրոլետարիատի դիկտատուրայի բնորոշ գծերը։

Այստեղից՝ պրոլետարիատի դիկտատուրայի յերեք հիմնական կողմերը.

1) Պրոլետարիատի իշխանության ոգտագործումը՝ շահագործողներին ճնշելու համար, յերկրի պաշտպանության համար, ուրիշ յերկրների պրոլետարների հետ կապերն ամրացնելու համար, հեղափոխության զարգացման և հաղթության համար՝ բոլոր յերկրներում։

2) Պրոլետարիատի իշխանության ոգտագործումը՝ աշխատավոր և շահագործվող մասսաներին բուրժուազիայից վերջնականապես կտրելու համար, պրոլետարիատի դաշինքն այդ մասսաների հետ ամրապնդելու համար, այդ մասսաներին սոցիալիստական շինարարության գործի մեջ ներքաշելու համար, այդ մասսաներին պրոլետարիատի կողմից պետականորեն ղեկավարելու համար։

3) Պրոլետարիատի իշխանության ոգտագործումը՝ սոցիալիզմի կազմակերպման համար, դասակարգերի վոչնչացման համար, առանց դասակարգերի հասարակության, առանց պետության հասարակության անցնելու համար։

Պրոլետարական դիկտատուրան այդ բոլոր յերեք կողմերի միացումն է։ Այդ կողմերից վոչ մեկը չի կարող առաջ քաշվել վորպես պրոլետարիատի դիկտատուրայի միակ բնորոշ հատկանիշ և, ընդհակառակը, բավական է այդ հատկանիշներից թեկուզ մեկի բացակայությունը, վորպեսզի պրոլետարիատի դիկ-

տատուրան դադարի կապիտալիստական շրջապատման պայմաններում դիկտատուրա լինելուց։ Այս պատճառով այդ յերեք կողմերից վոչ մեկը չի կարող բացառվել՝ առանց պրոլետարիատի դիկտատուրայի հասկացողությունն աղավաղելու վտանգի։ Միայն այդ բոլոր յերեք կողմերը՝ միասին առած՝ մեզ տալիս են պրոլետարիատի դիկտատուրայի լրիվ ու ամբողջացած հասկացողությունը։

Պրոլետարիատի դիկտատուրան ունի իր ժամանակաշրջանները, իր հատուկ ձևերը, աշխատանքի բազմազան մեթոդները։ Քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում առանձնապես աչքի յեն զարկում դիկտատուրայի բռնի կողմը։ Բայց դրանից բնավ չի հետևում, վոր քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում վոչ մի շինարարական աշխատանք տեղի չի ունենում։ Առանց շինարարական աշխատանքի քաղաքացիական պատերազմ մղել անհնարին է։ Սոցիալիզմի շինարարության ժամանակաշրջանում, ընդհակառակը, առանձնապես աչքի յեն զարկում դիկտատուրայի խաղաղ, կազմակերպչական, կուլտուրական աշխատանքը, հեղափոխական որինականությունը և այլն։ Բայց դրանից դարձյալ բնավ չի հետևում, վոր դիկտատուրայի բռնի կողմը շինարարության ժամանակաշրջանում մեջտեղից վերացել է կամ կարող է վերանալ։ Ճնշման որգանները՝ բանակը և մյուս կազմակերպությունները՝ անհրաժեշտ են հիմա, շինարարության մոմենտում նույնպես, ինչպես քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում։ Առանց այդ որգանների առկայության անհնար է դիկտատուրայի վորևէ չափով ապահովված շինարարական աշխատանքը։ Հարկավոր չե մոռանալ, վոր հեղափոխությունը հաղթել է առայժմ ընդամենը միայն մի յերկրում։ Հարկավոր չե մոռանալ, վոր՝ քանի դեռ կա կապիտալիստական շրջապատումը, կլինի նաև ինտերվենցիայի վտանգը՝ այդ վտանգից բխող բոլոր հետևանքներով։

V. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՍԻՍՏԵՄՈՒՄ

Վերը յես խոսեցի պրոլետարիատի դիկտատուրայի մասին՝ նրա պատմական անխուսափելիության տեսակետից, նրա դասակարգային բովանդակության տեսակետից, նրա պետական

բնույթի տեսակետից, վերջապես նրա կործանիչ և ստեղծագործական խնդիրների տեսակետից, վորոնք իրագործվում են մի ամբողջ պատմական ժամանակաշրջանի ընթացքում, վորը կոչվում է անցման ժամանակաշրջան կապիտալիզմից դեպի սոցիալիզմ։

Հիմա մենք պետք է խոսենք պրոլետարիատի դիկտատուրայի մասին՝ նրա կառուցվածքի տեսակետից, նրա «մեխանիզմի» տեսակետից, այն «առբերիչների» (приводов), «լծակների» և «ուղղություն տվող ուժի» դերի ու նշանակության տեսակետից, վորոնց միագումարը կազմում է «պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմը» (Լենին) և վորոնց ոգնությամբ իրականացվում է պրոլետարիատի դիկտատուրայի ամենորյա աշխատանքը։

Այդ ի՞նչ «առբերիչներ» կամ «լծակներ» են պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում։ Այդ ի՞նչ «ուղղություն տվող ուժ» է։ Դրանք ինչի՞ համար են հարկավոր յեղել։

Լծակները կամ առբերիչները — դրանք պրոլետարիատի հենց այն մասսայական կազմակերպություններն են, առանց վորոնց ոգնության անհնարին է դիկտատուրայի իրականացումը։

Ուղղություն տվող ուժը — պրոլետարիատի առաջավոր ջոկատն է այդ, նրա ավանգարդն է այդ, վորը պրոլետարիատի դիկտատուրայի հիմնական ղեկավար ուժն է։

Այդ առբերիչները, լծակները և ուղղություն տվող ուժն անհրաժեշտ են պրոլետարիատին այն պատճառով, վոր հաղթության համար մղած պայքարում առանց դրանց նա կլիներ անզեն բանակի դրության մեջ՝ կազմակերպված և զինված կապիտալի հանդեպ։ Այդ կազմակերպությունները պրոլետարիատին անհրաժեշտ են այն պատճառով, վոր պրոլետարիատն առանց դրանց անխուսափելի պարտություն կկրեր բուրժուազիայի տապալման համար մղած իր պայքարում, իր իշխանության ամրացման համար մղած իր պայքարում, սոցիալիզմի շինարարության համար մղած իր պայքարում։ Այդ կազմակերպությունների սիստեմատիկ ոգնությունը և ավանգարդի ուղղություն տվող ուժն անհրաժեշտ են այն պատճառով, վոր առանց այդ պայմանների անհնարին է պրոլետարիատի փոքրիշատե տևական և ամուր դիկտատուրան։

Այդ ի՞նչ կազմակերպություններ են։

Այդ, նախ՝ **արհմիություններն** են՝ իրենց ճյուղավորումներով կենտրոնում և տեղերում՝ իբրև մի ամբողջ շարք արտադրական, կուլտուրական, դաստիարակչական և այլ կազմակերպություններ։ Նրանք միավորում են բոլոր պրոֆեսիաների բանվորներին։ Դա կուսակցական կազմակերպություն չէ։ Արհմիությունները կարելի յե անվանել մեզ մոտ տիրապետող բանվոր դասակարգին գլխովին ընդգրկող կազմակերպություն։ Նրանք կոմունիզմի դպրոց են հանդիսանում։ Նրանք իրենց միջից զատում են լավագույն մարդկանց՝ կառավարման բոլոր ճյուղերում ղեկավար աշխատանք կատարելու համար։ Նրանք իրականացնում են առաջավորների և հետամնացների կապը բանվոր դասակարգի կազմի մեջ։ Նրանք բանվորական մասսաներին միացնում են բանվոր դասակարգի ավանգարդի հետ։

Երկրորդ, դրանք **Խորհուրդներն** են՝ իրենց բազմաթիվ ճյուղավորումներով կենտրոնում և տեղերում՝ իբրև վարչական, տնտեսական, ռազմական, կուլտուրական և այլ պետական կազմակերպություններ, պլյուս աշխատավորների ինքնաստեղծ մասսայական միավորումների անթիվ բազմությունը,— միավորումներ, վորոնք շրջապատում են այդ կազմակերպությունները և դրանց միացնում են բնակչության հետ։ Խորհուրդները քաղաքի և գյուղի բոլոր աշխատավորների մասսայական կազմակերպություններն են։ Դա կուսակցական կազմակերպություն չէ։ Խորհուրդները պրոլետարիատի դիկտատուրայի ուղղակի արտահայտությունն են։ Խորհուրդների միջոցով են անցնում դիկտատուրայի ամրապնդման և սոցիալիզմի շինարարության բոլոր և ամեն տեսակի ձեռնարկումները։ Խորհուրդների միջոցով է կենսագործվում գյուղացիության պետական ղեկավարությունը պրոլետարիատի կողմից։ Խորհուրդներն աշխատավորների միլիոնավոր մասսաներին միացնում են պրոլետարիատի ավանգարդի հետ։

Երրորդ, այդ՝ բոլոր տեսակների **կոոպերացիան** է իր բոլոր ճյուղավորումներով։ Դա աշխատավորների մասսայական կազմակերպությունն է, մի վոչ-կուսակցական կազմակերպություն, վորը միավորում է նրանց, ամենից առաջ, վորպես սպառողների, ինչպես նաև, ժամանակի ընթացքում, վորպես արտադրողների էլ (գյուղատնտեսական կոոպերացիա)։ Նա հատուկ նշանակություն է ձեռք բերում պրոլետարիատի դիկտատուրան ամրանալուց հետո, լայն շինարարության ժամանակաշրջանում։ Նա հեշտացնում է պրոլետարիատի ավանգարդի կապը գյուղացիության մասսաների հետ և վերջիններին սոցիալիստական շինարարության հունի մեջ ներգրավելու հնարավորություն է ստեղծում։

Չորրորդ, դա՝ **յերիտասարդության միությունն** է։ Դա բանվորական և գյուղացիական յերիտասարդության մասսայական կազմակերպությունն է, վո՛չ-կուսակցական, բայց կուսակցությանը հարող կազմակերպություն։ Նրա խնդիրն է՝ օգնել կուսակցությանը յերիտասարդ սերունդը սոցիալիզմի վոգով դաստիարակելու գործում։ Նա յերիտասարդ ռեզերվներ է տալիս պրոլետարիատի մնացած բոլոր մասսայական կազմակերպություններին՝ կառավարման բոլոր ճյուղերի համար։ Յերիտասարդության միությունն առանձին նշանակություն ձեռք բերեց պրոլետարիատի դիկտատուրան ամրապնդվելուց հետո, պրոլետարիատի լայն կուլտուրական ու դաստիարակչական աշխատանքի ժամանակաշրջանում։

Դա, վերջապես՝ պրոլետարիատի **կուսակցությունն** է, նրա ավանգարդը։ Կուսակցության ուժն այն է, վոր նա իր մեջն է առնում պրոլետարիատի բոլոր լավագույն մարդկանց՝ նրա բոլոր մասսայական կազմակերպություններից։ Նրա դերն այն է, վոր **միավորի** պրոլետարիատի առանց բացառության բոլոր մասսայական կազմակերպությունների աշխատանքը և **ուղղի** նրանց գործողությունները դեպի մի նպատակ, դեպի պրոլետարիատի ազատագրման նպատակը։ Իսկ միավորել և ուղղել նրանց մի նպատակի գծով՝ բացարձակապես անհրաժեշտ է, վորովհետև առանց դրան անհնարին է պրոլետարիատի պայքարի միասնականությունը, վորովհետև առանց դրան անհնարին է պրոլետարական մասսաներին ղեկավարել՝ իշխանության համար նրանց մղած պայքարում, սոցիալիզմի շինարարության համար նրանց մղած պայքարում։

Բայց պրոլետարիատի ավանգարդը, նրա կուսակցությունն է միայն, որ ընդունակ է միավորելու և ուղղություն տալու պրոլետարիատի մասսայական կազմակերպությունների աշխատանքին։ Միայն պրոլետարիատի կուսակցությունը, միայն կոմունիստների կուսակցությունն է ընդունակ կատարելու պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում հիմնական ղեկավարի այդ դերը։

Ինչո՞ւ։

«Նախ՝ այն պատճառով, որ կուսակցությունը հավաքատեղին է բանվոր դասակարգի լավագույն տարրերի, որոնք ուղղակի կապեր ունեն պրոլետարիատի անկուսակցական կազմակերպությունների հետ և շատ հաճախ ղեկավարում են նրանց. երկրորդ՝ այն պատճառով, որ կուսակցությունը, որպես բանվոր դասակարգի լավագույն մարդկանց հավաքատեղի, լավագույն դպրոցն է՝ բանվոր դասակարգի այնպիսի լիդերներ պատրաստելու համար, որոնք ընդունակ են ղեկավարելու իրենց դասակարգի կազմակերպության բոլոր ձևերը. երրորդ՝ այն պատճառով, որ կուսակցությունը, որպես բանվոր դասակարգի լիդերների լավագույն դպրոց, իր փորձով և հեղինակությամբ միակ կազմակերպությունն է, որն ընդունակ է կենտրոնացնելու պրոլետարիատի պայքարի ղեկավարությունը և, այդպիսով, բանվոր դասակարգի բոլոր և ամեն տեսակի անկուսակցական կազմակերպությունները վերածելու կուսակցությունը դասակարգի հետ միացնող սպասարկու օրգանների և շարժահաղորդ փոկերի» (տե՛ս «Լենինիզմի հիմունքների մասին»)։

Կուսակցությունը հիմնական ղեկավար ուժն է պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում։

«Կուսակցությունը պրոլետարիատի դասակարգային միավորման բարձրագույն ձևն է» (Լենին)։

Այսպիսով՝ արհմիությունները, որպես պրոլետարիատի մասսայական կազմակերպություն, որը կուսակցությանը կապում է դասակարգի հետ, ամենից առաջ արտադրական գծով. խորհուրդները, որպես աշխատավորների մասսայական կազմակերպություն, որը կուսակցությանը կապում է այս վերջինների հետ, ամենից առաջ պետական գծով. կոոպերացիան, որպես գլխավորապես գյուղացիության մասսայական կազմակերպություն, որը կուսակցությանը կապում է գյուղացիա-

կան մասսաների հետ, ամենից առաջ տնտեսական գծով, գյուղացիությանը սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու գծով. երիտասարդության միությունը, որպես բանվորական և գյուղացիական երիտասարդության մասսայական կազմակերպություն, որը կոչված է հեշտացնելու պրոլետարիատի ավանգարդի համար նոր սերնդի սոցիալիստական դաստիարակությունը և երիտասարդ ռեզերվների պատրաստումը. և, վերջապես, կուսակցությունը, որպես հիմնական ուղղություն տվող ուժ պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում, որը կոչված է ղեկավարելու այդ բոլոր մասսայական կազմակերպություններին,—այս է, ընդհանուր առմամբ, դիկտատուրայի «մեխանիզմի» պատկերը, «պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմի» պատկերը։

Առանց կուսակցության՝ որպես հիմնական ղեկավար ուժի՝ անհնարին է պրոլետարիատի փոքրիշատե տևական ու հաստատուն դիկտատուրան։

Այսպիսով, Լենինի խոսքերով ասած՝ «ստացվում է ընդհանրապես և ամբողջությամբ առած՝ ձևականորեն ոչ-կոմունիստական, ճկուն ու համեմատաբար լայն, խիստ հզոր, պրոլետարական ապարատ, որի միջոցով կուսակցությունը սերտորեն կապված է դասակարգի ու մասսայի հետ, և որի միջոցով, կուսակցության ղեկավարությամբ, կենսագործվում է դասակարգի դիկտատուրան» (տե՛ս հ. XXV, էջ 193)։

Այս, իհարկե, չի նշանակում, թե կուսակցությունը կարող է կամ պետք է փոխարինի արհմիություններին, խորհուրդներին և մյուս մասսայական կազմակերպություններին։ Կուսակցությունը կենսագործում է պրոլետարիատի դիկտատուրան։ Բայց նա այդ դիկտատուրան կենսագործում է ո՛չ թե անմիջականորեն, այլ արհմիությունների օգնությամբ, խորհուրդների ու նրանց ճյուղավորումների միջոցով։ Առանց այդ «տրանսմիսիաների»...

«Չի կարելի,—ասում է Լենինը,—դիկտատուրան իրականացնել առանց մի քանի «տրանսմիսիաների», որոնք ձգված պետք է լինեն ավանգարդից դեպի առաջավոր դասակարգի մասսան, նրանից՝ դեպի աշխատավորների մասսան»... «Կուսակցությունն, այսպես ասած, իր

մեջն է առնում պրոլետարիատի ավանգարդը, և այդ ավանգարդն է իրականացնում պրոլետարիատի դիկտատուրան։ Յեվ չունենալով այնպիսի հիմք, ինչպես են արհմիությունները, չի կարելի իրականացնել դիկտատուրան, չի կարելի կատարել պետական ֆունկցիաներ։ Իսկ դրանք իրականացնելու հարկ է լինում դարձյալ ինչ-վոր նոր տիպի մի շարք հատուկ հիմնարկների միջոցով*), այն է՝ խորհրդային ապարատի միջոցով»*) (տե՛ս հ. XXVI, եջ 65 և 64)։

Կուսակցության ղեկավար դերի բարձրագույն արտահայտությունը, որինակ, մեզ մոտ, Խորհրդային Միության մեջ, պրոլետարիատի դիկտատուրայի յերկրում, հարկավոր է ընդունել այն փաստը, վոր մեզ մոտ վոչ մի կարևոր քաղաքական կամ կազմակերպական հարց մեր խորհրդային և ուրիշ մասսայական կազմակերպությունների կողմից չի լուծվում առանց կուսակցության ղեկավար ցուցումների։ Այս իմաստով կարելի կլիներ ասել, վոր պրոլետարիատի դիկտատուրան, ըստ էության, նրա ավանգարդի «դիկտատուրան» է, նրա կուսակցության՝ վորպես պրոլետարիատի հիմնական ղեկավար ուժի՝ «դիկտատուրան»։ Ահա թե այդ առթիվ ինչ եր ասում Լենինը Կոմինտերնի II կոնգրեսում.

«Տեններն ասում է, վոր ինքը պրոլետարիատի դիկտատուրայի պաշտպան է, բայց պրոլետարիատի դիկտատուրան պատկերանում է վոչ բոլորովին այնպես, ինչպես մենք ենք պատկերացնում այն։ Նա ասում է, վոր մենք, պրոլետարիատի դիկտատուրա ասելով, ըստ էության*), հասկանում ենք նրա կազմակերպված և գիտակից փոքրամասնության դիկտատուրան։ Յեվ իսկապես, կապիտալիզմի դարաշրջանում, յերբ բանվորական մասսաները յենթարկվում են անընդհատ շահագործման և չեն կարողանում զարգացնել իրենց մարդկային ընդունակությունները, բանվորական քաղաքական կուսակցությունների համար ամենաբնորոշը հենց այն է, վոր նրանք կարող են ընդգրկել իրենց դասակարգի փոքրամասնությունը միայն։ Քաղաքական կուսակցությունը կարող է միավորել դասակարգի փոքրամասնությունը միայն, այնպես, ինչպես վոր իրոք գիտակից բանվորները ամեն մի կապիտալիստական հասարակության մեջ կազմում են բոլոր բանվորների փոքրամասնությունը միայն։ Այդ պատճառով մենք ստիպված ենք ընդունել, վոր միայն այդ գիտակից փոքրամասնությունը կարող է ղեկավարել լայն բանվորական մասսաներին և նրանց իր հետևից տանել։ Յեվ յեթե ընկ. Տեններն ասում է, վոր ինքը կուսակցության թշնամի չէ, բայց միև-

*) Ընդգծումը իմն է։ Ի. Ստ.

նույն ժամանակ կողմնակից է այն բանի, վոր ամենից լավ կազմակերպված և ամենից ավելի հեղափոխական բանվորների փոքրամասնությունը ճանապարհ ցույց տա ամբողջ պրոլետարիատին, ապա յես ասում եմ, վոր մեր միջև իրականում տարբերություն չկա» (տե՛ս հ. XXV, եջ 347)։

Սակայն նշանակո՞ւմ է այս, արդյոք, վոր պրոլետարիատի դիկտատուրայի և կուսակցության ղեկավար դերի (կուսակցության «դիկտատուրայի») միջև կարելի յե հավասարության նշան դնել, վոր առաջինը կարելի յե նույնացնել յերկրորդի հետ, վոր առաջինը կարելի յե փոխարինել յերկրորդով։ Իհարկե, չի նշանակում։ Իհարկե, չի կարելի։ Այ, որինակ, ընկ. Սորինն ասում է, թե «պրոլետարիատի դիկտատուրան մեր կուսակցության դիկտատուրան է» (տես «Учение Ленина о партии»—«Լենինի ուսմունքը կուսակցության մասին», եջ 95)։ Այս դրույթը, ինչպես տեսնում եք, «կուսակցության դիկտատուրան» նույնացնում է պրոլետարիատի դիկտատուրայի հետ։ Կարելի՞ յե արդյոք ճիշտ համարել այս նույնացումը, մնալով լենինիզմի հողի վրա։ Վո՛չ, չի կարելի։ Յեվ ահա թե ինչու։

Առաջին։ Կոմինտերնի II կոնգրեսում Լենինի արտասանած ճառից վերը բերված ցիտատում Լենինը կուսակցության ղեկավար դերը բնավ չի նույնացնում պրոլետարիատի դիկտատուրայի հետ։ Նա խոսում է միայն այն մասին, վոր «գիտակից փոքրամասնությունը միայն (այսինքն կուսակցությունը։ Ի. Ստ.) կարող է ղեկավարել լայն բանվորական մասսաներին և նրանց իր հետևից տանել», վոր հենց այդ իմաստով «պրոլետարիատի դիկտատուրա ասելով մենք հասկանում ենք, ըստ էության*), նրա կազմակերպված և գիտակից փոքրամասնության դիկտատուրան»։ Ասել՝ «ըստ էության», դեռ չի նշանակում ասել՝ «ամբողջովին»։ Մենք հաճախ ենք ասում, վոր ազգային հարցը, ըստ էության, գյուղացիական հարց է։ Յեվ այդ միանգամայն ճիշտ է։ Բայց այդ դեռ չի նշանակում, վոր ազգային հարցն սպառվում է գյուղացիական հարցով, վոր գյուղացիական հարցը հավասա՞ր է ազգային հարցին իր ծավալով, վոր գյուղացիական հարցը նույնական է ազգային հարցի հետ։ Հարկավոր չե ապացուցել, վոր ազգային հարցն իր ծավալով

*) Ընդգծումը իմն է։ Ի. Ստ.

> մեջն է առնում պրոլետարիատի ավանգարդը, և այդ ավանգարդն է իրականացնում պրոլետարիատի դիկտատուրան։ Եվ չունենալով այնպիսի հիմք, ինչպես են արհմիությունները, չի կարելի իրականացնել դիկտատուրան, չի կարելի կատարել պետական ֆունկցիաները։ Իսկ դրանք իրականացնելու հարկ է լինում դարձյալ ինչ-որ նոր տիպի մի շարք հատուկ հիմնարկների միջոցով*), այն է՝ խորհրդային ապարատի միջոցով»*) (տե՛ս հ. XXVI, էջ 65 և 64)։

Կուսակցության ղեկավար դերի բարձրագույն արտահայտություն, օրինակ, մեզ մոտ, Խորհրդային Միության մեջ, պրոլետարիատի դիկտատուրայի յերկրում, հարկավոր է ընդունել այն փաստը, վոր մեզ մոտ վոչ մի կարևոր քաղաքական կամ կազմակերպական հարց մեր խորհրդային և ուրիշ մասսայական կազմակերպությունների կողմից չի լուծվում առանց կուսակցության ղեկավար ցուցումների։ Այս իմաստով կարելի կլիներ ասել, վոր պրոլետարիատի դիկտատուրան, ըստ էության, նրա ավանգարդի «դիկտատուրան» է, նրա կուսակցության՝ վորպես պրոլետարիատի հիմնական ղեկավար ուժի՝ «դիկտատուրան»։ Ահա թե այդ առթիվ ինչ էր ասում Լենինը Կոմինտերնի II կոնգրեսում.

> «Տեններն ասում է, վոր ինքը պրոլետարիատի դիկտատուրայի պաշտպան է, բայց պրոլետարիատի դիկտատուրան պատկերացնում է վոչ բոլորովին այնպես, ինչպես մենք ենք պատկերացնում այն։ Նա ասում է, վոր մենք, պրոլետարիատի դիկտատուրա ասելով, ըստ էության*), հասկանում ենք նրա կազմակերպված և գիտակից փոքրամասնության դիկտատուրան։ Եվ իսկապես, կապիտալիզմի դարաշրջանում, յերբ բանվորական մասսաները յենթարկվում են անընդհատ շահագործման և չեն կարողանում զարգացնել իրենց մարդկային ընդունակությունները, բանվորական քաղաքական կուսակցությունների համար ամենաբնորոշը հենց այն է, վոր նրանք կարող են ընդգրկել իրենց դասակարգի փոքրամասնությունը միայն։ Քաղաքական կուսակցությունը կարող է միավորել դասակարգի փոքրամասնությունը միայն, այնպես, ինչպես վոր իրոք գիտակից բանվորներն ամեն մի կապիտալիստական հասարակության մեջ կազմում են բոլոր բանվորների փոքրամասնությունը միայն։ Այդ պատճառով մենք ստիպված ենք ընդունել, վոր միայն այդ գիտակից փոքրամասնությունը կարող է ղեկավարել լայն բանվորական մասսաներին և նրանց իր հետևից տանել։ Եվ յեթե ընկ. Տեններն ասում է, վոր ինքը կուսակցության թշնամի չէ, բայց միև-

*) Ընդգծումն իմն է։ Ի. Ստ.։

> նույն ժամանակ կողմնակից է այն բանի, վոր ամենից լավ կազմակերպված և ամենից ավելի հեղափոխական բանվորների փոքրամասնությունը ճանապարհ ցույց տա ամբողջ պրոլետարիատին, ապա յես ասում եմ, վոր մեր միջև իրականում տարբերություն չկա» (տե՛ս հ. XXV, էջ 347)։

Սակայն նշանակո՞ւմ է այս, արդյոք, վոր պրոլետարիատի դիկտատուրայի և կուսակցության ղեկավար դերի (կուսակցության «դիկտատուրայի») միջև կարելի յե հավասարության նշան դնել, վոր առաջինը կարելի յե նույնացնել յերկրորդի հետ, վոր առաջինը կարելի յե փոխարինել յերկրորդով։ Իհարկե, չի նշանակում։ Իհարկե, չի կարելի։ Ա՛յ, օրինակ, ընկ. Սորինն ասում է, թե «պրոլետարիատի դիկտատուրան մեր կուսակցության դիկտատուրան է» (տես «Учение Ленина о партии»—«Լենինի ուսմունքը կուսակցության մասին», էջ 95)։ Այս դրույթը, ինչպես տեսնում եք, «կուսակցության դիկտատուրան» նույնացնում է պրոլետարիատի դիկտատուրայի հետ։ Կարելի՞ յե արդյոք ճիշտ համարել այս նույնացումը, մնալով լենինիզմի հողի վրա։ Վո՛չ, չի կարելի։ Եվ ահա թե ինչու։

Առաջին։ Կոմինտերնի II կոնգրեսում Լենինի արտասանած ճառից վերը բերված ցիտատում Լենինը կուսակցության ղեկավար դերը բնավ չի նույնացնում պրոլետարիատի դիկտատուրայի հետ։ Նա խոսում է միայն այն մասին, վոր «գիտակից փոքրամասնությունը միայն (այսինքն կուսակցությունը։ Ի. Ստ.) կարող է ղեկավարել լայն բանվորական մասսաներին և նրանց իր հետևից տանել», վոր հենց այդ իմաստով «պրոլետարիատի դիկտատուրա ասելով մենք հասկանում ենք, ըստ էության*), նրա կազմակերպված և գիտակից փոքրամասնության դիկտատուրան»։ Ասել՝ «ըստ էության», դեռ չի նշանակում ասել՝ «ամբողջովին»։ Մենք հաճախ ենք ասում, վոր ազգային հարցը, ըստ էության, գյուղացիական հարց է։ Եվ այդ միանգամայն ճիշտ է։ Բայց այդ դեռ չի նշանակում, վոր ազգային հարցն սպառվում է գյուղացիական հարցով, վոր գյուղացիական հարցը հավասա՞ր է ազգային հարցին իր ծավալով, վոր գյուղացիական հարցը նույնական է ազգային հարցի հետ։ Հարկավոր չէ ապացուցել, վոր ազգային հարցն իր ծավալով

*) Ընդգծումն իմն է։ Ի. Ստ.։

գյուղացիական հարցից ավելի լայն է և ավելի հարուստ։ Նույնը պետք է ասել, նմանօրինակ անալոգիայով, կուսակցության ղեկավար դերի և պրոլետարիատի դիկտատուրայի մասին։ Յեթե կուսակցությունը պրոլետարիատի դիկտատուրա յե անցկացնում, և այս իմաստով պրոլետարիատի դիկտատուրան, ըստ էության, նրա կուսակցության «դիկտատուրան» է, ապա այդ դեռ չի նշանակում, թե «կուսակցության դիկտատուրան» (ղեկավար դերը) նույնական է պրոլետարիատի դիկտատուրայի հետ, թե առաջինը հավասար է յերկրորդին իր ծավալով։ Հարկավոր չէ ապացուցել, վոր պրոլետարիատի դիկտատուրան ծավալով ավելի լայն և ավելի հարուստ է կուսակցության ղեկավար դերից։ Կուսակցությունը պրոլետարիատի դիկտատուրա յե անցկացնում, բայց նա պրոլետարիատի դիկտատուրա յե անցկացնում և վոչ թե վորևէ այլ դիկտատուրա։ Ով կուսակցության ղեկավար դերը նույնացնում է պրոլետարիատի դիկտատուրայի հետ, նա պրոլետարիատի դիկտատուրան նենգափոխում է կուսակցության «դիկտատուրայով»։

Յերկրորդ։ Պրոլետարիատի մասսայական կազմակերպությունների վոչ մի կարևոր վճիռ չի ընդունվում առանց կուսակցության ղեկավար ցուցումների։ Այս միանգամայն ճիշտ է։ Բայց արդյո՞ք այս նշանակում է, վոր պրոլետարիատի դիկտատուրան սպառվում է կուսակցության ղեկավար ցուցումներով։ Արդյո՞ք այս նշանակում է, վոր կուսակցության ղեկավար ցուցումները, այդ պատճառով, կարելի յե նույնացնել պրոլետարիատի դիկտատուրայի հետ։ Իհարկե, չի նշանակում։ Պրոլետարիատի դիկտատուրան բաղկացած է կուսակցության ղեկավար ցուցումներից, պլյուս այդ ցուցումների կիրառումը պրոլետարիատի մասսայական կազմակերպությունների կողմից, պլյուս նրանց կենսագործումը կյանքում՝ բնակչության կողմից։ Այստեղ մենք գործ ունենք, ինչպես տեսնում եք, մի ամբողջ շարք անցումների և միջակա աստիճանների հետ, վորոնք կազմում են պրոլետարիատի դիկտատուրայի ամենևին վոչ անկարևոր մոմենտը։ Կուսակցության ղեկավար ցուցումների և դրանք կյանքում կենսագործելու միջև ընկած են, հետևաբար, ղեկավարվողների կամքն ու գործողությունները, դասակարգի կամքն ու գործողությունները, այդպիսի ցուցումները պաշտպանելու նրա պատրաստակամությունը (կամ չցանկանալը), այդպիսի ցուցումները կիրառելու նրա հմտությունը (կամ անհմտությունը), նրա հմտությունը (կամ անհմտությունը)՝ կիրառելու դրանք հենց այնպես, ինչպես իրադրությունն է պահանջում այդ։ Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր ղեկավարությունն իր վրա վերցրած կուսակցությունը չի կարող հաշվի չառնել ղեկավարվողների կամքը, կացությունը, գիտակցության մակարդակը, չի կարող հաշվից դուրս գցել իր դասակարգի կամքը, կացությունը և գիտակցության մակարդակը։ Ուստի, ով կուսակցության ղեկավար դերը նույնացնում է պրոլետարիատի դիկտատուրայի հետ, նա դասակարգի կամքն ու գործողությունները նենգափոխում է կուսակցության ցուցումներով։

Յերրորդ։ «Պրոլետարիատի դիկտատուրան,—ասում է Լենինը,—հաղթած և քաղաքական իշխանությունն իր ձեռքը վերցրած պրոլետարիատի դասակարգային կռիվն է» (տե՛ս հ. XXIV, եջ 311)։ Ինչո՞վ կարող է արտահայտվել դասակարգային այդ կռիվը։ Նա կարող է արտահայտվել պրոլետարիատի մի շարք զինված յելույթներով ընդդեմ տապալված բուրժուազիայի արշավանքների (вылазки) կամ օտարերկրյա բուրժուազիայի ինտերվենցիայի։ Նա կարող է արտահայտվել քաղաքացիական պատերազմով, յեթե պրոլետարիատի իշխանությունը դեռ ամրացած չէ։ Նա կարող է արտահայտվել պրոլետարիատի լայն կազմակերպչական և շինարարական աշխատանքով, գործի մեջ ներգրավելով լայն մասսաներին, յերբ իշխանությունն արդեն ամրացած է։ Բոլոր այս դեպքերում գործող անձը պրոլետարիատն է, վորպես դասակարգ։ Չի պատահել, վոր կուսակցությունը, միմիայն կուսակցությունը, կազմակերպի բոլոր այդ յելույթները բացառապես իր սեփական ուժերով, առանց դասակարգի աջակցության։ Սովորաբար նա միայն ղեկավարում է այդ յելույթները և ղեկավարում է այն չափով, ինչ չափով իր կողմում ունի դասակարգի աջակցությունը։ Վորովհետև կուսակցությունը չի կարող ծածկել (покрыть), չի կարող փոխարինել դասակարգին։ Վորովհետև կուսակցությունը, չնայած իր ամբողջ կարևոր, ղեկավար դերին, այնուամենայնիվ, մնում է վորպես դասա-

կարգի մասը: Ուստի նա, ով կուսակցության ղեկավար դերը նույնացնում է պրոլետարիատի դիկտատուրայի հետ, նա դասակարգը նենգափոխում է կուսակցությունով:

Չորրորդ: Կուսակցությունն իրականացնում է պրոլետարիատի դիկտատուրան: «Կուսակցությունը, դա—պրոլետարիատի անմիջականորեն կառավարող ավանգարդն է, դա—ղեկավարն է» (Լենին): Այս իմաստով է կուսակցությունը վերցնում իշխանությունը, կուսակցությունը կառավարում յերկիրը: Բայց այդ դեռ չի նշանակում, թե կուսակցությունն իրականացնում է պրոլետարիատի դիկտատուրան՝ պետական իշխանությունը զանց առնելով, առանց պետական իշխանության, թե կուսակցությունը կառավարում է յերկիրը՝ խորհուրդները զանց առնելով, վոչ խորհուրդների միջոցով: Այդ դեռ չի նշանակում, թե կուսակցությունը կարելի յե նույնացնել խորհուրդների հետ, պետական իշխանության հետ: Կուսակցությունն իշխանության միջուկն է: Բայց նա պետական իշխանություն չէ և չի կարող նույնացվել պետական իշխանության հետ: «Վորպես կառավարող կուսակցություն,—ասում է Լենինը,—մենք չէյինք կարող կուսակցական «վերնախավերի» հետ չմիաձուլել խորհրդային «վերնախավերը», նրանք մեզ մոտ միաձուլված են և այդպես էլ կլինեն» (տե՛ս հ. XXVI, եջ 208): Այս միանգամայն ճիշտ է: Բայց սրանով Լենինը բնավ չի ուզում ասել, թե մեր խորհրդային հաստատությունները ամբողջությամբ առած, որինակ՝ մեր բանակը, մեր տրանսպորտը, մեր տնտեսական հիմնարկները և այլն՝ մեր կուսակցության հիմնարկներն են, թե կուսակցությունը կարող է փոխարինել խորհուրդներին և նրանց ճյուղավորումներին, թե կուսակցությունը կարելի յե նույնացնել պետական իշխանության հետ: Լենինը բազմիցս ասել է, վոր «խորհուրդների սիստեմը—պրոլետարիատի դիկտատուրան է», վոր «խորհրդային իշխանությունը—պրոլետարիատի դիկտատուրան է» (տե՛ս հ. XXIV, եջ 14 և 15), բայց նա յերբեք չի ասել, թե կուսակցությունը պետական իշխանություն է, թե խորհուրդները և կուսակցությունը միևնույնն են: Կուսակցությունը, վոր ունի միքանի հարյուր հազար անդամ, ղեկավարում է միքանի միլիոն կուսակցական և անկուսակցական մարդ ընդգրկող խորհուրդներին և նրանց ճյու-

ղավորություններին կենտրոնում և տեղերում, բայց նա ինքը չի կարող և չպետք է փոխարինի նրանց: Ահա թե ինչու Լենինն ասում է, վոր «դիկտատուրան խորհուրդներում կազմակերպված պրոլետարիատն է իրականացնում, վորին ղեկավարում է բոլշևիկների կոմունիստական կուսակցությունը»,—վոր «կուսակցության ամբողջ աշխատանքը խորհուրդների միջոցով*) է անցնում, վորոնք միավորում են աշխատավոր մասսաներին՝ առանց պրոֆեսիաների խտրության» (տե՛ս հ. XXV, եջ 193, 194), վոր դիկտատուրան «հարկե է լինում իրականացնելու... խորհրդային ապարատի միջոցով»*) (տե՛ս հ. XXVI, եջ 64): Ուստի, ով կուսակցության ղեկավար դերը նույնացնում է պրոլետարիատի դիկտատուրայի հետ, նա խորհուրդները, պետական իշխանությունը, նենգափոխում է կուսակցությամբ:

Հինգերորդ: Պրոլետարիատի դիկտատուրայի հասկացողությունը պետական հասկացողություն է: Պրոլետարիատի դիկտատուրան պարտավորապես ներառում է բռնության հասկացողությունը: Առանց բռնության դիկտատուրա չի լինում, յեթե դիկտատուրան հասկանանք այդ բառի ճշգրիտ իմաստով: Լենինը պրոլետարիատի դիկտատուրան բնորոշում է վորպես «անմիջականորեն բռնության վրա հենվող իշխանություն» (տե՛ս հ. XIX, եջ 315): Ուստի խոսել կուսակցության դիկտատուրայի մասին՝ պրոլետարների դասակարգի նկատմամբ և այդ դիկտատուրան նույնացնել պրոլետարիատի դիկտատուրայի հետ՝ նշանակում է խոսել այն մասին, վոր կուսակցությունն իր դասակարգի նկատմամբ պետք է լինի վո՛չ միայն ղեկավար, վո՛չ միայն առաջնորդ և ուսուցիչ, այլև մի տեսակ պետական իշխանություն, վորը բռնություն է կիրառում նրա նկատմամբ: Այդ պատճառով, ով «կուսակցության դիկտատուրան» նույնացնում է պրոլետարիատի դիկտատուրայի հետ, նա լռելյայն յելնում է այն բանից, վոր կուսակցության հեղինակությունը կարելի յե կառուցել բռնության վրա,—մի բան, վորն աբսուրդ է և վորը միանգամայն անհամատեղելի յե լենինիզմի հետ: Կուսակցության հեղինակությունը պահպանվում է բանվոր դասակարգի վստահությամբ: Իսկ բանվոր դասակարգի վստահությունը ձեռք է բերվում վոչ բռնությամբ,—բռնությունը միայն սպա-

*) Ընդգծումն իմն է: Ի. Ստ.

նում է այն,—այլ կուսակցության ճիշտ թեորիայով, կուսակցության ճիշտ քաղաքականությամբ, կուսակցության նվիրվածությամբ բանվոր դասակարգին, նրա կապով բանվոր դասակարգի մասսաների հետ, նրա պատրաստակամությամբ, նրա հմտությամբ՝ համոզելու մասսաներին, վոր իր լոզունգները ճիշտ են։

Իսկ այս ամենից ի՞նչ է հետևում։

Իսկ սրանից հետևում է այն, վոր՝

1) կուսակցության դիկտատուրա խոսքը Լենինը գործ է ածում վո՛չ թե այդ բառի ճշգրիտ իմաստով («բռնության վրա հենվող իշխանություն»), այլ փոխաբերական իմաստով, ղեկավարության իմաստով.

2) ով կուսակցության ղեկավարությունը նույնացնում է պրոլետարիատի դիկտատուրայի հետ, նա խեղաթյուրում է Լենինին, սխալ կերպով կուսակցությանը վերագրելով բռնության ֆունկցիաներ ամբողջ բանվոր դասակարգի նկատմամբ.

3) ով կուսակցությանը վերագրում է նրան վոչ-հատուկ բռնության ֆունկցիաներ բանվոր դասակարգի նկատմամբ, նա խախտում է ավանգարդի ու դասակարգի, կուսակցության ու պրոլետարիատի ճիշտ փոխհարաբերությունների տարրական պահանջները։

Այսպիսով, մենք ընդհուպ մոտեցանք կուսակցության և դասակարգի, բանվոր դասակարգի մեջ յեղած կուսակցականների և անկուսակցականների փոխհարաբերությունների հարցին։

Լենինն այդ փոխհարաբերությունները բնորոշում է վորպես «փոխվստահություն բանվոր դասակարգի ավանգարդի և բանվորական մասսայի միջև» (տե՛ս հ. XXVI, եջ 235)։

Ի՞նչ է նշանակում այս։

Այս նշանակում է, նախ՝ վոր կուսակցությունը պետք է զգայուն կերպով ունկնդրի մասսաների ձայնին, վոր նա պետք է ուշադիր վերաբերվի մասսաների հեղափոխական բնազդին, վոր նա պետք է ուսումնասիրի մասսաների պայքարի պրակտիկան, դրանով ստուգելով իր քաղաքականության ճշտությունը, վոր նա պետք է, հետևաբար, վո՛չ միայն սովորեցնի, այլև սովորի մասսաներից։

Յերկրորդ՝ այս նշանակում է, վոր կուսակցությունը պետք

է օրըստօրե նվաճի պրոլետարական մասսաների վստահությունը, վոր նա պետք է իր քաղաքականությամբ և իր աշխատանքով կռվի իր համար մասսաների աջակցությունը, վոր նա պետք է վո՛չ թե հրամայի, այլ համոզի նախ և առաջ, մասսաների համար հեշտացնելով կուսակցության քաղաքականության ճշտությունը սեփական փորձով ճանաչելը, վոր նա պետք է, հետևաբար, լինի իր դասակարգի ղեկավարը, առաջնորդը, ուսուցիչը։

Այս պայմանների խախտումը նշանակում է ավանգարդի և դասակարգի ճիշտ փոխհարաբերությունների խախտում, «փոխվստահության» խարխլում, թե՛ դասակարգային, թե՛ կուսակցական կարգապահության խորտակում։

«Անշուշտ,—ասում է Լենինը,—գրեթե ամեն վոք այժմ արդեն տեսնում է, վոր բոլշևիկներն իշխանության գլուխ մնալ չեյին կարող վո՛չ թե 2½ տարի, այլ նույնիսկ 2½ ամիս, յեթե չլիներ մեր կուսակցության մեջ հաստատված խստագույն, ճշմարտապես յերկաթյա կարգապահությունը, յեթե չլիներ բանվոր դասակարգի վողջ մասսայի ամենալիակատար ու անձնվեր աջակցությունը նրան*), այսինքն աջակցությունն այն ամենի, ինչ վոր բանվոր դասակարգի մեջ խորհող, ազնիվ, անձնազոհ, ազդեցիկ է, ինչ վոր ընդունակ է իր հետևից տանելու կամ հրապուրելու հետամնաց խավերին» (տե՛ս հ. XXV, եջ 173)։

«Պրոլետարիատի դիկտատուրան,—ասում է այնուհետև Լենինը,—համառ պայքար է, արյունոտ և անարյուն, բռնի և խաղաղ, ռազմական և տնտեսական, մանկավարժական և ադմինիստրատորական, պայքար հին հասարակության ուժերի և տրադիցիաների դեմ։ Միլիոնավորների և տասնյակ միլիոնավորների սովորության ուժն ամենասոսկալի ուժն է։ Առանց պայքարում կոփված և յերկաթյա կուսակցության, առանց այնպիսի կուսակցության, վորը վայելելիս լինի այդ ամենի վստահությունը, ինչ ազնիվ է տվյալ դասակարգում*), առանց այնպիսի կուսակցության, վորը կարող է հետևել մասսայի տրամադրությանը և ազդել նրա վրա,—հաջողությամբ մղել այդպիսի պայքարն անհնարին է» (տե՛ս հ. XXV, եջ 191)։

Բայց կուսակցությունն ի՞նչպես է ձեռք բերում դասակարգի այդ վստահությունն ու աջակցությունը։ Ի՞նչպես է կազմավորվում պրոլետարիատի դիկտատուրայի համար անհրաժեշտ յերկաթյա կարգապահությունը, ի՞նչ հողի վրա յե նա աճում։

Ահա թե ինչ է ասում դրա մասին Լենինը.

*) Ընդգծումն իմն է. Ի. Ստ.։

«Ինչո՞վ է պահպանվում պրոլետարիատի հեղափոխական կուսակցության կարգապահությունը, ինչո՞վ է նա ստուգվում, ինչո՞վ է ամրապնդվում: Նախ և առաջ՝ պրոլետարական ավանգարդի գիտակցականությամբ և նրա նվիրվածությամբ հեղափոխությանը, նրա տոկունությամբ, անձնազոհությամբ, հերոսությամբ: Երկրորդ՝ աշխատավորների ամենալայն մասսայի*), առաջին հերթին պրոլետարական, բայց նաև վոչ-պրոլետարական աշխատավոր մասսայի հետ կապվելու, մոտիկանալու, վորոշ չափով, յեթե կուզեք, ձուլվելու նրա ընդունակությամբ: Երրորդ՝ այդ ավանգարդի կողմից իրագործվող քաղաքական ղեկավարության ճշտությամբ, նրա քաղաքական ստրատեգիայի և տակտիկայի ճշտությամբ, պայմանով, վոր ամենալայն մասսաները սեփական փորձով համոզվեն այդ ճշտությանը: Առանց այս պայմանների անիրագործելի յե կարգապահությունը հեղափոխական մի կուսակցության մեջ, վորն իսկապես ընդունակ է առաջավոր դասակարգի կուսակցությունը լինելու,—դասակարգի, վորը պետք է տապալի բուրժուազիային և փոխակերպի ամբողջ հասարակությունը: Առանց այս պայմանների՝ կարգապահություն ստեղծելու փորձերն անխուսափելիորեն դառնում են դատարկ բան, ֆրազ, ծառըրտուք: Իսկ այս պայմաններն էլ, մյուս կողմից, չեն կարող մեկեն ծագել: Նրանք մշակվում են միայն յերկարատև աշխատանքով, ծանր փորձով: Նրանց մշակումը հեշտանում է հեղափոխական ճիշտ թեորիայով միայն, վորը, իր հերթին, դոգմա չէ, այլ վերջնականապես կազմավորվում է իսկապես մասսայական և իսկապես հեղափոխական շարժման պրակտիկայի հետ սերտորեն կապակցվելով միայն» (տե՛ս հ. XXV, էջ 174):

Եվ ապա.

«Կապիտալիզմին հաղթելու հաջողության համար պահանջվում է ճիշտ հարաբերակցություն ղեկավար, կոմունիստական կուսակցության, հեղափոխական դասակարգ՝ պրոլետարիատի և մասսայի, այսինքն՝ աշխատավորների ու շահագործվողների ամբողջ զանգվածի միջև: Միայն կոմունիստական կուսակցությունը, յեթե նա իսկապես հանդիսանում է հեղափոխական դասակարգի ավանգարդը, յեթե նա ներառում է այդ դասակարգի բոլոր լավագույն ներկայացուցիչներին, յեթե նա բաղկացած է միանգամայն գիտակից ու նվիրված կոմունիստներից, վորոնք լուսավորված և կոփված են հեղափոխական համառ պայքարի փորձով, յեթե այդ կուսակցությունը կարողացել է իրեն անխզելիորեն կապել իր դասակարգի ամբողջ կյանքի հետ, և այդ դասակարգի միջոցով էլ շահագործվողների ամբողջ մասսայի հետ, և այդ դասակարգին ու այդ մասսային լիակատար վստահություն ներշնչել*),—միայն այդպիսի կուսակցությունն է ընդունակ ղեկավարելու պրոլետարիատին ամենա-

*) Ընդգծումն իմն է: Ի. Ստ.:

անողոք, վճռական, վերջին պայքարում ընդդեմ կապիտալիզմի բոլոր ուժերի: Մյուս կողմից, միայն այդպիսի կուսակցության ղեկավարությամբ է պրոլետարիատն ընդունակ ծավալելու իր հեղափոխական գրոհի ամբողջ հզորությունը՝ վոչնչի վերածելով կապիտալիզմի փչացրած բանվորական արիստոկրատիայի վոչ մեծ փոքրամասնության, հին տրեդ-յունիոնիստական ու կոոպերատիվ առաջնորդների և այլոց անխուսափելի ապատիան ու մասամբ դիմադրությունը,—ընդունակ ծավալելու իր ամբողջ ուժը, վորն անչափելիորեն ավելի յե, քան նրա բաժինը բնակչության մեջ՝ կապիտալիստական հասարակության բուն իսկ տնտեսական կառուցվածքի շնորհիվ» (տե՛ս հ. XXV, էջ 315):

Այս ցիտատներից հետևում է, վոր՝

1) կուսակցության հեղինակությունը և պրոլետարիատի դիկտատուրայի համար անհրաժեշտ յերկաթյա կարգապահությունը բանվոր դասակարգի մեջ կառուցվում են վո՛չ թե ահի կամ կուսակցության «անսահմանափակ» իրավունքների վրա, այլ բանվոր դասակարգի կողմից դեպի կուսակցությունը տածած վստահության վրա, բանվոր դասակարգի կողմից կուսակցությանը ցույց տրվող աջակցության վրա.

2) բանվոր դասակարգի վստահությունը դեպի կուսակցությունը մեկեն չի ձեռք բերվում և վոչ էլ բանվոր դասակարգի նկատմամբ բռնություն գործ դնելու միջոցով, այլ կուսակցության յերկարատև աշխատանքով մասսաների մեջ, կուսակցության ճիշտ քաղաքականությամբ, կուսակցության շնորհքով՝ մասսաներին նրանց սեփական փորձով իր քաղաքականության ճշտությանը համոզելու, կուսակցության շնորհքով՝ իր համար բանվոր դասակարգի աջակցությունն ապահովելու, իր հետևից բանվոր դասակարգի մասսաներին տանելու.

3) առանց կուսակցության ճիշտ քաղաքականության, վոր պետք է ամրապնդված լինի մասսաների պայքարի փորձով, և առանց բանվոր դասակարգի վստահության՝ կուսակցության իսկական ղեկավարություն չի լինում և չի կարող լինել.

4) կուսակցությունը և նրա ղեկավարությունը, յեթե կուսակցությունը վայելում է դասակարգի վստահությունը և յեթե այդ ղեկավարությունն իսկական ղեկավարություն է հանդիսանում, չեն կարող հակադրվել պրոլետարիատի դիկտատուրային, վորովհետև առանց բանվոր դասակարգի վստահությունը

վայելող կուսակցության ղեկավարության (կուսակցության «դիկտատուրայի»), անհնարին է պրոլետարիատի փոքրիշատե ամուր դիկտատուրա։

Կուսակցության հեղինակությունը և յերկաթյա կարգապահությունն առանց այս պայմանների կամ դատարկ ֆրազ է, կամ սնապարծություն և ավանտյուրա։

Պրոլետարիատի դիկտատուրան չի կարելի հակադրել կուսակցության ղեկավարությանը («դիկտատուրային»)։ Չի կարելի, վորովհետև կուսակցության ղեկավարությունը գլխավորն է պրոլետարիատի դիկտատուրայի մեջ, յեթե նկատի ունենանք փոքրիշատե ամուր և լիակատար դիկտատուրա, և վոչ թե այնպիսին, ինչպիսին էր, օրինակ, Փարիզի կոմունան, վորը լիակատար և հաստատուն դիկտատուրա չէր ներկայացնում։ Չի կարելի, վորովհետև պրոլետարիատի դիկտատուրան և կուսակցության ղեկավարությունը գտնվում են, այսպես ասած՝ աշխատանքի միևնույն գծի վրա, գործում են միևնույն ուղղությամբ։

> «Հենց հարցի դրումը միայն,—ասում է Լենինը,—«կուսակցության դիկտատուրա, թե՞ դասակարգի դիկտատուրա, առաջնորդների դիկտատուրա (կուսակցություն), թե՞ մասսաների դիկտատուրա (կուսակցություն)»՝ վկայում է մտքի ամենաանհերևակայելի և անելանելի շփոթության մասին... Բոլորին հայտնի յե, վոր մասսաները բաժանվում են դասակարգերի... վոր դասակարգերին սովորաբար և մեծ մասամբ ղեկավարում են՝ գոնե ժամանակակից քաղաքակիրթ յերկիրներում՝ քաղաքական կուսակցությունները, վոր քաղաքական կուսակցություններին, վորպես ընդհանուր կանոն, կառավարում են առաջնորդ կոչվող ամենից ավելի հեղինակավոր, ազդեցիկ, փորձված, ամենապատասխանատու պաշտոնների համար ընտրվող անձերի փոքրիշատե կայուն խմբերը... Հասնել... ընդհանրապես մասսաների դիկտատուրան առաջնորդների դիկտատուրային հակադրելուն—այդ ծիծաղաշարժ անհեթեթություն և հիմարություն է» (տե՛ս հ. XXV, եջ 188 և 189)։

Այս միանգամայն ճիշտ է։ Բայց այս ճիշտ դրույթը յելնում է այն նախադրյալից, վոր առկա յեն ճիշտ փոխհարաբերություններ ավանգարդի ու բանվորական մասսաների միջև, կուսակցության ու դասակարգի միջև։ Նա յելնում է այն յենթադրությունից, վոր փոխհարաբերություններն ավանգարդի ու

դասակարգի միջև մնում են, այսպես ասած՝ նորմալ, մնում են «փոխվստահության» սահմաններում։

Լավ, բայց ի՞նչպես վարվենք, յեթե ճիշտ փոխհարաբերությունների ավանգարդի ու դասակարգի միջև, յեթե «փոխվստահության» հարաբերությունները կուսակցության ու դասակարգի միջև խախտված են։ Ի՞նչպես վարվենք, յեթե կուսակցությունն ինքն սկսում է այս կամ այն կերպ իրեն հակադրել դասակարգին, խախտելով դասակարգի հետ ունեցած ճիշտ փոխհարաբերությունների հիմունքները, խախտելով «փոխվստահության» հիմունքները։ Հնարավո՞ր են արդյոք առհասարակ այսպիսի դեպքեր։ Այո, հնարավոր են։ Դրանք հնարավոր են՝

1) յերբ կուսակցությունն սկսում է մասսաների մեջ իր հեղինակությունը կառուցել վո՛չ թե իր աշխատանքի և մասսաների վստահության վրա, այլ իր «անսահմանափակ» իրավունքների վրա.

2) յերբ կուսակցության քաղաքականությունն ակնհայտորեն ճիշտ չէ, իսկ նա չի ցանկանում վերանայել և ուղղել իր սխալը.

3) յերբ քաղաքականությունն ընդհանուր առմամբ ճիշտ է, բայց մասսաները դեռևս պատրաստ չեն յուրացնելու այն, իսկ կուսակցությունը չի ցանկանում կամ չի կարողանում սպասել, վորպեսզի մասսաներին հնարավորություն տա սեփական փորձով համոզվելու կուսակցության քաղաքականության ճշտությանը։

Մեր կուսակցության պատմությունը տալիս է այդպիսի դեպքերի մի ամբողջ շարք։ Տարբեր խմբավորումներն ու ֆրակցիաները մեր կուսակցության մեջ ընկնում և ցրիվ եյին գալիս այն պատճառով, վոր նրանք խախտում եյին այդ յերեք պայմաններից վորևէ մեկը, իսկ յերբեմն էլ բոլոր այդ պայմանները՝ միասին առած։

Բայց սրանից հետևում է, վոր պրոլետարիատի դիկտատուրայի հակադրումը կուսակցության «դիկտատուրային» (ղեկավարությանը) ճիշտ չի կարող ճանաչվել լոկ այն դեպքում՝

1) յերբ բանվոր դասակարգի նկատմամբ կուսակցության դիկտատուրա ասելով հասկանանք վո՛չ թե դիկտատուրա այս բառի բուն իմաստով («բռնության վրա հենվող իշխանու-

թյուն»), այլ կուսակցության ղեկավարություն, վորը բացառում է բռնությունն ամբողջ դասակարգի վերաբերմամբ, նրա մեծամասնության վերաբերմամբ, ինչպես վոր հենց Լենինն էլ հասկանում է այդ.

2) յերբ կուսակցությունն ունի դասակարգի իսկական ղեկավարը լինելու տվյալներ, այսինքն՝ յեթե կուսակցության քաղաքականությունը ճիշտ է, յեթե այդ քաղաքականությունը համապատասխանում է դասակարգի շահերին.

3) յերբ դասակարգը, յեթե դասակարգի մեծամասնությունն ընդունում է այդ քաղաքականությունը, յուրացնում է այն, կուսակցության աշխատանքի շնորհիվ համոզվում է այդ քաղաքականության ճշտությանը, վստահում է կուսակցությանը և աջակցում է նրան:

Այս պայմանների խախտումն անխուսափելիորեն առաջ է բերում կոնֆլիկտ կուսակցության և դասակարգի միջև, պառակտում նրանց միջև, նրանց հակադրումը միմյանց:

Կարելի՞ յե արդյոք կուսակցության ղեկավարությունն ուժով փաթաթել դասակարգի վզին: Վոչ, չի կարելի: Համենայն դեպս՝ այդպիսի ղեկավարությունը չի կարող փոքրիշատե տեվական լինել: Կուսակցությունը, յեթե նա կամենում է մնալ պրոլետարիատի կուսակցություն, պետք է իմանա, վոր ինքն ամենից առաջ և գլխավորապես բանվոր դասակարգի ղեկավարն է, առաջնորդը, ուսուցիչը: Մենք չենք կարող մոռանալ Լենինի այն խոսքերը, վոր նա ասել է սրա մասին «Պետություն և հեղափոխություն» բրոշյուրում.

«Բանվորական կուսակցություն դաստիարակելով՝ մարքսիզմը դաստիարակում է պրոլետարիատի ավանգարդը, վորն ընդունակ է վերցնելու իշխանությունը և ամբողջ ժողովուրդը տանելու դեպի սոցիալիզմ, ուղղություն տալու և կազմակերպելու նոր հասարակարգը, լինելու բոլոր աշխատավորների և շահագործվողների ուսուցիչը, ղեկավարը, առաջնորդը*)՝ իր հասարակական կյանքն առանց բուրժուազիայի և բուրժուազիայի դեմ կառուցելու գործում» (տե՛ս հ. XXI, եջ 386):

Կարելի՞ յե արդյոք ընդունել, վոր կուսակցությունը դասակարգի իսկական ղեկավարն է, յեթե նրա քաղաքականությունը սխալ է, յեթե նրա քաղաքականությունն ընդհարվում է դասակարգի շահերի հետ: Իհարկե, չի կարելի: Այդպիսի դեպքերում կուսակցությունը, յեթե նա ցանկանում է մնալ ղեկավար, պետք է վերանայի իր քաղաքականությունը, պետք է ուղղի իր քաղաքականությունը, պետք է ընդունի իր սխալը և ուղղի այն: Այս դրույթի հաստատման համար կարելի յեր վկայակոչել թեկուզ այնպիսի մի փաստ մեր կուսակցության պատմությունից, ինչպես պարենմասնատրման վերացման ժամանակաշրջանն է, յերբ բանվորական և գյուղացիական մասսաներն ակնհայտորեն դժգոհ յեղան մեր քաղաքականությունից, և յերբ կուսակցությունը դիմեց, բացահայտ ու ազնիվ կերպով դիմեց, այդ քաղաքականության վերանայմանը: Ահա թե այն ժամանակ ինչ եր ասում Լենինը X համագումարում՝ պարենմասնատրումը վերացնելու և նոր տնտեսական քաղաքականություն մտցնելու հարցի առթիվ.

«Մենք չպետք է ջանանք վորևե բան թաքցնել, այլ պետք է ասենք ուղղակի, վոր գյուղացիությունը դժգոհ է մեր և իր միջև հաստատված հարաբերությունների ձևից, վոր նա փոխհարաբերությունների այդ ձևը չի ուզում և այսուհետև այդպես գոյություն չի ունենալու: Այս անվիճելի յե: Այս կամքն արտահայտվել է վորոշակի: Դա աշխատավոր բնակչության հսկայական մասսաների կամքն է: Մենք այդ պետք է հաշվի առնենք, և մենք բավականաչափ զգաստ քաղաքագետներ ենք, վորպեսզի ուղղակի ասենք. յեկեք վերանայենք մեր քաղաքականությունը գյուղացիության վերաբերմամբ»*) (տե՛ս հ. XXVI, եջ 238):

Կարելի՞ յե արդյոք ընդունել, վոր մասսաների վճռողական յելույթների կազմակերպման նախաձեռնությունն ու ղեկավարությունը կուսակցությունն իր վրա պետք է վերցնի սոսկ այն հիման վրա, վոր նրա քաղաքականությունն ընդհանուր առմամբ ճիշտ է, յերբ այդ քաղաքականությունը դեռևս դասակարգի վստահությունն ու աջակցությունը չի վայելում, ասենք թե՝ վերջինիս քաղաքական հետամնացության պատճառով, յերբ կուսակցությանը դեռևս չի հաջողվել համոզելու դասակարգին, վոր իր քաղաքականությունը ճիշտ է, ասենք թե՝ այն պատճառով, վոր անցքերը դեռ չեն հասունացել: Վոչ, չի կարելի: Այսպիսի դեպքերում կուսակցությունը, յեթե նա

*) Ընդգծումն իմն է: Ի. Ստ.:

*) Ընդգծումն իմն է: Ի. Ստ.:

ցանկանում ե իսկական ղեկավար լինել, պետք ե կարողանա ապացուցել, պետք ե համոզի մասսաներին, վոր իր քաղաքականությունը ճիշտ ե, պետք ե օգնի մասսաներին, վոր իրենց սեփական փորձով համոզվեն այդ քաղաքականության ճշտությանը։

«Յեթե հեղափոխական կուսակցությունը,—ասում ե Լենինը,— մեծամասնություն չունի հեղափոխական դասակարգերի առաջավոր ջոկատներում և յերկրում, ապա խոսք չի կարող լինել ապստամբության մասին» (տե՛ս հ. XXI, էջ 282)։

«Առանց բանվոր դասակարգի մեծամասնության հայացքների փոփոխության՝ հեղափոխությունն անհնարին ե, իսկ այդ փոփոխությունն ստեղծվում ե մասսաների քաղաքական փորձով» (տե՛ս հ. XXV, էջ 223)։

«Պրոլետարական ավանգարդը գաղափարապես նվաճված ե։ Այս գլխավորն ե։ Առանց դրան չի կարելի անել նույնիսկ առաջին քայլը դեպի հաղթություն։ Բայց դրանից մինչև հաղթությունը դեռևս բավական հեռու յե։ Միայն ավանգարդով հաղթել չի լինի։ Վճռական մարտի նետել միմիայն ավանգարդը, յերբ դեռ ամբողջ դասակարգը, դեռ լայն մասսաները չեն գրավել ավանգարդին կամ ուղղակի աջակցելու, կամ, գոնե, նրա նկատմամբ բարյացակամ չեզոքություն պահպանելու դիրք և նրա հակառակորդին աջակցելու լիակատար անընդունակության դիրք—վո՛չ միայն հիմարություն կլիներ, այլև հանցագործություն։ Իսկ վորպեսզի իսկապես ամբողջ դասակարգը, վորպեսզի կապիտալի կողմից ճնշվածների և աշխատավորների իսկապես լայն մասսաները հանեն այդպիսի դիրքի, դրա համար միայն պրոպագանդը, միայն ագիտացիան քիչ ե։ Դրա համար հարկավոր ե այդ մասսաների սեփական քաղաքական փորձը» (տե՛ս նույն տեղը, էջ 229)։

Հայտնի յե, վոր մեր կուսակցությունը հենց այդպես էլ վարվում եր Լենինի ապրիլյան թեզիսներից մինչև 1917 թվի հոկտեմբերյան ապստամբությունը հասնող ժամանակաշրջանի ընթացքում։ Յեվ հենց այն պատճառով, վոր նա գործում եր Լենինի այդ ցուցումներով, նա ապստամբությունը շահեց։

Սրա՛նք են հիմնականում ավանգարդի և դասակարգի ճիշտ փոխհարաբերությունների պայմանները։

Ի՞նչ ե նշանակում ղեկավարել, յեթե կուսակցության քաղաքականությունը ճիշտ ե, իսկ ճիշտ հարաբերություններն ավանգարդի և դասակարգի միջև չեն խախտվում։

Ղեկավարել այդպիսի պայմաններում — նշանակում ե կարողանալ համոզել մասսաներին կուսակցության քաղաքականության ճշտությանը, առաջադրելու ու անցկացնելու այնպիսի լոզունգներ, վորոնք մասսաներին մոտեցնում են կուսակցության դիրքերին և նրանց համար հեշտացնում են կուսակցության քաղաքականության ճշտությունը իրենց սեփական փորձով ճանաչելը,—նշանակում ե մասսաներին բարձրացնել մինչև կուսակցության գիտակցության մակարդակը և, այդպիսով, ապահովել մասսաների աջակցությունը, նրանց պատրաստակամությունը վճռական պայքարի համար։

Այս պատճառով համոզելու մեթոդը կուսակցության կողմից դասակարգին ղեկավարելու հիմնական մեթոդն ե։

«Յեթե մենք,—ասում ե Լենինը,—այս պահին Ռուսաստանում յերկու և կես տարի Ռուսաստանի և Անտանտի բուրժուազիայի դեմ տարած չլսված հաղթություններից հետո, արհմիությունների մեջ ընդունվելու համար պայման դնեյինք «դիկտատուրայի ճանաչումը», մենք հիմարություն արած կլինեյինք, կփչացնեյինք մասսաների վրա ունեցած մեր ազդեցությունը, կօգնեյինք մենշևիկներին։ Վորովհետև կոմունիստների ամբողջ խնդիրն ե՝ կարողանալ համոզել հետամնացներին, կարողանալ աշխատել նրանց շրջանում և վոչ թե նրանցից պատվարվել (отгораживаться) հնարովի յերեխայական-«ձախ» լոզունգներով» (տե՛ս հ. XXV, էջ 199)։

Այս չի նշանակում, իհարկե, թե կուսակցությունը պետք ե համոզի բոլոր բանվորներին, մինչև վերջին մարդը, թե միայն դրանից հետո կարելի յե դիմել գործողությունների, թե միայն դրանից հետո կարելի յե գործողություններ սկսել։ Ամենևի՛ն։ Այդ նշանակում ե լոկ այն, վոր նախքան վճռողական քաղաքական գործողությունների դիմելը կուսակցությունը յերկարատև հեղափոխական աշխատանքի միջոցով պետք ե ապահովի իր համար բանվորական մասսաների մեծամասնության աջակցությունը, գոնե դասակարգի մեծամասնության բարենպաստ չեզոքությունը։ Հակառակ դեպքում լենինյան դրույթն այն մասին, վոր բանվոր դասակարգի մեծամասնությունը կուսակցության կողմը նվաճելը հաղթական հեղափոխության անհրաժեշտ պայմանն ե,—զրկված կլիներ վորևե իմաստից։

Լավ, բայց ի՞նչպես վարվենք փոքրամասնության հետ, յեթե նա չի կամենում, յեթե նա համաձայն չե հոժարակամ յենթարկվելու մեծամասնության կամքին։ Կարո՞ղ ե արդյոք կուսակցությունը, պե՞տք ե արդյոք կուսակցությունը՝ իր կողմն ունե-

նալով մեծամասնության վստահությունը՝ հարկադրի փոքրամասնությանը, վոր սա յենթարկվի մեծամասնության կամքին: Այո, կարող է և պետք է հարկադրի: Ղեկավարությունն ապահովվում է մասսաներին համոզելու մեթոդով, վորպես մասսաների վրա կուսակցության ներգործելու հիմնական մեթոդ: Բայց այս վո՛չ թե բացառում, այլ յենթադրում է հարկադրանքը, յեթե այդ հարկադրանքի բազան բանվոր դասակարգի մեծամասնության վստահությունն ու աջակցությունն է կուսակցության նկատմամբ, յեթե դա գործադրվում է փոքրամասնության նկատմամբ այն բանից հետո, յերբ կարողացել են մեծամասնությանը համոզել: Արժեր վերհիշել մեր կուսակցության մեջ այդ առթիվ յեղած վեճերը, վորոնք տեղի ունեցան արհմիութենական դիսկուսիայի ժամանակաշրջանում: Վո՞րն եր այն ժամանակ ոպոզիցիայի սխալը, Ցեկտրանի*) սխալը: Այն չե՞ր արդյոք, վոր ոպոզիցիան այն ժամանակ հարկադրանքը հնարավոր եր համարում: Վոչ, այդ չեր: Ոպոզիցիայի սխալն այդ ժամանակ այն եր, վոր նա՝ ի վիճակի չլինելով համոզելու մեծամասնությանը, թե իր դիրքն ուղիղ է, կորցնելով մեծամասնության վստահությունը, այնուամենայնիվ, սկսեց հարկադրանք գործադրել, սկսեց պնդել մեծամասնության վստահությամբ ոժտված մարդկանց «թափ տալու» վրա:

Ահա թե ինչ եր ասում այդ ժամանակ Լենինը կուսակցության X համագումարում արհեստակցական միությունների մասին արտասանած իր ճառում.

> «Բանվոր դասակարգի ավանգարդի ու բանվորական մասսայի միջև փոխհարաբերություն, փոխվստահություն հաստատելու համար հարկավոր եր, յեթե Ցեկտրանը սխալ եր գործել... հարկավոր եր այն ուղղել: Բայց յերբ այդ սխալն սկսում են պաշտպանել, ապա քաղաքական վտանգի աղբյուր է դառնում այդ: Յեթե չանեյինք դեմոկրատիայի իմաստով առավելագույն հնարավորն այն տրամադրություններից, վոր այստեղ արտահայտում է Կուտուզովը, մենք կհանգեյինք քաղաքական կրախի: Ամենից առաջ մենք պետք է համոզենք, և ապա հարկադրենք: Մենք պետք է ինչ էլ որ լինի նախ համոզենք, և ապա հարկադրենք*): Մենք չկարողացանք համոզել լայն մասսաներին ու խախտեցինք ավանգարդի ճիշտ հարաբերակցությունը մասսաների հետ» (տե՛ս հ. XXVI, եջ 235):

Նույն այդ բանն է ասում Լենինն իր «Արհմիությունների մասին» բրոշյուրում.

> «Մենք ա՛յն ժամանակ եյինք ճիշտ և հաջող կիրառում հարկադրանքը, յերբ կարողանում եյինք նախ համոզման բազա ստեղծել նրա համար» (տե՛ս նույն տեղը, եջ 74):

Յեվ այս միանգամայն ճիշտ է: Վորովհետև առանց այդ պայմանների հնարավոր չէ վոչ մի ղեկավարություն: Վորովհետև միայն այդ կերպ կարելի յե ապահովել գործողությունների միասնականությունը կուսակցության մեջ, յեթե խոսքը վերաբերում է կուսակցությանը. դասակարգի գործողությունների միասնականությունը, յեթե խոսքը վերաբերում է դասակարգին՝ իր ամբողջությամբ առած: Առանց դրան բանվոր դասակարգի շարքերում կլինի՝ պառակտում, տարընթացություն, քայքայում:

Սրանք են ընդհանուր առմամբ կուսակցության ճիշտ ղեկավարության հիմունքները:

Ղեկավարության ամեն մի այլ ըմբռնումը սինդիկալիզմ է, անարխիզմ է, բյուրոկրատիզմ է, այն ամենն է, ինչ կուզեք,— միայն թե վոչ բոլշևիզմ, միայն թե վոչ լենինիզմ:

Պրոլետարիատի դիկտատուրան չի կարելի հակադրել կուսակցության ղեկավարությանը («դիկտատուրային»), յեթե առկա յեն ճիշտ փոխհարաբերություններ կուսակցության ու բանվոր դասակարգի միջև, ավանգարդի ու բանվորական մասսաների միջև: Բայց սրանից հետևում է, վոր առավել ևս չի կարելի նույնացնել կուսակցությունը բանվոր դասակարգի հետ, կուսակցության ղեկավարությունը («դիկտատուրան») բանվոր դասակարգի դիկտատուրայի հետ: Այն հիման վրա, վոր կուսակցության «դիկտատուրան» չի կարելի հակադրել պրոլետարիատի դիկտատուրային, ընկ. Սորինը յեկել է այն սխալ յեզրակացության, թե «պրոլետարիատի դիկտատուրան մեր կու–

---

* Центральный комитет союза транспортников—Տրանսպորտի աշխատողների միության կենտրոնական կոմիտե: Հայ. հրատ. խմբ.:

*) Ընդգծումն իմն է: Ի. Ստ.:

սակցության դիկտատուրան է»։ Բայց Լենինը միայն այդպիսի հակադրության անթույլատրելիության մասին չի խոսում։ Դրա հետ մեկտեղ նա խոսում է «մասսաների դիկտատուրան առաջնորդների դիկտատուրային» հակադրելու անթույլատրելիության մասին։ Արդյոք չե՞ք հանի այս հիման վրա առաջնորդների դիկտատուրան նույնացնել պրոլետարիատի դիկտատուրայի հետ։ Այս ուղիով ընթանալով՝ մենք պետք է ասենք, վոր «պրոլետարիատի դիկտատուրան մեր առաջնորդների դիկտատուրան է»։ Իսկ չէ՞ վոր, ինչպես ասած, կուսակցության «դիկտատուրան» պրոլետարիատի դիկտատուրայի հետ նույնացնելու քաղաքականությունը... հենց դեպի այդ հիմարությունն է տանում։

Ի՞նչ դրության մեջ է այս գործն ընկ. Զինովյեվի մոտ։

Ընկ. Զինովյեվն, ըստ էության, կանգնած է կուսակցության «դիկտատուրան» պրոլետարիատի դիկտատուրայի հետ նույնացնելու հենց նույն տեսակետի վրա, ինչպես նաև ընկ. Սորինը, սակայն այն տարբերությամբ, վոր ընկ. Սորինն ավելի հստակ ու ավելի պարզ է արտահայտվում, իսկ ընկ. Զինովյեվը «տատանվում» է։ Բավական է վերցնել ընկ. Զինովյեվի «Լենինիզմ» գրքից թեկուզ հետևյալ տեղը, վորպեսզի համոզվենք դրան.

«Ի՞նչ է,—ասում է ընկ. Զինովյեվը,—ՍՍՀՄիության մեջ գոյություն ունեցող հասարակակարգը՝ նրա դասակարգային բովանդակության տեսակետից։ Դա—պրոլետարիատի դիկտատուրա յէ։ Ո՞րն է իշխանության անմիջական զսպանակը ՍՍՀՄ-ում։ Ո՞վ է իրականացնում բանվոր դասակարգի իշխանությունը։ Կոմունիստակա՞ն կուսակցությունը։ Այս իմաստով մեզ մոտ*) կուսակցության դիկտատուրա յէ։ Ի՞նչ իրավական ձև ունի իշխանությունը ՍՍՀՄ-ում։ Ո՞րն է Հոկտեմբերյան հեղափոխության ստեղծած պետական կարգի նոր տիպը։ Դա խորհրդային սիստեմն է։ Մեկը բնավ չի հակասում մյուսին» (տե՛ս «Ленинизм», էջ 370—371)։

Վոր մեկը մյուսին չի հակասում, այդ, իհարկե, ճիշտ է, յեթե ամբողջ բանվոր դասակարգի նկատմամբ կուսակցության դիկտատուրա ասելով հասկանանք կուսակցության ղեկավարությունը։ Բայց ինչպես կարելի յե այս հիման վրա հավասարու-

*) Ընդգծումն իմն է։ Ի. Ստ.։

թյան նշան դնել պրոլետարիատի դիկտատուրայի և կուսակցության «դիկտատուրայի» միջև, խորհրդային սիստեմի և կուսակցության «դիկտատուրայի» միջև։ Լենինը խորհուրդների սիստեմը նույնացնում էր պրոլետարիատի դիկտատուրայի հետ, և նա իրավացի յեր, վորովհետև խորհուրդները, մեր խորհուրդները, աշխատավոր մասսաներին պրոլետարիատի շուրջը համախմբելու կազմակերպություն են, յերբ ղեկավարությունը գտնվում է կուսակցության ձեռքին։ Բայց յե՞րբ, վո՞րտեղ, իր վո՞ր աշխատության մեջ է Լենինը հավասարության նշան դրել կուսակցության «դիկտատուրայի» և պրոլետարիատի դիկտատուրայի միջև, կուսակցության «դիկտատուրայի» ու խորհուրդների սիստեմի միջև, ինչպես այդ այժմ ընկ. Զինովյեվն է անում։ Պրոլետարիատի դիկտատուրային չի հակասում վո՛չ միայն կուսակցության ղեկավարությունը («դիկտատուրան»), այլև առաջնորդների ղեկավարությունը («դիկտատուրան»)։ Արդյոք չե՞ք հանի, այս հիման վրա, հռչակել, վոր մեր յերկիրը պրոլետարիատի դիկտատուրայի յերկիր է, այսինքն կուսակցության դիկտատուրայի յերկիր, այսինքն առաջնորդների դիկտատուրայի յերկիր։ Իսկ չէ՞ վոր հենց դեպի այս հիմարությունն է տանում կուսակցության «դիկտատուրան» պրոլետարիատի դիկտատուրայի հետ նույնացնելու «սկզբունքը», վոր գաղտագողի ու անհամարձակ անց է կացնում ընկ. Զինովյեվը։

Լենինի բազմաթիվ աշխատություններում ինձ հաջողվել է նշել միայն հինգ դեպք, վորտեղ Լենինը հարևանցիորեն շոշափում է կուսակցության դիկտատուրայի հարցը։

Առաջին դեպքը—դա էս-էրների ու մենշևիկների հետ ունեցած բանավեճն է, վորտեղ նա ասում է.

«Յերբ մեզ հանդիմանում են մեկ կուսակցության դիկտատուրայի համար և առաջարկում են, ինչպես դուք լսել եք, միասնական սոցիալիստական ճակատ, մենք ասում ենք. «Այո՛, մե՛կ կուսակցության դիկտատուրա։ Մենք դրա վրա յենք կանգնած և այդ հողից հեռանալ չենք կարող, վորովհետև դա այն կուսակցությունն է, վորը տասնամյակների ընթացքում ամբողջ ֆաբրիկա-գործարանային ու արդյունաբերական պրոլետարիատի ավանգարդի դիրք է նվաճել» (տե՛ս հ. XXIV, էջ 423)։

Յերկրորդ դեպքն է—«Նամակ բանվորներին ու գյուղացիներին Կոլչակին հաղթելու առթիվ»,—վորտեղ նա ասում է.

«Գյուղացիներին վախեցնում են (մանավանդ մենշևիկներն ու էսէռները, բոլորը, նույնիսկ նրանց «ձախերը») «մեկ կուսակցության», բոլշևիկ-կոմունիստների կուսակցության «դիկտատուրայի» բառով։ Կոլչակի օրինակը գյուղացիներին սովորեցրեց չվախենալ բառից։ Կամ կալվածատերերի ու կապիտալիստների դիկ- [illegible] (այսինքն՝ յերկաթյա իշխանություն), կամ բանվոր դասակարգի դիկտատուրա» (տե՛ս Հ. XXIV, էջ 436)։

Յերրորդ դեպքը—դա Լենինի ճառն է Կոմինտերնի II կոնգրեսում՝ Տեններին հետ բանավիճելիս։ Վերը յես այդ ճառից ցիտատ բերել եմ։

Չորրորդ դեպքը — դա միքանի տող է «Մանկական հիվանդությունը» բրոշյուրում։ Համապատասխան ցիտատներն արդեն վերևում բերված են։

Յեվ հինգերորդ դեպքը — դա պրոլետարիատի դիկտատուրայի վերաբերյալ սխեմայի ուրվագիծն է, վոր հրապարակված է III «Լենինյան ժողովածույում», վորտեղ կա «Մեկ կուսակցության դիկտատուրա» անունով յենթավերնագիր (տե՛ս «Լենինյան ժողովածու» III, էջ 497)։

Հարկավոր է նշել, վոր հինգ դեպքից յերկուսում, վերջին և յերկրորդ դեպքում, «մեկ կուսակցության դիկտատուրա» բառերը Լենինը չակերտների մեջ է առնում, ակնհայտ կերպով ընդգծելով այդ ֆորմուլայի վոչ-ճշգրիտ, փոխաբերական իմաստը։

Հարկավոր է նույնպես նշել, վոր այդ բոլոր դեպքերում «կուսակցության դիկտատուրա» բանվոր դասակարգի նկատմամբ բառերի տակ Լենինը հասկանում է վո՛չ թե դիկտատուրա՝ այդ բառի բուն իմաստով («բռնության վրա հենվող իշխանություն»), այլ կուսակցության ղեկավարություն։

Բնորոշ է, վոր իր թե՛ հիմնական և թե՛ յերկրորդական աշխատություններից վոչ մեկում, ամենուրեք, վորտեղ Լենինն արծարծում է կամ պարզապես հիշատակում է պրոլետարիատի դիկտատուրայի մասին և պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում կուսակցության դերի մասին, ակնարկ անգամ չկա, վոր «պրոլետարիատի դիկտատուրան մեր կուսակցության դիկտատուրան է»։ Ընդհակառակը, այդ աշխատությունների յուրաքանչյուր էջը, յուրաքանչյուր տողն աղաղակում է այդպիսի ֆորմուլայի դեմ (տե՛ս «Պետություն և հեղափոխություն»,

«Պրոլետարական հեղափոխությունը և ռենեգատ Կաուցկին», «Մանկական հիվանդությունը» և այլն)։

Ե՛լ ավելի բնորոշ է, վոր Կոմինտերնի II կոնգրեսի՝ քաղաքական կուսակցության դերի վերաբերյալ թեզիսներում, վորոնք մշակվել են Լենինի անմիջական ղեկավարությամբ, վորոնք Լենինը բազմիցս վկայակոչում էր իր ճառերում, վորպես կուսակցության դերի ու խնդիրների ճիշտ ձևակերպման տիպար,—մենք չենք գտնում վո՛չ մի, տառացի վո՛չ մի խոսք կուսակցության դիկտատուրայի մասին։

Ինչի՞ մասին է խոսում այս ամենը։

Այն մասին, վոր՝

ա) «կուսակցության դիկտատուրա» ֆորմուլան Լենինն անբասիր, ճշգրիտ չէր համարում, ուստի և Լենինի աշխատություններում չափազանց հազվադեպ է գործածվում այն ու յերբեմն չակերտների մեջ է առնվում.

բ) այն սակավաթիվ դեպքերում, յերբ Լենինը հարկադրված էր՝ հակառակորդների հետ բանավիճելիս՝ խոսել կուսակցության դիկտատուրայի մասին, նա խոսում էր սովորաբար «մեկ կուսակցության դիկտատուրայի» մասին, այսինքն այն մասին, վոր մեր կուսակցությունը մենակ է իշխանության գլուխ կանգնած, վոր նա իշխանությունը չի բաժանում ուրիշ կուսակցությունների հետ, ընդ վորում նա միշտ պարզաբանում էր, վոր կուսակցության դիկտատուրա բանվոր դասակարգի նկատմամբ ասելով՝ հարկավոր է հասկանալ կուսակցության ղեկավարությունը, նրա ղեկավար դերը.

գ) բոլոր այն դեպքերում, յերբ Լենինը հարկավոր էր համարում գիտականորեն բնորոշել կուսակցության դերը պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում, նա խոսում էր բացառապես կուսակցության ղեկավար դերի մասին (իսկ այդպիսի դեպքերը—հազարներ են)՝ բանվոր դասակարգի նկատմամբ.

դ) հենց այս պատճառով Լենինը «գլխի չընկավ» կուսակցության դերի վերաբերյալ հիմնական բանաձևի մեջ մտցնելու «կուսակցության դիկտատուրա» ֆորմուլը. յես նկատի ունեմ Կոմինտերնի II կոնգրեսի բանաձևը.

ե) լենինիզմի տեսակետով իրավացի չեն և քաղաքականապես կարճատես են այն ընկերները, վորոնք նույնացնում են

կամ աշխատում են նույնացնել կուսակցության «դիկտատուրան», ուրեմն նաև «առաջնորդների դիկտատուրան», պրոլետարիատի դիկտատուրայի հետ, վորովհետև նրանք դրանով խախտում են ավանգարդի ու դասակարգի ճիշտ փոխհարաբերությունների պայմանները։

Էլ չեմ խոսում այն մասին, վոր «կուսակցության դիկտատուրա» ֆորմուլան, վերցրած առանց վերը մատնանշված վերապահումների, կարող է ստեղծել մի ամբողջ շարք վտանգներ ու քաղաքական մինուսներ մեր պրակտիկ աշխատանքում։ Առանց վերապահումների վերցրած այդ ֆորմուլայով կարծես թե հուշում են՝

ա) **անկուսակցական մասսաներին.** չհամարձակվեք հակաճառել, չհամարձակվեք դատողություն անել, վորովհետև կուսակցությունն ամեն ինչ կարող է, վորովհետև մեզ մոտ կուսակցության դիկտատուրա յե.

բ) **կուսակցական կադրերին.** գործեցեք ավելի համարձակ, ավելի պինդ սխմեցեք, կարելի յե և չունկնդրել անկուսակցական մասսաների ձայնին,—մեզ մոտ կուսակցության դիկտատուրա յե.

գ) **կուսակցական վերնախավերին.** կարող եք թույլ տալ ձեզ վորոշ ինքնագոհության շռայլություն, թերևս, կարելի յե նույնիսկ մի քիչ մեծամտել, վորովհետև մեզ մոտ կուսակցության դիկտատուրա յե, «ուրեմն» նաև առաջնորդների դիկտատուրա։

Այս վտանգների մասին տեղին է հիշեցնել հատկապես այժմ, մասսաների քաղաքական ակտիվության վերելքի ժամանակաշրջանում, յերբ մասսաների ձայնին կուսակցության ուշադիր ունկնդրելու պատրաստակամությունը մեզ համար առանձին արժեք է ներկայացնում, յերբ զգայուն վերաբերմունքը դեպի մասսաների պահանջները մեր կուսակցության հիմնական պատգամն է, յերբ կուսակցությունից պահանջվում է հատուկ շրջանկատություն և հատուկ ճկունություն քաղաքականության մեջ, յերբ մեծամտելու վտանգը կուսակցության առաջ կանգնած ամենալուրջ վտանգներից մեկն է մասսաներին ճիշտ ղեկավարելու գործում։

Չի կարելի չվերհիշել Լենինի վոսկե խոսքերը, վոր ասել է նա մեր կուսակցության XI համագումարում.

«Ժողովրդական մասսայի մեջ մենք (կոմունիստներս. Ի. Ստ.) ընդամենը մի կաթիլ ենք ծովի մեջ, և մենք կարող ենք կառավարել միայն այն ժամանակ, յերբ ճիշտ ենք արտահայտում այն, ինչ վոր գիտակցում է ժողովուրդը։ Առանց դրան կոմունիստական կուսակցությունը չի առաջնորդի պրոլետարիատին, իսկ պրոլետարիատն իր հետևից չի տանի մասսաներին, և ամբողջ մեքենան կկործանվի» (տե՛ս հ. XXVII, էջ 256).

«Ճիշտ արտահայտել այն, ինչ վոր գիտակցում է ժողովուրդը» — հենց այս է այն անհրաժեշտ պայմանը, վորը կուսակցության համար ապահովում է հիմնական ղեկավար ուժի պատվավոր դերը պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում։

VI. ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԹՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՄԻ ՅԵՐԿՐՈՒՄ

«Լենինիզմի հիմունքների մասին» բրոշյուրում (1924 թ. ապրիլ, առաջին հրատարակություն) կա մի յերկրում սոցիալիզմի հաղթության հարցի վերաբերյալ յերկու ձևակերպում։ Առաջին ձևակերպումն ասում է.

«Առաջներում հեղափոխության հաղթությունը մի յերկրում անհնարին եյին համարում, յենթադրելով, թե բուրժուազիայի հաղթելու համար անհրաժեշտ է բոլոր առաջավոր յերկիրների պրոլետարների, կամ, գոնե, այդպիսի յերկիրների մեծ մասի պրոլետարների միատեղ յելույթը։ Այժմ այդ տեսակետն այլևս իրականությանը չի համապատասխանում։ Այժմ հարկավոր է յելնել այդպիսի հաղթության հնարավորությունից, վորովհետև իմպերիալիզմի պայմաններում տարբեր կապիտալիստական յերկիրների անհավասարաչափ ու թռիչքաձև զարգացման բնույթը, դեպի անխուսափելի պատերազմներ տանող կատաստրոֆիկ հակասությունների զարգացումն իմպերիալիզմի ներսում, հեղափոխական շարժման աճումն աշխարհի բոլոր յերկիրներում—այս ամենը տանում է վո՛չ միայն դեպի պրոլետարիատի հաղթության հնարավորությունն առանձին յերկիրներում, այլև դեպի այդ հաղթության անհրաժեշտությունը» (տե՛ս «Լենինիզմի հիմունքների մասին»).

Այս դրույթը միանգամայն ճիշտ է, և այն կարոտ չե մեկնաբանությունների։ Նա ուղղված է սոցիալ-դեմոկրատների թեորիայի դեմ, վորոնք ուտոպիա յեն համարում պրոլետարիատի կողմից մի յերկրում իշխանությունը վերցնելը՝ առանց

միաժամանակյա հաղթական հեղափոխության մյուս յերկիրներում։

Բայց «Լենինիզմի հիմունքների մասին» բրոշյուրում կա նաև յերկրորդ ձևակերպումը։ Այնտեղ ասված է*).

«Բայց տապալել բուրժուազիայի իշխանությունը և պրոլետարիատի իշխանություն հաստատել մի յերկրում—դեռ չի նշանակում ապահովել սոցիալիզմի լիակատար հաղթությունը։ Սոցիալիզմի գլխավոր խնդիրը—սոցիալիստական արտադրության կազմակերպումը — դեռևս մնում է առաջիկային։ Կարելի՞ յե արդյոք լուծել այդ խնդիրը, կարելի՞ յե արդյոք ձեռք բերել սոցիալիզմի վերջնական հաղթություն մի յերկրում՝ առանց մի քանի առաջավոր յերկիրների պրոլետարների միահամուռ ջանքերի։ Ոչ, անհնարին է։ Բուրժուազիայի տապալման համար բավական են մի յերկրի ջանքերը,—այս է ասում մեզ մեր հեղափոխության պատմությունը։ Սոցիալիզմի վերջնական հաղթության համար, սոցիալիստական արտադրության կազմակերպման համար մի յերկրի ջանքերը, մանավանդ այնպիսի գյուղացիական յերկրի, ինչպես Ռուսաստանն է՝ արդեն բավական չեն, դրա համար անհրաժեշտ են մի քանի առաջավոր յերկիրների պրոլետարների ջանքերը» (տե՛ս «Լենինիզմի հիմունքների մասին», առաջին հրատարակություն)։

Այս յերկրորդ ձևակերպումն ուղղված էր լենինիզմի քննադատների պնդումների դեմ, տրոցկիստների դեմ, վորոնք հայտարարում էին, թե պրոլետարիատի դիկտատուրան մի յերկրում, յերբ բացակայում է հաղթությունը մյուս յերկիրներում, չի կարող «դիմանալ պահպանողական Եվրոպայի հանդեպ»։

Այդ չափով—բայց միայն այդ չափով—այս ձևակերպումն այն ժամանակ (1924 թ. ապրիլ) գոհացուցիչ էր, և այն, անկասկած, վորոշ օգտակար ծառայություն մատուցեց։

Բայց հետագայում, յերբ լենինիզմի քննադատությունն այս մասում արդեն հաղթահարվել էր կուսակցության մեջ, և յերբ հերթի կանգնեց մի նոր հարց՝ մեր յերկրի ուժերով, առանց դրսի օգնության լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու հնարավորության հարցը,—յերկրորդ ձևակերպումը դուրս յեկավ արդեն ակնհայտորեն անգոհացուցիչ, ուստի և սխալ։

Վո՞րն է այդ ձևակերպման թերությունը։

* Խոսքը վերաբերում է առաջին հրատարակությանը։

Նրա թերությունն այն է, վոր նա կցում, մի հարց է դարձնում յերկու տարբեր հարցեր. մի յերկրի ուժերով սոցիալիզմ կառուցելու հնարավորության հարցը, վորին դրական պատասխան պետք է տրվի, և այն հարցը, թե՝ պրոլետարիատի դիկտատուրա ունեցող մի յերկիր կարո՞ղ է իրեն լիովին ապահովված համարել ինտերվենցիայից ու, հետևաբար, հին կարգերի ռեստավրացիայից, առանց հաղթական հեղափոխության մի շարք ուրիշ յերկիրներում, մի հարց, վորին բացասական պատասխան պետք է տրվի։ Էլ չեմ խոսում այն մասին, վոր այս ձևակերպումը կարող է առիթ տալ մտածելու, թե մի յերկրի ուժերով սոցիալիստական հասարակության կազմակերպելն անհնարին է,—մի բան, վորն, իհարկե, ճիշտ չէ։

Այս հիման վրա յես ձևափոխեցի, ուղղեցի այդ ձևակերպումն իմ «Հոկտեմբերյան հեղափոխությունը և ռուսական կոմունիստների տակտիկան» բրոշյուրում (1924 թ. դեկտեմբեր)՝ այդ հարցը բաժանելով յերկու հարցի—բուրժուական կարգերի ռեստավրացիայից լիովին ապահովվելու հարցի և մի յերկրում լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու հնարավորության հարցի։ Այս բանին հասանք, նախ՝ «սոցիալիզմի լիակատար հաղթությունը» մեկնաբանելով վորպես «լիակատար ապահովություն հին կարգերի վերականգնումից», վորը (ապահովությունը) հնարավոր է լոկ «մի քանի յերկիրների պրոլետարների միահամուռ ջանքերի» կարգով, և յերկրորդ՝ Լենինի «Կոոպերացիայի մասին» բրոշյուրի հիման վրա այն անվիճելի ճշմարտությունը հռչակելու միջոցով, վոր մենք ունենք ամեն անհրաժեշտը՝ լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար (տե՛ս «Հոկտեմբերյան հեղափոխությունը և ռուսական կոմունիստների տակտիկան»)*)։

Հարցի այս նոր ձևակերպումն էլ XIV կուսկոնֆերենցիայի՝ «Կոմինտերնի և ՌԿԿ խնդիրների մասին» հայտնի այն բանաձևի հիմքը դարձավ, վորը մի յերկրում սոցիալիզմի հաղթելու հարցը քննության էր առնում կապիտալիզմի ստաբի-

*) Հարցի այս նոր ձևակերպումը հետո փոխարինեց նրա հին ձևակերպումը «Լենինիզմի հիմունքների մասին» բրոշյուրի հետագա հրատարակությունների մեջ։

լիզացիայի կապակցությամբ (1925 թ. ապրիլ) և սոցիալիզմի կառուցումը մեր յերկրի ուժերով հնարավոր ու անհրաժեշտ եր համարում:

Հենց այդ բանաձևը հիմք ծառայեց իմ՝ «XIV կուսկոնֆերենցիայի աշխատանքների հանրագումարների շուրջը» բրոշյուրի համար, վորը հրատարակվեց XIV կուսկոնֆերենցիայից անմիջապես հետո, 1925 թ. մայիսին:

Մի յերկրում սոցիալիզմի հաղթանակի հարցադրման հարցի առթիվ այդ բրոշյուրում ասված է.

«Մեր յերկիրը ներկայացնում է հակասությունների յերկու խումբ: Հակասությունների մի խումբը—ներքին հակասություններն են, վորոնք գոյություն ունեն պրոլետարիատի և գյուղացիության միջև (այստեղ խոսքը մի յերկրում սոցիալիզմ կառուցելու մասին է: Ի. Ստ.): Հակասությունների մյուս խումբը—արտաքին հակասություններն են, վորոնք գոյություն ունեն մեր յերկրի՝ վորպես սոցիալիզմի յերկրի և բոլոր մնացած յերկիրների՝ վորպես կապիտալիզմի յերկիրների միջև (խոսքն այստեղ սոցիալիզմի վերջնական հաղթության մասին է: Ի. Ստ.)»... «Ով շփոթում է մի յերկրի ջանքերով միանգամայն հաղթահարելի հակասությունների առաջին խումբը հակասությունների յերկրորդ խմբի հետ, վորոնք իրենց լուծման համար պահանջում են մի քանի յերկիրների պրոլետարների ջանքերը,—նա ամենակոպիտ սխալ է թույլ տալիս լենինիզմի հանդեպ, նա կամ խառնաշփոթիչ է, կամ անուղղելի ոպորտունիստ» (տե՛ս «XIV կուսկոնֆերենցիայի աշխատանքների հանրագումարների շուրջը»):

Մեր յերկրում սոցիալիզմի **հաղթելու** հարցի առթիվ բրոշյուրն ասում է.

«Մենք կարող ենք սոցիալիզմ կառուցել և մենք այն կկառուցենք գյուղացիության հետ միասին, բանվոր դասակարգի ղեկավարությամբ»... վորովհետև «պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում մեզ մոտ կան... բոլոր տվյալները, վորոնք անհրաժեշտ են, վորպեսզի կառուցենք լիակատար սոցիալիստական հասարակություն, բոլոր և ամեն տեսակի ներքին դժվարությունները հաղթահարելով, վորովհետև մենք կարող ենք և մենք պետք է հաղթահարենք դրանք մեր սեփական ուժերով» (տե՛ս նույն տեղը):

Իսկ սոցիալիզմի **վերջնական** հաղթության հարցի առթիվ այնտեղ ասված է.

«Սոցիալիզմի վերջնական հաղթությունը լիակատար ապահովություն է ինտերվենցիայի փորձերից, իսկ այդ նշանակում է նաև ռե–

ստավրացիայի փորձերից, վորովհետև ռեստավրացիայի վորևէ լուրջ փորձ կարող է տեղի ունենալ դրսի լուրջ աջակցությամբ միայն, միջազգային կապիտալի աջակցությամբ միայն: Այս պատճառով բոլոր յերկիրների բանվորների աջակցությունը մեր հեղափոխությանը, իսկ առավել ևս այդ բանվորների հաղթությունը թեկուզ մի քանի յերկիրներում՝ անհրաժեշտ պայմանն է, վոր առաջին հաղթած յերկիրը լիապես ապահովված լինի ինտերվենցիայի ու ռեստավրացիայի փորձերից, անհրաժեշտ պայմանը սոցիալիզմի վերջնական հաղթության» (տե՛ս նույն տեղը):

Թվում է, վոր պարզ է:

Հայտնի յե, վոր այդ հարցը նույն այդ վոգով է մեկնաբանվում իմ՝ «Հարցեր ու պատասխաններ» բրոշյուրում (1925 թ. հունիս) և Համ ԿԿ XIV համագումարի ԿԿ-ի տված քաղաքական հաշվետվության մեջ (1925 թ. դեկտեմբեր):

Սրանք են փաստերը:

Այս փաստերը հայտնի յեն, յես կարծում եմ, բոլորին ու ամեն մեկին, այդ թվում նաև ընկ. Զինովյևին:

Յեթե հիմա, կուսակցության մեջ յեղած գաղափարային պայքարից գրեթե յերկու տարի անց և XIV կուսկոնֆերենցիայում ընդունված բանաձևից (1925 թ. ապրիլ) հետո, ընկ. Զինովյևը հնարավոր է համարում XIV կուսհամագումարի (1925 թ. դեկտեմբեր) իր յեզրափակման խոսքում դուրս քաշել Ստալինի 1924 թ. ապրիլին գրված բրոշյուրից հին, միանգամայն թերի, ձևակերպումը վորպես բազա՝ լուծելու համար արդեն լուծված հարցը մի յերկրում սոցիալիզմի հաղթելու մասին,—ապա ընկ. Զինովյևի այս յուրօրինակ մաներն այն է ասում միայն, վոր նա վերջնականապես խճճվել է այս հարցում: Կուսակցությունը քաշել դեպի հետ այն բանից հետո, յերբ նա առաջ է անցել, շրջանցել XIV կուսկոնֆերենցիայի բանաձևը, այն բանից հետո, յերբ այն արդեն հաստատված է ԿԿ-ի պլենումի կողմից,—այդ նշանակում է անհուսալիորեն խրվել հակասությունների մեջ, չհավատալ սոցիալիզմի կառուցման գործին, դուրս գալ Լենինի ուղուց և ստորագրել իր սեփական պարտությունը:

Ի՞նչ է մի յերկրում սոցիալիզմի հաղթելու **հնարավորությունը**:

Դա պրոլետարիատի ու գյուղացիության միջև յեղած հա–

կասությունները մեր յերկրի ներքին ուժերով լուծելու հնարավորությունն է, պրոլետարիատի կողմից իշխանությունը վերցնելու և մեր յերկրում լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար այդ իշխանությունն օգտագործելու հնարավորությունը — մյուս յերկրների պրոլետարների համակրության ու աջակցության պայմաններում, բայց առանց պրոլետարական հեղափոխության նախապես հաղթելու մյուս յերկրներում:

Առանց այդպիսի հնարավորության սոցիալիզմի կառուցումն անհեռանկար կառուցում է, կառուցում առանց սոցիալիզմի կառուցմանը հավատալու: Չի կարելի սոցիալիզմ կառուցել՝ հավատացած չլինելով, վոր այն կարելի յե կառուցել, հավատացած չլինելով, վոր մեր յերկրի տեխնիկական հետամնացությունը լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար անհաղթահարելի խոչընդոտ չէ: Այսպիսի հնարավորության ժխտումը չհավատալ է սոցիալիզմի կառուցման գործին, նահանջ է լենինիզմից:

Ի՞նչ է մի յերկրում սոցիալիզմի լիակատար, վերջնական հաղթության անհնարինությունը՝ առանց հեղափոխության հաղթանակի մյուս յերկրներում:

Դա՝ ինտերվենցիայից, իսկ այդ նշանակում է նաև բուրժուական կարգերի ռեստավրացիայից լիակատար ապահովություն ունենալու անհնարինություն՝ առանց հեղափոխության հաղթանակի, գոնե, մի շարք յերկրներում: Այս անվիճելի դրույթի ժխտումը նահանջ է ինտերնացիոնալիզմից, նահանջ լենինիզմից:

«Մենք ապրում ենք,—ասում է Լենինը,—վո՛չ միայն պետության մեջ, այլ նաև պետությունների սիստեմի մեջ, և Խորհրդային Հանրապետության գոյությունն իմպերիալիստական պետությունների կողքին աներևակայելի յե։ Վերջիվերջո կամ մեկը, կամ մյուսը կհաղթի։ Իսկ մինչև վոր այդ վերջը գա, մի շարք ամենասոսկալի ընդհարումներ Խորհրդային Հանրապետության և բուրժուական պետությունների միջև անխուսափելի յեն։ Այս նշանակում է, վոր տիրապետող դասակարգը, պրոլետարիատը, յեթե միայն նա ցանկանում է տիրապետել ու կտիրապետի, պետք է ապացուցի այդ նաև իր ռազմական կազմակերպությամբ» (տե՛ս հ. XXIV, եջ 122)։

«Մենք մեր առջև ունենք,—ասում է Լենինը մի այլ տեղում,—վերին աստիճանի անկայուն, բայց և այնպես՝ անկասկածելի, անվիճե-

լի վորոշ մի հավասարակշռություն։ Արդյոք այդ յերկա՞ր կլինի—չգիտեմ և կարծում եմ, վոր այդ իմանալ չի կարելի։ Ուստի և մեր կողմից հարկավոր է մեծագույն զգուշավորություն։ Յեվ մեր քաղաքականության առաջին պատգամը, մեր մի տարվա կառավարական գործունեությունից բխող առաջին դասը,—մի դաս, վոր պետք է յուրացնեն բոլոր բանվորներն ու գյուղացիները,—այս է. զգաստ լինել, հիշել, վոր մենք շրջապատված ենք այնպիսի մարդկանցով, դասակարգերով, կառավարություններով, վորոնք բացահայտորեն մեծագույն ատելություն են արտահայտում դեպի մեզ։ Հարկավոր է հիշել, վոր ամեն մի արշավանք մեր դեմ միշտ մազից է կախված» (հ. XXVII, եջ 177)։

Թվում է, թե պարզ է։

Ինչպե՞ս է դրված մի յերկրում սոցիալիզմի հաղթելու հարցն ընկ. Զինովյեվի մոտ։

Լսեցեք.

«Սոցիալիզմի վերջնական հաղթանակ ասելով հարկավոր է հասկանալ, գոնե՝ 1) դասակարգերի վոչնչացումը և, հետևաբար, 2) մի դասակարգի դիկտատուրայի, տվյալ դեպքում պրոլետարիատի դիկտատուրայի վերացումը»... «Վորպեսզի ավելի ճշգրիտ պարզենք մեզ համար,—ասում է այնուհետև ընկ. Զինովյեվը,—թե հարցն ինչպես է դրված մեզ մոտ՝ ԽՍՀՄ-ում 1925 թվին, պետք է տարբերենք յերկու բան. 1) սոցիալիզմ կառուցելու ապահովված հնարավորությունը,—սոցիալիզմ կառուցելու այդպիսի հնարավորությունը, հարկավ, լիովին կարող է մտածվել նաև մի յերկրի շրջանակներում,— ու 2) սոցիալիզմի վերջնական կառուցումը և ամրացումը, այսինքն՝ սոցիալիստական հասարակակարգի, սոցիալիստական հասարակության իրականացումը» (տե՛ս ընկ. Զինովյեվի «Լենինիզմը», եջ 291 և 293)։

Ի՞նչ կարող է նշանակել այս ամենը։

Հենց այն, վոր ասելով սոցիալիզմի վերջնական հաղթություն մի յերկրում՝ ընկ. Զինովյեվը հասկանում է վո՛չ թե յերաշխիք ինտերվենցիայի ու ռեստավրացիայի դեմ, այլ սոցիալիստական հասարակության կառուցման հնարավորություն։ Իսկ ասելով սոցիալիզմի հաղթություն մի յերկրում՝ ընկ. Զինովյեվը հասկանում է սոցիալիզմի այնպիսի կառուցում, վորը չի կարող և չպետք է հասցնի սոցիալիզմի կառուցման։ Կառուցում՝ յա բախտ, առանց հեռանկարի, սոցիալիզմի կառուցում, յերբ անհնարին է սոցիալիստական հասարակության կառուցումը,—այս է ընկ. Զինովյեվի դիրքը։

Կառուցել սոցիալիզմ՝ առանց այն կառուցելու հնարավո-

թուրյան, կառուցել՝ իմանալով, վոր չես կառուցի,—ահա թե ինչպիսի անհեթեթությունների յե հասնում ընկ. Զինովյևը:

Բայց չէ վոր սա հարցի ծաղրո՛ւմն է և վոչ թե հարցի լուծումը:

Ահա մի տեղ էլ XIV կուսհամագումարում ընկ. Զինովյևի արտասանած յեզրափակման խոսքից.

> «Դուք տեսեք, թե մինչև ուր է հասել, օրինակ, ընկ. Յակովլևը Կուրսկի նահանգական վերջին կուսկոնֆերենցիայում: «Արդյոք մենք կարո՞ղ ենք մի յերկրում,—հարցնում է նա,—բոլոր կողմերից կապիտալիստական թշնամիներով շրջապատված լինելով, կարո՞ղ ենք արդյոք այդպիսի պայմաններում սոցիալիզմ կառուցել մի յերկրում»: Յեվ պատասխանում է. «Ամբողջ ասվածի հիման վրա մենք իրավունք ունենք ասելու, վոր մենք վո՛չ միայն կառուցում ենք սոցիալիզմ, այլ վոր մենք, չնայած այն բանին, վոր առայժմ մենք մենակ ենք, առայժմ մենք միակ խորհրդային յերկիրն ենք, միակ խորհրդային պետությունն աշխարհում, մենք այդ սոցիալիզմը կկառուցենք» («Курская Правда № 279, 1925 թ. դեկտ. 8): Մի՞թե սա հարցի լենինյան դրումն է, մի՞թե սրանից ազգային սահմանափակության հոտ չի փչում»*):

Այսպիսով, ըստ Զինովյևի դուրս է գալիս, վոր մի յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունն ընդունել—նշանակում է կանգնել ազգային սահմանափակության տեսակետի վրա, իսկ ժխտել այդպիսի հնարավորությունը—նշանակում է կանգնել ինտերնացիոնալիզմի տեսակետի վրա:

Բայց յեթե այդ ճիշտ է,—արժե՞ արդյոք ընդհանրապես պայքար մղել մեր տնտեսության կապիտալիստական տարրերին հաղթելու համար: Սրանից չի՞ հետևում արդյոք, վոր այդպիսի հաղթությունն անհնարին է:

Կապիտուլյացիա մեր տնտեսության կապիտալիստական տարրերի հանդեպ—ահա թե ուր է հասցնում ընկ. Զինովյևի փաստարկման ներքին տրամաբանությունը:

Յեվ այս անհեթեթությունը, վորն ընդհանուր վոչինչ չունի լենինիզմի հետ, ընկ. Զինովյևը հրամցնում է մեզ վորպես «ինտերնացիոնալի՛զմ», վորպես «հարյուր տոկոսանի լենինի՛զմ»:

Յես պնդում եմ, վոր սոցիալիզմի կառուցման կարևորագույն հարցում ընկ. Զինովյևը նահանջում է լենինիզմից, գլորվելով մինչև մենշևիկ Սուխանովի տեսակետը:

*) Ընդգծումն իմն է: Ի. Ստ.:

Դիմենք Լենինին: Ահա թե նա ինչ է ասում մի յերկրում սոցիալիզմի հաղթելու մասին դեռևս մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, 1915 թվի օգոստոսին.

> «Տնտեսական և քաղաքական զարգացման անհավասարաչափությունը կապիտալիզմի անպայմանական օրենքն է: Այստեղից հետևում է, վոր սոցիալիզմի հաղթությունը հնարավոր է նախապես միքանի կամ նույնիսկ առանձին վերցրած մի կապիտալիստական յերկրում: Այդ յերկրի հաղթած պրոլետարիատը, եքսպրոպրիացիայի յենթարկելով կապիտալիստներին ու իր մոտ սոցիալիստական արտադրություն կազմակերպելով*), կծառանար մնացած, կապիտալիստական աշխարհի դեմ, իր կողմը գրավելով մյուս յերկրների ճնշված դասակարգերին, այդ յերկրներում ապստամբություն բարձրացնելով կապիտալիստների դեմ, անհրաժեշտության դեպքում նույնիսկ զինվորական ուժով դուրս գալով շահագործող դասակարգերի ու նրանց պետությունների դեմ» (տե՛ս հ. XVIII, եջ 232—233):

Ի՞նչ է նշանակում Լենինի ընդգծված ֆրազը՝ «իր մոտ սոցիալիստական արտադրություն կազմակերպելով»: Այդ նշանակում է, վոր հաղթած յերկրի պրոլետարիատը կարող է և պետք է, իշխանություն վերցնելուց հետո, իր մոտ սոցիալիստական արտադրություն կազմակերպի: Իսկ ի՞նչ է նշանակում՝ «սոցիալիստական արտադրություն կազմակերպել»: Այդ նշանակում է սոցիալիստական հասարակություն կառուցել: Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր Լենինի այս պարզ ու վորոշ դրույթը կարոտ չէ հետագա մեկնաբանությունների: Հակառակ դեպքում անհասկանալի կլինեյին Լենինի կոչերը, վոր պրոլետարիատը 1917 թվի հոկտեմբերին իշխանությունը վերցնի:

Դուք տեսնում եք, վոր Լենինի այս պարզ դրույթը տարբերվում է, ինչպես յերկինքը յերկրից, ընկ. Զինովյևի խառնաշփոթ և հակալենինյան «դրույթից» այն մասին, վոր մենք կարող ենք սոցիալիզմ կառուցել «մի յերկրի շրջանակներում» նրա կառուցման անհնարինության պայմաններում:

Լենինն այս ասել է 1915 թվին, մինչև պրոլետարիատի կող-

*) Ընդգծումն իմն է: Ի. Ստ.:

մեջ իշխանությունը վերցնելը։ Բայց գուցե նրա հայացքները փոխվե՞լ են իշխանությունը վերցնելու փորձից հետո, 1917 թվից հետո։ Դիմենք Լենինի «Կոոպերացիայի մասին» բրոշյուրին, որը գրված է 1923 թվին։

«Իրոք որ,—ասում է Լենինը,—պետության իշխանությունն արտադրության բոլոր խոշոր միջոցների նկատմամբ, պետության իշխանությունը պրոլետարիատի ձեռքին, այդ պրոլետարիատի դաշինքը բազմամիլիոն մանր ու մանրագույն գյուղացիների հետ, գյուղացիության ղեկավարումն այդ պրոլետարիատի համար ապահովելը և այլն—մի՞թե սա այն ամենը չէ, ինչ հարկավոր է, որպեսզի կոոպերացիայից, միմիայն կոոպերացիայից, որը մենք առաջ քամահրում էինք, որպես չարչիական կոոպերացիա, և որը որոշ տեսակետից իրավունք ունենք քամահրելու այժմ՝ նէպի պայմաններում նույնպես,—**մի՞թե սա ամեն անհրաժեշտը չէ՝ լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար***)։ Այդ դեռևս սոցիալիստական հասարակության կառուցում չէ, բայց **դա այն ամենն է, ինչ անհրաժեշտ է և բավական՝ այդ կառուցման համար**»*) (տե՛ս հատ. XXVII, եջ 392)։

Այլ կերպ ասած, մենք կարող ենք և պետք է կառուցենք լիակատար սոցիալիստական հասարակություն, որովհետև մեր տրամադրության տակ մենք ունենք այն ամենը, ինչ անհրաժեշտ ու բավական է այդ կառուցման համար։

Թվում է, դժվար է ավելի պարզ արտահայտվել։

Համեմատեցեք Լենինի այս կլասիկ դրույթը ընկ. Զինովյևի կողմից ընկ. Ցակովլևի դեմ ուղղած հակալենինյան հարձակման հետ ու կհասկանաք, որ Ցակովլևը միայն կրկնել է Լենինի խոսքերը մի երկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորության մասին, իսկ Զինովյևը, այդ դրույթի դեմ դուրս գալով, ընկ. Ցակովլևին խարազանելով, հեռացել է Լենինից ու կանգնել մենշևիկ Սուխանովի տեսակետի վրա, մեր երկրում՝ նրա տեխնիկական հետամնացության պատճառով՝ սոցիալիզմ կառուցելու անհնարինության տեսակետի վրա։

Հայտնի չէ միայն, թե էլ մենք ինչի՞ համար էինք 1917 թ. հոկտեմբերին իշխանությունը վերցնում, եթե նպատակ չունեինք սոցիալիզմ կառուցելու։

*) Ընդգծումն իմն է։ Ի. Ստ.։

Հարկավոր չէր իշխանությունը վերցնել 1917 թ. հոկտեմբերին,—ահա թե ինչ եզրակացության է բերում ընկ. Զինովյևի փաստարկման ներքին տրամաբանությունը։

Ես պնդում եմ այնուհետև, որ սոցիալիզմի հաղթության կարևորագույն հարցում ընկ. Զինովյևը **դեմ է գնացել** մեր կուսակցության որոշակի վճիռներին, որոնք արձանագրված են XIV կուսկոնֆերենցիայի՝ «Կոմինտերնի և ՌԿԿ խնդիրների մասին՝ ԿԻԳԿ*) ընդլայնված պլենումի կապակցությամբ» հայտնի բանաձևում։

Դիմենք այս բանաձևին։ Ահա թե ինչ է ասված այնտեղ մի երկրում սոցիալիզմի հաղթելու մասին.

«Երկու ուղղակի հակադիր հասարակական սիստեմների առկայությունն առաջ է բերում կապիտալիստական բլոկադի, տնտեսական ճնշման ուրիշ ձևերի, զինված ինտերվենցիայի, ռեստավրացիայի մշտական սպառնալիք։ Հետևաբար, սոցիալիզմի վերջնական հաղթության միակ երաշխիք, այսինքն **ապահովություն ռեստավրացիայից****), հանդիսանում է հաղթական սոցիալիստական հեղափոխությունը մի շարք երկրներում»... «Լենինիզմն ուսուցանում է, որ սոցիալիզմի վերջնական հաղթությունը՝ բուրժուական հարաբերությունների **ռեստավրացիայից լիովին ապահով լինելու իմաստով****) հնարավոր է միայն միջազգային մասշտաբով»... «Սրանից բնավ **չի բղխում****), թե անհնարին է **լիակատար սոցիալիստական հասարակության****) կառուցումն այնպիսի մի հետամնաց երկրում, ինչպես Ռուսաստանն է, առանց տեխնիկա-տնտեսական տեսակետից ավելի զարգացած երկրների «պետական օգնության» (Տրոցկի) (տե՛ս բանաձևը)։

Դուք տեսնում եք, որ բանաձևը սոցիալիզմի վերջնական հաղթությունը մեկնաբանում է որպես ապահովություն ինտերվենցիայից և ռեստավրացիայից,—**ի լիակատար հակադրություն** ընկ. Զինովյևի մեկնաբանության՝ նրա «Լենինիզմ» գրքում։

Դուք տեսնում եք, որ բանաձևն ընդունում է լիակատար սոցիալիստական հասարակության կառուցման հնարավորությունը մի այնպիսի հետամնաց երկրում, ինչպես Ռուսաստանն է, առանց տեխնիկա-տնտեսական տեսակետից ավելի զարգացած երկրների «պետական օգնության»՝ **ի լիակատար հակա-**

*) Կոմունիստական Ինտերնացիոնալի գործադիր կոմիտե։ Հայ. հրատ. խմբ.։

**) Ընդգծումն իմն է։ Ի. Ստ.։

դրությունն ընկ. Զինովևի հակառակ պնդման՝ XIV կուսհամագումարի իր յեզրափակման խոսքում ընկ. Յակովլևի դեմ ուղղած նրա հարձակման մեջ։

Ի՞նչպես անվանենք այս, յեթե վոչ ընկ. Զինովևի պայքար XIV կուսկոնֆերենցիայի բանաձևի դեմ։

Իհարկե, կուսակցական բանաձևերը յերբեմն անթերի չեն։ Պատահում ե, վոր կուսակցական բանաձևերը սխալներ են պարունակում։ Ընդհանրապես ասած՝ կարելի յե յենթադրել, վոր XIV կուսկոնֆերենցիայի բանաձևը նույնպես վորոշ սխալներ ե պարունակում։ Հնարավոր ե, վոր ընկ. Զինովևը սխալ ե համարում տվյալ բանաձևը։ Բայց այն ժամանակ դրա մասին պետք ե խոսել պարզ և բացահայտ կերպով, ինչպես բոլշևիկին ե վայել։ Սակայն ընկ. Զինովևն ինչ-վոր պատճառով այդ չի անում։ Նա գերադասել ե ընտրել ուրիշ ուղի, XIV կուսկոնֆերենցիայի բանաձևը թիկունքային գրոհների յենթարկելու ուղին, յերբ լռություն ե պահպանվում այդ բանաձևի մասին և բացակայում ե բանաձևի վորևե բացահայտ քննադատություն։ Ընկ. Զինովևը յերևի կարծում ե, թե այդ ուղին ամենից լավ ե հասնում նպատակին։ Իսկ նրա նպատակը մեկ ե—«բարելավել» բանաձևը և «մի քիչ» ուղղել Լենինին։ Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր ընկ. Զինովևը սխալվել ե իր հաշիվներում։

Վո՞րտեղից ե ծագում ընկ. Զինովևի սխալը։ Վո՞րտեղ ե այդ սխալի արմատը։

Այդ սխալի արմատը, ըստ իս, այն ե, վոր ընկ. Զինովևը համոզված ե, թե մեր յերկրի տեխնիկական հետամնացությունը լիակատար սոցիալիստական հասարակության կառուցման անհաղթահարելի խոչընդոտ ե, թե մեր յերկրի տեխնիկական հետամնացության շնորհիվ պրոլետարիատը չի կարող սոցիալիզմ կառուցել։ Ընկ. Զինովևը և ընկ. Կամենևը մի ժամանակ փորձ եյին անում այդ փաստարկով հանդես գալու կուսակցության ԿԿ-ի նիստերից մեկում ապրիլյան կուսկոնֆերենցիայի նախօրեյին։ Բայց նրանք հակահարված ստացան և հարկադրված յեղան նահանջել, ձևականորեն յենթարկվելով հակադիր տեսակետին, ԿԿ-ի մեծամասնության տեսակետին։ Բայց, նրան ձևականորեն յենթարկվելով, ընկ. Զի-

նովևն ամբողջ ժամանակ շարունակում եր պայքարը նրա դեմ (տե՛ս ընկ. Զինովևի «Լենինիզմ» գիրքը և յեզրափակման խոսքը XIV կուսհամագումարում)։ Ահա թե ինչ ե ասում Համ. ԿԿ ԿԿ-ում տեղի ունեցած այդ «միջադեպի» մասին մեր կուսակցության Մոսկվայի Կոմիտեն՝ Լենինգրադի նահանգական կուսկոնֆերենցիայի նամակին տված իր «պատասխանում».

«Այնքան էլ վաղուց չե, վոր ընկերներ Կամենևը և Զինովևը Քաղբյուրոյում պաշտպանում եյին այն տեսակետը, թե իբր մենք չենք կարող դուրս գալ ներքին դժվարությունների տակից՝ մեր տեխնիկական և տնտեսական հետամնացության շնորհիվ, յեթե միայն մեզ չփրկի միջազգային հեղափոխությունը։ Իսկ մենք, ԿԿ-ի մեծամասնության հետ մեկտեղ, կարծում ենք, վոր մենք կարող ենք սոցիալիզմ կառուցել, կառուցում ենք և կկառուցենք այն, չնայած մեր տեխնիկական հետամնացության և հակառակ նրան։ Մենք կարծում ենք, վոր այդ շինարարությունն ընթանալու յե, իհարկե, շատ ավելի դանդաղ, քան համաշխարհային հաղթության պայմաններում, բայց և այնպես մենք առաջ ենք գնում ու պիտի գնանք։ Մենք ճիշտ նույնպես կարծում ենք, վոր ընկ. ընկ. Կամենևի ու Զինովևի տեսակետն արտահայտում ե չհավատալը մեր բանվոր դասակարգի ու նրա հետևից գնացող գյուղացիական մասսաների ներքին ուժերին։ Մենք կարծում ենք, վոր այդ տեսակետը նահանջ ե լենինյան դիրքից» (տե՛ս «Պատասխանը»)։

Այս փաստաթուղթը մամուլի մեջ յերևան յեկավ XIV կուսհամագումարի առաջին նիստերի ժամանակ։ Ընկ. Զինովևն, իհարկե, հնարավորություն ուներ դեռևս համագումարում դուրս գալու այս փաստաթղթի դեմ։ Բնորոշ ե, վոր ընկ. ընկ. Զինովևի ու Կամենևի մոտ փաստարկներ չգտնվեցին այս ծանր մեղադրանքի դեմ, վոր նրանց դեմ առաջադրել եր մեր կուսակցության Մոսկվայի Կոմիտեն։ Պատահակա՞ն ե արդյոք այս։ Յես կարծում եմ, վոր պատահական չե։ Մեղադրանքը, ըստ յերևույթին, դիպավ նպատակին։ Ընկ. Զինովևը և ընկ. Կամենևը լռությամբ «պատասխանեցին» այդ մեղադրանքին, վորովհետև բան չունեյին այն «կորելու» (КРЫТЬ) համար։

Նոր ոպոզիցիան վիրավորվում ե, վոր ընկ. Զինովևին մեղադրում են սոցիալիստական շինարարության հաղթության գործին մեր յերկրում չհավատալու մեջ։ Բայց յեթե ընկ. Զինովևը մի յերկրում սոցիալիզմի հաղթելու հարցը մի ամբողջ տարի քննարկելուց հետո, ընկ. Զինովևի տե-

տակետը ԿԿ-ի Քաղբյուրոյի կողմից մերժվելուց հետո (1925 թ. ապրիլ), այն բանից հետո, յերբ արդեն այդ հարցի մասին կազմվել է կուսակցության վորոշակի կարծիքը, վորն արձանագրվել է XIV կուսկոնֆերենցիայի հայտնի բանաձևում (1925 թ. ապրիլ),—յեթե այս ամենից հետո ընկ. Զինովյևը վճռում է իր «Լենինիզմ» գրքում դուրս գալ (1925 թ. սեպտեմբեր) կուսակցության տեսակետի դեմ, յեթե նա այնուհետև կրկնում է այդ յելույթը XIV համագումարում,—ապա ի՞նչպես բացատրել այդ ամենը, այդ համառությունը, իր սխալը պաշտպանելու այդ հաստատակամությունը, յեթե վոչ նրանով, վոր ընկ. Զինովյևը վարակված, անհուսալի կերպով վարակված է չհավատալով սոցիալիստական շինարարության հաղթությանը մեր յերկրում։

Ընկ. Զինովյևին հաճելի յե իր այդ չհավատալը մեկնաբանել վորպես ինտերնացիոնալիզմ։ Բայց այդ յերբվանի՞ց է, վոր լենինիզմի կարդինալ հարցում լենինիզմից նահանջելն սկսել է մեկնաբանվել մեզանում վորպես ինտերնացիոնալիզմ։

Արդյո՞ք ավելի ճիշտ չի լինի ասել, վոր այստեղ վո՛չ թե կուսակցությունը, այլ ընկ. Զինովյևն է մեղանչում ինտերնացիոնալիզմի ու միջազգային հեղափոխության դեմ։ Վորովհետև ի՞նչ է «կառուցվող սոցիալիզմի» մեր յերկիրը, յեթե վոչ համաշխարհային հեղափոխության բազա։ Բայց արդյո՞ք նա կարող է լինել համաշխարհային հեղափոխության իսկական բազա, յեթե նա ընդունակ չէ սոցիալիստական հասարակություն կառուցելու։ Նա կարո՞ղ է արդյոք մնալ այն մեծագույն ձգողական կենտրոնը բոլոր յերկիրների բանվորների համար, վորպիսին նա, անտարակույս, հանդիսանում է այժմ, յեթե նա անընդունակ է իր յերկրում հաղթություն ձեռք բերելու մեր տնտեսության կապիտալիստական տարրերի նկատմամբ, ձեռք բերելու սոցիալիստական շինարարության հաղթություն։ Յես կարծում եմ, վոր չի կարող։ Բայց սրանից չի՞ հետևում արդյոք, վոր սոցիալիստական շինարարության հաղթությանը չհավատալը, այդ չհավատալու քարոզը տանում է դեպի մեր յերկրի՝ վորպես համաշխարհային հեղափոխության բազայի՝ պսակազերծումը, իսկ մեր յերկրի պսակա-

զերծումը տանում է դեպի համաշխարհային հեղափոխական շարժման թուլացում։ Պ. ա. սոցիալ-դեմոկրատները բանվորներին ինչո՞վ եյին խրտնեցնում մեզանից։ Քարոզ կարդալով այն մասին, թե «ռուսների մոտ վոչինչ դուրս չի գա»։ Մենք հիմա ինչո՞վ ենք խփում սոցիալ-դեմոկրատներին, բանվորական պատվիրակությունների ամբողջ շարաններ գրավելով դեպի մեր յերկիրը և դրանով իսկ ամրացնելով կոմունիզմի դիրքերն ամբողջ աշխարհում։ Մեր հաջողություններով սոցիալիզմի կառուցման գործում։ Բայց մի՞թե սրանից հետո պարզ չէ, վոր նա, ով քարոզում է չհավատալ մեր հաջողություններին սոցիալիզմի կառուցման գործում, նա անուղղակի կերպով ոգնում է սոցիալ-դեմոկրատներին, նա թուլացնում է միջազգային հեղափոխական շարժման թափը, նա անխուսափելիորեն նահանջում է ինտերնացիոնալիզմից…

Դուք տեսնում եք, վոր ընկ. Զինովյևի «ինտերնացիոնալիզմի» գործը բոլորովին էլ ավելի լավ վիճակում չէ, քան նրա «հարյուր տոկոսանոց լենինիզմի» գործը՝ մի յերկրում սոցիալիզմ կառուցելու հարցում։

Այս պատճառով XIV կուսհամագումարը ճիշտ վարվեց, նոր ոպոզիցիայի տեսակետները բնորոշելով վորպես «սոցիալիզմի կառուցման գործին չհավատալ» և «լենինիզմի խեղաթյուրում»։

VII. ՊԱՅՔԱՐ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՂԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Յես կարծում եմ, վոր սոցիալիստական շինարարության հաղթությանը չհավատալը նոր ոպոզիցիայի հիմնական սխալն է։ Այդ սխալն, ըստ իս, հիմնական է այն պատճառով, վոր նրանից են բխում նոր ոպոզիցիայի մնացած բոլոր սխալները։ Նոր ոպոզիցիայի սխալները նեպի, պետկապիտալիզմի, մեր սոցիալիստական արդյունաբերության բնույթի հարցում, պրոլետարիատի դիկտատուրայի որով կոոպերացիայի դերի հարցում, կուլակության դեմ պայքարելու մեթոդների, միջակ գյուղացիության դերի ու տեսակարար կշռի հարցում,—այս բոլոր սխալներն ածանցվում են ոպոզիցիայի հիմնական սխալից՝ մեր յերկրի ուժերով սոցիալիստա-

կան հասարակություն կառուցելու հնարավորությանը չհավատալուց:

Ինչ բան է մեր երկրի սոցիալիստական շինարարության հաղթությանը չհավատալը:

Ամենից առաջ, դա վստահության բացակայությունն է այն բանի նկատմամբ, թե գյուղացիության հիմնական մասսաները կարող են՝ մեր երկրի զարգացման հայտնի պայմանների շնորհիվ՝ ներքաշվել սոցիալիստական շինարարության գործի մեջ:

Երկրորդ, դա վստահության բացակայությունն է այն բանի նկատմամբ, թե մեր երկրի պրոլետարիատը, որն իր տրամադրության տակ ունի ժողովրդական տնտեսության իշխող բարձունքները, ընդունակ է գյուղացիության հիմնական մասսաներին ներքաշելու սոցիալիստական շինարարության գործի մեջ:

Այս դրույթներից է լռելյայն ելնում օպոզիցիան մեր զարգացման ուղիների վերաբերյալ իր կառուցումներում,—միևնույնն է՝ նա այդ բանը գիտակցաբար է անում արդյոք, թե անգիտակցաբար:

Արդյո՞ք կարելի յե խորհրդային գյուղացիության հիմնական մասսան ներքաշել սոցիալիստական շինարարության գործի մեջ:

«Լենինիզմի հիմունքների մասին» բրոշյուրում այդ առթիվ կա երկու հիմնական դրույթ:

1) «Խորհրդային Միության գյուղացիությունը չի կարելի շփոթել Արևմուտքի գյուղացիության հետ: Մի գյուղացիություն, որն անցել է երեք հեղափոխության դպրոց, կռվել է ցարի դեմ և բուրժուական իշխանության դեմ պրոլետարիատի հետ մեկտեղ և պրոլետարիատի ղեկավարությամբ, մի գյուղացիություն, որը հող և հաշտություն է ստացել պրոլետարական հեղափոխության ձեռքից և դրա շնորհիվ դարձել է պրոլետարիատի ռեզերվը,—այդ գյուղացիությունը չի կարող չտարբերվել այն գյուղացիությունից, որը բուրժուական հեղափոխության ժամանակ կռվել է լիբերալ բուրժուազիայի ղեկավարությամբ, հողն ստացել է այդ բուրժուազիայի ձեռքից և դրա շնորհիվ դարձել է բուրժուազիայի ռեզերվը: Հազիվ թե հարկ կա ապացուցելու, որ խորհրդային գյուղացիությունը, որը սովորել է գնահատել քաղաքական բարեկամությունը և քաղաքական համագործակցությունը պրոլետարիատի հետ և իր ազատությունը պարտական է այդ բարեկամությանն ու այդ համագործակցությանը,—չի կարող

չհանդիսանալ բացառիկ նպաստավոր նյութ՝ պրոլետարիատի հետ տնտեսական համագործակցության համար»:

2) «Ռուսաստանի գյուղատնտեսությունը չի կարելի շփոթել Արևմուտքի գյուղատնտեսության հետ: Այնտեղ գյուղատնտեսության զարգացումն ընթանում է կապիտալիզմի սովորական գծով, գյուղացիության խոր շերտավորման պայմաններում, մի ծայրում ունենալով խոշոր կալվածքներ ու մասնավոր-կապիտալիստական լատիֆունդիաներ, մյուսում՝ պաուպերիզմ, թշվառություն և վարձու ստրկություն: Դրա շնորհիվ փլուզումն ու քայքայումն այնտեղ միանգամայն բնական են: Այդպես չէ Ռուսաստանում: Մեզ մոտ գյուղատնտեսության զարգացումը չի կարող ընթանալ այդպիսի ուղիով թեկուզ հենց այն պատճառով, որ խորհրդային իշխանության առկայությունը և արտադրության հիմնական գործիքների ու միջոցների ազգայնացումը չեն թույլատրում այդպիսի զարգացում: Ռուսաստանում գյուղատնտեսության զարգացումը պետք է ընթանա ուրիշ ուղիով, միլիոնավոր մանր և միջակ գյուղացիության կոոպերացման ուղիով, պետության աջակցությունը արտոնյալ վարկավորման կարգով վայելող մասսայական կոոպերացիան գյուղում զարգացնելու ուղիով: Կոոպերացիայի վերաբերյալ հոդվածներում Լենինը ճիշտ է մատնանշել, որ գյուղատնտեսության զարգացումը մեզ մոտ պետք է ընթանա նոր ուղիով, գյուղացիների մեծամասնությունը կոոպերացիայի միջոցով սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու ուղիով, գյուղատնտեսության մեջ կոլեկտիվիզմի սկզբունքներն աստիճանաբար արմատացնելու ուղիով՝ սկզբում գյուղատնտեսության արտադրանքների վաճառահանման բնագավառում, ապա և նրանց արտադրության բնագավառում»... «Հազիվ թե հարկ կա ապացուցելու, որ գյուղացիության հսկայական մեծամասնությունը սիրով կգնա զարգացման այս նոր ուղին, դեն նետելով մասնավոր-կապիտալիստական լատիֆունդիաների և վարձու ստրկության ուղին, թշվառության և քայքայման ուղին»:

Ճի՞շտ են արդյոք այս դրույթները:

Ես կարծում եմ, որ այս երկու դրույթն էլ ճիշտ ու անվիճելի յեն մեր ամբողջ շինարարական ժամանակաշրջանի համար նեպի պայմաններում:

Նրանք միայն արտահայտությունն են Լենինի այն հայտնի թեզիսների, որոնք վերաբերում են պրոլետարիատի և գյուղացիության զոդմանը, գյուղացիական տնտեսությունները երկրի սոցիալիստական զարգացման սիստեմի մեջ մտցնելուն, այն բանին, որ պրոլետարիատը պետք է շարժվի դեպի սոցիալիզմ գյուղացիության հիմնական մասսաների հետ միասին, որ

գյուղացիության միլիոնավոր մասսաների կոոպերացումը գյուղում կատարվող սոցիալիստական շինարարության լայն ճանապարհն ե, վոր մեր սոցիալիստական ինդուստրիայի աճման պայմաններում «կոոպերացիայի սովորական աճումը մեզ համար սոցիալիզմի աճման հետ նույնական ե» (տե՛ս Հ. XXVII, եջ 396)։

Իսկապես, ի՞նչ ճանապարհով կարող ե և պետք ե ընթանա գյուղացիական տնտեսության զարգացումը մեր յերկրում։

Գյուղացիական տնտեսությունը կապիտալիստական տնտեսություն չե։ Գյուղացիական տնտեսությունը, յեթե վերցնենք գյուղացիական տնտեսությունների ճնշող մեծամասնությունը, մանր-ապրանքային տնտեսություն ե։ Իսկ ի՞նչ բան ե մանր-ապրանքային գյուղացիական տնտեսությունը։ Դա մի տնտեսություն ե, վոր կանգնած ե կապիտալիզմի ու սոցիալիզմի միջև ճամփաբաժանին։ Այն կարող ե զարգանալ թե՛ դեպի կապիտալիզմը, ինչպես այդ տեղի յե ունենում այժմ կապիտալիստական յերկրներում, թե՛ դեպի սոցիալիզմը, ինչպես այդ պետք ե տեղի ունենա մեզ մոտ, մեր յերկրում, պրոլետարիատի դիկտատուրայի որով։

Վո՞րտեղից ե գյուղացիական տնտեսության այդպիսի անկայունությունը, անինքնուրույնությունը։ Ինչո՞վ բացատրել այն։

Այն բացատրվում ե գյուղացիական տնտեսությունների ցրվածությամբ, նրանց անկազմակերպությամբ, այն կախումով, վոր նրանք ունեն քաղաքից, ինդուստրիայից, վարկային սիստեմից, յերկրի իշխանության բնույթից, վերջապես, բացատրվում ե այն հանրահայտ դրույթով, վոր գյուղը գնում ե ու պետք ե գնա քաղաքի հետևից ինչպես նյութական, այնպես ել կուլտուրական տեսակետից։

Գյուղացիական տնտեսության զարգացման կապիտալիստական ուղին նշանակում ե զարգացում գյուղացիության խորագույն շերտավորման ճանապարհով՝ մի բևեռում ունենալով խոշոր լատիֆունդիաներ ու մյուս բևեռում՝ մասսայական աղքատացում։ Զարգացման այսպիսի ուղին անխուսափելի յե կապիտալիստական յերկրներում, վորովհետև գյուղը, գյուղացիական տնտեսությունը կախման մեջ ե գտնվում քաղաքից,

ինդուստրիայից, քաղաքում համակենտրոնացված վարկից, իշխանության բնույթից,—իսկ քաղաքում թագավորում ե բուրժուազիան, կապիտալիստական արդյունաբերությունը, կապիտալիստական վարկային սիստեմը, կապիտալիստական պետական իշխանությունը։

Պարտադի՞ր ե արդյոք գյուղացիական տնտեսությունների զարգացման այս ուղին մեր յերկրում, վորտեղ քաղաքն ունի բոլորովին այլ կերպարանք, վորտեղ ինդուստրիան գտնվում ե պրոլետարիատի ձեռքում, վորտեղ տրանսպորտը, վարկային սիստեմը, պետական իշխանությունը և այլն կենտրոնացված են պրոլետարիատի ձեռքում, վորտեղ հողի ազգայնացումն ընդհանրական որենք ե յերկրում։ Իհարկե, պարտադիր չե։ Ընդհակառակը։ Հենց այն պատճառով, վոր քաղաքը գյուղի ղեկավարն ե, իսկ քաղաքում մեզ մոտ թագավորում ե պրոլետարիատը, վորի ձեռքերում են ժողովրդական տնտեսության բոլոր իշխող բարձունքները, հենց այդ պատճառով գյուղացիական տնտեսություններն իրենց զարգացման մեջ պետք ե գնան այլ ուղիով, սոցիալիստական շինարարության ուղիով։

Ի՞նչ ուղի յե այդ։

Դա միլիոնավոր գյուղացիական տնտեսությունները կոոպերացիայի բոլոր գծերով մասսայաբար կոոպերացնելու ուղին ե, ցրված գյուղացիական տնտեսությունները սոցիալիստական ինդուստրիայի շուրջը միավորելու ուղին ե, կոլեկտիվիզմի սկզբունքները գյուղացիության մեջ արմատավորելու ուղին,—սկզբում հողագործության մթերքների վաճառահանման ու գյուղացիական տնտեսություններին քաղաքի արտադրանքներ մատակարարելու գծով, իսկ հետո գյուղատնտեսական արտադրության գծով։

Թեև այս ուղին քանի գնում, այնքան ավելի անխուսափելի յե դառնում պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում, վորովհետև կոոպերացումը վաճառահանման գծով, կոոպերացումը մատակարարման գծով, վերջապես՝ կոոպերացումը վարկի ու արտադրության գծով (գյուղատնտեսական ընկերություններ)—գյուղի բարեկեցության բարձրացման միակ ուղին ե, գյուղացիության լայն մասսաներին թշվառությունից ու ավերմունքից փրկելու միակ միջոցը։

Ասում են, թե մեզանում գյուղացիությունն ըստ իր դրության վոչ-սոցիալիստական է, թե դրա պատճառով նա անընդունակ է սոցիալիստական զարգացման: Այդ, իհարկե, ճիշտ է, վոր գյուղացիությունը վոչ-սոցիալիստական է ըստ իր դրության: Բայց այդ փաստարկ չէ գյուղացիական տնտեսությունների՝ սոցիալիզմի ուղիով զարգանալու դեմ, յեթե ապացուցված է, վոր գյուղը գնում է քաղաքի հետևից, իսկ քաղաքում իշխողը սոցիալիստական արդյունաբերությունն է: Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ էլ գյուղացիությունը վոչ-սոցիալիստական եր ըստ իր դրության ու բնավ չեր ցանկանում յերկրում սոցիալիզմ հաստատել: Այն ժամանակ նա ձգտում եր գլխավորապես կալվածատիրական իշխանության լիկվիդացիային ու պատերազմի վերջացմանը, խաղաղության հաստատմանը: Այնուամենայնիվ այն ժամանակ նա գնաց սոցիալիստական պրոլետարիատի հետևից: Ինչո՞ւ: Այն պատճառով, վոր բուրժուազիայի տապալումն ու պրոլետարիատի կողմից իշխանության վերցնելն այն ժամանակ իմպերիալիստական պատերազմից դուրս գալու միակ ուղին եր, խաղաղություն հաստատելու միակ ուղին: Այն պատճառով, վոր այն ժամանակ ուրիշ ճանապարհներ չկային և չեյին կարող լինել: Այն պատճառով, վոր այն ժամանակ մեր կուսակցությանը հաջողվեց շոշափել, գտնել գյուղացիության սպեցիֆիկ շահերը (կալվածատիրոջ տապալում, հաշտություն) յերկրի ընդհանուր շահերին (պրոլետարիատի դիկտատուրա) միացնելու և յենթարկելու այն աստիճանը, վորը գյուղացիության համար ընդունելի ու ձեռնտու դուրս յեկավ: Յեվ գյուղացիությունը, չնայած նրա վոչ-սոցիալիստական լինելուն, այն ժամանակ գնաց սոցիալիստական պրոլետարիատի հետևից:

Նույն այդ բանը պետք է ասել մեր յերկրի սոցիալիստական շինարարության մասին, գյուղացիությունն այդ շինարարության հունի մեջ ներգրավելու մասին: Գյուղացիությունը վոչ-սոցիալիստական է ըստ իր դրության: Բայց նա պետք է բռնի, ու անպատճառ կբռնի, սոցիալիստական զարգացման ուղին, վորովհետև չկան և չեն կարող լինել գյուղացիությունը թշվառությունից ու քայքայումից փրկելու ուրիշ ուղիներ, բացի պրոլետարիատի հետ զոդվելու ուղուց, բացի սոցիալիստական

արդյունաբերության հետ զոդվելու ուղուց, բացի գյուղացիության մասսայական կոոպերացման միջոցով գյուղացիական տնտեսությունը սոցիալիստական զարգացման ընդհանուր հունի մեջ ներառելուց:

Ինչո՞ւ հատկապես գյուղացիության մասսայական կոոպերացման միջոցով:

Այն պատճառով, վոր մասսայական կոոպերացման մեջ «մենք գտանք՝ մասնավոր շահը, մասնավոր-առևտրական շահը միացնելու, պետության կողմից այդ ստուգելու և վերահսկողության յենթարկելու այն աստիճանը, դա ընդհանուր շահերին յենթարկելու աստիճանը» (Լենին), վորն ընդունելի ու ձեռնտու յե գյուղացիության համար և վորը պրոլետարիատի համար ապահովում է գյուղացիության հիմնական մասսան սոցիալիստական շինարարության գործի մեջ ներգրավելու հնարավորությունը: Հենց այն պատճառով, վոր գյուղացիության համար ձեռնտու յե իր ապրանքների վաճառահանումն ու իր տնտեսությանը գյուղատնտեսական մեքենաներ մատակարարելը կոոպերացիայի միջոցով կազմակերպելը, հենց այդ պատճառով նա պետք է գնա, և նա կգնա մասսայական կոոպերացման ուղիով:

Իսկ ի՞նչ է նշանակում գյուղացիական տնտեսությունների մասսայական կոոպերացում, սոցիալիստական արդյունաբերության գլխավորության պարագայում:

Այդ նշանակում է մանր-ապրանքային գյուղացիական տըն-
տեսության [illegible] հին կապիտալիստական ուղուց, վորը
հղի յե գյուղացիության մասսայական քայքայումով, և ան-
ցում դեպի զարգացման նոր ուղի, սոցիալիստական շինա-
րության ուղին:

Ահա թե ինչու պայքարը հանուն գյուղացիական տնտեսու-
թյան զարգացման նոր ուղու, պայքարը հանուն գյուղացիու-
թյան հիմնական մասսան սոցիալիզմի կառուցման գործի մեջ
ներգրավելու—մեր կուսակցության հիմնական խնդիրն է հան-
դիսանում:

Ուստի ՀամԿԿ XIV համագումարը ճիշտ վարվեց՝ վորոշելով, վոր

«Սոցիալիզմի կառուցման հիմնական ուղին գյուղում այն է, վոր

պրոլետարիատի ձեռքում գտնվող սոցիալիստական արդյունաբերության, պետական վարկային հիմնարկների և այլ իշխող բարձունքների անմիջական աճող ղեկավարության պայմաններում գյուղացիության հիմնական մասսան ներգրավենք կոոպերատիվ կազմակերպության մեջ և այդ կազմակերպության համար ապահովենք սոցիալիստական զարգացումը, օգտագործելով, հաղթահարելով ու վտարելով նրա կապիտալիստական տարրերը» (տե՛ս Համագումարի բանաձևը ԿԿ-ի հաշվետվության առթիվ)։

Նոր օպոզիցիայի խորագույն սխալն այն ե, վոր նա չի հավատում գյուղացիության զարգացման այս նոր ուղուն, չի տեսնում կամ չի հասկանում այս նոր ուղու ամբողջ անխուսափելիությունը պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում։ Իսկ այդ բանը նա չի հասկանում այն պատճառով, վոր չի հավատում սոցիալիստական շինարարության հաղթությանը մեր յերկրում, չի հավատում մեր պրոլետարիատի ընդունակությանը՝ իր հետևից տանելու գյուղացիությունը սոցիալիզմի ուղիով։

Այստեղից՝ նեպի յերկակի բնույթը չհասկանալը, նեպի բացասական կողմերը չափազանցնելն ու նեպն իբրև գերազանցապես նահանջ մեկնաբանելը։

Այստեղից՝ մեր տնտեսության կապիտալիստական տարրերի դերի չափազանցումն ու մեր սոցիալիստական զարգացման լծակների (սոցիալիստական արդյունաբերություն, վարկային սիստեմ, կոոպերացիա, պրոլետարիատի իշխանություն և այլն) դերի նվազեցումը։

Այստեղից՝ մեր պետական արդյունաբերության սոցիալիստական բնույթը չըմբռնելը և Լենինի կոոպերատիվ պլանի ճշտության վերաբերյալ կասկածները։

Այստեղից՝ գյուղի շերտավորումն ուռճացնելը, խուճապը կուլակի հանդեպ, միջակի դերի նվազեցումը, միջակի հետ ամուր դաշինք ապահովելու վերաբերյալ կուսակցության քաղաքականությունը վիժեցնելու փորձերը և, ընդհանրապես, տատանումները՝ գյուղում կուսակցության վարելիք քաղաքականության հարցում։

Այստեղից՝ կուսակցության այն հսկայական աշխատանքը չըմբռնելը, վոր կատարվում է բանվորների ու գյուղացիների միլիոնավոր մասսաներին արդյունաբերության ու գյուղատընտեսության շինարարության, կոոպերացիայի ու խորհուրդների աշխուժացման, յերկրի կառավարման մեջ, բյուրոկրատիզմի դեմ մղվող պայքարի, մեր պետական ապարատի բարելավման ու փոխակերպման համար մղվող պայքարի ասպարեզ ներգրավելու համար,—աշխատանք, վորը նշանավորում ե զարգացման նոր շրջանն ու առանց վորի յերևակայելի չե վոչ մի սոցիալիստական շինարարություն։

Այստեղից՝ անհուսությունն ու շփոթվածությունը մեր շինարարության դժվարությունների հանդեպ, կասկածները մեր յերկրի ինդուստրացման հնարավորության նկատմամբ, հոռետեսական շաղակրատանքը կուսակցության վերասերման մասին և այլն։

Նրանց մոտ՝ բուրժուաների մոտ—ամեն ինչ ավելի կամ պակաս չափով լավ վիճակում ե, իսկ մեզ մոտ՝ պրոլետարների մոտ—ավելի կամ պակաս չափով վատ վիճակում. յեթե Արևմուտքից հեղափոխությունը վրա չհասնի, մեր բանը բուրդ ե,—այս ե նոր օպոզիցիայի ընդհանուր տոնը, վորն, ըստ իս, լիկվիդատորական տոն ե, բայց ինչ-վոր բանի համար (յերևի զվարճացնելու համար) օպոզիցիայի կողմից հրամցվում ե իբրև «ինտերնացիոնալիզմ»։

Նեպը կապիտալիզմ ե, ասում ե օպոզիցիան։ Նեպը նահանջ ե գերազանցապես, ասում ե ընկ. Զինովևը։ Իհարկե, այս ամենը ճիշտ չե։ Իրոք նեպը կուսակցության քաղաքականությունն ե, վորը թույլ ե տալիս սոցիալիստական և կապիտալիստական տարրերի պայքար, ընդվորում հաշվի յե առնում, վոր սոցիալիստական տարրերը պետք ե հաղթեն կապիտալիստական տարրերին։ Իրոք նեպը նահանջով սկսվեց միայն, բայց հաշվի յեր առնվել նահանջի ընթացքում ուժերի վերախմբավորում կատարել ու հարձակում սկսել։ Իրոք արդեն մի քանի տարի յե, ինչ մենք հարձակվում ենք, ու հարձակվում ենք հաջողությամբ, զարգացնելով մեր ինդուստրիան, զարգացնելով խորհրդային առևտուրը, նեղելով մասնավոր կապիտալին։

Բայց վո՞րն ե այս թեզիսի իմաստը—նեպը՝ կապիտալիզմ ե, նեպը՝ գերազանցապես նահանջ ե։ Ինչի՞ց ե յելնում այս թեզիսը.

Նա յելնում ե սխալ յենթադրությունից այն մասին, թե մեզանում հիմա կատարվում ե կապիտալիզմի սոսկական վերականգնում, կապիտալիզմի սոսկական «վերադարձ»: Միայն այս յենթադրությամբ կարելի յե բացատրել ոպոզիցիայի կասկածները մեր արդյունաբերության սոցիալիստական բնույթի վերաբերմամբ: Միայն այս յենթադրությամբ կարելի յե բացատրել ոպոզիցիայի խուճապը կուլակի հանդեպ: Միայն այս յենթադրությամբ կարելի յե բացատրել այն փութկոտությունը, վորով ոպոզիցիան կառչեց գյուղացիության շերտավորման վերաբերյալ սխալ թվերին: Միայն այս յենթադրությամբ կարելի յե բացատրել ոպոզիցիայի հատուկ մոռացկոտությունն այն մասին, վոր միջակը մեզ մոտ հողագործության կենտրոնական դեմքն ե: Միայն այս յենթադրությամբ կարելի յե բացատրել միջակի տեսակարար կշռի թերագնահատումը և կասկածները Լենինի կոոպերատիվ պլանի նկատմամբ: Միայն այս յենթադրությամբ կարելի յե «հիմնավորել» նոր ոպոզիցիայի չհավատալը գյուղի զարգացման նոր ուղուն, գյուղը սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու ուղուն:

Իրոք այժմ մեզ մոտ տեղի յե ունենում վո՛չ թե կապիտալիզմի վերականգնման միակողմանի պրոցես, այլ կապիտալիզմի զարգացման ու սոցիալիզմի զարգացման յերկկողմանի պրոցես, սոցիալիստական տարրերի կողմից կապիտալիստական տարրերի դեմ ուղղված պայքարի հակասական պրոցես, սոցիալիստական տարրերի կողմից կապիտալիստական տարրերը հաղթահարելու պրոցես: Սա հավասարապես անվիճելի յե ինչպես քաղաքի նկատմամբ, վորտեղ սոցիալիզմի բազան պետական արդյունաբերությունն ե, այնպես ել գյուղի նկատմամբ, վորտեղ սոցիալիստական զարգացման հիմնական կեռիքը մասսայական կոոպերացիան ե, վորը զոդվում ե սոցիալիստական արդյունաբերության հետ:

Կապիտալիզմի սոսկական վերականգնումն անհնարին ե թեկուզ այն պատճառով, վոր մեզ մոտ իշխանությունը պրոլետարական ե, խոշոր արդյունաբերությունը պրոլետարիատի ձեռքում ե, տրանսպորտն ու վարկը գտնվում են պրոլետարական պետության տրամադրության տակ:

Շերտավորումը չի կարող նախկին չափերն ընդունել, միջակը մնում ե գյուղացիության հիմնական մասսան, իսկ կուլակը չի կարող առաջվա ուժն ստանալ թեկուզ այն պատճառով, վոր հողը մեզ մոտ ազգայնացված ե, շրջանառությունից հանված ե այն, իսկ մեր առևտրական, վարկային, հարկային ու կոոպերատիվ քաղաքականությունն ուղղված ե դեպի այն, վորպեսզի սահմանափակենք կուլակության շահագործողական ձգտումները, բարձրացնենք գյուղացիության ամենալայն մասսաների բարեկեցությունը և հարթենք ծայրահեղությունները գյուղում: Ել յես չեմ խոսում այն մասին, վոր պայքարը կուլակության դեմ մեզ մոտ հիմա ընթանում ե վո՛չ միայն հին գծով՝ չքավորությանը կուլակության դեմ կազմակերպելու գծով, այլև նոր գծով՝ պրոլետարիատի ու չքավորության դաշինքը միջակ գյուղացիական մասսաների հետ՝ կուլակության դեմ ամրապնդելու գծով: Այն փաստը, վոր ոպոզիցիան չի հասկանում կուլակության դեմ այս յերկրորդ գծով պայքարելու իմաստն ու նշանակությունը, այս փաստը մի ավելորդ անգամ հաստատում ե, վոր ոպոզիցիան խոտորվում ե գյուղի զարգացման հին ուղին, նրա կապիտալիստական զարգացման ուղին, յերբ կուլակն ու չքավորությունը կազմում եյին գյուղի հիմնական ուժերը, իսկ միջակը «վողողվում-սըրբվում եր»:

Կոոպերացիան պետական կապիտալիզմի այլատեսակությունն ե, ասում ե ոպոզիցիան, ընդսմին վկայակոչելով Լենինի «Պարենհարկը», այդ պատճառով նա չի հավատում կոոպերացիան վորպես սոցիալիստական զարգացման հիմնական կեռիք ոգտագործելու հնարավորությանը: Ոպոզիցիան այստեղ ել կոպտագույն սխալ ե գործում: Կոոպերացիայի այդպիսի մեկնաբանումը բավական եր ու բավարար եր 1921 թվին, յերբ գրվել ե «Պարենհարկը», յերբ մենք չունեյինք զարգացած սոցիալիստական արդյունաբերություն, յերբ Լենինը պետկապիտալիզմը պատկերացնում եր վորպես մեր տնտեսավարման հնարավոր հիմնական ձև, իսկ կոոպերացիան դիտում եր պետկապիտալիզմի հետ զուգակցված: Բայց այդ մեկնաբանությունն այժմ արդեն պակասավոր ե, և պատմությունը գերանցել ե նրանից, վորովհետև այդ պահից իվեր ժամանակները փոխվել են, սոցիալիստական արդյունաբերությունը մեզ մոտ զարգա-

ցել է, պետկապիտալիզմը չի պատվաստվել այն աստիճան, ինչ աստիճան այդ ցանկալի էր, իսկ կոոպերացիան, վորը հիմա մի տասնյակ միլիոն անդամից ավելի յե ընդգրկում, սկսել է կպչել սոցիալիստական ինդուստրիայի հետ:

Այլապես ել ինչո՞վ բացատրենք այն փաստը, վոր «Պարենհարկից» արդեն յերկու տարի անց, 1923 թվին, Լենինն սկսեց ուրիշ կերպ դիտել կոոպերացիան՝ գտնելով, վոր «կոոպերացիան մեր պայմաններում ամենուրեք միանգամայն համընկնում է սոցիալիզմի*) հետ» (տե՛ս հատ. XXVII, եջ 396):

Այլապես ել ինչո՞վ բացատրենք այդ, յեթե վոչ նրանով, վոր այդ յերկու տարվա ընթացքում սոցիալիստական արդյունաբերությունն արդեն կարողացավ աճել, իսկ պետկապիտալիզմը հարկավոր չափով չպատվաստվեց, այս պատճառով Լենինն սկսեց դիտել կոոպերացիան արդեն վո՛չ թե պետկապիտալիզմի հետ զուգակցված, այլ սոցիալիստական արդյունաբերության հետ զուգակցված:

Փոփոխվեցին կոոպերացիայի զարգացման պայմանները: Պետք է փոփոխվեր նաև մոտեցումը դեպի կոոպերացիայի հարցը:

Ահա, որինակ, մի յերևելի տեղ Լենինի՝ «Կոոպերացիայի մասին» (1923 թ.) բրոշյուրից, վորը լույս է սփռում այս հարցի վրա.

«Պետական կապիտալիզմի պայմաններում*) կոոպերատիվ ձեռնարկությունները տարբերվում են պետական-կապիտալիստական ձեռնարկություններից նախ՝ վորպես մասնավոր ձեռնարկություններ և, յերկրորդ՝ վորպես կոլեկտիվ ձեռնարկություններ: Գոյություն ունեցող մեր կարգերում*) կոոպերատիվ ձեռնարկությունները տարբերվում են մասնավոր-կապիտալիստական ձեռնարկություններից վորպես կոլեկտիվ ձեռնարկություններ, բայց չեն տարբերվում*) սոցիալիստական ձեռնարկություններից, յեթե նրանք հիմնված են այն հողի վրա, այնպիսի արտադրամիջոցների առկայությամբ, վորոնք պատկանում են պետությանը, այսինքն՝ բանվոր դասակարգին» (տե՛ս հ. XXVII, եջ 396):

Այս փոքրիկ ցիտատում լուծված է յերկու մեծ հարց: Նախ՝ այն հարցը, վոր «գոյություն ունեցող մեր կարգերը» պետկապիտալիզմ չեն: Յերկրորդ՝ այն հարցը, վոր կոոպերատիվ ձեռնարկությունները, վերցրած «մեր կարգերի հետ» զու-

*) Ընդգծումն իմն է: Ի. Ստ.:

գակցված, «չեն տարբերվում» սոցիալիստական ձեռնարկություններից:

Յես կարծում եմ, վոր դժվար է ավելի պարզ արտահայտվել:

Ահա ելի մի տեղ Լենինի նույն այդ բրոշյուրից.

«Կոոպերացիայի հասարակ աճումը մեզ համար նույնական է (վերը նշված «փոքրիկ» բացառությամբ) սոցիալիզմի աճմանը, և դրա հետ մեկտեղ մենք ստիպված ենք ընդունել սոցիալիզմի նկատմամբ մեր ունեցած ամբողջ տեսակետի արմատական փոփոխությունը» (տե՛ս նույն տեղը):

Ակներև է, վոր «Կոոպերացիայի մասին» բրոշյուրում մենք գործ ունենք կոոպերացիայի նոր գնահատման հետ, վորը նոր ոպոզիցիան չի ցանկանում ընդունել և վորի մասին նա խնամքով լռություն է պահպանում, հակառակ փաստերին, հակառակ ակներև ճշմարտությանը, հակառակ լենինիզմին:

Մի բան է — կոոպերացիան՝ վերցրած պետկապիտալիզմի հետ զուգակցված և այլ բան — կոոպերացիան՝ վերցրած սոցիալիստական արդյունաբերության հետ զուգակցված:

Սակայն սրանից չի կարելի անել այն յեզրակացությունը, թե «Պարենհարկի» և «Կոոպերացիայի մասին» բրոշյուրի միջև անդունդ կա: Այդ, իհարկե, սխալ է: Բավական է վկայակոչել, որինակ, հետևյալ տեղը «Պարենհարկից», վորպեսզի մեկ անգամից ըմբռնենք անխզելի կապը «Պարենհարկի» ու «Կոոպերացիայի մասին» բրոշյուրի միջև՝ կոոպերացիայի գնահատության հարցում: Ահա այդ տեղը.

«Կոնցեսիաներից սոցիալիզմին անցնելը՝ անցում է խոշոր արտադրության մի ձևից խոշոր արտադրության մի ուրիշ ձևի. Մանր տնտեսատերերի կոոպերացիայից սոցիալիզմին անցնելը՝ անցում է մանր արտադրությունից խոշորին, այսինքն՝ մի ավելի բարդ անցում, բայց դրա փոխարեն այն ընդունակ է ընդգրկելու, հաջողության դեպքում, բնակչության ավելի լայն մասսաներ, ընդունակ է դուրս քաշել ավելի խորունկ և ավելի կենսունակ արմատներ հին, մինչսոցիալիստական*), նույնիսկ մինչ-կապիտալիստական հարաբերությունների, վորոնք ամենահամառն են ամեն մի «նորույթի» դիմադրելու իմաստով» (հ. XXVI, եջ 337):

Այս ցիտատից յերևում է, վոր Լենինը դեռևս «Պարենհար-

*) Ընդգծումը իմն է: Ի. Ստ.:

կի» ժամանակ, յերբ մեզանում դեռ զարգացած սոցիալիստական ինդուստրիա չկար, հնարավոր եր համարում, վոր կոոպերացիան, հաջողության դեպքում, կարող է փոխարկվել պայքարի մի հզոր միջոցի ընդդեմ «մինչ-սոցիալիստական», ուրեմն և ընդդեմ կապիտալիստական հարաբերությունների։ Յես կարծում եմ, վոր հետագայում հենց այս միտքն էլ մեկնակետ է ծառայել նրա «Կոոպերացիայի մասին» բրոշյուրի համար։

Բայց այս ամենից ի՞նչ է հետևում։

Իսկ սրանից հետևում է, վոր նոր ոպոզիցիան կոոպերացիայի հարցին մոտենում է վո՛չ թե մարքսիստորեն, այլ մետաֆիզիկորեն։ Ոպոզիցիան դիտում է կոոպերացիան վո՛չ թե վորպես պատմական յերևույթ, վոր վերցվում է ուրիշ յերևույթների հետ զուգակցված, ասենք՝ պետկապիտալիզմի (1921 թվին) կամ սոցիալիստական արդյունաբերության հետ (1923 թվին) զուգակցված, այլ վորպես ինչ-վոր մշտական և մեկ-ընդմիշտ տրված բան, վորպես «ինքնին իր»։

Այստեղից են ոպոզիցիայի սխալները կոոպերացիայի հարցում, այստեղից՝ նրա չհավատալն այն բանին, թե գյուղը դեպի սոցիալիզմ է զարգանում կոոպերացիայի միջոցով, այստեղից՝ ոպոզիցիայի շեղվելը դեպի հին ուղին, գյուղի կապիտալիստական զարգացման ուղին։

Ընդհանուր առմամբ այսպես է նոր ոպոզիցիայի դիրքը սոցիալիստական շինարարության պրակտիկ հարցերում։

Յեզրակացությունը մեկ է—ոպոզիցիայի գիծը, ինչ չափով վոր նա գիծ ունի, ոպոզիցիայի տատանումներն ու յերերումները, նրա չհավատալն ու գլխակորույս լինելը դժվարությունների հանդեպ—տանում են դեպի կապիտուլյացիա մեր տնտեսության կապիտալիստական տարրերի հանդեպ։ Վորովհետև, յեթե նեպը դերազանցապես նահանջ է, յեթե պետական արդյունաբերության սոցիալիստական բնույթը կասկածի յե յենթարկվում, յեթե կուլակը համարյա թե ամենակարող է, կոոպերացիայի վրա քիչ հույս կա, միջակի դերը պրոգրեսիվ կերպով ընկնում է, գյուղի զարգացման նոր ուղին տարակուսելի յե, կուսակցությունը համարյա թե վերասերվում է, իսկ Արևմուտքից գալիք հեղափոխությունը դեռ այնքան էլ մոտ

չի,—ապա այս ամենից հետո էլ ի՞նչ է մնում ոպոզիցիայի զինանոցում, նա ինչի՞ վրա յէ դնում հույսը մեր տնտեսության կապիտալիստական տարրերի դեմ մղվող պայքարում։ Հո չի՞ կարելի կռիվ գնալ միմիայն «Դարաշրջանի փիլիսոփայության»։

Պարզ է, վոր նոր ոպոզիցիայի զինանոցն աննախանձելի յէ, յեթե առհասարակ կարելի յէ զինանոց անվանել այն։ Այդ զինանոցը կռվի համար չէ։ Առավել ևս նա հաղթության համար չէ։

Պարզ է, վոր այդպիսի զինանոց ունենալով՝ կուսակցությունը «մի ակնթարթում» կկործաներ իրեն, յեթե կռվի մեջ մտներ,—հարկ կլիներ պարզապես անձնատուր լինել մեր տնտեսության կապիտալիստական տարրերին։

Այդ պատճառով կուսակցության XIV համագումարը միանգամայն ճիշտ վարվեց, վորոշելով, վոր՝ «պայքարը հանուն սոցիալիստական շինարարության հաղթանակի ԽՍՀՄ-ում՝ կուսակցության հերթական խնդիրն է հանդիսանում», վոր այդ խնդրի լուծման անհրաժեշտ պայմաններից մեկը «մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու գործին չհավատալու և այն փորձերի դեմ պայքարելն է, ըստ վորոնց «հետևողական-սոցիալիստական տիպի» (Լենին) ձեռնարկություններ հանդիսացող մեր ձեռնարկությունները դիտվում են վորպես «պետական-կապիտալիստական» ձեռնարկություններ», վոր «այդպիսի գաղափարային հոսանքները, անհնարին դարձնելով մասսաների գիտակցական վերաբերմունքը դեպի սոցիալիզմի կառուցումն ընդհանրապես և սոցիալիստական արդյունաբերության կառուցումը մասնավորապես՝ ընդունակ են միայն արգելակելու տնտեսության սոցիալիստական տարրերի աճումը և հեշտացնելու մասնավոր կապիտալի կողմից մղվող պայքարը նրանց դեմ», վոր «այդ պատճառով համագումարն անհրաժեշտ է համարում լայն դաստիարակչական աշխատանքը՝ լենինիզմի այդ խեղաթյուրումները հաղթահարելու համար» (տե՛ս ՀամԿԿ ԿԿ-ի հաշվետվության առթիվ ընդունված բանաձևը)։

ՀամԿԿ XIV համագումարի պատմական նշանակությունն այն է, վոր նա կարողացավ մինչև արմատները հայտաբերել

նոր ոպոզիցիայի սխալները, դեն նետեց նրա չհավատալն ու նվնվոցը, պարզ ու հստակ կերպով ուրվագծեց սոցիալիզմի համար մղվող հետագա պայքարի ուղին, հաղթանակի հեռանկար տվեց կուսակցությանը և հենց դրանով էլ պրոլետարիատին զինեց անխորտակելի հավատով դեպի սոցիալիստական շինարարության հաղթությունը։

1926 թ. հունվարի 25։

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Խմբ.՝ Նշ. Մակինց
Թարգմ.՝ Ա. Խանդկարյան
Վերստ. սրբ. Եվ Տ. Մինասյան
Սրբագրիչ՝ Լ. Աբովյան
Տեխ. խմբ.՝ Տ. Խաչատրյան

Գլավլիտ № 7860, Հրատ. 231. Պատվ. 1871, Տիրաժ 40.000
Պետհրատի տպարան. Երևան

ՑԱՆԿ

ԵՋ

Լենինիզմի հիմունքների մասին (1924 թ. ապրիլի սկզբին Սվերդլովյան համալսարանում կարդացած դասախոսությունները) . . . 3—116

I. Լենինիզմի պատմական արմատները . . . 5
II. Մեթոդը . . . 13
III. Թեորիան . . . 21
IV. Պրոլետարիատի դիկտատուրան . . . 40
V. Գյուղացիական հարցը . . . 53
VI. Ազգային հարցը . . . 68
VII. Ստրատեգիան և տակտիկան . . . 78
VIII. Կուսակցությունը . . . 97
IX. Աշխատանքի ոճը . . . 114

Լենինիզմի հարցերի շուրջը . . . 117—192

I. Լենինիզմի բնորոշումը . . . 117
II. Գլխավորը լենինիզմի մեջ . . . 119
III. «Պերմանենտ» հեղափոխության հարցը . . . 122
IV. Պրոլետարական հեղափոխությունը և պրոլետարիատի դիկտատուրան . . . 124
V. Կուսակցությունը և բանվոր դասակարգը պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում . . . 134
VI. Սոցիալիզմի հաղթության հարցը մի երկրում . . . 163
VII. Պայքար սոցիալիստական շինարարության հաղթության համար . . . 177

ՀՀ Ազգային գրադարան
NL0178628

Գինը 1 ռ. 50 կ. ЦЕНА 1 р. 50 к.

И. Сталин
ОБ ОСНОВАХ ЛЕНИНИЗМА
К ВОПРОСАМ ЛЕНИНИЗМА
Партиздат, Эривань